

ՄԱՅԻՍ ԱՎԴԱՐԵԳՅԱՆ

« ՅԱՅՍՄԱԽՈՒՐՔ »
ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М. АБЕГЯНА

МАИС АВДАЛБЕКЯН

АРМЯНСКИЕ ПРОЛОГИ (СИНАКСАРИ)
И ИХ ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНОЕ
ЗНАЧЕНИЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

891.981.09

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՅԻՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

«ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ»
ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՊԱՏՄԱԴՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

A
68411



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների բեկնածու է. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ
Դիրքը ճրատարակության եւ երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների
դոկտոր Գ. ՀԱԿՈԲՅԱՆԸ և բանասիրական գիտությունների բեկնածու Վ. ՆԵՐՍԻՍՅԱՆԸ

Ավդալբեգյան, Մ. Թ.

Ա. 783 «Յայամաուրբ» ժողովածուները և նրանց պատմագրական ար-
ժեքը /Պատ. խմբ.՝ է. Ա. Պիվազյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982.
159 էջ.

Այսատույցյան մեջ ուրվագծվում են Հայամաուրբ ժողովածուների ծագման և
դարգացման ուղիները, ապա տարրորշվում նրանց չորս խմբագրությունները՝ կապ-
ված հայ հասարակական կյանքի տարբեր շրջանների ու կողմնորոշումների հետ:
Առանձին բաժին է հատկացված Հայամաուրբների պատմագրական արժեքին,
հատկապես նրա դրական-գեղարվեստական առանձնահատկություններին՝ միջնա-
դարյան գեղարվեստական արձակի պատմության դիտակետից:

Գիրքը հասցեագրվում է մասնագետներին, ինչպես նաև հայ հին գրականու-
թյամբ հետաքրքրվող ընթերցողներին:

Ա. $\frac{4603000000}{703(02) - 82}$ 43—82

ԳՄԴ 83. 321

8 Apr

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորման հարցերն ուսումնասիրելիս, մեր առջև ուրվագծվեցին նրա զարգացման հեռանկարային ուղիներն ու առանձին ժանրերի՝ վարքերի ու վկայաբանությունների ձևափոխումները, կապված նաև նրանց կիրառական ոլորտների հետ: Նայած թե ի՞նչ ժողովածուում է ընդգրկված այս կամ այն վարքը կամ վկայաբանությունը, եկեղեցում կարդալու համար է նախատեսված, թե՞ նրանից դուրս՝ ընթերցանության համար, ըստ այդմ նա փոփոխվում է՝ երբեմն անձանաչելիության չափ, և նորանոր հատկանիշներով տարբերակվում:

Այս առումով մեր ուշադրությունը գրավեցին հատկապես «Յայսմատուրք»¹ ժողովածուները, հայ և համաշխարհային մշակույթի իրենց ուշագրավ անդրադարձումներով, ինչպես նաև գեղարվեստական մտածողության չափազանց ինքնատիպ արտահայտություններ:

Վերջին հատկանիշների հիմնավոր բացահայտման համար անհրաժեշտ դարձան բաղմամբիլ անուղղակի և միջօղակային խնդիրների արծարծումներ, որոնք առաջին հայացքից կարող են շեղումներ թվալ, սակայն անհրաժեշտ են խնդրի լուծման համար. հայկական Հայսմավուրքներին անցնելուց առաջ, օրինակ, անհրաժեշտորեն պիտք էր անդրադառնալ մինչև հայսմավուրքային գործող ժողովածուներին, Գրիգոր Վկայասերի խմբագրության ուղղակի և անուղղակի փաստերին և, որ ամենակարևորն ու ամենաբարդն է՝ հայկական Հայսմավուրքների տարբեր խմբագրություններին. քանի որ այն մեկ ժողովածու չէ՝ իր կայուն համակարգով, այլ մի քանի՝ էական հատկանիշներով տարբեր, բայց Հայս-

¹ Այսուհետև բոլոր ժողովածուների անունները կտրվեն ժամանակակից գրչությամբ:

^{*} Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են—Մ. Ա.:

մալուրը կոչվող ժողովածուներ, որոնց տարբերակումից հետո միայն կարելի է խոսք բացել ժողովածուի թե՛ սլատմական. և թե՛, մանավանդ, գրական-գեղարվեստական արժեքի մասին:

Նշված հանգամանքներն իրենց անխուսափելի կնիքն են դրել մեր աշխատության ոչ միայն կառուցվածքի, այլև շարադրանքի վրա. գրականագիտական և բանասիրական հարցերն արժարժվել են տրամաբանական միասնությամբ, բնականաբար դանդաղեցնելով շարադրանքի կուռ ընթացքը. հուսանք, որ բանասիրական այս շեղումները կարժանանան ոչ այնքան ընթերցասերների ձանձրույթին, որքան մասնագետների ուշադրությանը:

ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ ԱՐԱՐՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԵՐՈՒՄ

Հայ բազմահարուստ գրականության մեջ իրենց որոշակի դերն են կատարել միջնադարյան արարողական ժողովածուները:

Այս ժողովածուների մի մասը («Պատարագամատուց», «Մաշտոց» և այլն) ամբողջությամբ կապված է հայ եկեղեցու ծիսական-արարողական կարգի հետ, էապես նպաստել է նրա ինքնության պահպանմանն ու ամրապնդմանը, սրանով իսկ ունենալով պատմական մեծ արժեք:

Սրանց կողքին միջնադարում գործել են արարողական այլ տիպի ժողովածուներ, որոնք հայ եկեղեցու տոնակարգը պահպանելու և եկեղեցում համապատասխան օրերի ու ժամերի կարգացվելու հետ մեկտեղ, եկեղեցական նշանակությունից զատ, ունեցել են մարդկանց գիտակցության ու զգացումների վրա ներգործելու, բարոյակրթելու և այլ հատկանիշներ, որով և զուրա են եկել նեղ արարողական սահմաններից ու ծավալվել մինչև գեղարվեստական գրականության ոլորտները. արարողական լինելով հանդերձ՝ նրանք օժտված են գրական-գեղարվեստական արժեքով:

Այս առումով միջնադարյան որոշ ժողովածուներ՝ «Շարակնոց», «Վըկյազդիրք», «Հայսմալուրք», «Գանձարան», «Տոնսուպատճառ», «Քարոզդիրք», ուշագրավ հավաքածուներ են՝ հայ միջնադարյան բանաստեղծության ու արձակի հարուստ շերտերով, առանց որի թերի կլինեի մեր պատկերացումը հայ միջնադարյան գրականության մասին: Հայ միջնադարյան գրականության որոշ երևույթներ անխուսափելիորեն կապված են այդ ժողովածուների հետ և զրանց հատկությունների ու զարգացման միտումների բացահայտմամբ միայն հնարավոր կլինի ուրվագծել գրական որոշ տեսակների զարգացման ընթացքը, ուղիներն ու առանձնահատկությունները:

Արարողական անունը չպետք է ենթադրել տա սոսկ կրոնական-եկեղեցական բովանդակություն, այլ նաև ժողովրդի վրա ներգործման մղումով ստեղծված գրականություն, որը չի կարող անջրպետված լինել ժողովրդական խավերի ավանդներից, նրանց հոգեբանությունից ու դա-

րավոր տենչանքներից: Արարողական կարգին նպաստող այդ ժողովա-
ծունեքը իրենց բովանդակությամբ ու նպատակներով շատ ավելի լայն
ուղեծիր են ունեցել, քան սոսկ կրոնականը, ուստի և նրանց ուսումնասի-
րությունը դառնում է անհրաժեշտ ոչ միայն գեղարվեստական գրականու-
թյան պատմության տեսակետից, այլև այժմեական, նույնիսկ կենսա-
մեթո՞ այդ հուշարձանների միջոցով ժամանակի ազգային-ֆաղափական,
նասարակական հարցերի արծարծման ուսանելիությամբ:

Ամեն մի դարաշրջան իր հետ տանում է իր գաղափարական զինա-
րանը՝ պատմականորեն անցողիկը, սերունդներին թողնելով դարաշրջա-
նը ներկայացնող մնալունը՝ ժամանակի ընդհանրացված, կերպավորված
վերարտագրումը, մարդու միջոցով ընկալված միջավայրի զնահատակա-
նը՝ համամարդկայինն ու ազգայինը, համաժողովրդականն ու պատմա-
կանորեն առաջադիմականը:

Ուսումնասիրողի խնդիրը հենց պետք է լինի ժամանակի բնորոշ
եկեղեցական-կրոնական կեղևի մեջ լուսարանել և արժեքավորել այն մի-
ջուկը, պատմականորեն առաջադիմականը, որից ծլարձակում է միջնա-
դարյան գրականությունը, այս դեպքում նրա ճյուղերից մեկը՝ գեղար-
վեստական արձակը:

Միջնադարյան այլ ժողովածուների նման Հայսմավուրք ժողովածու-
ները նույնպես ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկ-
վել ինչպես նյութի ընդգրկման, այնպես էլ շարադրանքի առումով:

Այդ ժողովածուների փոփոխությունները պատահական բնույթ չեն
կրում: Եթե չհաշվենք ձևագրական աշխարհին բնորոշ՝ գրչական տալ-
մաններից, նախօրինակ րնագրի վիճակից, տատվիրատուի պահանջից
բխող տարբերակումներն ու աղճատումները, ապա Հայսմավուրք ժողո-
վածուների մյուս փոփոխությունները սկզբունքային, հեղինակային խմբ-
բազրություն արդասիք են, ժամանակի սոցիալ-քաղաքական կյանքի ար-
տահայտություններ, հայ ժողովրդի պատմական բախտորոշ ժամանա-
կաշրջաններում հայ գործիչների ու խմբավորումների քաղաքական կողմ-
նորոշման ու պայքարի զրսերումներ: Հայսմավուրք ժողովածուներում
կատարվող փոփոխությունները, խմբագրությունները, որքան էլ աննշան
և ևրկրորդական են թվում առաջին հայացքից, ըստ էության նշանակալից
են և ոչ պատահականորեն կապված ալուպիսի հուշակավոր անձնավորու-
թյունների, գաղափարական գործիչների հետ, ինչպիսիք են Գրիգոր Վկա-
յասեր և Անավարդեցի կաթողիկոսները, Վանական վարդապետի աշա-
կերտներ Տեր-Իսրայելն ու Կիրակոս Արևելցին, Գրիգոր Մերենց խա-
թեցին:

Հայսմավուրը գրաբար անվանումը բառացի թարգմանությամբ նշանակում է «այսօր» կամ ավելի ճիշտ՝ «այս օրը» «այս օրերի մեջ» հիշատակվող տոների գիրք։ Միջազգային ժողովածուի հայկական անունը ծագել է հիմնական տոնի ազդարարումից հետո նույն օրը հիշատակվող այլ տոների նշումից. «Տօն է առաքելոյն Բարդուղիմէոսի»,—նշում է ժողովածուն որոշակի օրվա համար, դրանից հետո ավելացնելով՝ «Յայսմ ատուր՝ Սպիտիգոնի»², այսինքն օրվա հիմնական տոնը Բարդուղիմէոս առաքյալինն է, բայց այդ օրը տոնվում է նաև Սպյուտիգոն վկայինը։ Կամ թե՛ «Տօն է ննջման Յովհաննու առաքելոյն և աւետարանչին», ապա ավելացվում՝ «Յայսմ ատուր վկայութիւն... լուսաւորչին մերոյ Հռիփսիմեայ կուսի»³։ Մի երրորդ օրինակ՝ «Յունիս ժ և մարգաց Դ.—վկայութիւն սրբոյն Բարբաշմենայ եպիսկոպոսին պարսից»։

Յայսմ ատուր աղախնոյն Աստուծոյ Պեղիգեայ...

Յայսմ ատուր յիշատակ է սուրբ ճգնաւորին Վարդիկ հօրն, որ ի Մեծ Հայք»⁴ և այլն։

Ահա այս կրկնվող «յայսմ ատուր» բառակապակցությունից և ծագել է ժողովածուի «Յայսմատուրք» անունը, որ, մեր կարծիքով, ծայր է առնում Տեր-Խարայելի անվան հետ կապվող խմբագրությունից։

Հայսմավուրը սոսկական տոնացույց չէ, այլ նաև նյութերի հավաքածու. այնտեղ ի մի են բերված յուրաքանչյուր օր կատարվող տոնի մասին նյութեր՝ Եղնթերցումները։ Մեր օրացույցների նախատիպն է Հայսմավուրը իր կազմությամբ. տարեկզբի առաջին օրից մինչև վերջինը նշվում են տոներ, հոբելյանական տարեթվեր, իրադարձություններ՝ համապատասխան նյութերով։ Միայն, հասկանալիորեն, Հայսմավուրենրում գերազանցորեն նշվում են եկեղեցական տոներ ու գործիչներ, որոնց մասին Ընթերցվածները՝ եկեղեցում բարձրաձայն կարդացվելիք նյութերը, չոր տվյալների ու տեղեկությունների բնույթ չեն կրում, այլ զրուցապատում, կիսաբանահյուսական, կիսաառասպելական վիպումներ են ըստ միջնադարի գեղարվեստական մտքի ու ճաշակի։ Սրբանով և նրանք դառնում են ուսումնասիրության առարկա՝ գրականագիտական առումով։

Հայսմավուրը ժողովածուները միջնադարյան մյուս ժողովածուների

² Ձեռ. 3658, էջ 102ա, Այսուհետև նույնպես Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը կնշվեն սոսկ ձևագրի համարով և էջով։ Մյուս պահոցների դեպքում կնշվի և տեղը։

³ Ձեռ. 4683, էջ 82բ։

⁴ Ձեռ. 7361, էջ 107 ա։

նման չունեն որոշակի ու ճշգրտված պատկեր: Նրանք այլադան են ոչ միայն տարբեր դարերում կրած խմբագրական փոփոխությունների հետևանքով, այլև հետագա նորամուծումների, որն է խմբագրության հստակ դիմագիծ պահպանած չլինելու պատճառով: Դրանց մի խումբը իր վրա կրում է հունական Հայսմավուրքի որոշակի ազդեցությունը, մյուսը՝ լատինականի⁵, մի երրորդը որոշակի ազդալին դիմագիծ է նպատակադրում, մի ուրիշը նաև եբրայաստորական սինխրոնիկ պատկեր է տալիս, մի հինգերորդը խառնուրդ է սրանցից մեկի կամ երկուսի, այլ կերպ ասած՝ որբան ժողովածու, գրեթե այդքան նոր օրինակ, որը թե՛ ընդհանուր շատ բան ունի մյուսների հետ և թե՛ անսլացման մի նոր գիծ է պարունակում:

Այդ տարատեսակությունը բնորոշ է ոչ միայն հայ ժողովածուներին, այլև, ինչպես հայտնի է, այլ ժողովուրդների՝ միջնադարում գործող նման ժողովածուներին⁶:

Ահա հետաքրքրողը ոչ այնքան դրանց ծագման խնդիրն է, որքան

⁵ Տե՛ս, Ավգուստին, հ. ԺԱ, էջ ԾԸ, ՀԲ—ՀԷ:

⁶ Տե՛ս նույն տեղում: Տոնական ժողովածուների ոչ միայն կազմության, այլև ակունքների վերաբերյալ մի հիմնավոր աշխատություն ունի գրած ռուսական եկեղեցու հին ու բանիմաց հայերից մեկը՝ արքեպիսկոպոս Սերգին (աշխարհիկ անունը՝ Վասիլի Սպասսկի): Նրա ուսումնասիրության արանցքը ռուսական ժողովածուներն են, որոնք արևելյան եկեղեցիների կազմում են դիտվում. աշխատությունը վերնագրված է հենց այդպես՝ «Արևելքի լրիվ Տոնամակը» («Полный Меснянецлов Востока архимандрита Сергия» W., 1875): Իր առաջաբանում հեղինակը որոշակիացնում է նպատակը՝ վերականգնել ռուսական եկեղեցում ընդունված բոլոր տոների լրիվ ցանկը, անկախ այն բանից, թե որ ժամանակներում են նրանք մտել տոնակարգ կամ դուրս մնացել նրանից և այդ ցանկն ամբողջացնելու համար աշխատության մեջ ընդգրկում է ուսս արարողական ողջ գրականությունը իր տոնակարգային բոլոր տեսակի ժողովածուներով՝ Տոնացույց, Վկայագիրք, Ճառքնոց, Հայսմավուրք և այլն:

Ահա հետաքրքրողն այդ ուսումնասիրության մեջ նշված ժողովածուների թարգմանական ակունքների րացահայտումներն են եղել: Ուսումնասիրողը նշված ժողովածուների նախահիմքերը տեսնում է բրիտոնական եկեղեցու ղեկուս կազմավորման շրջանում՝ նրա տոնակարգի կարգավորման առաջին իսկ քայլերում (էջ 9—11):

Նշված ժողովածուների ակունքների մասին արքեպիսկոպոս Սերգիի փաստարկները շատ արժեքավոր են, հնագույն աղբյուրների մասին նրա դիտարկները՝ հիմնավոր ու վստահելի: Եվ որովհետև նրա գրից արված եզրակացությունն այն է, որ բննարկվող ժողովածուների ծագումն ու սկզբնաղբյուրները գրեթե անհնարին է ճշգրիտ վերականգնել հետագայի խճողումների հետևանքով, ինչպես նաև հեղինակներին գտնել դարերի շփոթի մեջ, այդ մեկ մղում է շատ լսոթարանալու դրանց ծագումնաբանության մեջ և հարցը բնեկու մեր ժողովածուների շրջանակներում՝ նախապես ընդունելով, սակայն, նրանց նախօրինակների պոլությունը համարել տոնական գրականության մեջ:

ներված նույնիսկ թարգմանական ժողովածուների պատմական ղարգացումն ու ընթացքը հայ իրականության մեջ, հայ կյանքի ներթափանցման աստիճանը տարբեր ժողովածուներում և նրանց գեղարվեստական կշիռը հայ գեղարվեստական արձակի պատմության մեջ:

Հայ իրականության մեջ որոշակիորեն շտարորոշված, բայց նմանատիպ այդ ժողովածուները բազմաանուն են՝ Տոնացույց, Տոնական, Տոնամակ, Ճաշոց, Տոնապատճառ, Ճառքնտիր, Հայսմավուրք և այլն: Սրանց մեջ նյութների ընդհանրությունը շատ մեծ է: Գերակշիռ մասով սրանք պատմություններ են եկեղեցու հայրերի կյանքի ու գործունեության, առավելապես նահատակության վերաբերյալ: Որևէ գործչի՝ «սուրբ հօր», վաքք կամ «քաղաքավարութիւն» կարելի է գտնել և՛ Տոնապատճառում, և՛ Ճառքնտրում, և՛ Հայսմավուրքում: Հետևապես, նյութի ընդգրկումը դեռևս ոչինչ չի ասում ժողովածուի բնույթի մասին: Գրեթե ոչինչ չի ասում նաև նյութի շարադրանքը, քանի որ միևնույն վարքը կամ վկայաբանությունը ամեն մի ժողովածուում յուրահատուկ ծավալ ու շարադրանք ունի: Առայժմ որոշակի կարելի է ասել, որ Հայսմավուրքի համար բնորոշ է համառոտ, մինչդեռ Ճառքնտրի կամ Տոնապատճառի համար՝ ավելի ընդարձակ և գեղարվեստական շարադրանքը:

Մի բան պարզ է, որ այդ ժողովածուները արարողական կարգին են նպաստել և ըստ այդ դերի էլ տարբերակվել են. սրանցից որոշները հենց եկեղեցում ընթերցվելու նպատակ են հետապնդել, ուստի և համառոտ են, մյուսներն ավելի նախատեսվել են «տնային» կամ ուսումնական ընթերցանության համար, հետևաբար և չեն սահմանափակվել ծավալով, մի մասը՝ հնագույնները, տերտնական տոների կարգով են ստեղծված, մեկ այլ, առավել ուշ կազմված խումբ՝ տոմարական ամսաթվային սկզբունքին է հետևել և այլն, և այլն:

Այս պատկերը մենք ներկայացնում ենք սոսկ մեր ձեռագրական աղբյուրների ուսումնասիրությամբ: Հետազոտողները նշում են նաև դրանց տարատեսակությունը հիմք-աղբյուրներում՝ հունա-ասորական գրականությունների մեջ:

Նշանակում է մեզ հետաքրքրող Հայսմավուրք ժողովածուների տարբեր խմբագրությունների գոյությունը օրինաչափ երևույթ է, և ուսումնասիրողին է մնում՝ ա. տարորոշել այդ խմբագրությունները, բ. սահմանագծել Հայսմավուրք ժողովածուի սկզբնավորման, յուրաքանչյուր խմբագրության ձևավորման ժամանակը, գ. բացահայտել առանձին խմբագրությունների հետ կապված մշակութային գործիչների կատարած նոր խմբագրությունների պատմական շարժառիթները:

Ինչպես հին գթական տեսակ-ժանրերի, այդպես և հայ միջնադարյան ժողովածուների մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ սրանք խիստ անջրպետված ու տարրորշված չեն հղել անցյալում: Իրենց արարողական-գործնական կիրառման տարբերությունների հետ մեկտեղ, ունեցել են ընդհանուր տոնակարգից ու աշխարհայացքից բխող շատ ընդհանրություններ, փոխադարձ ընդելուզումներ, ներթափանցումներ, որոնք և պատճառ են դարձել դրանց շփոթի, անվանումների տարատեսակության: Ուստի և առանձին տոների առթիվ զրած ճառի, սրբի վարքի կամ վկայաբանության մասին ակնարկը վաղ աղբյուրներում դեռևս չի վկայում այդ ստեղծագործությունների ամբողջական ավարտուն ժողովածուների գոյությունը վաղ միջնադարում: Ինչ-որ մի օրինաչափությամբ դրանց առանձին տարրերը իբրև ատաղձ նյութ են հանդիսացել առավել ուշ ժամանակներում՝ VIII—IX դարերից հետո ձևավորվող բաղմատեսակ ժողովածուների համար:

Այս ժողովածուներից յուրաքանչյուրն ունեցել է իր դարգացման ուրույն ճանապարհը և ամեն մեկն իր հատուկ ուսումնասիրողին է սպասում, սակայն, քանի որ Հայսմալուրք ժողովածուն, ինչպես և որևէ միջնադարյան ժողովածու, անհնար է քննել ողջ արարողական գրականության համակարգից դուրս, այդ իսկ պատճառով հնարավորության չափով նշվածներն ուսումնասիրել ենք ձևագրական սկզբնաղբյուրներով և դրանց անդրադարձել աշխատությանս մեջ, բավարարվելով նկատումներով: Եվ եթե նույնիսկ վրիպած լինենք այս կամ այն ժողովածուի բնութագրման մեջ, ապա մեր քննության առարկա Հայսմալուրք ժողովածուների ձևավորման հարցում անկասկած-շահել ենք՝ դրանց զուգադրությունների շնորհիվ դիտելով և բացահայտելով վերջիններիս սկզբնավորման և ձևափոխումների բարդ ուղին:

Այդ ուղին սկսվում է նշված ժողովածուների խրթին խաչմերուկներում և ոչ պատահականորեն կապվում Գրիգոր Վահրամ կամ Մեծ Վկայասեր կաթողիկոսի անվան հետ:

ՄՈՂՉՎԿԱՅԱՍԵՐՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Պարզելու համար Գրիգոր Մեծ Վկայասերի ավանդը նշված ժողովածուների դարգացման գործում, անհրաժեշտ է անդրադառնալ այն խընդրին, թե ի՞նչ է հղել հայկական մատենադրական անդաստանում մինչ Վը-

կայասրը և թե զրական ի՞նչ հենաձողերի վրա է բարձրացել միջնա-
դարում մեծ տարածում գտած այդ ժողովածուն:

Խոսքն, անշուշտ, չի վերաբերում առանձին վարքերի, վկայաբանու-
թյունների Քարգմանության ու արարողական ժողովածուների մեջ դրանց
ներթափանցման մասնակի փաստերին, այլ միջնադարում գործող ամբող-
ջական ժողովածուների գոյությանը, որը սոսկ մշակութային արժեքից շատ
ավելի լայն պատմաքաղաքական հորիզոններ է ընդգրկել:

Սրանցից որոշակի անուն ու հեղինակություն ունեցող հնագույն ժո-
ղովածուն Տոնականն է, որի ստեղծումը կապվում է Մաքենյաց վանքի
«Հարանց հայր» Սողոմոնի անվան հետ: Այս մասին ոչ միայն հիշատա-
կում են մատենագրական հուշարձանները, այլ, որ առավել կարևոր է,
հաստատում են ձեռագրական սկզբնաղբյուրները: Հայ ժամանակագիր-
ներից Մխիթար Այրիվանեցին շատ պարզ ու որոշակի ավանդում է, որ
«Հայր Սողոմոն արար զՏօնականն ի Մաքենիս 697 թուականին»⁷: Նույնն
է հաստատում վանական վարդապետի անունով մնացած «Հարցմունք և
պատասխանիքը». «Հարցում. զհայոց գրեանքն ո՞վ է կարգել. պատաս-
խան. զՏօնականն՝ Մաքենացին հայրն Սողոմոն, զՏօնացոյցն՝ վարագայ
հայրն Ատում, զՏօնապատճառն՝ վկայասէրն»⁸:

Սողոմոն Մաքենացու՝ իբրև Տոնականի հեղինակի փաստն են վկա-
յում նաև պատմիչներ Մ. Կաղանկատվացին⁹, Ստ. Օրբելյանը¹⁰ և ուրիշ-
ներ: Պատմիչների հիշատակագրություններից բացի, ձեռագրական աղ-
բյուրները պահպանել են ժողովածուն ձեռնարկած ու ավարտի հասցրած
հեղինակի անունը, որի գործը թեև ոչ սկզբնական-ինքնագիր տեսքով,
բայց գրեթե ամբողջությամբ՝ բնագրով ու հիշատակարանով տեղ է գտել
բաղմամբով այլանուն և ուշ գրված ժողովածուներում: Սրանցից ամենա-
արժեքավորն ու թերևս հնագույնը Մաշտոցի անվան մատենագրանի

⁷ Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 66:

⁸ Դժվար է, անշուշտ, որոշակի տարեթիվ դնել այդպիսի մի հսկայական ժողովածուի
կազմման համար. Այրիվանեցու նշածը հավանորեն ավարտին է վերաբերում, բայց այն,
ինչպես կտեսնենք, աղճատված է գրչական տարբերակների պատճառով: Բոլոր դեպ-
քերում Սողոմոնի VII—VIII դարերում ապրելն անհերքելի է, բանի որ նրա՝ իբրև վանքի
առաջնորդի ստորագրութունը կա Մանազկերտի 726 թ. ժողովի մասնակիցների ցանկում
(Ումանյան, էջ 838—839), նա եղել է Ստեփանոս Սյունեցու ուսուցիչը (մահ. 735),
հյուրընկալել է Վահան Գողթնացուն 736 թ., այլ ևս վկայում և բաղմամբիվ այլ փաստեր
(Անսույան, հ. Դ, էջ 568):

⁹ Թովմյան Լ., Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 41:

¹⁰ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 359:

¹¹ Օրբելյան Ստ., Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 99, 101, 132:

№ 7729 ձեռագիրն է՝ գրված 1200—1202 թվականներին, Դարանաղյաց Ավագ վանքում¹¹, բայց Մշո Աստվածածնի վանքին պատկանելու պատճառով այն հայտնի է Մշո Տոնական կամ Մշո Ճառքնտիր անվամբ։ Նըշված եղակի ձեռագիրն արժեքավոր է ոչ միայն իր ծավալի, կշռի, ձեռագրական բարդ կենսագրության առումով, այլև անշափ կարեւոր՝ Սողոմոն Մաքենացու Տոնական ժողովածուի պարունակության և բնույթի վերականգնման համար։ «Ճիշտ է,—միանգամայն իրավացիորեն գրում է Արտ. Մաթևոսյանը,—որ նրա (Տոնականի—Մ. Ավդ.) գաղափարի օրինակը Սողոմոն Մաքենացունը չի հղել, սակայն անպայման սերում է Տոնականի՝ Մաթենացու խմբագրությունից, ինչպես ցույց են տալիս գրչի և հիշատակարանի վկայությունները»¹²։ Հարցը պարզ դարձնելու համար ասենք, որ 7729 ձեռագիրը նախնադարձ է, հնագույն ձեռքերի ընտիր ժողովածու, ուստի և այն իրավամբ կոչվում է Ճառքնտիր։ Բայց այդ Ճառքնտիրի հիմքում ընկած է Սողոմոն Մաքենացու Տոնականը, որ պահպանվել է և՛ նյութով, և՛ հիշատակարանով (էջ 602 ա)։ Սողոմոնի մասին այս տեղեկությունները հետագա Ճառքնտիր գրիչը՝ Վարդան Կարնեցին, քաղել է, անշուշտ, Սողոմոնի բուն Տոնականից՝ նրա հիշատակարանը ձեռքի տակ ունենալով։ այս մասին ևս ակնարկ կա Ճառքնտիրի հիշատակարանում. «Սակայն և ի նմանէ առեալ գրելադրելի օրինակս ուխտաւորաց երջանկաց յօրինեցին ընդ միտ ամէնով ոչինչ նուազ նորայոցն զրեւոց...»¹³։ Այստեղ կարևորը նախօրինակի հիշատակումն է, «զթևադրելի օրինակս», որում անշուշտ պահպանված է եղել Տոնականի Սողոմոնի հիշատակարանը, որից տվյալներ է քաղել ավելի ուշ՝ նորանոր ձեռքերով լրացրած Ճառքնտիր գրիչ Վարդան Կարնեցին կամ նրան նախորդող գրիչները¹⁴։

¹¹ Տե՛ս Արտ. Մաթևոսյան, *Երբ և որտեղ է գրվել «Մշո Տոնական-Ճառքնտիրը»* շահական հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 137—161։

¹² Նույն տեղում, էջ 141։

¹³ Նույն տեղում։

¹⁴ Սողոմոն Մաքենացու մասին կենսագրական տեղեկությունները խիստ սուղ են։ Այս պարագաներում արժեքավոր պիտի լինեն Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերում նրա ուր թաղված լինելու մասին հիշատակությունները. «Արդ զրեցաւ սուրբ Աւետարանս ի Թուականս հայոց Ջեփ (1496) ձեռամբ անիմաստ... Ալեգսիանոս անուամբ միայն արեղայի... ի սուրբ ուխտս Մարինացոց, ի դուրս սուրբ տաճարիս Աստուածածնիս և հայր Սողոմոնի գերեզմանիս...» (Ձեռ. 6648, էջ 228)։ Մինևույնը կրկնված է նույն Ալեգսիանոս գրչի 1498 և 1499 թվականներին ընդօրինակած Ավետարանների հիշատակարաններում, 1498 թվականի (Ձեռ. 3629, էջ 261) հիշատակարանը նախորդի բացառաձև կրկնությունըն է, մինչդեռ 1499 թվականին գրվածը (Ձեռ. 220, էջ 283) իմաստով նույնն է, բայց շարադրանքով տարբեր՝ «...ի դուրս սուրբ տաճարիս Աստուածածնիս»

Մշո Ճառընտրի մեջ Սողոմոնի Տոնականից մնացած այս հիշատակարան-բնութագիրը¹⁵ ինչպես նաև ժողովածուի բուն կմախքը շատ օգնում են տարբերակելու Տոնականը Ճառընտրից և որոշակի հստակություն մտցնելու հայ իրականության մեջ ուրույն պատկեր ստացած այդ երկու ժողովածուների բնույթի ու կազմության խնդրում: Դժբախտաբար, դրանց որոշակի նմանությունը պատճառ է դարձել ընդհանրապես Տոնական և Ճառընտր ժողովածուների նույնացման, որ խորացրել է շփոթը և դժվարացրել ուսումնասիրողների գործը: Սակայն ձևագրերը, գրչական ազնիվ ավանդներին հետևելով, ամենախճողված իսկ Ճառընտրի մեջ պահել են «Տոնական» անունը, եթե անգամ նրա հեղափոխ նախահիմքում է ընկած եղել Տոնականը:

Արդ. Ի՞նչ է իրենից ներկայացնում Տոնական ժողովածուն, ո՞րն է նրա առանձնահատկությունն ու տարբերությունը Ճառընտր ժողովածուներից:

Նախ ասենք, որ սրանց միակ ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ ճառերի հավաքածուներ են, բառիս բուն իմաստով եկեղեցու հայրերի ընտիր հատերի ժողովածուներ, իրոք նաղընտիր. այս իմաստով, այս, Տոնականն իր կազմով դարձյալ ընտիր ճառերի հավաքածու է և կարող է համարվել Ճառընտրի մի տեսակ՝ ըստ կազմության¹⁶:

Բայց թե ի՞նչ կարգով, Ի՞նչ բովանդակությամբ ճառերի հավաքածուներ են Տոնականները, այստեղից էլ սկսում է սրանց տարբերությունը, որ մենք դիտել ենք նշված ժողովածուների հիշատակարաններում պահպանված Տոնական կամ Ճառընտր անվանումների և բուն ժողովածուների նյութերի համադրության ճանապարհով:

1. Տոնական ժողովածուի առաջին տարբերությունը Ճառընտրներից՝

սխա և հայր Սողոմոնի ճշխարացս...» և այլն: Զարմանալիորեն, այս հիշատակարաններում նշված Սողոմոն Մաքենյաց վանքի առաջնորդի անունը դուրս է մնացել և հաշիկյանի պատկանելի հատորների անվանացանկից:

Ընդհանրապես Մաքենյաց վանքի և հայր Սողոմոնի ավանդույթների մասին բավականաչափ նյութ են տալիս ձեռագրերը, որոնք առանձին ուսումնասիրության առարկա կարող են դառնալ:

¹⁵ Տե՛ս Արտ. Մատթևոսյանի վերոհիշյալ հոդվածը:

¹⁶ Պատահական չէ, որ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի (Մագիստրոսի) ձեռագրերի թեմատիկ ցանկում Տոնականները մտած են Ճառընտր ժողովածուների կազմում: Մագիստրոսըն այս առումով իրավացի է: Բայց Ճառընտիրը Տոնականից պետք է տարբերակել թեև ուղ հինգ միայն այն պատճառով, որ Տոնականը Ճառընտրի մի տեսակն է, բայց ամեն Ճառընտր Տոնական չէ: Տոնականը հատուկ համակարգով ընտրված ճառերի ժողովածու է:

նրա նյութի որոշակիությունն է, որը սահմանափակում է նրա ծավալը Ճառընտրի համեմատությամբ: Տոնականը ծավալով փոքր է Ճառընտրից նաև աչն պատճառով, որ այնտեղ ընդգրկված են հնագույն և սահմանափակ հեղինակների ստեղծագործություններ:

2. Ի տարբերություն Ճառընտրիների՝ Տոնականը որոշակի կառուցվածք ունի. այն է՝ տերունական տոների ժամանակագրական ընթացք՝ Ավետման, Ծնունդ, Մկրտություն, Քառասնօրյա պահք, Խաչելություն, Թաղումն, Հարություն, Այլակերպություն, որոնց նվիրված են եկեղեցու ճանաչված հայրերի ճառերը:

3. Ի տարբերություն Ճառընտրի ժողովածուների, Տոնականում խիստ մասնակի են, գրեթե չկան վաղեմ եւ վկայություններ. մեր կարծիքով, սկզբնապես բացարձակորեն չեն եղել սրբերի տոներ. Տոնականը տեղումնական տոների կարգավորումն է, դրանց մասին ճառերի հավաքածոն. այս առումով նրա տոների կարգը ներդաշնակում է Ճաշոցին:

Նմուշի համար բերենք Փարիզի № 49 հնագույն, թեև պակասավոր ձեռագրի (ԺԳ—ԺԴ դարեր) տոնակարգը՝ Հարության տոնն իր ճառերի ցանկով, որ, մեր կարծիքով, ավելի անաղարտ է պահել Սողոմոն Մաքենացու Տոնականի նախնական տեսքը.

Սկզբից թերի.

31ա—Ի մեծի աւուր տէառն ընդառաջին երանելոյն Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի...

31բ—Յովհաննու Ոսկեբերանի ի թղտո մեկնութենէ՝ Յաղագս յարութեան մեռելոց

33ա—Ի յիշատակ հանդուցելոց ի Քրիստոս...

36ա—Կիրովի երուսաղեմի... Ի յարութիւն մեռելոց

39ա—Յովնանու Ոսկեբերանի՝ Վասն սգաւորաց մխիթարութիւն...

43բ—Յովն. Ոսկեբերանի ի մեկնութենէ մարգարէին Երեմիա վասն յարութեան մեռելոց:

—Նորին ի Կորնթացոց թղթոյն մեկնութենէ...¹⁷

Այս տիպի տոնակարգի և ճառերի ժողովածուն է Տոնականը, որը որքան էլ խառնված է լինում ուշ ներթափանցած նյութերի հետ, նոր ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում զարմանալիորեն պահում է նախահիմք հանդիսացող ժողովածուի անունը. «Արդ բանաւոր ծիծռունք, որք հանապազ զճոխ զարունն աւետարանէք՝ զովացուցանելով զպասկացեալ

¹⁷ Մ. Մագիստրոս, Ճառընտիրք, էջ 132:

անձինս... արձակեցէք զիս զբաղմամբնս... զՔրիստոսատուր երեց զկաղ-
մող Տօնակաւիս և պակասութիւն անարհեստութեան մի մեղադրեք, զի
կար իմ այս էք»,—գրում է Փարիզի վերը նշված ձեռագրի կազմարարը:
Նման հավաքածուներ են Մակլերի նկարագրած Փարիզի № 46, 47
ժողովածուները (երկու հատոր), որոնցից առաջինը Տոնական է, սկզբում
ավելացված են որոշ վկայաբանական նյութեր, նույնիսկ ամսաթվային
նշումներով, բայց 105 ա էջից մինչև վերջ՝ 331 բ էջը, որոշակի Տոնական
է՝ տերունական տոների ճառերի կարգով: Երկրորդ գիրքը՝ վկայություննե-
րի հատոր է, և Մակլերի նկարագրության մեջ ժողովածուն կոչված է երկու
անվամբ. «Tōnakan, Homiliaire et Martyrolog»: Կարևորն այս դեպ-
քում առաջին գրքի՝ Տոնական անվանումն է, որ ճշտվում է հիշատակա-
րանով:

«Ողորմեա ստացողի սուրա Աւետիք վարդապետի, որ յորդորեաց զբա-
ղումս ի րարեղործութիւն և զարդարեաց եկեղեցի սուրբ, շինեաց եկեղե-
ցի զմբկթիւ յանուն սուրբ Աստուածածնին ի Գահճակ վանքն: Եւ մի եկեղե-
ցի յաստուածապահ քաղաքն Կաֆա: Եւ հոտ գրել Տօնակաւն երկու... Գրեցաւ
գիրս ի Քրիստոսի մարդեղութեանն ՈԳ ամին»¹⁸:

Նման՝ տերունական տոների կարգով գրված ժողովածուի մի հա-
մեմատաբար անաղարտ օրինակ է նաև Մաշտոցյան Մատենադարանի
4670 ձեռագիրը, որ թեև ուշ ժամանակի է (1401 թ., վան), բայց պահել է
իր բնօրինակի պատկերը Տոնականի կարգով՝ Հայտնությունից մինչև
Ծաղկազարդ, յուրաքանչյուր տոնի ճառերը: Եվ չնայած ժողովածու են
ներթափանցել այլ ձեռագրերից եկած վարք-վկայաբանություններ և այ-
լազան նյութեր, այն, հատկապես իր սկզբնական մասով, լրիվ Տոնակա-
նին է համապատասխանում և իբրև Տոնական է նշվում գրչի հիշատակա-
րանում. «...տեսեալ երիցս երանեալ և սրբասնունդ կրօնաւորն Ստեփա-
նոս... ցանկացաւ այսմ աստուածային գրոցս, որ կոչի Տօնակաւն, զոր
ունի յինքեան զպատմութիւն և զգովասանութիւն տօնից տնօրինականցն
Քի ԱՅ մերոյ, զյարութիւն փրկչին մերոյ...»¹⁹: Այսպիսի բազմաթիվ ձե-
ռագրեր կան, որոնք Ճառքերի անվամբ առկա են ցուցակներում, բայց
երբ դրանց հիմքում ընկած է եղել Սողոմոնի Տոնականը, այդ միշտ ար-
ձանագրվել ու պահվել է ձեռագրերի հիշատակարաններում: Բազմաթիվ
ուշ ձեռագրերում էլ անսպասելիորեն հանդիպում ենք Տոնական անվա-
նումին, և միշտ ժողովածուն սկզբում, միջում կամ վերջում բացահայտում

¹⁸ Նույն տեղում, էջ 1:

¹⁹ Նույն տեղում, էջ 348, ձեռ. 4670, էջ 260:

է Տոնականի կամ նրա մի հատվածի պահպանումը տվյալ ձևազրուսմ²⁰:

Բայց այս բոլոր հիշատակարաններում Տոնական անվանված ժողովածուների հիմքը փաստորեն Մշո Ճառքնտիրն է, որի մեջ ամբողջությամբ ընդգրկված և պահպանված է VIII դարի Սողոմոն Մաքենացու կազմած Տոնական թե՛ ժողովածուն, թե՛ հիշատակարանը. նայենք նրա տոնակարգին, հեղինակներին ու ճառքի բնույթին հենց սկսվածքից. էջ Յա. Ի մեծի աուր ճրագալուցին ծնընդեան և յայտնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի երանելոյն Սեբեթիանոսի եմեսու եպիսկոպոսի՝ Խոսք ի ծընունդն Քրիստոսի Յերուսաղեմի քաղաքի: «Ի մէջ Քրիստոսասիրաց...»

Առաջին շաբաթուն շաբաթ աուրն Յիշատակ սրբոյն Թնողսրոսի զօրավարի յեկեղեցական պատմութենէ «Ի ժամանակին...»

Երանելոյն Հովհ. Ոսկեբերանի՝ Յաղագս ապաշխարութեան ճառ:

Բ շաբթուն շաբաթ օրն յիշատակ սուրբ հայրապետին Երուսաղեմի Կիրզի: Վկայաբանութիւն հայրապետին Կիրզի:

Երանելոյն Հովհ. Ոսկեբերանի՝ Յաղագս պահոց:

Երկրորդ օր ի վարդապետութենէ սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչի:

Սրբոյն Բարսեղի՝ Յաղագս պահոց.

Սրբոյն Եփրեմի՝ Յաղագս պահոց.

Նորին Յովհ. Ոսկեբերանի՝ Ապաշխարութեան.

Սրբոյն Եղիշեյի հայոց վարդապետի՝ Ի յարութիւն Ղազարու...

Սրբոյն Իգնատիոսի հայոց վարդապետի ի Ղուկասայ Աւետարանին մեկնութենէ:

Տեառն Զաւարիայի կաթողիկոսի՝ օր Արմաւենեաց և ի դալուստը տեառն յերուսաղեմ: Երանելոյն Զաւարիայի հայոց կաթողիկոսի ի մեծի օր Էրեբշաբթի արտադրութիւն:

Տեառն մերոյ՝ Երանելոյն Կիրզի Երուսաղեմի... Ի թաղումն տեառն:

Սրբոյն Եղիշեյի վարդապետի՝ Ի քաղումն տեառն մերոյ:

Երանելոյն Զաւարիայի հայոց կաթողիկոսի՝ Ի թաղումն տեառն:

Երանելոյն Աստուածաբանի՝ Ի Յարութիւն տեառն:

Ի յիշատակ սուրբ Թադաւորին Կոստանդիանոսի: «Այլ արժան է...»

Երանելոյն Եփրեմի ասացեալ՝ ՅայՂակերպումն տեառն:

Մովսեսի Խորենացոյ մեծի իմաստասերի. Պատմութիւն յաղագս փոխման Աստուածածնին և նկարեալ պատկերին անարատի զոր Եթող

²⁰ Ձեռ. 4670, էջ 250: Ըիշտ այս նույն տիպի են Մատենադարանի 9411 (1409 թ.), 4709 (1344 թ.), 5349 (ԺԴ) ձևազրկերը, որոնք հիշատակարաններում կոչվում են Տոնական:

սրբուհին նշխար վասն կենաց աշխարհի «Հրաւիրեալ սուրբ կույսին ի փոխումն առ որդի իւր»:

Երանելոյն Եփրեմի Խորին ասորոյ ասացեալ ներբողեան պատմագրաբար ի սուրբ Յովհաննէս ի Կարապետ և ի մկրտիչն Քրիստոսի և ի կախաւումն Հերովդիայալ. թարգմանեալ Գրիգորիսի հայոց կաթողիկոսի. «Հրաւիրելով կոչեցաւ լեզու իմ»²¹:

Սահակայ սրբոյն Հայոց կաթողիկոսի թէ որպէս հաստատեցան կարգ եկեղեցոյ, և որոշումն վանաց:

Դարձեալ յառաջին թագ: Եւ ժողովեցին այՂաղգիք:

Նորին Յովհ. ԱյՂ Յակովբեանքն...

Սրբոյն Ստեփաննոսի յառաջսարկաւագի՝ Երանելոյն Գրիգորի Նիսա-ցոյ:

Զիշտ այս տիպի է Մատենադարանի 3782 (ԺԲ դ.) ձեռագիրը, որ հիշատակարանում դարձյալ ունի՝ «Ով մանկունք սուրբ եկեղեցոյ, որք կարդար ի մաքրափալ յաղօթս ձեր յիշեցէր զտէր Աստուածատուրս Կարնոյ քաղաքից, որ զՏօնականս բաղում...» (կտրված)²²:

Ինչպէս տեսնում ենք, ճատերի հեղինակներն են քրիստոնեական Հանաւած հայրերը, նյութը տերունական է, նույնիսկ գրչության մեջ պահանջներն են ավելի վաղ ժամանակների հետքեր:

Ինչպէս պարզորոշ երևում է Մշո Ճառքնտրի ցանկից, Սողոմոնի Տոնականը ոչ մի կապ չունի այն ժողովածուների հետ, որոնք լեցուն են վարդ-վկայաբանություններով և այս կամ այն կերպ կարող էին հիմք դառնալ Հայսմաւուրք ժողովածուների՝ «Յայսմ աւուր» տօների ընթերցմունքների համար: Սրանով Տօնականն իբրև աղբյուր դուրս է մնում Հայսմաւուրքների սկզբնաղբյուրների ցանկից:

Ավելի ընդլայնված Ճառքնտրիները, ոչ պատահականորեն, ձեռագրերում «Տօնականի ձագ» անունն են ստացել. «Ճառքնտրի և Տօնականի ձագ սա կոչի»²³, — գրում է Վենետիկի 222 ձեռագրի հիշատակարանի գրիչը:

Քանի որ, ինչպէս տեսանք, Տոնականը էապես տարբեր է Ճառքնտրից, ապա անհրաժեշտորեն հարկ է անդրադառնալ նաև Ճառքնտրի ժողովածուներին և տեսնել, թե սրանք ի՞նչ չափով են առնչվում Հայսմաւուրքներին ձևավորմանը:

²¹ Ժողովածուին շատ սաղական հետագա հավելում է:

²² Ձեռ. 3782, էջ 133ա, 246բ:

²³ ՏԵՍ Սաղկիսյան, հ. Բ, էջ 324, 346:

Ճառընտիր ժողովածուները, ըստ մեր դիտումների և առկա ձևադրական պատկերի, մի քանի խումբ են կազմում:

Առաջին. Ընտիր ճառերի ժողովածուներ, որոնք Տոնականի հիմքով՝ տերունական տոների կարգով են կազմված, ընդգրկում են ոչ միայն ընդհանուր քրիստոնեական հայրերի, այլև հայ եկեղեցական նշանավոր գործիչների ճառեր՝ տերունական տոների, նրանց մեկնաբանության, պատճառների մասին: Այլ կերպ ասած՝ այս խմբի ճառընտիրները ճառացված ու լրացված տոնականներն են, հարստացված նաև այլ ժողովածուներից եկող սրբախոսություններով, որ գրեթե չկան Տոնականում:

Ինչպես մյուս ժողովածուները, սրանք նույնպես թարգմանական ավանդույթ ունեն, սերում են համաքրիստոնեական ակունքներից, բայց ընդհանուր սկզբունքներ պահելով հանդերձ, դառնում են ինքնուրույն-ազգային ժողովածուներ, միմյանցից տարբերակվելով տարբեր ժողովուրդների դավանաբեի, ազգային կյանքի արտացոլումներով: Սկզբնապես սրանք Բարսեղ Կեսարացու, Դրիզոր Նաղիանդացու և գերազանցորեն Հովհան Ոսկերեքանի ճառերի թարգմանություններն են, որ ռուս իրականության մեջ երբեմն ուղղակիորեն «Златоуст» անունն են կրում: Փոխվում է ճառընտիր ժողովածուների ոչ միայն կազմը (հարստացվում, լրացվում է), այլև տոնակարգի սխեման. հնագույն մյուս տոնական ժողովածուների նման նրանք սկզբնապես շարժական տոների բնույթ են կրել, իսկ ապագայում՝ տոմարի կայունացման հետ մեկտեղ նրանք նույնպես ամսաթվային, օրացուցային են դարձել, ճառերը դասավորելով հոմեական կամ հայկական ամսակարգով²⁴: Այժմ ձևագրերը պահպանում են ճառընտիրների բաղմաթիվ ընդօրինակումների կամ խմբագրություններ թե՛ տերունական տոների և թե՛ օրացուցային կարգով, բայց դրանից նրանց էությունը չի փոխվում, այլ դասավորությունը միայն: Սրանք տիպիկ ճառընտիրներ են, որոնց բնորոշ է ճառերի ընդարձակ, գեղարվեստական շարադրանքը: Մեր կարծիքով, սրանք ավելի մեծ գրական արժեք են ներկայացրել, քանի որ նախատեսված են եղել եկեղեցուց դուրս ընթերցանության համար:

Երկրորդ. Տոների պատճառները վերհանող հատուկ ճառընտիրները՝ Տոնապատճառները, նույնպես ընտիր ճառերի հավաքածուներ են, դարձյալ ճառընտիր մի այլատեսակը, բայց սեփական նպատակն ու բնույթն ունենալով, առանձնացել են իբրև ժողովածու և հատուկ «Տոնապատճառ»

²⁴ Այս տիպի ժողովածուները ռուսական իրականության «Четынь- Миней» կամ ուղղակի «Миней» հավաքածուներին և՛ համապատասխանում:

անուրը կրել: Տոնապատճառի սկզբնավորումը հայ մատենագրական ավանդույթը հասցնում է մինչև Արիստակես՝ Գրիգոր Լուսավորչի որդին: «Եւ մերս բերաւ աշխարհի սրբոյն Ռքստակիսէ, բերաւ յետոյ կարգեալն ի Կիրովէ...»²⁵: Այս, անշուշտ, չի վերաբերում ամբողջական ժողովածուի ձևավորմանը, այլ եզակի ճառերի թարգմանությունը: Տոնապատճառի ձևավորման մեջ ուրույն տեղ ունի Զաքարիա կաթողիկոսը՝ «Արդ՝ զսոցա բանսս առեալ սրբոց հայրապետէն մեռոյ Զաւարիայի և այլ սրբոց վարդապետաց լուսաւորեցին զամենայն հաւատացեալս ի Քրիստոս և ցուցին մէզ զտօնս և պատեալս նոցա»²⁶,

«Զաքարիա կաթողիկոսը, որ անշուշտ Զաղեցին պետք է լինի,—իրավացիորեն գրում է Անթաբյանը,—(աթոռակալել է 855—875 թթ.) մասնակցել է Տոնապատճառի ձևավորման ու նոխացման աշխատանքներին: Բայց թե ինչպես և ինչ չափով, հայտնի չէ: Սակայն ստույգ է, որ հնագույն Տոնապատճառների մեջ կան Զաքարիային պատկանող մի քանի մանր երկեր»²⁷: Ավելացնենք, որ Զաքարիայի անվամբ ճառեր են մնացել նաև Սողոմոնի Տոնականի լրացված խմբագրություններում՝ հետագա Ճաղընտիրներում. այսպես՝ Մշո Ճաղընտրի 351ա էջում՝ «Մեծի շաբաթի արտադրություն «Զաւարիայի հայոց կաթողիկոսի»²⁸, «Ի մեծ աւուր բ. շի Երանելոյն Զաքարիայի հայոց կաթողիկոսի»²⁹, «Ի մեծի աւուր ուրբաթուն՝ Զաքարիայի հայոց կաթողիկոսի»³⁰, «Թեոփիլոսի և Զաքարիայի ասացեալ ի թաղումն տեառն»³¹, «Զաքարիայի հայոց կաթողիկոսի ի փոխումն Աստուածամօրն»³² և այլն: Վերոհիշյալ ձեռագրի գրիչն ինքն ասում է, որ Զաքարիան օգտվել է նախորդներից՝ Արիստակեսի ներմուծածից և Կյուրեղ Ալեքսանդրացու կարգածից՝ «կարգեալն ի Կիրովէ»³³:

Եթե նկատի առնենք № 1007 ձեռագրի գրչության ժամանակը՝ ԺԲ դար, այսպե պետք է վստահենք հիշատակարանի հավաստիությանը: Բայց, ինչպես Անթաբյանն է ենթադրում, «Զաքարիայից բացի մի շարք այլ

²⁵ Անթաբյան Փ., Սամվել Կամբջաձորեցին և «Տոնապատճառ» ժողովածուն, Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 118:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում, էջ 119:

²⁸ Ձեռ. 7729, էջ 351ա:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 40:

³¹ Նույն տեղում, էջ 41:

³² Նույն տեղում, էջ 56:

³³ Մ. Մազիստրոս, Ճաղընտիրք, էջ 465:

վարդապետներ այս կամ այն չափով մասնակցել են մեզ հետաքրքրող ժողովածուի խմբագրման ու ճոխացման գործին: Սակայն Տոնապատճառի որպէս ուրույն միավոր— ժողովածուի ձևավորման պատմությունը բանասիրության մեջ ընդունված է կապել Սամուել Կամբջաձորեցու անվան հետ, ելնելով գրավոր աղբյուրներում պահպանված մի քանի հաղորդումներից»³⁴: Այդ են վկայում նաև Վանական վարդապետին վերագրված Հարցմունքի տարբերակներից մեկի տվյալները, թե «Ձտօնականն՝ Մաքենոց հայրն Սողոմոն կարգեաց: Ձտօնապատճառն՝ Կամբջաձորոյ հայրն Սամուէլ...»³⁵:

Անթարյանի աշխատության մեջ բերված մատենագրական փաստերն անառարկելի են և ցույց են տալիս, որ Կամբջաձորեցիով չի ավարտվում Տոնապատճառ ժողովածուի կենսագրությունը: Հետագա գործիչներն էլ, հատկապես Վարդան Արեւելցին, իրենց ավանդն ունեն այդ ժողովածուի պատմության մեջ³⁶:

Երրորդ. Բոլորովին այլ խումբ են կազմում Ճառընտիր այն ժողովածուները, որոնք տերունական տոնակարգի հետ կապ չունեն, բայց պարունակում են ճառեր բրիտանոնության զոհված նահատակների մասին: Նահատակների շուրջ սրբախոսական այս Ճառընտիրները ոչ այլ ինչ են, եթե ոչ եվրոպական տերմինով կոչված մարտիրոսները կամ «մարտիրոզօրն», ինչպես հիշատակում են մեր աղբյուրները, մինչդեռ մասնագետները դրանք փնտրում են ամենուր և շին մտածել որոնել Ճառընտիր ժողովածուների ոլորտում: Հայտնի է Շուշանիկի համառոտ վարքի առաջաբանում նշված այդ ժողովածուն. «է և այլ պատմութիւն սրբոյն Շուշանկանն... որ ի մարտիրոզօրն գտանես...»³⁷ և այլն:

Ուրեմն, Տոնականների, Տոնապատճառների կողքին Ճառընտիր ժողովածուների մեջ կա մի խումբ, որ գրեթե բացառաբար պատմում է նահատակությունների պատմություններ՝ վկայաբանությունների կամ վարքագրությունների ձևով:

Անդրադառնանք ձեռագրերի այդ խմբին, որ Ճառընտիր անվան տակ ամփոփում է իր մեջ վկայաբանական ճառեր և որ Ավգևրյանը հենց ուղղակի «վկայաբանք» է կոչում: Սրանցից հնագույնը Մաշտոցյան Մա-

³⁴ Անթարյան Փ., էջ 119:

³⁵ Անասյան, հ. Ա, էջ LX: Քանի դեռ չի կազմված այդ հարցմունքի բնական բնագիրը, շենք կարող հենվել նրա որևէ տարբերակի վրա. պատասխանների մեջ երբեմն անհերքանակ են տվյալները:

³⁶ Տես նույն տեղում, էջ 118—121:

³⁷ «Սուփերք», Թ, Վենետիկ, 1853, էջ 55:

տենադարանի № 1522 ձևագիրն է (ԺԲ դ.): Դիտենք ժողովածուի սոսկ
ցանկը.

Պատմութիւն Մարութայի, որ թարգմանի քաղաք Մարտիրոսաց:

Յակովբայ Մծբնայ հայրապետի...

Վկայութիւն սրբոյն Իդնատիոսի եպիսկոպոսի Անտիոքայ:

Վկայութիւն սրբոյն Փոկայ

Վկայութիւն Պօղիկարպոսի և այլն:

Այսպես է նաև Մատենադարանի 3777 (ԺԲ—ԺԴ դարերի) Ճառըն-
տիրը: Հետեւենք ցանկին.

Սահակի տեսիլ

Վկայութիւն Ս. Գևորգայ

Պարս. Մարութայի

Վկ. Պանդալեոնի

Որք ի նիկոմիդիա քաղաքին... նահատակեցան

Վկ. սուրբ իշխանացն Համադաստայ և Սահակայ նախարարացն ի
տանէ Արծրունեաց. ի ժամանակի թագաւորին Լևոնի...

Վկ. սուրբ Մինասայ.

Վկ. Պատմութիւն անձիցն... և վկայաբանութիւն Վահանաց որդոյ
Խոսրովայ Գողղան տեառն...

Վկ. սուրբ կուսին Թեկղի:

Մարութայի.

Բարդիշոյի

Որք ի Պարսս...

Յաղագս մեծ պատերազմին պարսից և հայոց... և փոխելոց հայրա-
պետին Վրթանէս:

Գրիգորիսի, Տիրանայ

Վկ. Զուիթայ

Թադէի և Սանդուխտ կուսի

Հեզանդխտո

Շմաւոնի

Բարբաշմինայ

Գորիա և Շմոնի

Խարեղա

Յակովբայ եպիսկոպոսի

Հացունեաց խաչի

Պարսամու

Պատմութիւն նորոգ վկային Յովսեփու վարուցն և նահատակութեան.

Վկ. սուրբ Խոսրովու, որ կոչի նահատակ ի մայրաքաղաքն Գանձակ, Զանկն իսկ նյութերի Քերթական կարգով պարզ է դարձնում այս Ճառընտրի բոլորովին այլ բնույթն ու բովանդակությունը: Սա արարողականից դուրս, բայց տոներին ընթերցվելիք նյութերի ընդարձակ շարադրությունների ժողովածու է, որ ոչ մի կերպ չունի Տոնականի տերունական տոնակարգի և ճառերի հետ: Կարող են, անշուշտ, և որոշ ընդհանուր նյութեր ունենալ, բայց բնույթով սրանք միանգամայն տարբեր են, թեև երկուսն էլ ճառերի հավաքածուներ են: Վերջիններս Ճառընտիր այն ժողովածուներն են, որոնք Մարտիրոզոզ անվամբ են հայտնի եղել միջնադարին³⁸: Դրանք ակնառու են ոչ միայն բովանդակական ցանկերով, այլև որոշակի նշված են հիշատակարաններում: Վենետիկի № 201 (նախկին № 1014) ԺԲ դարի այս տիպի ձեռագրի գրիչը ժողովածուն չի անվանում Մարտիրոզոզ, բայց խնդրում է՝ «զմեծապայծառ վկայիցն աստուծոյ զհանդես... յիւրաքանչիւր ամի նոյն օրին համախումբ ժողովով պայծառ ջահալուցութեամբ և երգով և հոգևոր և մահուր վարուր և սրտի մտօք ի լուր ամենեցուն տօնել ի փառս և ի գովութիւն սրբոյ երրորդութեանն»³⁹:

Շատ արժեքավոր է այս տեսակետից նախկին, Սեանայ վանքի № 76 (այժմ՝ Մատենադարան 3779) 1227 թվականի Ճառընտիրը: Սա նույնպես ամբողջովին վկայաբանական ժողովածու է ուշագրավ հիշատակարանով՝ «Փառք... Արդ ընկալ մարդասիրապէս ի հաճոյս կամաց քոց զջան և զվաստակ աշխատասէր գործոյս, որ յանուն քո ատանդեցաւ զգերապայծառ սրբոց զնառս վկայական հանդիսից զնահատակութիւնն ի գեղութեան մարտից արեամբ կատարելոյն խոստովանողացն զաստուածութիւնդ քո, որ բնդունելոց են ի քէն զպսակն անապական և զանվարիճան կհանսն ի փառաւոր քո գալստեան...»⁴⁰:

Այս ձեռագրերի նյութերի կազմը և հիշատակարանները մեր առջև բացեցին մինչև այժմ մշտնապատ Մարտիրոզոզ ժողովածուների հորիզոնները, շավիղ բացելով Ճառընտիր ժողովածուների մեջ փնտրելու և հատուկ ուսումնասիրութեան նյութ դարձնելու վկայաբանական այս ժողովածուները, պարզելու այդ բնագավառի երախտավորների անուններն ու ավանդը:

³⁸ Պատահական չէ, որ նշված երկու Ճառընտրում էլ պահպանված են Արքայաճամ խոստովանողի «Վկայր Արեւիցք» ամբողջական ժողովածուի հետքերը (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Արքայաճամ խոստովանողի «Վկայր Արեւիցք», Երևան, 1976, էջ 27—30):

³⁹ Սարգիսյան, Վ. Բ, էջ 35—36.

⁴⁰ Զեռ. 3779, էջ 806:

Այս առումով մեր ուշադրությունը գրավեց ձեռագրերում հիշատակված, բայց առ այսօր իբրև սոսկ թարգմանիչ դիտված մի անձնավորություն՝ Գագիկ վարդապետ։ Ըստ Գարեգին Հովսեփյանի, «Թարգմանիչ հայր Գագիկը ժամանակակից էր Սմբատ Ա. Խոստովանողի (890—914)»⁴¹։ Երուսաղեմի մի ճառընտրում «Պատմութիւն որդւոյ թագաւորի Հոռմոց, որում անուն էր Ներսէհ...» նյութի տակ կարդում ենք.

«Սո հայր Գագիկ թարգմանեցի պատմութիւնս զայս զորդւոց թագաւորի յԱսորոց ի Հայս և աւանդեցի ուխտի իմոյ և ժողովրդեան, որոյ լուեալ զվարս երանելոյնս, նախանձաւոր լերուք սորայ նահանտակութեանըն, որ վասն Քրիստոսի յանձն էառ զկամաւոր աղքատութիւնն»⁴²։ Նշված գիտումները վերաբերում են հայր Գագիկի կատարած մասնակի թարգմանություններին, որ հզակի փաստ չէ մեր գրականության մեջ⁴³։ Առավել հետաքրքրականը Երուսաղեմի № 1455 ձեռագրում պահպանվող հետևյալ հիշատակությունն է. «Եւ սորա (Սմբատայ—Մ. Ա.) աւուրս էր Գագիկ վարդապետ որ զյիշատակս մարտիրոսացն հաւաքեաց գիրք մի»⁴⁴։ Այս արդեն անտեսելի հնարավոր չէ և թելադրում է Մարտիրոզոզ հայ առաջին ժողովածուների հեղինակ ճանաչել նշված Գագիկ թարգմանչին⁴⁵։ Ուրեմն Գագիկը ոչ թե թարգմանիչ է հունական Հայսմավուրբի, ինչպես ընդունված է հայ մատենագրության մեջ (Ավդերյան, Փեշտմալճյան, Աճառյան), այլ հեղինակ, կազմող Վկայաբանի, Մարտիրոզոզ ժողովածուի։

Այսպիսով, ճառընտիրների հավաքածուներում, մեկ անվան տակ, ինչպես տեսնում ենք, խմբավորված է նաև ընտիր ճառերի մեկ այլ խումբ, որ վկայաբանական-սրբախոսական բովանդակություն ունի և արմատապես տարբերվում է մյուս ճառընտիր ժողովածուներից։

⁴¹ Հովսեփյան, Վ. Ա., էջ 103։

⁴² Նույն տեղում, նաև Տաշյան, էջ 303, 703, նաև Պողաբյան, հ. Ե, էջ 549։

⁴³ Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյանի վերոհիշյալ աշխատությունը, էջ 167։

⁴⁴ Պողաբյան, Վ. Ե, էջ 140։ Նաև՝ Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1855, էջ 160։

⁴⁵ Սրբախոսական ժողովածուների այնպիսի հմուտ ուսումնասիրող, ինչպիսին Ավդերյանն է, իր խմբավորման մեջ իբրև հայկական հնագույն ժողովածուներ նշում է. «Ճառընտրիք հայոց կամ Վկայագիրք սրբոյն Գրիգորի Վկայասերի» Ավդերյան, հ. ԺԱ, էջ ԿԸ)։ Զարմանալին այն է, որ Ավդերյանը ընդհանուր «Վկայաբան» կամ «Վկայագիրք» բառի տակ հասկանում է թե՛ ճառընտիրը, թե՛ Վկայագրքերը և թե՛ Նույնիսկ Հայսմավուրբը։ «Այն է խնդրելի,—գրում է նա,—թէ ոչ Լեզն... հեղինակը ճառընտրաց և Յայսմավուրաց լիւրաբանչիւր ազգի, զոր հանրական անուամբ վկայաբանս կամ վկայագիրս յորչորչեմք» (նույն տեղում, էջ ԺԷ)։

Այսպիսով, որոշակիանում են մեր միջնադարյան ժողովածուների դիմագծերը. ունենք Տոնականի, նրանից սերած Ճառընտիրի, Տոնապատ-ճառի, Մարտիրոզոգ կամ Վկայաբանք ժողովածուների ոչ միայն բնութագրիչ գծերը, այլև մատենագրության մեջ որքան էլ շփոթված, բայց նաև պահպանված նրանց հեղինակների անունները. Սողոմոն Մաքենացի (Տոնական), Սամուել Կամբոջաձորեցի (Տոնապատճառ), Գագիկ թարգմանիչ (Վկայաբանք-Մարտիրոզոգ): Պատահական չէ, մեր կարծիքով, այն ուշագրավ իրողությունը, որ Ճառընտրի, իբրև հատուկ կազմույթյուն ունեցող ժողովածուի հեղինակի անուն չի հիշատակվում մեր մատենագրության մեջ, մինչդեռ նրա առանձին տեսակների կազմողների անունները այս կամ այն կերպ՝ մատենագրության մեջ, թև ձևագրական զաղտնաբաններում, սրբորեն պահպանվում են: Այս ևս վկայում է, որ սկզբնապես Ճառընտիր համապարփակ ժողովածու հավանորեն չի էլ եղել:

Բացի Ճառընտիր ժողովածուներից ուշագրավ է մինչվկայասերյան շրջանի մեկ այլ ժողովածու, որ այս միեւնույն IX—X դարերի ծնունդ է: Դա Ստոմագիր (Ատոմագիր) կոչվող ժողովածուն է, որը նույնպես Հայսմապուրբի «նախնիների» շարքն է դասված⁴⁶, բայց որի ինչ լինելը պարզ չի եղել ուսումնասիրողներից և ոչ մեկի համար: Աճառյանն իր Անձնանունների բառարանում գրում է.

«Գագիկ, առաջնորդ ուխտին Ատոմայ... ժամանակակից է Սմբատ Ա-ի (914 թ.): Հալաբեց նահատակների վկայաբանությունը և դասավորելով հոսովեական ամիսների օրերով՝ կազմեց առաջին Յայսմապուրբը, որ կոչվեց Ատոմագիր կամ Հոռոմադիւր, Տօնացուցակ, Տօնանամակ»⁴⁷:

Փաստերի այս շփոթի մեջ պարզություն մտցնելու համար նա փորձում է բացատրել ժողովածուի անունը. «Ատոմագիր անունը նրանից է,—գրում է Աճառյանը,—որ կազմված է Ատոմի վանքում: Բայց որովհետև հաջորդ դարում Ատոմ Անձնացի եպիսկոպոսն էլ վերամշակության ենթարկեց նույն գործը, ուստի շատերը կարծում են, որ նրա անունով է կոչված: ...Ավելի ուշ՝ շատեր նորանոր հավելումներ են արել այնպես, որ Գագիկի գործը կորած է»⁴⁸, Աճառյանն իբրև աղբյուր նշում է Ասողիկի պատմությունն ու Մխիթար Այրիվանեցու ժամանակագրությունը: Ասողի-

⁴⁶ Վերջին ուսումնասիրողներից Փ. Անթարյանը նույնպես կարծում է, որ «Հոռոմագիրը կամ ըստ ոմանց Ատոմագիրը հիմնականում մեր այսօրվա Հայսմապուրբների նախատիպերն են» («Բանբեր Մատենագարանի», № 10, 1971, էջ 106):

⁴⁷ Աճառյան, հ. Ա, էջ 431:

⁴⁸ Նույն տեղում:

կի պատմության մեջ հաստատուում է Գաղիկ թարգմանչի վկայաբանական ժողովածուի հեղինակ լինելու հանգամանքը՝ «Հայրն Գաղիկ առաջնորդ ուխտին սուրբ Ատոմայ, որ զյիշատակ մարտիրոսացն՝ միայաբեալ ի գիր, որ ատոմայ գիր անուանեալ ասի»¹⁰։ Տարբերութունը մյուսներից Ասողիկի Պատմության շարունակության մեջ է. Ասողիկը Գաղիկի կազմած ժողովածուն անվանում է «Ատոմագիր», «որ Ատոմայ գիր անուանեալ ասի», իսկ ըստ տողատակի մեկ ձեռագիր տարբերակի՝ «որ Ատոմագիրն անուանի»։ Ըստ Ասողիկի, ուրեմն, Ատոմագիրը ոչ այլ ինչ է, քան մեր վերը նշված վկայաբանական ժողովածուները՝ «զյիշատակն մարտիրոսաց միայաբեալ ի գիր»։

Հետևաբար, ըստ Ասողիկի, Գաղիկի կազմած ժողովածուն «վկայաբանք» է, որ Ատոմի վաճառում ստեղծված և այնտեղից տարածում գտած լինելու պատճառով կոչվել է Ատոմագիր կամ Ատոմագիր։ Եվ այս առումով, այն կարող էր իրոք Հայսմավուրբին նյութ մատակարարել։ Բայց մյուս կողմից չպետք է նույնացնել Ատոմագիրն ու Հոռոմագիրը, քանի որ, ինչպես աղբյուրներն են վկայում, զրանք տարբեր ժողովածուներ են, որ շփոթվել են Ատոմի վանքում գործող Գաղիկի և Վարապա վանքում գործող Ատոմի անունների նմանություն պատճառով։

Ինչպես աղբյուրներն են վկայում՝ Վարապա վանքի հայր Ատոմը նույնպես ժողովածու է կազմել, բայց նրա ժողովածուն տոնացույց է սոսկ, առանց նյութերի։

Վիեննայի ուշ դարերում գրված մի Տոնացույց ժողովածու ունի ուշագրավ հիշատակարան, որի մեջ ոչ համբալ, այլ բանիմաց գրիչը՝ Փիլիպպոս Երեցը, ընթերցողին մեկնում է Տոնացույցի էությունը.

«...Յաղագս որոյ... տօնախմբութիւնս սահմանեցին ամ ամէ օր ատուր, շաբաթ և ամիս ըստ սրբոց անուանց տօնս կատարել, թէ նահապետաց և թէ մարգարէից, թէ առաքելոց և թէ հայրապետաց, թէ թագաւորաց և թէ զօրապետաց, թէ մարտիրոսաց և թէ նահատակաց, թէ ճգնաւորաց և թէ կուսանաց, որպէս որ ի ճառս սրբոցն ընթեռնուն։ Սմին սաբաւի զայս գիրքս սահմանեալ և հաւաքեալ ի վայր ժողովեալ և զամենայն սրբոց զանաւանս գրեցին ի տումարս այս և անուանեցին զանուն սորայ Տոնացույց, զի ամենայն ատուր որում և տօնն հանդիպեսցի տեսցէ, հարցանիցէ և հայեցցի ըստ պատշանի ատուրն և ով որ մեծատուր իցէ կամ ժամասաց, զի և ամենայն երգս, զոր ինչ պիտոյն և թէ սաղմոսաց, թէ

¹⁰ Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 160։

աղօթից, թէ և շարականաց, թէ աւետարանական, թէ մարգարէականաց, թէ առաքելականաց և այլ ցուցակ կրգականաց, զորս գրեցի ըստ աւուրց աւուրց տօնախմբութեան»⁵¹։ Հիշատակագիրը որոշակի խոստում է տոնների ցուցակի մասին, որով պետք է առաջնորդվելին ժամասացները։

Վերոհիշյալ Տոնացույց ժողովածուի և նրա հեղինակի մասին հատուկ արժեք ունեն ժամանակով նրանց ավելի մոտ և գործերին առավել գիտակ վանական վարդապետի տվյալները, որտեղ «զհայոց գրեանքն ո՞վ է կարգեալ» հարցի պատասխանը աստիճանաբար ճշգրտվում է նորանոր փաստարկներով։ «Պատասխան. զՏօնականն Մաքենոց հայրն Սողոմոն կարգեաց, զՏօնապատճառն՝ Կամբջաձորոյ հայրն Սամուէլ, զՏօնացուցն՝ Վարապայ հայրն Ատոմ»⁵²։ Թե ինչո՞ւ է Վարապա հայր Ատոմի կազմած ժողովածուն՝ Տոնացույցը, Ատոմագիր կոչվել, այդ արդեն հասկանալի է՝ հեղինակի անվամբ, Ատոմի կարգած, Ատոմի դրած։ Բայց դա, այնուամենայնիվ, տարբերվել է նախորդ տօնացույցներից, որ, ըստ տվյալների, գոյություն են ունեցել մինչ այդ։

Այդ տարբերության համար է, ըստ իս, որ Ատոմագիրն ունեցել է նաև երկրորդ անուն. այդ նշում է Մխիթար Այրիվանեցին. «սուրբ հայրն Ատոմ վարագեցի ըզհոռմաղիւրն կարգաւորէր»⁵²։ Ատոմ Վարագեցու գիրքը նշանակալից է եղել ոչ թե հեղինակի անվամբ, այլ ավելի բովանդակությամբ. Ատոմի Տոնացույցը Հոռոմաղիւր է, այսինքն՝ հարմարեցված հռոմեական տոմարական կարգին, թերևս սկսվելով ոչ թե նավասարդից, այլ արդեն սեպտեմբեր կամ հունվար ամիսներից։ Սա կարող է ճշգրտել հատկապես Տոնացույցների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետը և ավելի հիմնավոր եզրակացությունների հանգել։ Իսկ առայժմ պիտի նշել, որ այն, ինչ Աճառչանը վերագրում էր Գագիկ Թարգմանչին և նրա ժողովածուին, լրիվ վերաբերում է Ատոմ Վարագեցուն և նրա Տոնացույցին, որ դասավորված լինելով հռոմեական ամիսների անունով, «կոչվեց Ատոմագիր կամ Հոռոմագիր»⁵³, բայց ոչ բոլորովին Տօնանամակ։

Պատմիչների երկերում և մատենագիտական այլ աղբյուրներում հիշատակվում են նաև ուրիշ գործիչներ, որոնց անունը կապվում է այս ժողովածուների ձևավորման պատմության հետ. բոլորն էլ հավանորեն

Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, կազմեց Համադասպ Ռոկյան, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 870։

⁵¹ Տե՛ս Աճապյան, հ. Ա., էջ LX։

⁵² Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 57։

⁵³ Աճապյան, հ. Ա., էջ 431։

հավատի են, քանի որ ձեռագրական աշխարհը մեր առջև բացում է նշված ժողովածուների բազմաթիվ տարբերակներ, որոնց ստեղծման մեջ սեփական մասն են ունեցել բազմաթիվ գործիչներ: Չափազանց դժվար, գրեթե անհնարին է բոլորի արածը վերհանել և գնահատել ըստ արժան-վույն: Դա երկար տարիներ պահանջող մի գործ է, որ չի կարող սկսվել ու ավարտվել մեկ սերնդի ջանքերով. սակայն առանձին ժողովածուների հատուկ ուսումնասիրություններն ի վերջո կնպաստեն հարցերի գիտա-կան պարզաբանմանը:

Մեր աշխատության մեջ այդ ժողովածուների բնութագրման ու տարբե-րակման փորձը թեև զբաղված է Հայսմավուրք ժողովածուի ստեղծման հիմ-քերը ըմբռնելու և վերհանելու անհրաժեշտությունից: Այս նունիսկ հայան-ցիկ փորձը ցույց է տալիս, որ նշված ժողովածուներն իրենց հնդինական-րի հետ մեկտեղ ստեղծել են գրական մի հարուստ շտեմարան, որի պա-շարների վրա է խարսխվել ավելի ուշ ձևավորվող Հայսմավուրք ժողո-վածուն, սակայն դրանցից և ոչ մեկը հատկապես չի հանդիսացել հայ Հայսմավուրք ժողովածուի նախահիմքն ու նախօրինակը: Նշված բոլոր ժողովածուները սկիզբ առնելով համաքրիստոնեական համապատասխան ժողովածուներից կա՞մ թարգմանաբար, կա՞մ ընդօրինակմամբ, վերածնել են ինքնուրույն հուշարձանների, բարձրանալով ազգային հիմքի վրա:

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԵՐՆ ՈՒ ՀԱՅ ԱՐԱՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ

Միջնադարյան արարողական ժողովածուների հետ Գրիգոր Մեծ Վկա-յասերի կապը հիշատակում են ոչ միայն հարցի հետադա ուսումնասիրող-ները, այլև մատենագրական աղբյուրները, նրա կենսագիրներն ու աշա-կերտները:

Մեծ հայագետներ Միքայել Չամչյանը, Ղևոնդ Ալիշանը նրա կենսա-գիրների օրինակով շեշտը դնում են Գրիգոր Վահրամ կաթողիկոսի «Վկա-յասեր» մականվան վրա: «Եւ զի սա թարգմանեաց և կարգեաց զվկայա-բանութիւնս սրբոց, վասն աշտորիկ կոչեցաւ և Վկայասէր»,—գրում է Չամչյանը⁵¹:

«Թարգմանեաց ի յունաց և յասորոց զվկայաբանութիւնս սրբոց բաղ-մաց զորս տօնէին յայնժամ եկեղեցիք բրիստոնէից, որոյ վասն իսկ կո-

⁵¹ Չամչյան Մ., Խրախճան Պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ 284:

շեցաւ Վկայասէր»⁵⁵։ «Գրիգոր Բ մեծ ջանքով փնտռեց և փնտռել տվաւ սրբոց և մանավանդ մարտիրոսաց վարդեր, թարգմանեց կամ թարգմանել տվաւ, այն պատճառով կոչվեցաւ Վկայասէր,—գրում է Ալիշանը՝ քիչ ավելի սերտ դիտելով նրա կապը որոշակի արարողական զրականութեան հետ։—Անոնց հանգստեան կամ նահատակութեան օրերուն համար դասավորած գիրքն ալ կոչվեցաւ Տօնանամակ կամ համառոտյալ Տօնամակ»⁵⁶։ Բայց բանիմացութիւնը դրդել է Ալիշանին հիշեցնելու, թե «իրմե առաջ այլ կար այսպիսի հաւաքումն, բայց քիչ էին վկայաբանութիւնըն»⁵⁷։

Անվանի հայագետների եղրակացութիւնները, անշուշտ, հիմնված էին ավելի վաղ մատենագրական աղբյուրների՝ պատմիչների երկերում, ինչպես նաև չափածո ներբողյաններում պահպանված տվյալների վրա։ Ամենից առաջ Վկայասերի տոհմի շառավիղ Ներսես Շնորհալու.

«Երկուոց Մեսրոպ մեզ երեսալ
Զգիրքս բազումս թարգմանեալ.
Առ ի յունացն և յասորեոց
Ճառքս սրբոց վերաբերեալ.
Տօն յիշատակ նոցա կարգեալ,
Ընթերցուածովքն զարդարեալ
Զորս ոչ միայն լոկ վերժանեալ
Այլև վարուցքն նախանձեալ.
«Ստ որում անշն իսկ ընկալեալ,
Վերկայասեր վերաձայնեալ»⁵⁸։

Ապա՝ բազմերախտ գործչի աշակերտ Վարդան Հայկազնի «Տաղ գեղեմանական վասն փոխման երանեալ և սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի» մահախոսական ներբողյանի⁵⁹.

«Նոր ճառերով ներբողինաց
Բերկրեալ զոգիսքն յողաց,
Պատուող ամէն սուրբ վկայաց
Քրիստոսոտեանկ նահատակաց,
Նաւականիս մարտիրոսաց
Յուրախութիւն ժողովրդաց...»⁶⁰

⁵⁵ Զամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Կ. Բ., Վենետիկ, 1785, էջ 389։

⁵⁶ Ալիշան, Կ. Բ., էջ 351։

⁵⁷ Նույն տեղում։

⁵⁸ Ներսես Շնորհալի, Բանք շափաւ, Վենետիկ, 1928, էջ 593։

⁵⁹ Զեռ. 2496 (1294), էջ 324ր—342ա, «Բաղմավէպ», Կ. Ա., 1873, էջ 264։

⁶⁰ Նույն տեղում, էջ 333ա, «Բաղմավէպ», էջ 267։

Թարգմանութեանցն պարապէր
Զամէն ազգաց գիրսնն բըննէր.
Զորս պիտանի բան ճանաչէր
Զայն ի լեզու մեր փոխարկէր.
Մեզ զամենայն ընդարձակէր
նւ զորս պակաս՝ լըցուցանէր»⁶¹,

Այնուհետեւ նրան անդրադառնում են ժամանակով մոտ ու հեռու կանգնած հեղինակները. «Մեծախորհուրդ հայրն,—գրում է Վարդան Արեւելցին իր ներբողյանում,—մտախոհ լինէր յինքեան վասն կարեաց և կարօտութեան զոր տեսանէր յեկեղեցիս մեր՝ բանս բերկրանաց ներբողե-
նից, և ճառս աստուածաբանութեան, և պատմութիւնս յիշատակարանաց սրբոց մարտիրոսաց...»⁶²:

Կիրակոս Գանձակեցին նրան անվանում է «զայր իմաստուն և առա-
քինի... Այս սբանչելի հայրապետն թարգմանեաց բազում ճառս վկայից
աստուծոյ, և զճառս ներբողականս ի յունաց և յասորոց»⁶³:

«Տէր Վահրամ, որդի Գրիգոր Մագիստրոսի առեալ զաթոռն զկնի շո-
րից ամաց խափանուածոյն եթող կաթողիկոսութիւն և շոգաւ ի քաղցմա-
նութիւնն ի Կոստանդինուպօլիս և դարձաւ յերոսաղէմ...»,—ամանդում
են ձեռագրերը և Միխայել ասորու «Յաղագս բահանայութեան» ժամանա-
կագրությունը⁶⁴:

Սակայն ի զարմանս մեր, ձեռագրական սկզբնաղբյուրները չեն ար-
դարացնում նրա գովեստի շափը, նրա թողած ժառանգությունը չի հա-
մապատասխանում համբավին, եթե հաշվի առնենք լոկ գրական վաստա-
կը՝ հույն կամ ասորի աղբյուրներից քաղված վկայաբանական հուշար-
ձանների թարգմանությունները, զավանաբանական հարցերին վերաբե-
րող նրա կարեւոր՝ «Վասն մոլորման զատկին», «Կիրակէին», «Հավատով
խոստովանիմք» սուրբ Լրրորդության նվիրված մեկնողական ճառերը:

Ձեռագրերում նրա անվամբ տարածում դտած ճառերի զգալի մասը,
ինչպես պարզվեց բնագրերի քննությամբ, պատկանում է ոչ թե Գրիգոր

⁶¹ Նույն տեղում, էջ 335ա—բ, «Բաղմավէպ», էջ 268:

⁶² Զեռ. 8775, էջ 301ա. «Դրուատ գովեստի պատմադրարար ասացեալ Մեծին Վարդա-
նայ Արեւելցոյ ի սուրբ հայրապետս մեր ի Վահրամ Գրիգորիս Վկայասէրն և ի յորդիսն
Ապիրատայ տէր Գրիգորիսն և ի ներսէսն...»:

⁶³ Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 95:

⁶⁴ Զեռ. 1865, էջ 65բ, ձեռ. 1485, էջ 239բ. ժամանակագրութիւն տեառն Միխայէլի
ասորոյ պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 33:

Վահրամ Վկայասերի զրչին, այլ ներսես Շնորհալու Լղբայր Փոքր Վկայասեր կաթողիկոսին⁶⁵։

Սրանով ուղում ենք ընդգծած լինել այն գաղափարը, որ սոսկ անձնական հմայքն ու մեր ձեռքը հասած ոչ մեծաքանակ գրական ժառանգությունը հիմք չէին կարող ծառայել այն բարձր գնահատականի համար, որ տրվել է նրան հայ աղբյուրներում։

Ձեռք Անտոն խոյրի պըճնեալ,
եւ Սամուէլ տեառն ընծայեալ,
եկեղեցոյ վէմ ճիւղն էգեալ
Վերուտ կոչմամբ անոր ընտրեալ,
Որ և սոցունց համեմատեալ
Ձեկեղեցիս լուսաւորեալ
Երկրորդ Մեսրոպ մեղ երեւեալ...» և այլն⁶⁶։

Նրա թողած թարգմանական ժառանգությունը և սակավաթիվ հառներբողյանները բավական չէին նրան կոչելու «վէմ հաւատոյ», «վերուտ անօթ ընտրեալ», «Երկրորդ Մեսրոպ», որ եկեղեցիների է լուսավորել և այլն։ Այդ տիպի գործեր և ավելին արել է ամեն մի ուսյալ հայ գործիչ։ Նշանակում է Վկայասերը բացի վերոհիշյալներից նաև այնպիսի գործ է կատարել, որի նշանակությունը բացառիկ է իրոր։ Ժամանակակիցները այդ նորույթով սգեշնչվել են, իսկ հաջորդները տեղեկացել են արձագանքներին միայն։ Նրա սկսած գործը դարից դար անցնելով կապվել է նորանոր անունների հետ՝ առավել մշուշելով ձեռնարկողի ու հիմնադրի ավանդը միջնադարյան այդ ուշագրավ ժողովածուների ստեղծման պատմության մեջ։

Մեր ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկն է ցրել կուտակված մշուշը և ներկայացնել Գրիգոր Վահրամ Մեծ Վկայասերի ավանդը Հայսմաուրբ ժողովածուների ձևավորման խնդրում։

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԵՐԻ ԿԱԹՈՒԿԻՈՍԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՊԱՄՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Այս խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ է, առնվազն, ակնարկ նետել Գրիգոր Վահրամ Վկայասերի անձնավորության, նրա ընտանեկան միջավայրի, ժամանակի քաղաքական անցուղարձերի, պատ-

⁶⁵ Տե՛ս սույն աշխատության հավելված 1։

⁶⁶ Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 593։

մական այն հանգամանքների վրա, որոնց մեջ պիտի ծնվեր ազգային ավանդներն ամրապնդող հայ տոնակարգային ժողովածուների ստեղծման հրամայական պահանջը: Այսինքն՝ խոսել ժողովածուները ծնող հանգամանքների մասին, որոնց մի մասի լավագույն աղբյուր են ծառայում Վրկայասերի հոր՝ Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», զրված ոչ միայն հատկապես իր որդուն, այլև ժամանակի նշանավոր այլ անձանց՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին, Գաղիկ Աբասյանին, Հովհաննես Սյունյաց արքեպիսկոպոսին, խնատի վանքի առաջնորդ տեր Սամվելին, Մարմաշենի ուխտի առաջնորդ Սոսթենեսին, իր աշակերտներին և այլն, և այլն:

Գրիգոր Մագիստրոսը որդուն կոչել է հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու անունով: Մագիստրոսի նամակները բացահայտում են մի արտակարգ սեր հորեղբոր նկատմամբ, որի խնամքի տակ է ընթացել նրա մանկությունն ու դաստիարակությունը: Վահրամ Պահլավունին այն ընդգծված անհատականություններից էր Բագրատունյաց տիրապետության ժամանակ, որի կյանքն ու գործը ողջ ժողովրդի փառքն ու պարծանքն է դիտվել դարեդար: Փաղաքացիական շիտակ նկարագիր, հերոսականություն, հայրենական ավանդներին մինչև ի մահ նվիրում և զաղափարական վախճան՝ նահատակություն ծերունազարդ հասակում:

Այս ամենը չէր կարող իր անջնջելի հետքը չթողնել խելամիտ ու բանիմաց սանիկի հոգում: Կրտսեր Վահրամը, որ Գրիգոր-Վահրամ Վրկայասեր պիտի դառնար, անխուսափելիորեն չէր կարող անզգա մնալ ազգային ու ընտանեկան պաշտամունքի առարկա դարձած իր պապեղբոր՝ Վահրամ Պահլավունու (998—1045) դավանանքների նկատմամբ, որի մասին Մաղիստրոսը գրում էր. «Սակայն յաղագս՝ ծայրագոյն ծերունույն և աստուածային և ամենայն բոլոր բարեաց պարառեալ օթելանին... աստուածապարգև շնորհօք, սրբութեամբ և մաքրութեամբ, արիութեամբ և հասակաւ, զեղայարմար և շքնաղ տեսլեամբ, հեղութեամբ և հանդարտութեամբ, առատութեամբ և լրջմտութեամբ, խոնարհութեամբ և քաղցրութեամբ, արդարադատութեամբ և իրաւամբք, կրօնաւորասիրութեամբ և աստուածասիրութեամբ... յիրաւի այնպիսի հանդիպեալ բախտի, որ և զկնի ութսուն ամաց մարտիրոսականն հանդիպեալ և արժանանալ պսակի...»⁶⁷:

Որքան էլ փորձենք անտեսել ընտանեկան ավանդների ազդեցությունը արդեն հասուն սերունդների ճակատագրի վրա, այս դեպքում մասնավորապես, չենք կարող ժխտել ծերունի նահատակի կերպարի ներգործու-

⁶⁷ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 141:

Յյունը Գրիգոր-Վահրամ⁴⁹ Վկայասերի կյանքի ողջ ուղու վրա: Նրա՝ իբրև անձի ձևավորմանը նպաստեցին, անշուշտ, դեպի Հայաստան ծայր առած օտար նվաճողների ոտնձգությունները, Բագրատունյաց թագավորության մեջ հրաբխող ներհակ ուժերի պայքարը, հայ-բյուզանդական դիվանագիտական խաղերն ու կալվածափոխանակությունները, Թոնդրակյան աղանդավորական շարժման լայն հորձանուտը, որպիսի պայմաններում գոյատևելու պատվարն ու հույսը կապվում էր աղգային կրթական օջախների ու ավանդների պահպանման ու ամրապնդման հետ:

Այնպիսի աշխարհիկ դեմք, ինչպիսին ինքը Մազիստրոսն էր՝ անտիկ մշակույթի ու ավանդների բանխմացությանը, ճշգրիտ գիտությունների, բնագիտության, բժշկական գիտանքների տիրապետմամբ, հեթանոսական առասպելների մեկնիչն ու իմաստավորողը, Եվկլիդեսի երկրաչափության թարգմանն ու «Հմուտն ի զինուորական արուեստն»՝ իր նամակներում ոչ միայն մեծացնում ու պանծացնում էր իր հորեղբորը, այլև որդուն ուղղած նամակում հորդորում. «Հայցէմ ի քէն... զաւանդութիւնն մեր ոչ մոռանալ երբէք և զփոյթ սիրոյն առ Քրիստոս աստուած մեր և զլոյս նրաքի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել»⁵⁰, այսինքն հավատարիմ մնալ նախնիների ավանդին ու Քրիստոսի սիրուն:

Իսկ ի՞նչ էին նախնիների ավանդները՝ բացի վերահիշյալից: Պահլավունիների տոհմը հայտնի է շինարարական կառույցների մեկենասությամբ. դեռևս X դարից Անիի թագավորության սահմաններում ու նրանից դուրս, ուր ոտք էին դնում Պահլավունիները, իրենց ներդրումն էին անում թե՛ ճարտարապետական կառույցների և թե՛ կրթական օջախների ստեղծման գործում: Հիշենք Անիի Ապուղամբենց Ս. Գրիգոր եկեղեցին, որ շինել էր տվել Գրիգոր Համգեն X դարի վերջերին: Նրան հաջորդող Ապղարիպ «Առատածեռն իշխանն» Անիի Ս. Փրկիչ անունով եկեղեցուն հատկացրել է արդյունք բերող կրպակներ, ձիթահանք, աչդի և հողեր, նմանապես զարդարել է եկեղեցին «ոսկւով և արծաթով» և նվիրել է «նորան Աւետարան, Յայսմաւորք, Տօնական»⁵¹, «Շինող Բջնւոյ» է հիշվում մատենագրության մեջ Գրիգոր Մազիստրոսի հայրը՝ Վասակ-Հովում իշխանը⁵², Մազիստրոսի և հոր անունների հետ է կապված նաև Հավուց Թառ, Կեչառիսի վանական դպրանոցների շինությունն ու հովանավորությունը: Միջնադարյան հոգևոր կառույցների շխարարությունը Պահլավունիների ազգային լու-

⁴⁹ Նույն տեղում («Առ վեստն Վահրամ որդին իւր»), էջ 236:

⁵⁰ Նույն տեղում, Առաջարան, էջ Ժէ—ԺԷ:

⁵² Նույն տեղում, էջ Իէ:

սավորական գործունեության ամենափառավոր էջերից է՝ օտար նվաճող-ների հանապազօրյա վտանգի պայմաններում: Դա նրանց հասարակա-կան-քաղաքական գործունեության կողմերից մեկն էր միայն, ինչպես նաև ազգային ավանդների համար կյանքը զոհելը, որ հայտնի է տոհմի պատմության մեջ. այդ ընդգծված է գեռես տոհմի նախնիներ Գրիգոր Համզեի և նրա բարեպաշտ կնոջ՝ Շուշանի նկարագրի մեջ, որոնց մասին Մագիստրոսը գրում էր հորեղբորը՝ Վահրամ Պահլավունուն. «որոց վաճօրէն՝ ամենայն Հայաստանեայց տուաւ, մօրն քո՝ կանանց և հօրն քո՝ արանց»⁷¹, «Քանզի և նորա իսկ կենդանի վկայք բանին աստուծոյ և մարտիրոսաց ուղիւն»⁷²: Նշեցինք հենց իր՝ ծերունազարդ Վահրամի, հե-րոսական մահը Անիի պաշտպանության դիրքերում, որ պատմության մեջ իբրև նահատակության փաստ է ներկայացվում:

Կիրակոս Գանձակեցին «մարտիրոս» է անվանում նաև Մագիստրոսի հորը՝ Վասակ Հոլումին⁷³, որ հաղթական պայքարից հետո մեռնում է եղերական մահով:

Բայց Գրիգոր Վկայասերի նախնիները պատմության մեջ մնացել են ոչ միայն իբրև քաջամարտիկ սպարապետներ ու շինարար, այլև ազգի լուսավորության ու կրթության սատարող գործիչներ: Եվրոպական վերածնության գործիչներից ոչ մի բանով ետ չի մնում Գրիգոր Մագիստրոսն իր կրթական մակարդակով ու լայնախոհությամբ, սիստեմավորած, հմուտ մանկավարժությամբ գիտելիքները սերունդներին, հասարակությանը նվիրելու քաղաքացիական պարտքի գիտակցությամբ:

Որդուն՝ Վահրամին, ուղղելով իր բերթվածներից մեկը, այն ավարտում է հետևյալ հանձնարարականով. «Լիզէ, առ ընթերցիր զարհեստ ու տանաւորացոյ»:

...Իբր առ մանկականսն քեզ կամեցայ յըստակ վճիտ շարագրել դայստսիկ, զի մի անկարելի ոմանց թուեցեալ՝ արտավազիկ արշաւանօք փախիցեն, ալ զիրաւուր եղեալ թերևս լսիցեն, զի սովորեալ կաթին, կարասցեն զկնի աշար զմերս փութացուցանել բանաստեղծութիւնս, զի զկատարեալն կերակուր տացուր իբր զբաջ խոհակեր»⁷⁴, այսինքն՝ առաջին հայացքից զժվար օրինակ տալով, ուզում է դյուրին դարձնել բանաստեղծու-

⁷¹ Նույն տեղում, էջ 42:

⁷² Նույն տեղում:

⁷³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն, էջ 95:

⁷⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 234—235:

թիւան միտքը, որպէսզի իր հետնորդներն իրեն հետեւելով կարողանան աւելի կատարյալին հասնել, ինչպէս մանկանը կաթով սնելուց հետո կարողանում են հմուտ խոհարարների ճաշերին ընտելացնել: Սրանով նա հարգորում է. որդուն դժվարություններից չխորշել, այլ հաղթահարելով ավելի բարձրին հասնել: Պատահական չէ Մադիսոնի մանկական հուշերում իր սիրելի հորեղբոր կերպարի հետ մեկտեղ անջնջելիորեն տպավորված նրա գրի, ձեռագրի հուշը՝ «ըմբռնամբք ելանէին և ղգիր գեղեցիկ տառի բո»⁷⁵: Սա սերնդի դաստիարակման ամբողջական մի համակարգ բնորոշող փոքրիկ, բայց խոստով փաստ է, որ կապվում է մայրենի լեզվի, հայրենի ավանդների, կրթության ոլորտների ու մարդու իրրե քաղաքացու ձևավորման բարդ պրոցեսների հետ:

Բայց այս ամենը քիչ կլինիր, եթէ նպաստող շինքին ժամանակներն ու պատմաքաղաքական հանգամանքները: Վտակը ակունք ունէր, սակայն դարաշրջանն էր հուն բացելու մեծ գործերի համար: Դա X—XI դարերի Հայաստանն էր, Բագրատունյաց փառահեղ հարստության շրջանը՝ իր ընդերքում խմորվող սոցիալ-տնտեսական բարդ խաչաձևումներով, ներքին ու արտաքին ալեբախումներով, տարամետ քաղաքական կողմնորոշումներով, որոնք ի վերջո նրկրի կորուստն էին կանխորոշում: Անկում նույնիսկ քաղաքական, իրավական, բայց որ շղարձավ նաև բարոյական: Ընդհակառակը, ինչպէս շատ դեպքերում, այս անգամ էլ, հայրենիքի կորստի վտանգը միավորեց, կորովի դարձրեց ժողովրդին՝ ծնելով նրա ինքնությունը պահպանող նորանոր գաղափարներ ու միջոցառումներ: Դրա արտահայտություններից մեկն էլ ազգային տոնական ժողովածուների ստեղծման ու համակարգման գաղափարն էր, որ բնութագրական է ոչ միայն մեր, այլև ուրիշ ժողովուրդների պատմական համապատասխան ժամանակաշրջանների համար: Նշված արարողական ժողովածուները, եկեղեցական տոնակարգի սահմանումից բացի, ստանում էին պատմաքաղաքական նշանակութուն, սեփական-ազգային ավանդների պահպանումով սահմանադատվում ու հակադրվում էին օտար նվաճողների հնարավոր ոտնձգություններին: Այդպէս է եղել դարեր ի վեր ո՛չ միայն հայ եկեղեցում, այդպէս է եղել և բոլոր ժողովուրդների կյանքում:

Նույնիսկ շատ ավելի ուշ՝ XVI դարում, հզոր պետականութուն ունեցող Ռուսիայում կազմվում է նոր տոնակարգ սեփական ազգային գոր-

⁷⁵ Նույն տեղում, էջ 39—40:

ծիյների տոներով, որ պետք է նպաստեր Ռուսաստանի վերջնական միավորման նպատակին⁶:

Եվ ամենևին պատահական չէ, որ նույն ժողովուրդն իր պատմական ընթացքի տարբեր խառնուրդներում ստեղծում էր միևնույն ժողովածուների տարբեր խմբավորություններ, որոնցից յուրաքանչյուրը պատասխան էր տալու տվյալ ժամանակների պահանջմունքներին: Այսպիսի հուշարձաններից մեկը լինելու էր հենց Հայսամալուրքը՝ համաքրիստոնեական եկեղեցիների պահանջմունքներից թելադրված մի ժողովածու, որը, սակայն, հայ իրականության մեջ պետք է գործեր հայ պատմամշակութային բուրացի բովով անցնելուց հետո միայն:

Այդպիսի գործը զուրկ կարող էր զալ առանձնահատուկ բանիմաց ու օժտված, պատմաքաղաքական իրադրություններում կողմնորոշվող, իրավադիվանագիտական հոտառություն ունեցող ու հեղինակություն վայելող, ազգային ավանդների պահպանության դիրքերում կանգնած այնպիսի մի բարձրակիր լինելու ջանքերով, ինչպիսին էր Գրիգոր-Վահրամ Վկայասեր կաթողիկոսը՝ XI դարում:

ՃԱՇՈՅԻՑ ԴԵՊԻ ՀԱՅՍՄԱՎՈՒՐԲ ՈՒՂԻՆ

Քրիստոնեական եկեղեցիներում գործում էին Ճառքնտիր, Տոնական, Ծարակնոց, Ճաշոց, Տոնապատճառ և նույնիսկ, X դարի վերջերից, Հայսամալուրք ժողովածուները, որոնք, սակայն, ինչպես մեզ մոտ, այդպես էլ յուրաքանչյուր ազգային եկեղեցում զգալի չափով տեղայնանում էին՝ համաքրիստոնեական գաղափարների ամրապնդման հետ մեկտեղ ծառայելով սեփական եկեղեցիներին: Եվ ուշագրավ է, որ մեկ ժողովրդի ա-

⁶ Տե՛ս Любавский М., Древняя русская история до конца XVI в., (Москва, 1918, стр. 302—303) «Политическое объединение Руси и пробудившееся национальное чувство в связи с идеею «Святой Руси» вызвали потребность в объединении и украшения русского неба сонмом всех святых. Этой потребности удовлетворил митрополит Макарий». Տե՛ս նաև Бахрушин С., Иван Грозный, (Москва, 1942, с. 66). Культура эпохи Ивана Грозного. «Четы-Минен» наряду с канонизацией русских «святых» на соборах 1547 и 1549 гг. и Стоглавого собора закрепляли, таким образом, церковно-религиозное и политическое единство Русского государства». Տե՛ս նաև Барсов Е. В., Четы-Минен братьев Денисовых (Сборник статей в честь Матвея Кузьмича Любавского. Петроград, 1917.) Пылин А. Н., История русской литературы, т. II, (СПб., 1911, с. 150, 167).

րարողական ժողովածուի կազմը լրիվ կարելի է ստուգել մեկ այլ ժողովրդի նույնանուն ժողովածուի միջոցով, եթե չհաշվենք յուրաքանչյուրի մեջ ներթափանցած ազգային տոները՝ տեղային գործիչներին նվիրված «յիշատակ տօնի»-ներն ու հարակից նյութերը։ Սա մի կողմից անվերապահ է դարձնում դրանց մի ակունքից՝ գերակշիռ մասով բյուզանդական ժողովածուներից ծագած լինելու հանգամանքը, մյուս կողմից էլ վկայում այն մեծ աշխատանքն ու ներդրումը, որ ազգային գործիչներն ունեցել են սեփականը ստեղծելու, օրինականացնելու և ամրապնդելու գործում։

Երբ հստումնասիրում ենք Գրիգոր-Վահրամ Վկայասեր կաթողիկոսին վերաբերող մատենագրական, կենսագրական, ներբողական նաև հիշատակարանային տվյալները, ապա մի բան ակնհայտ է դառնում. Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը մեծ աշխատանք է ձևափոխել Ճաշոց ժողովածուների բարեփոխման ասպարեզում։

Ինչպես հայտնի է, Ճաշոց ժողովածուները հնում Տարեգիրք կամ Տոնամակ են կոչվել։ Եվ ահա կենսագիրը նրան անվանում է տարեկան տոների կարգի հորինիչ և եթե կարելի է ասել՝ զարդադրիչ, առավել մեծահանդես ու պաշտոնական շուք տվող։

Նա յօրինիչ ևղև կարգաց
Կազմող ամէն վայելչանաց,
Ի դարդ տօնից տարեկանաց
Մեծահանդէս աննը կարգաց¹։

Ինչպե՞ս կարող էր Վկայասերն անվանվել «տարեկան տոների հորինիչ», երբ Տարեգիրք-Տոնամակ ժողովածուները, ինչպես ձեռագրերն են վկայում, գոյություն են ունեցել Վկայասերից առաջ. այդ վկայում է ինքն իսկ Վկայասերը՝ Ճաշոց ժողովածուների ամփոփիչ հիշատակարաններում. «Այս է յիշատակարան տօնից տերունականց... զոր ես՝ Գրիգորիս ծառայաստուծոյ և դիտապետ Հայաստան ազդիս... յաւելի ի նախակարգեալ տօնսն... բնտրեալ ի Տօնամակաց յոքունց զսակաւս...»², նշանակում է, իրոք, մինչ Վկայասերն արդեն գործածություն մեջ էին այս Տոնամակ-Ճաշոցները, որոնցից և նա օգտվել է իր ժողովածուն կազմելիս։

Նույնն է վկայում նաև Վարդան Արեւելցին, տալով և Վկայասերի արածի հիմնավորումը. «Որ թէպէտ և հարկաւորն կայր յամենայնէ, այլ ոչ լիակատար և ունրեւրի, զորս նա ոչ կամեցաւ թողուլ այլոց ազգաց պատճառս պարծանաց ունել ինչ ամէլի, քան զմեզ...», այսինքն՝ տոնա-

¹ Զեռ. 2496, էջ 233ր. «Բաղմավէպ», 1875, էջ, 267։

² Մ. Մաղիստրոս, Ճաշոցը, էջ 17։ Տե՛ս սույն աշխատության Հավելված II։

կարգին վերաբերող հիմնական ժողովածուներն ու նյութերն ունենինք, բայց թերի էր, և որպեսզի այլ ժողովուրդ պարծանքի տեղ չունենար ծավելին ունենալու առթիվ, Վկայասերն... «դայն ևս մտածեալ, եթէ զերկու պսակն փառաց յոյնք առ ինքեանս տարան ի հայոց մեծաց՝ զկաթողիկոսութիւն և զթագաւորութիւն»⁷⁹, այսինքն՝ մանավանդ մտածելով թե հույներն առանց այն էլ զրկեցին հայերին փառքի երկու պսակից՝ կաթողիկոսությունից և թագաւորությունից, բայց հոգեւոր ինքնությունից արդեն, Վկայասերը չի ուզում զրկված տեսնել իր ժողովրդին, դրա համար այնպիսի գործ է ձեռնարկում, որ թեև օտարներն ունենին, բայց հայերն էլ սեփականը պիտի ունենային՝ սեփական տօնակաւագայիմ միավոր: Այստեղ պարծենկոտությունն ու սնանկաւորությունը չէ, որ խոսել է հովւապետ Վկայասերի մեջ, այլ քաղաքական հեռատեսությունը՝ սահմանադատւելու ըստ ամենայնի գերիշխանություն ստացած հույներից ու նրա եկեղեցուց: Միաժամանակ մատենագիտության մեջ արդեն ընդունված կարծիք է, թե հունական Հայսմավուրքը ստեղծվել էր Բասիլիոս II կայսեր օրոք (976—1025 թվականների միջև)՝ Գրիգոր Վկայասերից մոտ մեկ դար առաջ⁸⁰: Նույնչափ դյուրին լուծում էր Հովսեփ Կոստանդնուպոլսեցուն հայ առաջին Հայսմավուրքի հեղինակ ճանաչելու միտումը⁸¹: Անշուշտ, Հովսեփ Կոստանդնուպոլսեցու գործը՝ Հայսմավուրքի թարգմանությունը, ինքնին մի նոր կազմակերպչական ամբողջուն ու կոտորվուն կարող էր հաղորդել նաև հայ եկեղեցուն, սակայն, ինչպես ցույց է տալիս նյութի ուսումնասիրությունը, դա շատ կտրված էր հայ կյանքից, և պատահական չէ այն լուծությունը, որ հայ մատենագիրները պահպանում են այդ գործի նրկատմամբ. «Ոչ ոք հայ պատմագիրներեն,—գրում է Ակինյանը,—հիշած է վաստակավորիս անունը»: Ապա շարունակում. «Ստեփանոս Ասողիկ, որ Պատմությունը 1004-ին ավարտած է, թեև կհիշե ժ դարու անվանի վարդապետները... բայց որևէ խոսք չէ բրած օրհնելույն Հովսեփա գոյության մասին: Այսպիսի նաև Մատթևոս Ուռհայեցի և ուրիշներ»⁸²: Ինչո՞ւ, պատճառն ի՞նչ էր, որ մանրակրկիտ ու հայրենասեր, կրթված պատմիչները

⁷⁹ Ձև. 8775, էջ 303բ—304ա:

⁸⁰ Տե՛ս Полный Месяцеслов Востока, էջ 6, 217—231:

Այս խնդրում ուսումնասիրողներին շատ մեծ նյութ կմատակարարեր հունական Հայսմավուրքի հայերեն թարգմանության որոշակի տարբերիվը՝ 991—992, որ հայտնի չէ ռուս և եվրոպացի մասնագետներին (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1957, № 1—2, էջ 1—12):

⁸¹ Ակինյան Ն., Հովսեփ Կոստանդնուպոլսեցի, «Հանդէս ամսօրեայ», 1957, № 1—2, էջ 1—12:

⁸² Նույն տեղում, էջ 11:

այդպիսի անտարբերությամբ են անցնում մշակութային այդ մեծ գործի կողքից. «Թեև ինչ ընդունելություն գտավ աշխատասիրությունս հայոց քով,— դարձյալ սրտմտում է Ակինյանը,— կլինե՞ ժ և ժԱ դարու հեղինակները»⁸³, Նույնիսկ վարդան Բաղիշեցին, որ հատկապես Հայսմավուրքի պատմության մեջ նշանակալի դեր խաղացած գործիչներին մեկ առ մեկ թվարկում է, «կանգիտանա Հովսեփի անունը», գրում է Ակինյանը: Զարմանալի այս երևույթը Ակինյանը բացատրում է հետագա գործիչների՝ Տեր-Խսրայելի և Կիրակոս Արևելցու, եթե ոչ անբարեխղճությամբ, ապա աննրբանկատությամբ⁸⁴: Մինչդեռ սրա դիմաց թե՛ մատենադրության մեջ, թե՛ ներբողյաններում ու հուշագրության մեջ, ինչպես տեսանք, Գրիգոր Վկայասերը բազմիցս հիշատակվում է իբրև նոր տոնակալի ու ժողովածուի հեղինակ:

Ո՞րն է սրա պատճառը: Ինչպե՞ս պիտի բացատրվի փաստական ու հեղինակային այս շփոթը:

Մեր պատկերացմամբ այսպես.

Հովսեփ Կոստանդնուպոլսեցին, իրոք, ինչպես ցույց է տալիս իր հիշատակարանը⁸⁵, 991—992 թվականներին թարգմանում է Հայսմավուրքը «ի միոյ հոռոմ Տօնացոյցէ»⁸⁶ և ինչպես ընդունված է ողջ միջնադարի գրչական ավանդույթում, ազնվորեն ու շիտակ ներկայացնում է իր արած գործը՝ թարգմանությունը հայերենի: Նա ամենևին մեղսակից չէ հետագա վերագրումներին:

Նրա թարգմանած ժողովածուում նշված նահատակների ու սրբերի բացարձակ գերակշիռ մասը անծանոթ պետք է եղած լիներ հայերին. միակ ծանոթ սուրբը, որ հիշվում է՝ Գրիգոր Լուսավորիչն է, Հռիփսիմն և Գայանեն կույսերի հետ միասին⁸⁷:

Այս պայմաններում Հովսեփ Կոստանդնուպոլսեցու գործը չէր կարող այնպիսի ընդունելություն գտնել և ճանաչում ստանալ, ինչպիսին ենթադրում էր Ակինյանը: Ավելին, օտար ժողովածուի գոյությունը, մեր կարծիքով, հակառակ աղդեցություն է ունեցել. այն մղել է հայ գործիչ-

⁸³ Նույն տեղում:

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ «Ես անարժանս և տղէտս և մեղավոր թարգմանիչս Յովսէփ... ի միոյ հոռոմ Տօնացոյցէ թարգմանեցի զճառս կարճառօտի ի թորգմական բարբառ ի ն և ե թուականութեան հայոց» (Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1957, էջ 3):

⁸⁶ Տօնացոյց է անվանված մեր Մատենադարանում պահպանվող 3658 Հայսմավուրքը, որ համառոտումն է 7463, 7433 ավելի ընդարձակ Հայսմավուրքների:

⁸⁷ Տե՛ս «Полный Месяцеслов Востока», էջ 229:

ներին, այս դեպքում Վկայասերին, հայ եկեղեցու դավանանքից ու տոնակարգից բխող նման ժողովածու ստեղծել, որի արդյունքն այն է լինում, որ հայրենի երկրում վաղուց ի վեր տարածում գտած Ճաշոց կամ Տոնամակ ժողովածուի մեջ վերափոխությունների ճանապարհով Վկայասերն ստեղծում է մի նոր ժողովածու, որն ինչ-որ չափ նման է օտարածին Հայսմավուրքին իր կայուն սրերով, բայց նաև ներառնում է հայկական գործիչների հիշատակին նվիրված տոներու Սրանով նա ճանաչելի է դառնում ժողովրդին, որի համար «Տէրն Գրիգորիս Վկայասէր կոչեցաւ իրօք և անւամբ, և փառակցութեամբ», — գրում է Վարդան Արեւելցին⁸⁸։ Ուրեմն, Գրիգոր Վկայասերը իր մականունն ստացել է ոչ թե ընդհանրապես վկայաբանություններ թարգմանած լինելու, այլ նախատակների հիշատակի առթիվ հայկական տոնացոյցում տոներ սահմանելու և նրանց պատմութեանն հետը հալալելու և տոնի առթիվ եկեղեցում կարդալու, ընթերցվածքներ հորինելու համար։ Եթե Հովսեփ Կոստանդնուպոլսեցին հունարեն Հայսմավուրքի թարգմանիչն էր X դարում, ապա Գրիգոր Վկայասերը՝ եղած ալանդների վրա սեփական տոնացոյց ժողովածուի հորինիչն ու հեղինակըն էր։ Սա էր նրա անվան ժողովրդականութեան գաղտնիքը և վաստակի բարձր գնահատանքի պատճառը։

Նախ անդրադառնանք ժողովածուի անվանը՝ «Ճաշոց գրքին»։ Դիմենք բառարաններից ամենահեղինակավորներից մեկին՝ Հայկազյան բառարանին. «Տօնամակ,—կարդում ենք այնտեղ,—տօնից ամին կարգ և ցուցակ ընթերցուածովք, այն են Ճաշոցք ամի տօնից տարեկանաց, որ առ յետինս Ճաշոց գիրք ասի»։

Այնուհետև. «Ճաշոց ժամ» բառի տակ՝ «Ժամանակ ճաշելոյ, որպէս երրորդ և վեցերորդ ժամ տուրնջեան, ուստի և ժամերդութիւն, որ յայնմ պահու՝ զնոյն անուն կրէ, որպէս և գիրքն ընթերցուածոց պատարագի, որ առ նախնեօք Տօնամակ կոչեւ, առ մեօք Ճաշոց ասի»։ Ուրեմն, այստեղ նույնացված են Ճաշոցն ու Տօնամակը։

Դա միջնադարյան մյուս ժողովածուների նման ուներ իր տարատեսակները, որոնց բոլորի համար, սակայն, բնորոշը ժողովածուի տոնակարգի շարժական բնույթն էր. այսինքն՝ տոները ոչ թե ամսաթվային օրացուցային էին, այլ շաբաթների ու նրանց օրերի կարգով։ Ամբողջ տոնակարգը կապված էր Քրիստոսի կյանքի զրվագների հետ՝ Ծնունդ, Մըկըրտություն... մինչև Մատնություն, Խաչելություն, Հարություն, Հայտնություն են. որով՝ տոնակարգի բովանդակությունը տերունական էր, տո-

⁸⁸ Ձեռ. 8775, էջ 307ա։

ներն էլ հաշվվում էին ծննդյան տոնից անցած շաբաթների ու շաբաթվա օրերի կարգով: Եվ որովհետև շաբաթվա օրերը ամեն տարի նույն օրերին չեն համընկնում, տոների ամսաթվերը փոփոխվում էին, օրերը տեղաշարժվում էին: Տոնակարգի շարժական բնույթը Ճաշոցի, ինչպես նաև հնագույն բոլոր ժողովածուների առանձնահատկությունն էր վաղ միջնադարում: Ամսաթվաչիւն տոները ավելի ուշ երևույթ են և կապվում են տոմարի կայունացման հետ:

Շարժական տոնակարգով են կազմված հնագույն Ճաշոցները, որ անխորտիչ սկսվում են ծննդյան տոներով. դա ակնհայտ է հնագույն, նույնիսկ սկզբից պակաս թերթեր ունեցող ձեռագրերում, ինչպիսին է օրինակ, Մատենադարանի 985 ձեռագիրը: Այն սկսվում է ծննդյան տոնի, բայց ոչ առաջին օրով. այսպես, էջ 3ա—«Յեթներորդ աւուր ծննդեան», էջ 4 ա—«Ութներորդ աւուր ծննդեան և թլատուութեան տեառն...» և այլն: Տոների այս նշումին հաջորդում էին Ճաշոցին բնորոշ Հնթերցվածները՝ եկեղեցում կարդացվելիք սաղմոսների կցուրդները, աւելույաների շարքը:

Եվ ոչ պատահականորեն է Վկայասերի, ինչպես և աշակերտ Կյուրակոսի հիշատակարանը պահպանվել Ճաշոցի մեջ: Այդ է վկայում բնորոշ ժողովածուի Տոնամակ անվանումը թե՛ Վկայասերի, թե՛ Կյուրակոսի կողմից. «Յաւելի ի նախակարգել տօնս... ընտրեալ ի Տօնամակաց»,—գրում է Վկայասերը⁸⁹, որ ինչպես տեսանք նույնանիշ է հետագա Ճաշոցին: «Մանուցանեմ ձեզ վասն սուրբ կտակիս՝ Տօնամակի...»,—երկրորդում է Կյուրակոսը⁹⁰:

Բացի ժողովածուի անվանումից, Կյուրակոսի հիշատակարանում բացահայտվում է բարենորոգվող ժողովածուի էական հատկանիշն ու բնույթը. «Ապա հողին սուրբ աղոթեաց սուրբ հայրապետին Գրիգորիսի... և նոր սկսեալ յօրինեաց զսա՝ ըստ ամենայն տօնից արժանապէս՝ ի դէպ սաղմոսիւմ և ընթերցումովք»⁹¹: Սա արդեն անառակելի է դարձնում Գրիգորի աշխատանքը Ճաշոց ժողովածուների վրա: Ուրիշ որևէ միջնադարյան-արարողական ժողովածու չունի «ընթերցմունքների» այս կանոնը կամ սխտեմը:

Մնում է որոշակի դարձնել նրա կատարած նորամուծությունները: Բարենորոգումներից առաջինը նշել է ինքը՝ Գրիգորիսը. ի տարբերություն Ճաշոցների տերունական տոների շարժական կարգին, Գրիգորը մտցրել է

⁸⁹ Մ. Մագիստրոս, Ճաշոցք, էջ 17:

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ Նույն տեղում:

կայուն տոներ ի սխտեմ՝ «Յուզմամբ աուրց հոռոմի ամսոց»։ Սա ճաշոցից Հայսմաւուրբ տանող ճանապարհի առաջին և կարևոր քայլն է. սահմանել տոմարական-ամսաքվային կայուն տոնակարգ՝ ի տարբերություն ճաշոցների շարժական բնույթի։

Դժվար է հաստատապես պնդել, թե դա անսլացմանորեն օտար Հայսմաւուրբների սխտեմից էր գալիս. շմոռանա՞նք, որ Վկայասերի ժամանակակիցն էր Հովհաննես Սարկավագը, նրան մտերիմ մի անձնավորութուն՝ գրական կապերով առնչված, որի գործերին չէր կարող անտեղյակ լինել ընկերը⁹²։

Վկայասերն, անշուշտ, ծանոթ էր սարկավագյան անշարժ տոմարի սկզբունքին, անկախ այն բանից, թե դա արդեն պաշտոնական բնույթ էր կրում, թե՛ ոչ։ Փաստն այն է, որ Վկայասերը փորձում է կայունութուն մտցնել այնպիսի մի ժողովածուի մեջ անգամ, որ իր էությամբ շարժական տոնակարգով էր ստեղծված։ Դա հրամայական պահանջ էր դարձել ո՛չ միայն համաշխարհային նմանատիպ հուշարձանների օրինակով, այլև այն պատճառով, որ դժվարութուններ ու խառնաշփոթութուններ էր բերում հայ տոնակարգում և ողջ արարողական գրականության մեջ, իսկ սա խարխուլում էր առանց այն էլ արտաքին հանգամանքներով խարխըլված հայ եկեղեցու ինքնութունն ու դիմադրողականութունը։

Այսպես ուրեմն. նախ կայուն տոնակարգ։

Երկրորդ. ի տարբերութուն հնագույն ճաշոցների, որտեղ բացառված էին սրբերի տոների հիշատակութուններ, Վկայասերը մտցնում է նահատակների տոներ իրենց «ընթերցմունքներով», «Զոր ես՝ Գրիգոր ծառայ աստուծոյ և զիտապետ Հայաստան ազգիս համարձակեալ վասն սիրոյ վկայից Քրիստոսի՝ յաւելի ի նախակարգեալ տօնսն հոռոմի ամսոց, քնտրեալ ի Տօնամակաց»... և այլն։

Յերրորդ. Վկայասերը սաղմոսների և «ընթերցվածների» նոր բնագրեր է կազմում՝ նոր տոներին համապատասխան, մի դժվարին դործ, որ ինչպես երևում է Կյուրակոսի հիշատակարանից, այդպես էլ անավարտ է մնում. «Բայց ոչ ի գլովս աւարտեաց զամենայն,—գրում է Կյուրակոսը հիշատակարանում,—զոր պարտ և արժան էր տօնելոյ»։ Եվ սրանից հետո, Կյուրակոսը՝ մանրամասնում է ասելիքը և առանց այն էլ շափաղանց արժեքավոր այս հիշատակարանը օժտում առավել պիտանի և ուշագրավ սովյալներով՝ Գրիգորիսի և իր արածի փաստական նկարագրությամբ։

⁹² Տե՛ս Աբրահամյան Ա., Հովհաննես Իմաստասերի մատենագրութունը, Երևան, 1956, էջ 27, 28, 97—100։

«Ապա ինձ,—շարունակում է նա,—որ միշտ ընդ նմա էի... հոգ եղի վախճանելն իւրում՝ մի անփոյթ առնել զսմանէ, այլ յանկել ընթերցութեամբ ըստ արժանին, զոր և արարի», այսինքն՝ Վկայասերն իր մահվան ժամին հորդորում է թերի շօղունը իր գործը, այլ լրացնել ընթերցվածներով, որ և, ինչպես անկեղծ պատմում է, կատարում է Կյուրակոսը: Եւ այսպէս «քառասուն և վեց տօն սուրբ հայրապետն կարգեաց և երեսուն՝ ես տրուպս յաւելի, որ լինին և թանասուն և վեց, զորս բոլոր տարւոյն բաւական համարեցաք ընթերցութեամբ և մարտիրոջօքն»: Հիշատակագիրը պարզ ու հստակ ներկայացնում է իրենց արածը. այնտեղ չի խոսվում ծայրեփծայր նոր ժողովածու կազմած լինելու մասին, այլ ճաշոցի մեջ 76 նոր տոն սանմանելու և դրանք համապատասխան ընթերցվածներով և, ուշադրութեամբ դարձնենք, «մարտիրոջօքն», այսինքն նահատակների մասին գրույց պատմութիւններ ներմուծելով, որ հետագա Հայսմաւուրք ժողովածուների էութունն է կազմում, որով անառարկելի է դառնում Վկայասերի մեծ ավանդն այդ գործում:

Այս առթիւ Ղ. Ալիշանը գրում է. «Արդ մեր Պահլավունի կաթողիկոսն իրմե ատաջիններուն դրածներին և գրածներն հավաքելով և նորանոր ավելցնելով՝ ուղեց մեծ Տօնական մը կարգել և Տարեգրոց այսինքն Ճաշոց գրքին մեջ անցնել, որ ամեն տոներու կարգվացիլն եկեղեցւո մեջ, ինչպես կ'պատվիրէ իր հիշատակարանին մեջ և կ'մացնէ ալ, որ ձանձրութիւն և ծանրութիւն չըլլալու համար, չափավոր գրած և զգրած է. և ասել է կրնա կարծիլ, որ այն երկայն երկայն ճառից և վկայաբանութեանց համառոտութիւն մը ալ ըրած էր, զոր Հայսմաւուրաց նախօրինակ պիտի սկսէ: Թեպետ և, ինչպես առաջ հիշեցինք, դեռ Գրիգոր Վկայասերի այնքան երկար տարիներ աշխատած գործոց և գրոց ամբողջ հավաքում մը չենք տեսած. իր հիշատակարանն գրված է Տարեգրոց կամ Ճաշոցի մեջ, զոր ինքն կ'անվանէ Տօնամակ և շատ Տօնամակներէ հավաքած և ըստ Հոռոմի ամսոց դասավորած կսէ, այլ այն գրոց մեջ միայն սրբոց հիշատակներ և պատարագի ատեն կ'արգալու սուրբ գրոց ընթերցվածքներ կան և ոչ վկայաբանութիւնք, ոչ ճառք»⁹³:

Մեզ մնում է հուշագրական-հիշատակարանային, մատենագրական աղբյուրներից անցնել ձեռագրական-փաստական նյութին՝ մինչև վկայասերյան Ճաշոցների կողքին նշելու այնպիսի ժողովածուներ, որոնք Ճաշոց անունն են կրում, բայց էպպես տարբեր են Ճաշոցներից, պարունակում են նաև եկեղեցու հայրերի կամ նահատակների ամսաթվային տոնի հիշատակներ՝ իրենց վարքագրական-վկայաբանական համապատասխան նյու-

⁹³ Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 131:

թերով, որոնք մի տեսակ միջին օղակ են կազմում Ճաշոցից Հայսմավուրք անցնող ժողովածուների միջև, որոնք ըստ բնույթի Ճաշոց չեն արդեն և ոչ էլ իրապես Հայսմավուրք դեռևս:

Հարցի պատմության ընթացքն ուսումնասիրելիս մեր ուշադրությունը գրավեց Մաշտոցյան մատենադարանի 832 Ճաշոցը՝ հնագույնը մեր ձեռագրերում, գրված 1154 թվականին, Վկայասերի մահից հիսուն տարի շանցած, հավանականորեն Սիւսայում: Այս Ճաշոցն ուշագրավ է մի քանի առումով: Նախ՝ ամսակարգով: Եթե Ճաշոցներն ընդհանրապես սկսվում են Ավետման և Ծննդյան տոներով՝ ղեկտեմբերի վերջ և հունվարի սկիզբ, ապա այս Ճաշոցն սկսվում է հայկական տոմարակարգով՝ նաւասարդ աւով: Ուրեմն, տերունական տոների շարժական կարգը խախտված է, և Ճաշոց է ներթափանցել օրացույցը: Այսպես. էջ 1ա—«Նավասարդի ա— Յիշատակ Յովհաննու Մկրտչի, և այս կանոն կառարի Սաղմոս Ի, Կցուրդ ած փառաւորիալ, Զբեղ աղաչեմ ուլ մարդիկ...

1 բ—Ընթերցուած ի Մաղաքիայ մարգարէէ:

2 ա—Ընթերցուած ի Հովիել ի մարգարէէ:

2 բ—Ընթերցուած ի գործոց առաքելոց:

3 բ—Աղեղութա, ՃԺԴ, Աւետ. ըստ Մարկոսի «Եւ լուաւ արքայն Հերովդէս»...

Բայց 832 ձեռագրում տոներն ամենօրյա չեն. ամբողջ նաւասարդ ամսին (օգոստոսի 11—սեպտեմբերի 10) նշված է ընդամենը 5 տոն՝ նաւասարդի բ՝ Սրբոյ աստուածածնին, նաւասարդի ժն՝ Սրբոյ աստուածածնին աւետեացն, Ի նաւասարդի ժէ՝ Սրբոյ քուշիցն, որք ի Սուկաւ, և նաւասարդի լ՝ Սրբոյ Սահակայ Պարթևի:

Այսպես սակավ են նաև մյուս ամիսների տոները՝ հոռի ամսին (սեպտ.-հոկտ.) նույնպես հինգ տոն՝ Առաջին Կիրակէն աշխարհամատըրանն, երկրորդ կիրակէն՝ Սրբոց Ոսկեանցն, իզ՝ Սրբոց Հռիփսիմեանցն, իէ՝ Սրբոյն Գայանեա և այլն: Սահմի ամսին (հոկտեմբեր-նոյեմբեր)՝ Յովհաննու Մկրտչի, ժ-ին՝ Սրբոյն Գրիգորի եւն ի Վիրապէն, սահմի ի՝ Նունէ, որ ի Վիրս և որք ի Վարագ, տրէ ամսին (նոյեմբերի 8—դեկտեմբերի 7) 8 տոն՝ տրէ ժ՝ Դիւտ ոսկերաց սրբոյն Գրիգորի, տրէ ժա՝ Սրբոյն Ներսիսի և Խաղայ, տրէ ժէ՝ Դանիելի և Երից մանկանցն՝ տրէ ժէ՝ Դանիելի և Երից մանկանցն, տրէ ժէ՝ Սահակայ և Մեսրոբա և այլոց թարգմանչացն, և այլն: Քաղոց ամսին՝ (դեկտեմբեր-հունվար) «Քաղոց բ՝ Սրբոյն Յիդութրուդտա, քաղոց ե՝ Սրբոյն Սանդատոյ, Տեսիլ սրբոյն Գրիգորի, քաղոց ժգ՝ Թագէոսի առաքելոյն, քաղոց ժէ՝ Սրբոյն Շուշանկանն դստեր սրբոյն Վարդանա» և այլն:

Մեր նկարագրած մինչվկայասերյան Ճաշոցներից այս ձևագիրը տարբերվում է, ինչպես ակնհայտ է բերած ցանկից, երկու հատկանիշով: Առաջին. նշվում են կայուն, ամսաթվային տոներ, թեև ոչ ամենօրյա, և երկրորդ՝ տոները գերակշիռ մասով հայկական են, հայ գործիչների օրվա հիշատակներ: Բայց ուշագրավն այս ժողովածուում այն է, որ տոնի առթիվ հղած ընթերցմունքները, կարդացվելիք նյութը հին, ճաշոցային է՝ հատվածներ գերազանցապես Գործք առաքելոցից: Այսպես.

էջ 7բ. Նաւասարդի ժե—Սրբոյ աստուածածնին աւետեացն: Եւ այս կանոն կատարի Սաղմոս իէ: Կցուող՝ Տէր... Ընթերցուած՝ Տացէ զբանս, ի պտղոյ արդարութեան բուսանի ծառ կենաց:

8 ա Ընթերցուած ի Զաքարիա մարգարէէ

8 բ Ընթերցուած ի Մաղաքիա մարգարէէ

Ընթերցուած ի Յեսայեայ մարգարէէ

9 ա Պաւլոսի առաքելոյն ի կորընթացւոյն բ թղթոյն ընթերցուած:

9 բ Աղևզուիա դէ, Աւետարան ըստ Ղուկասուն՝ «Եւ յամսեանն վեցերորդի ասաց Գաբրիէլ ցհեշտակաւ»:

Ուրեմն, տոնը որոշակիացել է, ամսաթվային է, ոչ շարժական, բայց ընթերցմունքները նույնն են մնացել՝ ճաշոցային են: Այսպես են նաև ոչ տերունական տոների ընթերցվածները: Ուրեմն, ընթերցվածների կարգը նույնութեամբ մնացել է մինչվկայասերյան Ճաշոցներինը, բայց տարվա համար սահմանվել են ոչ ամենօրյա, այլ կայուն օրացուցային տոներ, մի քանի տերունական տոների հետ մեկտեղ հայկական ճիշատակների տոներ:

Այս ամենը ձևագրի մեկ բաղկացուցիչ մասն է իր որոշակի դիմագծով, որ ամփոփվում և ավարտվում է Հայտնության տօնի 8-օրյա ընթերցմունքների շարքով ու սարքով (էջ 106 ա—119 բ), 120 բ էջում «Կատարեցաւ կանոն ժողովոյ սրբոյ յայտնութեանն ծնիցելոյն ի կուռն» Թրիստոսի աստուծոյ մերոյ: Փառք յաւիտեանս ամէն»:

Հաջորդ՝ 121 ա էջը սկսվում է նոր ծաղկազարդ խորանով, նոր ամսակարգով ու տոնակարգով, որ վերնագրված է՝ «Կարգ տօնից ըստ հռոմէն ամսոցն, որք կատարին ի Թրիստոս»։ Այնուհետև հունվարից դեկտեմբեր հռոմեական ամիսների կարգով նշված մոտ 30 համաքրիստոնեական տոն, վերինների նման ընթերցվածների ճաշոցային կարգով՝ «Եւ այս կանոն կատարի՝ Սաղմոս... Կցուող... ընթերցուած»... և այլն:

Երբ քննում ենք նշված 832 ձևագիրը տոների քանակի, բնութի, ընթերցմունքների սխտեմի առումով, ապա ակնհայտորեն կանգնում ենք հետևյալ ուշագրավ փաստերի հանդեպ.

Ինչպես վերը նշվել է արդեն, 832 ձեռագիրը երկու բաղադրիչ մասերից է կազմված. առաջինը՝ հայկական ամիսների կարգով նշվող տոներն են, ապա նոր խորանով ու նոր սկսվածքով մի նոր գլուխ՝ «Կարգ տոնից ըստ հռոմեան ամսոցն, որք կատարին ի Քրիստոս», հունվարով սկսվող տոնակարգով: 832 ձեռագրի առաջին մասում՝ նախաարդից մինչև հրոտից ամսավերջ ընկած տոների թիվը հասնում է 46-ի, Հիշենք Կյուրակոսի հիշատակարանը՝ «Քառասուն վեց տօն սուրբ հայրապետն կարգեաց և երեսուն՝ ես՝ տրուպս յաւելի»: Ձեռագրի երկրորդ հատվածում, որտեղ տոները նշված են հռոմեական ամիսների կարգով. մենք Կյուրակոսի նշած 30 տոնի դիմաց, հաշվեցինք ուղիղ 30 տոն: Պատահական է արդյոք այս ձեռագրի երկու հատվածների տոների քանակի (46 և 30) համապատասխանությունը Կյուրակոսի նշածի հետ՝ «որ լինին եւթանասուն և վեց, զորս բոլոր տարւոյն բաւական համարեցաք ընթերցուածովք և մարտիրոսովն»:

832 ձեռագիրը, որ Գևորգ Գրիչն արտագրել է «չընտիր և յազնիւ օրինակէ», նորարարական է վերը նշված տեսանկյուններով: Այս ձեռագրում ճաշոցային է մնացել միայն ընթերցմունքների համակարգը: Մնացածը փոխվել է. այն ներառել է ամսաթվեր, օտար ժողովածուներից տարբերվող հայկական ամսակարգ ու տոնացանկ: Մինչև Հայսմաւուրք մնացել է մեկ էական փոփոխություն՝ ընթերցմունքները փոխարինել տոնի առթիվ վկայաբանությունների կամ վարքերի սյուժետային պատմություններով, որոնք դարձյալ պետք է ընթերցվեին եկեղեցում, «Գործք առաքելոցի» ու ավետարանների հատվածների փոխարեն: Ուրեմն պետք է փոխվեր ընթերցվելիք նյութի բովանդակությունը նաև, ներառենք վարքեր ու վկայաբանություններ, որոնք այնքան բնորոշ էին օտար Հայսմաւուրքներին: Սակայն 832 ձեռագիրը նահատակների տոների սահմանման հետ մեկտեղ՝ շունի սրանց հայսմաւուրքային ընթերցմունքները, չնայած աշակերտը նշում է, որ Վկայասերը ժողովածուն լրացրեց ընթերցմունքներով և «Մարտիրոսօրն», այսինքն նաև նահատակությունների պատմություններով: Ավելին, այդ մասին հիշատակում է ինքը Գրիգոր Վկայասերը:

«...որ ի բաղմաց անփոյթ էր լիալ... և մեք յայպիսի համառօտահաւար Տօնամակս գրեցաք: Զի մի որ աւելորդ վարկցի զորոց զվարս քաղաքաւարական պատմութեանց, զոր ոչ զոյր առ մեզ հայ գրով մեք աշխատութեամբ թարգմանեցաք ի յունականէն ի մեր զիր և բառ», ուրեմն նա նշում է նահատակների պատմությունները, որ թարգմանել է, և որ «առանց երկուանալոյ» պիտի կատարել «ղկանոն ընթերցուածիս ի տօնս յիշատակի սրբոց»:

Եվ ոչ միայն թարգմանություններ: Վկայասերը մտահոգվել է հայ աղագային գործիչների հիշատակը հավերժացնելու հարցով. «Մեր ուղղա-դավան ազգիս արամեան... համօրեն ամենայն սրբովք, որ եղեն յաղգս մեք հաճոյ աստուծոյ... զայս գրոյ անփոյթ արարին վասն ժամանակին... անփառաւոր և անկատար և անյարմար լիներ առանց այս գրոց...», որից հետո միայն Կյուրակոս աշակերտը ի մի բերելով վկայասերի և իր արած-ները ասում է, թե ընդամենը 76 տոն սահմանեցին: Կյուրակոս աշակերտի հիշատակարաններից, ինչպես նաև Վարդան Արեւելցու պատմածներից ելնելով մենք հակված ենք կարծելու, որ Գրիգոր վկայասերը կազմել է ոչ միայն 832 ժողովածուի նախագաղափար Տոնամակ ժողովածուն՝ ճաշոցային ընթերցմունքներով, այլ նաև իբրև սրա դարգացման հաջորդ փուլ կամ բաղադրիչ մաս բոլորովին նոր՝ Տոնամակ ժողովածու, որտեղ փոխվել է նաև ընթերցվածների սխառեմը:

Արդ. վկայաբանական պատմությունների պակասը 832 ճաշոցում նշանակու՞մ է արդյոք, թե նշված ժողովածուն վկայասերի ձեռքի գործը չէ: Թերևս կասկածանքի տեղիք տար այս խնդիրը, եթե մեզ օգնության չգային դարձյալ ձեռագրերը և Ն. Ակինյանի մի դիտումը. «Ժամանակի ընթացքին,—գրում է Ն. Ակինյանը,—կցված էին Տոնամակին, ուրույն բաժնի մեջ, նորամուտ տերունական տոներ, սուրբերու և մարտիրոսնե-րու հիշատակներ, մասամբ ըստ հայոց և մասամբ ըստ Հռոմի ամսոց»⁹⁴:

Ուրեմն Տոնամակն ուներ իր բաղադրիչ հավելվածը՝ «ուրույն բա-ժինը»: Ենթադրությու՞ն է այս, թե ձեռագրական փաստ: Զգիտենք Ակինյանն ինչ կուլաններ է ունեցել, բայց փարիզյան ձեռագրաց ցուցակնե-րում մեզ հանդիպեց հետևյալ ուշագրավ հիշատակարանը ճաշոցում, թե ժողովածուն ցույց է տալիս «ղբանիութիւն ամսոյ (այսինքն՝ որոշակի ամսաթիվ—Մ. Ա.) և զատւրն ընթերցուածն և զսաղմոսն յանդիման կա-ցուցանէ» և որ ավելի կարևորն է՝ «զտօնիցն առանձին և զիշատակաց», որ նշանակում է ինքնին, թե հիշատակի ընթերցվածներն առանձին գո-յություն են ունեցել, և եթե միևնույն տոների համար տարբեր հավա-քածոներ են կազմվել՝ ընթերցողները թող չտարակուսեն. «Բայց եթէ կրկին և երեքկին և բազում անգամ զնոյնն կարգեցաք ի դիրս, այդ մի տղիտութեամբ որ համարեսցի գործս այլ առաւելեալ փութով, զի առանց աշխատութեան կարգի յանցն իւր տեղւոջն յանդիմանակաց ժողովոյն

⁹⁴ Ակինյան Ն., Մատենագրական հետազոտություններ, հ. 5, Վիեննա, 1953, էջ 291—

խնդրողն գտանիցէ զընթերցածն»։ Մինք այնպես ենք հասկանում, թե խոսքն այստեղ Ճաշոցի ընթերցվածների տարբեր սիստեմին է վերաբերում՝ տոնի հիշատակների առթիվ սաղմոս-կցուրդների կողքին նաև նահատակութունների սյուժետային պատմութիւն-ընթերցվածներին, որոնք թեև տարբեր ժողովածուներով, բայց նախատեսվում էին միևնույն տոնի օրը կարդալու համար։ Այս նորարարութիւնը օրինականացնելու պահանջով պետք է բացատրել Ճաշոցի հիշատակարանի այն տողերը, որտեղ վկայասերն իբրև կաթողիկոս հրահանգ է տալիս իր հիշատակարանն արտագրելու «հարկ և հրաման ունիք յաստուծոյ զսակաւ յիշատակարանս խրատու ի գիրսն, զոր նորոգեցե՞ յօրինակել, որպէս և զհոգևոր տեսառն յիշատակ», որպեսզի այս նորամուծութիւնները տարակուսանքի տեղիք չտան և ընկալվին իբրև եկեղեցու հօր կարգադրութիւններ։

Ինչպես հայտնի է, հայ եկեղեցում նշվող տոները շատ դեպքում ոչ թե սոսկ կրոնական բովանդակութիւն ունեին, այլ ավելի վերաբերում էին հայ ժողովրդի պատմական ճակատագրին ու մշակութային կյանքի իրադարձութիւններին, ինչպես, օրինակ, հայ տառերի գյուտին, վարդանանց ազատագրական պայքարին, շատ գործիչների կենսագրականներին, ինչպես և համաքրիստոնեական ժողովածուներից եկող այլ և այլ ժողովուրդների պատմութեան զրավանդներին, զանազան երկրների ու ժողովուրդների պատմական, սոցիալական, կենցաղային, ազգագրական երեւոյթներին։

Այս առումով մեր ուշադրութիւնը գրավեց դարձյալ մեր Մատենադարանի 8179 ձեռագիրը՝ Ճառնախօսքը, գրված 1279 թվականին։ Վերջինս զարմանալի ներդաշնակութիւն ունի վերոհիշյալ 832 Ճաշոցի հետ, միայն թե Ճառնախօսքի մեջ առանձնացված չեն հայկական ամսանուններով տոներն ու հոգմեական տոնացույցով տերունական տոնակարգը, այլ միաձուլ են, համատեղ ներհյուսված, այսինքն՝ նախասարգ ամսից հերթականորեն նշվում են բոլոր տոները ամսաթիւերի դասավորութեամբ, չեն առանձնացվում, ինչպես Ճաշոցում։ Ինչ-որ մի ձեռք միասնական սիստեմի է բերել տարբեր աղյուսակներում եղած թե՛ հայկական, թե՛ ընդհանուր քրիստոնեական տոները և դասավորել հայկական ամսակարգով։ սկսել է նախասարգից, ամսվա մեջ տեղադրվելով հայ եկեղեցում կատարվելիք թե՛ հայկական, թե՛ տերունական տոների բուն զրույցները։ Ի տարբերութիւն 832-ի Ճաշոցային ընթերցմունքների, 8179 ձեռագիրն ամփոփում է պատմական նահատակութիւնների, իսկ տերունական տոների շուրջ էլ՝ սյուժետային պատմումներ։ Սա արդեն Ճաշոցից դեպի Հայսմապօրհ ընթացող ուղու հաջորդ աս-

տիեմանն է, որ դեռ լրիվ օրացուցային տոներով հագեցված չէ, բայց պարունակում է արդեն հայկական եկեղեցում տոնվելիք տոների ու միայն կարգը, այլև բուն ընթերցվելիք նյութը՝ վկայաբանությունն ու տոնի պատճառը: Բացի այն, որ 8179 Ճառընտրում տոնակարգը լրիվ համապատասխանում է 832 Ճառոցի տոնակարգին, որ ինքնին արդեն շատ բան է ասում սրանց ընդհանրություն մասին, 8179 Ճառընտրում պահպանված են, մեր կարծիքով, օրինաչափորեն, Գրիգոր Վկայասերի երկու ճառերը, առաջինը՝ Եփրեմ խորին Ասորու՝ Հովհաննես Մկրտչի տոնին նըվիրված գեղեցիկ, գեղարվեստական բարձրարժեք ճառն է, որ թարգմանել է ինքը Վկայասերը և հավանորեն ինքն էլ տեղադրել իր Ճառոցին կից վկայաբանական ժողովածուում՝ «Հրավիրելով կոչեցաւ լեզու իմ...» սկսվածքով, երրորդը, մեր համոզմամբ, դարձյալ Վկայասերի՝ «Յաղագս աշխարհայմատրանն, որ հոռի առաջին կիրակին կատարի» տոնակարգային միավորը մեկնաբանող ուղագրով ճառն է: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Աշխարհամատրան տոնը կա նաև 832 Ճառոցում և ի միջի ամսաթվային տոների՝ նշվում է շարժական՝ տեղական տոների սխառեմով. այսպես, նրանից առաջ՝ «նաւասարդի ի... Սրբոյ Սահակայ Պարթևի» տոնն է, որից անմիջապես հետո տրված է՝ «Հոռի առաջին կիրակէն՝ Աշխարհամատրանն: Եւ այս կանոն կատարի սաղմոս Կէ, կցուող՝ Յեկեղեցիս օրհնեալ...», ընթերցուած առակաց՝ Պատուեալ զտէր ի քոյ արդար վաստակոց...»: Այնուհետև «Հոռի իզ—Սրբոյ Հռիփսիմյանցն...» և այլն:

832 Ճառոցի ճառոցային սարքի դիմաց, 8179 Ճառընտրում տեղադրված է Աշխարհամատրան ճառը հոռի առաջին կիրակիում տեղադրելու դավանաբանական կամ, ավելի ճիշտ՝ տոմարական հիմնավորումը. ահա այն. «Քան զշինել երանելոյն Կոստանդիանոսի միանգամայն դամենայն եկեղեցիս ութ օր կանոնեցին տօնախմբութեան. և զերկրորդ օրն յաւետ հրաշիւք պայծառացուցին. և զկանոնն ի սուրբ մատրանն հրամայեցին կատարել. զի նա է մայր եկեղեցեաց. և նա է սուրբ կաթողիկէն. և մեծ է պատիւ և բարձրագոյն քան դամենայն եկեղեցիս:

Արդ վասն զի մատուռն անուանելով զնայ զի մեր ի մատրան ամսեան հանդիպեալ առաջնումն, համաբեցան եթէ մարտիրոսաց յիշատակ է, բայց շունի հաստատութիւն բան. վասնորոյ ի Տօնամակի ուրեմն գրեալ է. քանզի ոչ ի մեր ընթերցուածս և ոչ ի ճոռմին և ոչ յասորի ուրէջ յիշատակի և ոչ ուրէջ տօնէ յովսէ երկրի, բայց զի հայ ամիսքն անխաղ են և անշարժ կան, իսկ տօնքն յառաջ խաղան և շարժին ըստ եղանակացն, վասն այնորիկ սովորութիւն կալաւ անտի մինչև այսր, յօրում ամսեանն հանդիպեալ

է տօնն. իսկ զբան հոռոմին կան ի նմին և առնեն: Արդ Խաւաստապէս մատուռն խաչվեաց տօն է, որ ի սեպտեմբերի ժդ կատարի, մարտիրոսաց ինչ խնդիր ոչ է...»⁹⁵:

Արդ, եթէ ըստ նշված ճառի, այս Աշխարհամատրան տոնը ոչ մի եկեղեցի չի կատարել, ոմանք էլ դա կապել են մարտ ամսվա կամ մարտիրոսաց տոներին հետ, մի բան, որ ժխտում է ճառի հեղինակը, և միայն 832 Ճաշոցն է նշում այդ տոնը հոռի առաջին կիրակիում, իսկ 8179 Ճառքնտիրն էլ դրան բացատրություն է տալիս, այդ աներկբայորեն վկայում է այդ երկու ժողովածուների միասնական սկզբունքով ստեղծված լինելու հանգամանքը և հավանական դարձնում Տոնամակ-Ճաշոցի ու նրան հարակից կամ բաղադրիչ Մարտիրոզոք ժողովածուի գոյությունը հինգ վկայասերի ժամանակներից սկսած⁹⁶:

Արդ, պնդել, թե 8179 Ճառքնտիրը իր «Մարտիրոզոք» նյութերով անվերապահ ու անմիջականորեն վկայասերի ու կյուրակոսի ձևերի գործն է, չինք կարող⁹⁷, բայց և չինք կարող ժխտել, թե այս ժողովածուն վկայասերյան նախաձեռնությունն արգասիք է, որ հետևողական կիրառություն է

⁹⁵ Որ Աշխարհամատրան տոնը հայերն իրոք առնվազն դարնան են կատարել, երևում է մեր ձևագրատան Ճաշոցներից մեկի տոնակարգից: Զարմանալիորեն այդ Ճաշոցն սկսվում է հունվարի մեկով, այսինքն՝ ո՛չ հայկական, ո՛չ էլ հունական, այլ լատինական տոնացույցի կարգով (Քերև Ջատկական), ապրիլից—մայիս ամիսների արանքում՝ (էջ 68ա), դնելով «Ճառաչին կիրակին գկնի նոր կիրակին»՝ Աշխարհամատրան» (Զեռ. 940, Ճաշոց ԺԳ—ԺԴ դարերի):

⁹⁶ Ճաշոց և սրան հարակից՝ Մարտիրոզոք ժողովածուների գոյության մեր բերած օրինակը, ինչպես երևում է ձևագրերի քննությունից, եղակի փաստ չէ մեր մատենագրական կյանքում: Ահա Մատենադարանի 142 թերի Ճաշոցը՝ «Մասն Ճաշոցի»: Դրման ժամանակը՝ 1269 թ., վայրը՝ Հոռոմ. դրիչ Մարգարեի ժամանակակից գործակիցների մեջ նշված է նաև Վարդան Արեւիցին: Տիպիկ հնադարյան Ճաշոց. «Զորեշարթի առաւօտն...», «Շարթ առաւօտն...», «Նոր կիրակէի առաւօտն...» և այլն, առանց ամսաթվերի 310 բէում կարգում ենք. «Շողակաթին (տոնը—Մ. Ա.) շարթ օրն կարգի ի մարտիրոզոցն է, դիտ և կարդա... նաւակտեանց Սուրբ Խաչին յընթերցածն է սեպտեմբեր ժդ, դիտ և կարդա, Սուրբ Խաչին առաւօտին Սաղմոս՝ ի կարդալ կցուրդ՝ նշանեցաւ, կարգն իր մարտիրոզոցն է»: Սրանք պարզ վկայություններ են այն բանի, որ Ճաշոցների կողքին գործել են նաև Մարտիրոզոք վկայարանական ընթերցվածների ժողովածուները, որոնք, ըստ մեր ձևերի տակ եղած աղբյուրների, ակունք են առել 832 տիպի Ճաշոց և 8179 տիպի Ճառքնտիր ժողովածուների զուգահեռ գոյությունից:

⁹⁷ Թեև 8179 ձևագրում առանձին ընթերցվածներ աչրի են դարձնում լեզվի հարուստ, մենք կասինք նույնիսկ Մաղիստոսյան բառապաշարով ու ոճով՝ «մինչ դի և ժպհհալ եպիսկոպոսացն», «պանդանդոս», «եշկահակել զՔրիստոսի կամաւոր վասն մեր խաչն այսանալ», «լուա համարձակ պատասխանիս յիրաքանչիրոցն», «ըստ աղդի դնել զթառակալսն», «սուկի բազում տալ նմա իբրև խոհնմ և համարձակալսսս առն», որոնք հիշեցնում են վկայասերի նույնիսկ թարգմանություններում գործածած բառաբարդությունները՝

ստացել ոչ միայն նշված Ճառընտրում, այլև Ետվկայասերյան Ճաշոց ժողովածուների հետագա ճակատագրում:

Վկայասերից սկսվող այս միջամխությունը Ճաշոց ժողովածու լայն դուռ է բացում հետագա բաղմապիսի նորամուծությունների համար⁹⁸, որոնք էապես խաթարում են Ճաշոցի բնույթը և պատճառ դառնում հետագարձ պրոցեսի: Այսինքն՝ երբ Վկայասերի շնորհիվ տոնակարգ են մտնում հայկական տոներն ու սրբախոսությունները, դրանք կայունացվում և օրինականացվում են և հետագայում տեղադրվում թարգմանական Հայսմավուրք ժողովածուների մեջ՝ ձևավորվելով իբրև հայկական Հայսմավուրք՝ իր ուրույն խմբագրությամբ:

Երբ ավարտուն ձև են ստանում Հայսմավուրքներն իբրև ինքնուրույն ժողովածուներ, անհրաժեշտություն է ստեղծվում մաքրելու Ճաշոցը եսասմույծ տարրերից, և մինչև այսօր հայ եկեղեցում գործում է թե՛ Հայսմավուրքն իր Մարտիրոզոգ ընթերցվածներով ու օրացուցային լրիվ կարգով, թե՛ Ճաշոց ժողովածուն, տերունական տոների շարժական-շաբաթական կարգով ու ընթերցմունքների հին սխառնով՝ «Գործք առաքելոցից» քաղվածքներով, սաղմոսով, կցուրդներով ու շարականներով:

Այսպիսով, հայ ձեռագրական փաստերի, հատկապես 832 Ճաշոցի, 8179 Ճառընտրի, Գր. Վկայասերի ու Կյուրակոս աշակերտի հիշատակարանների, մատենագրական աղբյուրների համադիր քննությամբ պարզվում է հայ Հայսմավուրքների ծագման պատմությունը Ճաշոց ժողովածուների հիմքի վրա, որ հետագա դործիչների՝ Տեր-Իսրայելի, Կիրակոս Արևելցու ջանքերի շնորհիվ ներդաշնակվում է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած հունական Հայսմավուրքի տոնակարգին և, աստիճանական հարստացմամբ, հասնում համաքրիստոնեական գրեթե լիակատար Հայսմավուրքների մակարդակին, այնուհետև՝ Գր. Խլաթեցու ջանքերով, լայն ժողովրդականություն ստանում և դարեր հարատևում իբրև հայ միջնադարյան մաքուր հոգեկան աշխարհը ձևավորող կառույց մի հուշարձան:

«սակտահացի», «վաղվադակի ի լաջանաւեցին և ընդ միշաժովին», «քարոզէր... ուղղափառապէս և առաքելադաւան»:

⁹⁸ Այս տեսակետից բացահայտել օրինակ է Հեթում թագավորի համար գրված Մատենադարանի 940 (1286 թ.) ծաղկազարդ Ճաշոցը, որ ներառել է իր մեջ հայսմավուրքային տոնակարգը եուլյան, տերունական-ծննդյան տոների շարքում, օրինակ, հենց հունվարի առաջին իսկ օրերից նշում է հայսմավուրքային տոներ. «Նոբին ր (այսինքն՝ հունվարի 2-ին), Վարդ սրբոյն Սեղրեստրոսի Հռովմայ հայրապետի» (էջ 8ա), «Նոբին գ, ժողովումն Եթանասուն և երկու առաքելոցն» (էջ 9ա) և այլն:

ՀԱՅՍՏԱՎՈՒՐՔԱՅԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայսմավուրքային խմբագրությունները հատուկ մասնագիտական քննություն դեռևս չեն արժանացել: Մեծանուն հայագետներ Ղ. Ալիշանը¹, Մ. Ավգերյանը², Մ. Օրմանյանը³, Հր. Աճառյանը⁴, Ն. Ակիմյանն առավելապես⁵ տարբեր առիթներով անդրադարձել են այդ խնդրին և տարատեսակ կարծիքներ հայտնել, բայց նրանց արածը մնացել է թերի և ենթադրական:

Ավելին: Մեկ դար ու կեսից առավել՝ սկսած 1834 թվականից, իբրև Տեր-Իսրայելի ժողովածու է ճանաչվել Կոստանդնուպոլսի՝ Գ. Փեշտմալճյանի հրատարակած Հայսմավուրքը⁶, որը, սակայն, ինչպես հետագայում պարզվեց, Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսինն է որոշակիորեն:

Այս պարագաներում մեր խնդիրն է՝ հաշվի առնելով եղած դիտումները, և առավելապես՝ ձեռքի տակ ունենալով Հայսմավուրքների տարբեր հեղինակների հիշատակարաններն ու համապատասխան ժողովածուների նմուշներ (Մատենադարանում պահպանված), ուրվագծել յուրաքանչյուր խմբագրություն իր տարբերակիչ հատկանիշով և ըստ հնարավորին, հաստատություն մտցնել Հայսմավուրքների խմբագրությունների խնդրում՝ սրա մանրախույզ քննությունն ու սպառիչ պատկերը թողնելով ապագային:

¹ Ալիշան Ղ., էջ 472, 560
472, 560:

² Ավգերյան հ. ԺԱ, էջ ԿԲ—Հ, հր—ձ:
տիկ, 1914, էջ ԿԲ—Հ, հր—ձ:

³ Օրմանյան Մ., էջ 1696, 1751—1753:

⁴ Աճառյան, հ. Ա, էջ 587, 609, հ. Բ, էջ 393, 624:

⁵ Ակիմյան Ն., նյութեր հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914, Հովսեփ Կոստանդնուպոլսեցի («Հանդէս ամսօրեայ», 1957, էջ 1—12):

⁶ Յամատուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յամատուրաջ Տէր-Իսրայելի, Կոստանդնուպոլիս (յօրթագիւղ), 1834:

⁷ Սարգսյան Դ., Գրիգոր կաթողիկոս Անավարզեցի մատենագիր, «Բաղմալիպ», 1949, № 3—4, էջ 58—66:

Ըստ առկա ձեռագրական ժողովածուների պատկերի հայ Հայսմավուրքները՝ իրենց այլազանությամբ հանդերձ, խմբավորվում են հետևյալ՝ պատմական նշանակալից անձնավորությունների անվան հետ կապվող չորս խմբի մեջ.

1. Տեր-Խսրայելի

2. Կիրակոս Արևելցու

3. Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի և

4. Գրիգոր Ծերենց խաթեցի նահատակի²:

Այս խմբավորումները վերաբերում են արդեն որոշակի ձևավորված Հայսմավուրք ժողովածուներին և չեն ընդգրկում դրանց նախնական վիճակը ներկայացնող վկայասերյան Տոնամակը: Չնայած այն բանին, որ Տոնամակը հիմք հանդիսացավ հայ Հայսմավուրքի, բայց նա Հայսմավուրքը չդարձավ իր ամենօրյա տոնակարգով: Հայսմավուրքի ինչպես անունը, այդպես և լրիվ կառույցը, մեր դիտումով, սկիզբ է առնում Տեր-Խսրայելի ժողովածուից, ուստի և Հայսմավուրքային խմբագրությունների պատմությունը սկսում ենք այնտեղից:

ՏԵՐ-ԽՍՐԱՅԵԼԻ ՀԱՅՍՄԱՎՈՐԻՔԸ

Ըստ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց ցուցակի³, Տեր-Խսրայելի խմբագրությանն են պատկանում 15 ձեռագիր՝ 1339, 2695, 4512, 4730, 4737, 4741, 4747, 4755, 4758, 4762, 4873, 6283, 7361, 7463, 7464: Նշված ձեռագրերի ուսումնասիրությունը որևէ խմբագրության բնորոշ գիծ չի հայտաբերում՝ բացի ծավալի չափավորությունից. Գրիգոր խաթեցու խմբին բնորոշ մեծածավալության դիմաց այն համեմատաբար չափավոր է՝ 300—400-ի հասնող էջաքանակով: Ծավալից բացի, այս 15 ձեռագրերը մյուս խմբագրություններից տարբերակման այլ կովան չեն տալիս: Ավելին: Նշվածներից մեկը՝ 7463 ձեռագիրը, որոշակիորեն Կիրակոս Արևելցու խմբագրությանն է պատկանում, ինչպես հավաստում է ձեռագրի մեջ պահպանված Կիրակոսի հիշատակարանը, 7361-ը և 7464-ը լատինադավան Հայսմավուրքի հետքեր են կրում իրենց մեջ և ավելի մոտ են Անա-

2. Անատյանի «Հայկական Մատենագիտության» մեջ (հ. Ա, էջ XXXIII) նշվում է նաև «Անանուն» կոչված մի խմբագրություն՝ ձև. 3658, որն ինչպես կոտեսենք, ոչ այլ ինչ է, քան Կիրակոս Արևելցու Հայսմավուրքի (ձև. 7433, 4512, 7463) օղղակի համառոտումը՝ ոչ պատահականորեն «Տօնացոյց» անվանված:

3. Ցուցակ Մատենադարանի, ՚. Ա, էջ 150-է, հ. Բ, էջ 1326:

վարդեցու խմբագրությունը, մյուսներից՝ 1339, 2895, 4512-ը ներդաշնակ են կիրակոսյան խմբագրության, մինչդեռ դուրս է մնացել 7365 ձեռագիրը, (ԺԳ դար ըստ ձեռագրացուցակի), որ Տեր-Խորայելի խմբին է պատկանում, այնպես որ Տեր-Խորայելի անվան տակ զնացող ձեռագրերի այս խումբն ամբողջությամբ վերանայելի է և մեծ շտկամների կարոտ:

Ծփոթությունը հավանորեն դալիս է Տեր-Խորայելի անվամբ 1834 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակված Հայամալուրբից, որը, սակայն, ըստ իր իսկ առաջաբանի, հրատարակված է մեծ փոփոխություններով ու միջամտություններով: Տեր-Խորայելի անվամբ Կոստանդնուպոլսի 1834 թվականի հրատարակության անվավերականությունն են նշել ղեռնաղարասկզբին անվանի հայագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանն ու Ներսես Ակինյանը¹⁰: Իսկ նրանցից առաջ, ղեռնա 1898 թվականին, այս մասին Նիկողայոս Ադոնցը նամակով Վենետիկից գրում էր Մառին. «Մտածում էի Ձեզ գրել... Բայց հանկարծ ձեռքս ընկավ մի շատ ուշագրավ ձեռագիր: Ես նրանում ճանաչեցի հենց այն ձեռագիրը, որ հիմք է ծառայել 1834 թվի՝ Տեր-Խորայելի անվամբ հրատարակության: Ձեռագիրը հետաքրքրական է նրանով, որ նախ՝ ամենևին էլ Տեր-Խորայելի խմբագրության չի պատկանում, այլ Գրիգոր Անավարդեցու, և երկրորդ՝ նշված հրատարակության մեջ այն ենթարկվել է մի շարք ոչ անկարևոր փոփոխությունների»¹¹:

Գալուստ Տեր-Մկրտչյանն այս տոթիվ գրում է. «Վերջին տպագիրը (Կ. Պոլսում 1834 թ.) թյուրիմացությամբ միայն համարվում է ընտրելագույնը իբրև թե լինելով Տեր-Խորայելի հին և ընտիր օրինակից՝ մինչդեռ բոլորովին նոր խմբագրություն է Փեշտավնյանի գրչից: Ուստի և այդ հրատարակությունը բնագրական տեսակետից զուրկ է որևէ նշանակությունից»¹²: Միևնույնը հաստատում է Ներսես Ակինյանը. «Կոստանդնուպոլսո այս տպագրությունը ելած է տարղապես նշավակ Գր. Փեշտավնյանի կամայականության,— գրում է նա,— որ ըստ կամի համառոտած, հապաված է Սոս՝ տերխորայելյան օրինակը... այս խոստովանությամբ, որ ուղիղ է ըստ ամենայնի, կկորսցնէ 1834-ի տպագրությունը յուր բովանդակ հարզը...»¹³: Եվ այնուհետև այն հայտարարում է «անպէտ քնա-

¹⁰ «Արարատ», 1900, մայիս, էջ 260, Ակինյան Ն., Նյութեր հայ վկայարանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914:

¹¹ «Լրաբեր», 1975, № 11, էջ 85, «Նամակի բնագրում սխալ է կարդացված "и Григория Анаварзечи", պետք է կարդալ "а Григория Анаварзечи":

¹² «Արարատ», 1900, մայիս, էջ 260:

¹³ Ակինյան Ն., Նյութեր..., էջ Թ:

գրաքննական-բանասիրական առումով», որ «չարժեր նկատի առնուլ ուսումնասիրությանց ժամանակ»¹⁴:

Միևնույն եկրակացությանն է հանգել Գրիգոր Անավարզեցու ժառանգության առիթով նաև Տեր-Իսրայելի Հայսմավուրբին անդրադարձող բանասեր Գր. Վրդ. Սարգսյանն իր ուշադրավ հետազոտության մեջ¹⁵: Նա ձեռքի տակ ունենալով Տեր-Իսրայելի Հայսմավուրբի մի օրինակ, նշում է, թե՛ «հրատարակվածը շատ հեռու է ձեռագրից և ամենևին այն չի արտացոլում»¹⁶:

Չնայած սրան, Գ. Փեշումալճյանի հրատարակությունից եկող այս շփոթը հայ իրականությունից անցել է եվրոպա և այնտեղ եվրոպացի հայագետների կողմից ներկայացվել իբրև Տեր-Իսրայելի Հայսմավուրբ¹⁷:

Այսքանից հետո մնում է զարմանալ, որ բազմիցս դիտված և իբրև Տեր-Իսրայելի Հայսմավուրբ գիտական շրջանառությունից դուրս մնացած այս անվավեր հրատարակությունը իբրև աղբյուր է նշվում այնպիսի մեծարժեք աշխատության մեջ, ինչպիսին Հ. Անասյանի «Հայկական Մատենագիտությունն է»¹⁸: Թերևս Անասյանն այլ կովաններ ունի, բայց լսենք իրեն՝ հեղինակին. «Էջերի սղությունը,— գրում է Անասյանը,— մեզ թույլ չի տալիս ծանրանալ, օրինակ, Հայսմավուրբների խմբագրությունների վրա, որոնց տարբերակման հարցում, ինչպես հայտնի է, բանասերների մոտ կան տարակարծություններ: Ասենք միայն այսքանը, որ մեր աշխատանքի կապակցությամբ մենք զանազանել ենք հետևյալ խմբագրությունները. ա. Տեր-Իսրայել Խաչենցու (մեռ. 1249) խմբագրություն, բ. Կիրակոս Արևելցու խմբագրություն (կազմվ. 1252 թ. երև. Պետ. Մատեն. 7433), գ. Գրիգոր Խլաքեցի Մերենցի (մեռ. 1425) խմբագրություն և Անանուն խմբագրություն «Տօնացոյց ըստ հայոց և հռոմոց ամսոց» (Երև. Պետ. Մատ. 3658. ընդօրինակություն 1319 թվականի)»¹⁹: Բանասիրությանը ըստ հեղինակների հայտնի, բայց ոչ զանազանած խմբագրությունները մոտավորապես ճիշտ են, սակայն թերի՝ թեկուզ հենց միայն Գրիգոր Անավարզեցու խմբագրության պակասի պատճառով: Անաս-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Բազմավկյա, 1949, № 3—4, էջ 58—66:

¹⁶ Նույն տեղում, էջ 64:

¹⁷ Stéphan Macler Fr., Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, *Ինչպես նաև Bzryan G., Le Synaxaire Armentien de Ter-Israel*, Turnhout, 1971.

¹⁸ Անասյան Հ., հ. Ա, էջ XXXIII, 709, հ. Բ, էջ 165, 190 և շատ այլ էջեր:

¹⁹ Նույն տեղում, հ. Ա, էջ XXXIII:

յանի ցանկը թերի է նաև խմբագրությունները ներկայացնող ձևադրական պատկերի առումով: Եթե բաղմավաստակ գիտնականը Կիրակոս Արևելցու խմբագրություն իրավացիորեն ներկայացնում է 7433 Հայսմավուրքի օրինակով (կարելի էր ավելացնել նաև 7463, 4512, 1339, 3658 և այլ ձևադրեր), ապա Տեր-Խորայելի խմբագրության համար նա ձևադրական տվյալ չի տալիս (թեև այդպիսիք կան մեր Մատենադարանում), այլ բերում է մահվան թվականներ: Իբրև Տեր-Խորայելի ժողովածու նա ամենուրեք նշում է Կոստանդնուպոլսի 1834 թվականի հրատարակությունը, որն, ինչպես տեսանք, «ոչ թե Տեր-Խորայելինն է, այլ Գրիգոր Անավարդեցվույն»²⁰:

Տեր-Խորայելի Հայսմավուրքի շուրջ բերված վրիպումները մեզ հետարբերում են ոչ ինքնին, այլ տվյալ խմբագրության պատկերի վերահաման տեսանկյունից, իսկ այս դեպքում խնդիրն առավել մշուշվում է, քանի որ վրիպումն առկա է այնպիսի հեղինակավոր աշխատության մեջ, ինչպիսին Հ. Անասյանի մատենագրությունն է:

Ուստի, մի կողմ թողնելով տարատեսակ ու շփոթ տեղեկությունները, անցնենք ձևադրական-փաստական՝ կուլաններին:

Նախ՝ ո՞վ է մատենագրության մեջ հիշատակված Տեր-Խորայելը, և ի՞նչ հավաստի տեղեկություններ կան նրա մասին:

Ամենահավաստի և զրեթե միտկ տվյալը Տեր-Խորայելի Հայսմավուրքի ընդօրինակության հիշատակարանն է, որից իմանում ենք, որ նա ժամանակակից է իսաչենի Զալալ-գուլա իշխանի և Վանական Վարդապետի. «Արդ, այս տօնացոյց կարգեալ եղև բովանդակ տարոյ աշխատութեամբ Տէր-Խորայելի իսաչենցոյ իպիսկոպոսի հրամանաւ Վանակա՛ն Վարդապետի ի խնդրոյ Զալալ-ղօլի տեսոն իսաչենոյ, և տէր Գրիգորի Եպիսկոպոսի»²¹: Այս հիշատակարանով պարզվում է Տեր-Խորայելի ապրած ժամանակաշրջանը՝ XIII դարի I կես, քանի որ 1261 թ. մեռնում է իսաչենի Զալալ-գուլի իշխանը, իսկ 1251 թ.՝ Վանական Վարդապետը: Տեր-Խորայելի գործունեությունն, այսպիսով, ընկնում է XIII դարի II քառորդում, եթե ընդունենք, որ նա իրոք մեռել է 1249 թ.: Կենսագրական արձեք է ստանում նաև ուշագրավ հետևյալ փաստը. 1253 թ. Կիրակոս Արևելցին իր առաջին ժողովածուն անվա-

²⁰ «Բաղմավէպ», 1949, № 3—4, էջ 64:

²¹ «Բաղմավէպ», 1949, № 3—4, էջ 58—59: Խաչիկյան Լ., Բ, Երևան, 1958, էջ 318—319 (ձև. 1511), տե՛ս նաև Ա, Երևան, 1955, էջ 369, 481 (ձև. 6283), էջ 87—88 (ձև. 4755):

նել է Տոնապատճառ կամ ուղղակի «Տօնս ճառս համառօտս»²², իսկ միևնույն ժողովածուի 1269 թ. (այսինքն՝ 16 տարի անց) օրինակի մեջ, որտեղ ավելացված տոնների թիվն արդեն 112-ից 170-ի է հասնում, միևնույն ժողովածուն Կիրակոսն անվանում է Հայսմավուրբ: Սա նշանակում է, թե այդ թվականների արանքում արդեն Տեր-Իսրայելի ժողովածուն նոր՝ Հայսմավուրք անվամբ հասարակական ճանաչում է ստացել, որի օրինակով և Կիրակոսն իր ժողովածուն նույնպես Հայսմավուրք է կոչում: Այս է վկայում երկրորդ ժողովածուի առաջաբանում Կիրակոսի հավաստումը, թե շատ նյութեր, որ գոյություն ունեին, բայց չէին ընդգրկված Հայսմավուրքներում, նա ավելացրել և խառնել է մյուսներին. որ առչ էր հղեալ ի գիրս Յայսմաւուրցն... խառնեցի ընդ նախակարգսն»²³: Այստեղ, բացի խմբագրությունների պատմության համար նշանակալից տվյալներից, կարևորություն է ստանում Տեր-Իսրայելի կենսագրության համար արժեքավոր եզրահանգումը, թե հայ միջնադարում, մինչև 1269 թ., այսինքն մինչև Կիրակոս Արեւելցու երկրորդ ժողովածուն, բայց առաջինից (1253 թ.) հետո, Հայսմավուրք անվամբ ժողովածուներ արդեն կային:

Արդ, ի՞նչ է արել Տեր-Իսրայելը Հայսմավուրք ժողովածուների խմբագրման ուղղությունը: Ո՞րն է նրա դերը հայկական Հայսմավուրքների պատմության մեջ:

Տեր-Իսրայելի Հայսմավուրքի ընդօրինակված հիշատակարաններից իմանում ենք, որ նա, խաչնի Զալալ-գոլա իշխանի և Վանական Վարդապետի հանձնարարությամբ՝ «հայելով ի համբրութիւն և ի հնարիմաց գիտութիւն նորա», պետք է գտներ սրբերի նահատակության օրերը՝ «գի ջանս հղեալ գոյցէ զօր նահատակութեան սրբոցն». ուրեմն, առաջին գործը, որ արել է Տեր-Իսրայելը, տոնվող սրբերի օրերի ճշտումն է, որ նա պետք է քաղեր լիակատար պատմություններից՝ «որ գրեալ կա ի լիակատար պատմութիւն նոցա՝ համառօտելով նմա զսքանչելի կատարումն սոցա»:

Երկրորդ՝ նա տեղաշարժում է օրվա մեջ նշվող տոները՝ «եդ ընդ ալ կարգի և զայսմ աւուրս», որով որոշակի սիստեմի է բերում թե՛ օրվա և թե՛ տարվա մեջ կատարվող տոների կարգը: Այս նշանակում է,

²² ՁԼՈ. 7463, էջ 349բ, 7433, էջ 428բ, նաև «Բաղմավէլս», 1949, № 3—4, էջ 59, 60: ՏԵՍ նաև Մրապյան Ա. Բանասիրական ճշգրտումներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 139—140:

²³ Ալիշան Ղ., Հայագատում, Բ, էջ 472: «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 140:

որ Տեր-Իսրայելը մեծ համբերությամբ և ջանասիրությամբ շատ մանրակրկիտ աշխատանք է կատարել հատկապես սրբերի տոների օրերը ճշտելու և դասավորելու խնդրում:

Ի՞նչ օրեր է ճշտել Տեր-Իսրայելը և ի՞նչն է այլ կարգով դասավորել: Այս հարցադրումներն ինքնին լիակատար են մի պատասխան, որ Տեր-Իսրայելը ինչ-որ մի եղած բանի օրեր է ճշգրտել և մանավանդ ինչ-որ մի եղած բանի կարգն է փոխել:

Փորձենք տալ բնականորեն ծաղած այս խնդիրների նախ պատմական, ապա նաև ձևագրական-փաստական լուծումները:

Հայտնի է, որ XIII դարում, Տեր-Իսրայելի օրոք, հայ իրականության մեջ արդեն գործում էին արարողական-օրացուցային որոշ ժողովածուներ: Վաղուց ի վեր՝ 991—992 թթ. թարգմանված էր հունական Հայսմավուրքը Հովսեփ Կոստանդնուպոլսեցու ջանքերով²⁴: Ն. Ակինյանը, խոսելով հայկական գործող Հայսմավուրքի մասին, ասում է, որ Հովսեփ Կոստանդնուպոլսեցուն է պատկանում այդ ժողովածուի 3/4 մասը, որ նշանակում է, թե համեմատելով այն հունարեն բնագրի հետ, դիտում է նա թարգմանության գերակշիռ մասի հարադատությունը բնագրին և իր տարակուսանքը հայտնում Հովսեփ Կոստանդնուպոլսեցուն հանիրավի մոռացության տալու առթիվ. «Այսօրվան Հայսմավուրքի քաղցմանիչն ու խմբագրողն եղավ Հովսեփ,— գրում է նա,— ամբողջին երեք-քառորդը կպատկանի իրեն... Բազմացան Հայսմավուրքներու օրինակները հընթացս դարու, բայց մոռցան... հիշել հանվանն Հովսեփ աշխատավորի անունը»²⁵: Սրանով Ն. Ակինյանը հայ Հայսմավուրքի պատմությունը կապում է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու անվան հետ, ոչինչ չասելով հունականից տարբեր այն 1/4 մասի վերաբերյալ, որ դիտել էր հայ Հայսմավուրքներում: Ինչպե՞ս և ո՞ւմ ջանքերով Հայաստան մտած հունական Հայսմավուրքին ընդհուղվեց նրանից տարբեր հայկական շերտը:

Դրան պատասխանելու համար վերադառնանք ղեպի Գրիգոր Վկայասերն ու նրա Տոնամակ ժողովածուն՝ հայկական տոների սահմանված ոչ միայն օրերով ու ընթերցմունքներով, այլև, ինչպես Կյուրակոս աշակերտն էր ավանդում՝ նաև մարտիրոսողո նյութերով: Ուրեմն՝ Տեր-Իսրայելի օրոք Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած Հայսմավուրքի հետ կողք-կողքի հայ իրականության մեջ գործում էր Գրի-

²⁴ Տե՛ս Ակինյան Ն., Հովսեփ Կոստանդնուպոլսեցի, «Հանդես ամսօրեայ», 1957, № 1—2, էջ 2:

²⁵ Նույն տեղում, էջ 11:

գոր, Վկայասերի Տոնամակը: Սրանք անջատ-անջատ գործող միավորներ էին և ապակողմնորոշում էին տոնակարգը կատարողներին: Խարխըլվում էր հայ եկեղեցու արարողական միասնությունը, որ մտահոգում էր նաև Զալալ-գուլա իշխանին ու Վանական Վարդապետին: Տեր-Խարայելի ջանքերն այդ տարանջատման միավորումն էին հետապնդում:

Այս պայմաններում Տեր-Խարայելը հանձն է առնում հունարեն Հայսմավուրքի վրա, հունական և համաքրիստոնեական տոների շարքում տեղ բացել Վկայասերի Տոնամակով կյանք մտած հայ գործիչների հիշատակին²⁶ նվիրված տոների համար այնպես, որ չխաթարվի ընդունված և ճանաչում ստացած կարգը: Նա պետք է ազգային նկարագիր տար համաքրիստոնեական ժողովածուին:

Եվ իրոք, Տեր-Խարայելի ժողովածուում, համաքրիստոնեական տոնակարգի արանքներում, մերթ ընդ մերթ հանդիպում ենք հայկական տոների:

Այսպես, հենց հունվարի ամսում չափաց ժե և յունվար իբ—տոն է սբ վկայիցն Սահակա և Յովսեփա, որ ի Կարնոյ քաղաք կատարեցան» (էջ 29ա), փետրվարի ամսում՝ «մեհեկի ժգ և փետրուար ժք—վարք և կատարումն սուրբ հօրն մերոյ Մեսրոպբա վարդապետին» (էջ 69ա), «մեհեկի իա և փետրուար իէ—վարք եղիշէի վարդապետի» (էջ 78ա), մարտ ամսում՝ «մեհեկի իէ և մարտ գ—յայսմ աւուր տօն է Վարա-

²⁶ Որ Տեր-Խարայելն իրոք աշխատել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած ժողովածուի վրա, վկայվում է երկու գործիչների հիշատակարաններում դիտված (Ք.Տեր-Դավթյան, XI—XV դդ. հայ վարդապետությունը, Երևան, 1980, էջ 52) փոքրիկ, բայց երբեմն բառացի ընդհանրություններ: Այսպես.

Հովսեփ

Կոստանդնուպոլսեցի

Եւ վասն զի ծանր և անծանօթ իցեն անուանք սրբոցն այսպէս գրեցի. յորում գրեալ է թէ վկայարանութիւն սրբոցն, գիտասցի որ մարտիրոս այր էր, և յորում գրեալ է վկայութիւն սրբահուն, գիտասցի որ մարտիրոս կին է, և յորում գրեալ է վարբ երանելոյն, ոչ է մարտիրոս, այլ առաքինի և աստուածահաճոյ վարբիւն նզնեալ վասն անուանն որ ի Քրիստոս (Հ. Տաշյան, Ցուցակ ձևագրաց Վիեննայի, էջ 693):

Տեր-Խարայել

Տօնր ըստ հայոց և հոռոմոց ամսոց, յիշատակ և վարք և վկայութիւնք ամենայն սրբոց, զոր կատարէ եկեղեցի ի փառս Քրիստոսի: Բայց զիտեւ պարտ է, թէ այն որ ասէ յիշատակ՝ միայն յիշատակ է սրբոց, զոր պատմութիւնն յիշէ վասն պիտոյից, իսկ այն, որ ասէ վարբ՝ զայն յայտ առնէ, թէ առաքինութեամբ և հանդուկան վարուի նզնեալ սուրբն հանգեան ի Քրիստոս, իսկ որ ասէ վկայարանութիւն, լայտ է թէ արեամբ նահատակեալ սուրբն վկայութեամբ կատարեցան ի Քրիստոս (ձև. № 6283, էջ 436ա):

դայ սուրբ հաշի» (էջ 84ա), «մեհեկի իզ և մարտ դ— վկայարանութիւն սրբոյն Սմբատա հայոց սպարապետի» (էջ 84բ), «աբեզ իզ և մարտի լա— վկայաբանութիւն Դաւթի Դվնեցոյն»... և այլն: Այս ցանկն իսկ պարզ է դարձնում, թե Տեր-Խորայելը ինչ օրեր պետք է ճշտեր և վարքերը համառոտելով տեղագրեր գործող Հայսմավուրքում: Միամտություն կլինի մտածել, թե նա պետք է ճառընտիրներից ջանար ճշտելու Բարսեղ Կեսարացու, Սեղբաստրոս հայրապետի, Գորգիանոսի, Հուլիանոս բժշկապետի, Զոսիմոս կրոնավորի ննջման կամ նշխարաց գլուտի օրերը և այդ՝ Վանական Վարդապետի հանձնարարութեամբ²⁷:

Այստեղ է, որ Տեր-Խորայելը շարունակողն է դառնում Գրիգոր Վկայասերի մեծ գործի՝ արարողական կարգի հայացումի:

Պատահական չէ ամենևին այն իրողությունը, որ Տեր-Խորայելի Հայսմավուրքում առկա են նեց այն հայ գործիչների տոները, որոնք ներառված էին վկայասերյան Ճաշոցում: Ավելին: Տեր-Խորայելի Հայսմավուրքում նրանք տեղ են գտել գերադանցորեն հենց այն օրվա կարգում, որ սահմանել էր Վկայասերն իր ժողովածուում:

Համեմատենք առայժմ միայն ցանկերը.

Ճաշոց ձև. 832

Վկայասերի Տոնամակ

81 ր—մեհեկի ժզ—Մեսրոբա վարդապետի

82 ր—մեհեկի ի—Վարդա սր հաշին

91 ա—աբեզ իզ—Դաւթի, որ Դուին կատարեցաւ

99 ա—մարգաց իէ—Վահանայ Գողթան տեան

102 ա—հրտից իէ—սրբոց Ղևոնդեանցն

104 ա—հրտից լ—սրբոց Վարդանանցն

ձև. 6283

Տեր-Խորայելի Հայսմավուրք

69 ա—մեհեկի ժզ և վիտր. ժր. վարք. և կատարումն սուրբ հօրն մերոյ Մեսրոբա վարդապետին:

84 ա—մեհեկի իէ և մարտ գ... յայսմ աւուր տօն է Վարդա սր հաշին

121 ա—աբեզ իզ, մարտի լա—վկայարանութիւն Դաւթի Դվնեցոյն

221 ա—մարգաց իէ, յուլիս գ—վկ. Կոյինդոսի... յայսմ աւուր վկայար. հոսրովու Դանձակեցոյ²⁸

248 ր—հրտից իէ, յուլիս լա—վկայար. սրբոցն Ղևոնդեանցն

256 ա—հրտից լ, օգ. 6—վկայարանութիւն սրբոյն Վարդանայ և ալլ զօրացն հայոց

²⁷ Իրավացի էր այս առումով Ն. Ակիւնյանը, երբ Հովսեփի Կոստանդնուպոլսեցու անվան մոռացումը բացատրում էր հետագա՝ Հայսմավուրքի հայացմանը հետամուտ գործիչների հասկանալի անտարբերությամբ:

²⁸ Այս անհամապատասխանությունը ձևագրում միակն է:

7 ր—նաւասարդի ժլ—սրբոց բօշիցն որ ի Սուկաւ

16 ր—եղիւրդ կիրակէն—սրբոց Ոսկեանցըն

21 ա—հոռի իզ—սրբոյ Հռիփսիմեանցն

23 ր—Լուսի իէ—սրբոյ Գայանեա

37 ա—տրէ ժ—գիւտ ոսկերաց սրբոյն Գրիգորի:

280 ր—նաւ. մէ օգոստ. իէ—տօն է սրբոց Սուրիասանց

298 ր—հոռի ժզ և սեպտ. իէ—յայտ աւուր վկայար. սրբոց Ոսկեանցն

309 ր—հոռի իզ. հոկտ. և—առաքելուհի և սուրբ կուսին Հռիփսիմէ...

311 ա—հոռի իէ, հոկտ. զ—յայտ աւուր վկայարանութիւն սրբոյն Գայանեա

356 ա—տրէ ժ. նոյ. ժր—սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչին...

Տարբեր ամիսներից բերված օրինակները վկայում են մեր ենթադրության իրավացիությունը, այսինքն այն, որ Տեր-Խարայելը հունարենից հայերենի թարգմանած Հայսմավուրքի մեջ տեղադրում է հայկական այն տոները և այն օրերում, որ Վկայասերն էր սահմանել իր Ճաշոցով:

Եվ ոչ միայն այդ. ինչպես 6283 ձեռագիրն է հաստատում՝ Տեր-Խարայելը, ի տարբերություն հունական Հայսմավուրքի, նախ դնում է ամսվա հայկական անունը, ապա՝ դրա համապատասխան հռոմեականը՝ «Բաղդ իե և լունվար ք», հետևելով Գրիգոր Վկայասերի սկզբունքին՝ տոները նշել հայկական ամսակարգով: Տեր-Խարայելը հետևում է այդ սկզբունքին, մի էական գիծ ավելացնելով նորօրյա իր Հայսմավուրքին: Հայկական ամսի և օրվա դիմաց նա անպայմանորեն դնում է հռոմեական ամսի անունն ու համապատասխան օրը՝ «մեհեկի ժզ և փետր. ժք», «արեգ իզ և մարտ լա», «նաւասարդ ժէ, օգոստ. իէ», որ հավաստվում է Մատենադարանի 1511 (1471 թ.) ձեռագրի հիշատակարանով. «Զոր կարգ ամսոցն հայի և հռոմի միաշունչ եղեալ անսղալ զտարին կատարեն» (թ. 319): Ահա թե ինչ ճշտումների համար էր պահանջվում նրա հաճախությունն ու ջանասիրությունը. և դա տարվա բոլոր 365 օրերի համար: Առանձին խնդիր է, թե ինչու Տեր-Խարայելը հունական Հայսմավուրքը ձեռքի տակ ունենալով, տարին սկսել է ոչ թե հունականի կարգով՝ սեպտեմբերից և ոչ էլ Վկայասերի պես՝ նավասարդից, այլ հետևել է լատինականին՝ սկսելով հունվարի 1-ով՝ Բարսեղ Կեսարացու տոնով:

Տեր-Խարայելի Հայսմավուրքի մեր ձեռքի տակ եղած ձեռագրերը շատ բան են ասում նրա բարեփոխությունների մասին և հասկանալի դարձնում մինչ այս բանասիրության ուշադրությունից դուրս մնացած որոշ հանգամանքներ:

Երբ ուշագիւր հետեւում ենք տեղիսրայեւոյան Հայսմավուրքի օրվա մեջ կատարւող տոնների կարգին, ապա նկատում ենք «ընչին» մի բարեփոխութիւն: Երբ ավելի օրում նախատեսված է մեկ տոնից ավելի՝ թե՛ օտար սրբի և թե՛ հայ գործչի տոն, ապա Տեր-Իսրայելը գերազանցորեն առաջնութիւնը տալիս է հայ տոնին՝ ետ տանելով և երկրորդ տեղում նշելով օտարը. այսպէս՝ «սահմի ի և հոկտեմբեր իր—պատմութիւն ընկերաց սրբոյ Հոփսիմէի՝ Նունէ և Մանէ», որից անմիջապէս հետո՝ «յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Զենոպայ եպիսկոպոսի» (էջ 346բ). կամ՝ մեհեկի ժգ և փետրուար ժք— վարք և կատարումն սուրբ հորն մերոյ Մեսրոփբա», որին հետեւում է «յայսմ աւուր սրբոյն Աղեքսանդրի Կոնստղիանոյ» (էջ 69ա—70ա) տոնի նշումը: Այս տեղաշարժին են վերաբերում հիշատակարանի՝ «եղ ընդ այլ կարգի և դայսմ աւուրս» բառերը, այսինքն թե այլ կարգով է դրել կարևոր և «այդ օրը» տոնվող տոնը, որ տեղաշարժից բացի իմաստավորվում է այլ հատկանիշով: Տեր-Իսրայելը, առաջին տեղում նշելով հայկական տոնը, դրանով չի սպառում իր հայրենանվեր գործը: Սրան հետեւում է առավել կարևոր մի միջամիտութիւն. օրվա տոնի մեջ առաջնութիւն տալով հայ գործչին, այսինքն հիմնական տոնը դա համարելով, Տեր-Իսրայելը պարտավորվում էր կարևոր տոնի ընթերցվածը դնել ժողովածուում. նա տեղադրում է հայ նահատակի կամ սրբի կյանքն ու վկայաբանութիւնը, հայ տոնի ընթերցվածը, օտար տոնը նշելով միայն: Սրանով հիմք ժողովածուի համաքրիստոնեական լինման ազգայնացում է, հարստանում հայ իրականութեան արտացոլումով, հայ կյանքի դրվագումներով, նախ գործիչների սրբախոսական պատմութիւններով: Եվ հենց այս է Տեր-Իսրայելի ավանդը Հայսմավուրք ժողովածուների պատմութեան մեջ:

Բայց ինչո՞ւ այս դեպքում հիշատակագիրը ոչինչ չի ասում նոր ընթերցված կամ ընթերցմունք հորինելու մասին, այլ միայն նշում օրերի ճշտումն ու տեղաշարժերի փաստը: Որովհետեւ,— պատասխանում ենք մենք,— Տեր-Իսրայելը ոչ մի ընթերցված չի հորինել. նա աշխատել է երկու տիպի պատրաստի ժողովածուների վրա և մեկից՝ Գրիգոր վկայասերի Տոնամակից, պատրաստի ընթերցվածների քաղելով տեղադրել է մյուսի՝ հունական Հայսմավուրքի մեջ²³:

²³ Ուշագրաւ է, որ դեռևս 1914 թ. Ն. Ակինյանը հայանցիկորեն առաջ քաշեց իսրայելյան խմբագրութեան հայ հոգի վրա ծագած լինելու վարկածը՝ խոստանալով հետազոտում հատուկ անդադարտն ալ այդ խնդրին. սակայն այլևս չվերադարձավ՝ մինչև որ 1957 թ. հրապարակեց Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանութեան փաստը, թերևս սրանով լուծված համարելով Հայսմավուրքների ծագման խնդիրը:

Դա անվերապահելի է դառնում 8179 Ճառընտրի և Տեր-Իսրայելի Հայսմավուրքի (ձեռ. 6283) համեմատությամբ: Տեր-Իսրայելի Հայսմավուրքում տեղադրված են հայկական տոների ընթերցվածները հենց այն խմբագրությամբ, որ մեզ հասել է 8179 ժողովածուից: Հայտնի է, որ միևնույն տոնի շուրջ մեր ձեռագրերը պահում են ծավալով, շարադրանքով, խմբագրությամբ միմյանցից տարբեր ընթերցվածներ: Հենց միայն Շուշանիկի վկայաբանության հայսմավուրքային համառոտ վարքն ունի 3 տարբերակ: Արդ. տերիսրայելյան 6283 Հայսմավուրքի ընթերցվածները լիովին համընկնում են 8179 ձեռագրի վկայասերյան նյութերին ոչ միայն բուն նյութով, այլև սկսվածքով ու նունիսկ վերնագրերով:

Համոզվելու համար դիտենք այդ կարևոր համընկնումները.

Ձեռ. 8179

Ձեռ. 6283

1ա—Վկայաբանութիւն սրբոց Սուրբասենցն, որք վկայեցին ի Հայք ի յեառն Սուկաւտ... յամսեանն ևաւսասորդի ժէ

սկս. Առաքեալն Քրիստոսի Թաղէ-
սս...»

280ր—ճաւասարդ ժէ, օգոստ. իէ տօն է սրբոց Սուրբասենցն.

սկս. «Առաքեալն Քրիստոսի Թաղէ-
սս...»

298ր—հոռի ժզ և սեպտ. ին վկայաբանութիւն սրբոյն Եպիսկոպոսին Դոսանայ

2ա—Վկայաբանութիւն սրբոց Ոսկեանցն և այլ ընկերաց նոցին.

—յայսմ աւուր վկայաբանութիւն սրբոց Ոսկեանցն.

սկս. Սորայ աշակերտք էին սրբոյն Թաղէոսի...» Երկրորդ կիրձիկին հոռի

սկս. «Սորայ աշակերտք էին սրբոյն Թաղէոսի առաքելոյն...»

10ր—Վկայաբանութիւն սրբոյն Վարդանայ և այլ զօրացն Հայոց, որ կատարեցան ի մեծ պատերազմին.

256ա—հրոտից լ, օգ. և. վկայաբանութիւն սրբոյն Վարդան և այլ զօրացն Հայոց, որք կատարեցան ի մեծ պատերազմին ի Պարսից.

սկս. «Ի բառնալ թագաւորութեանն Հայոց և յետ վախճանի...»

սկս. «Ի բառնալ թագաւորութեանն Հայոց յետ վախճանի սրբոյն Սահակայ պարսիկք բռնացան...»

136ա—Վկայաբանութիւն սուրբ և առաքելուհոյ կուսին Հռիփսիմեայ և ընկերաց նորին

309ր—հոռի իզ, հոկտ. և Առաքելուհի և սուրբ կուսին Հռիփսիմէ և ընկերաց նորին

սկս. Սուրբն Հռիփսիմեայ էր ի թագաւորական տոհմէ Կղոդիայ կայսեր... կատարեցաւ յամսեանն հոռի իզ...»

սկս. «Սքանչելին և սուրբ կոյսն Հռիփսիմէ էր ի թագաւորական տոհմէ Կղոդիայ կայսեր...»

135բ—Վկայարանութիւն սրբոյն Գայանե և ընկերաց նորաց

սկս. «Յետ կատարման սրբոյ կուսին Հոփսիմեա վաղիւն առ դահնապետն էհասս... կատարեցան ի Քրիստոս...» ի հոսի

169բ—Վկայարանութիւն սրբոյն Թադեոսի առաքելոյն

սկս. «Արգար թագաւորն հայոց և Ասորոց...» քաղոց ժոյ

158բ—Վարք և կատարումն սուրբ հօրն մերոյ և վարդապետին Մեսրոպայ և Սահակայ

սկս. «Ճգնաւորն Քրիստոսի և վարդապետն ճշմարտութեան...»

159ա—«Վաղճան եհաս... ետ վեց ամսոյ փոխումն հասարակաց հօրն մերոյ Մեսրոպայ յեւեք տասան ամսոյն մեհեկի»

253ա—Վկայարանութիւն Դաւթի, որ ի Դովին կատարեցաւ... յԱբեղ իգ
սկս. «Սուրբ Վկայն Քրիստոսի Դաւիթ էր աղգաւ պարսիկ...»

253բ—Վկայարանութիւն սրբոյ իշխանացն հայոց Համադասպեայ և Սահակայ

սկս. «Ի բունակալութեանն տաճկաց Հարունայ և ի կաթողիկոսութեան հայոց Նսալեա երկու մեծամեծք իշխանք...»

161բ—Յիշատակ սուրբ թագաւորին Տրդատայ և քեռ նորա խոսքովի թղթոյ և Աշխեն տիկնոջն

311ա—հոսի իէ, հոկտ. զ Վկ. Թումաշի սր առաքելոյն

Յասմ աւուր Վկայարանութիւն սրբոյն Դաւիանէ և ընկերաց նորա:

սկս. «Յետ կատարման սուրբ կուսին Հրոփսիմեա վաղիւն առ դահնապետն եհասս հրաման թագաւորին...»

427ա—Բաղոց ժոյ, դեկտ. իբ Վկայարանութիւն Թադեոսի առաքելոյն և քարոզութեանն

սկս. «Արգար թագաւոր միջագիտաց յիւսհաս...»

69ա—մեհեկի ժոյ և փետր. ժոյ Վարք և կատարումն սուրբ հօրն մերոյ Մեսրոպայ վարդապետին.

սկս. «Ճգնաւորն Քրիստոսի և վարդապետն ճշմարտութեան սուրբ հայրն մեր Մեսրոպ...»

121ա—Աբեղ իգ, մարտ լա Վկայարանութիւն Դաւթի Դովեցոյն

սկս. «Քրիստոսի վկայն սուրբ Դաւիթ էր աղգաւ պարսիկ և մայրն նորա քրիստոնէա...»

129բ—անկի ա, ապրիլ ը
(չնչված)

սկս. «Ի բունակալութեանն (չնչված) կաթողիկոսութեանն հայոց/ տեառն Նսալեա ք մեծամեծք իշխանք...»

379ա—տրէ ի, նոյ. իբ Վկայարանութիւն սուրբ Իրինարքոսի.—Յասմ աւուր Յիշատակ է Տրդատա թագաւորի և քերն խոսքովի իշխանոյ և Աշխեն տիկնոջն

սկս. «Թագաւորն Տրդատ որդի էր խոս-
րովու յայոց արքային և լետ սպան-
ման...» տրէ իս

163ա—Վկայաբանութիւն սուրբ հայ-
րապետացն Ռաստակնսի, Վրթանիսի,
Յուսկանն, Գրիգորիսի և Դանիելի:

սկս. «Սուրբ հայրապետքս ամբողակալք
եղեն սրբոյն Գրիգորի, գոյով ի նորին
արմատուն շառաւիղք...» տրէ իբ...

165ա—Վարք և վկայութիւն Աբրհամու
և խորենայ...

սկս. «Սորա էին աշակերտք և սպասաւորք
սուրբ հայրապետացն...»

171ա—Վկայաբանութիւն սրբոյն Շու-
շանկանն և տէր Սարգսին

սկս. «Սուրբն Շուշանիկ դուստր էր Վար-
դանա զօրավարին Հայոց: Եւ տուաւ յա-
մուսնութիւն...» Քաղոց ժէ և ղեկտ. իէ

Այսպէս և մյուս տոների ընթերցվածները:

Ցանկերի համադրութիւնը վերջնականորեն ամրապնդում է մեր
տեսակետը և վկայում Տեր-Իսրայելի Հայսմավուրքի հիշատակարանի
հավաստիացումն այն առթիվ, որ նա ոչ մի նոր նյութ չի հորինել, նա
խմբագրել է և ի մի է բերել նշածը:

Այս փաստն ինքնին հաստատում է մեկ այլ, ոչ պակաս կարևոր
հանգամանք, այն, որ մինչև Տեր-Իսրայելը նշված բոլոր ընթերցմունք-
ներն արդեն կային ոչ այլ ուրեք, քան Գրիգոր Վկայասերի Տոնամա-
կում: Եվ, թեև մենք դրանք տերիսրայելյան ենք անվանում վերջինիս
Հայսմավուրքում տեղադրած լինելու պատճառով, բայց դրանք վկա-
յասերյան են ըստ էութեան, Գրիգոր Վկայասերի գրչի արդյունք:

Բերված ձեռագրական փաստերն ու պահպանված ժողովածուն
վերջնականորեն պարզորոշ են դարձնում Տեր-Իսրայելի դերը Հայս-

սկս. «Թագաւորն հայոց Տրդատ, որդի
էր խոսրովու հայոց արքայի: Եւ ետ ըս-
պանման հօրն սնաւ ի Կեսարեա...»

390բ—տրէ իղ, ղեկտ. ք Սրբոց հայ-
րապետացն հայոց ընդստակիսի, Վրթա-
նիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիելի:
սկս. «Սուրբ հայրապետքս ամբողակալք
եղեն սրբոյն Գրիգորի, գոյով ի նորին
շառաւիղին արմատք րարիք, րանդի...»

404բ—Տրե լ. ղեկտ. ք Վարք և Վկա-
յութիւն Աբրահամու և խորենայ, որք էին
աշակերտք սրբոց Ղեռնդեանց,
սկս. «Սորա էին աշակերտք և սպասա-
ւորք սուրբ հայրապետացն, որք կատա-
րեցան ի Պարսիկս, ի Ներշապուհ քաղա-
քին...»

434ա—Քաղոց իս և ղեկտ. իք Վկա-
յաբանութիւն Ինդոսի ներքինոյն.

Յայսմ աւուր Վկայաբանութիւն սրբոյն
Շուշանկանն

սկս. «Սուրբն Շուշանիկ դուստր էր Վար-
դանա զօրավարին Հայոց: Եւ տուաւ յա-
մուսնութիւն րըզշխին վրաց Վազգենա...»

մամուլը ժողովածուների պատմության մեջ, որ ամփոփվում է հետևյալում.

1. Տեր-Խսրայելը Ճառքնտիրներով ճշգրտել է Վկայասերի սահմանած հայ նահատակների ու գործիչների «կատարման» մահվան օրերը:

2. Դրանք նա տեղադրել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած և Հայաստանում արդեն գործող հունական Հայամամուլների մեջ:

3. Տեր-Խսրայելը փոխել է նաև օրվա մեջ նշվող տոների կարգը՝ առաջնություն տալով հայ տոներին:

4. Օրվա մեջ կարևորություն տալով հայ տոնին, եկեղեցում կարգացվելու համար ժողովածու է մտցրել նաև հայ տոնի ընթերցվածք, հալ նահատակի վկայաբանությունը կամ հայ գործիչ «յիշատակ տօնին»:

5. Ընթերցվածները նա ինքը չի հորինել, այլ բաղել է վկայասերից եկող ժողովածուից, որ ականքն է երկու ժողովածուների համեմատությունից:

Սրանով Տեր-Խսրայելը մոնղոլական տիրապետության ժանր պայմաններում ստեղծել է ազգային կյանքն արտացոլող և պատմաքաղաքական նպատակներ հետապնդող մի ժողովածու, որ ամենօրյա գործածության մեջ լինելով սատարելու էր ազգապահպանման գործին:

Այս հայրենապաշտպան մտահոգությունն էր միացնում դարերով միմյանցից հեռու, բայց ժողովրդի ճակատագրին ոչ անտարբեր հայ գործիչներին՝ հունական Հայամամուլների թարգմանիչ Հովսեփ Կոստանդնուպոլսեցուն, Գրիգոր Մեծ Վկայասեր կաթողիկոսին, հաշենի տեր Զալալ-գուլա իշխանին, դարի լուսավոր վարդապետներից մեկին՝ Վանական վարդապետին և, ինչպես տեսան հաշենցի եպիսկոպոս Տեր-Խսրայելին:

XIII դարի կեսերից հայ իրականության մեջ սկսեց գործել համաքրիստոնեական, կարելի է ասել համաշխարհային մշակութային հուշարձաններից մեկը՝ ազգային կերպարանք առած Հայամամուլը, որ պատմության մեջ պետք է մնա իր անխոնջ հեղինակի՝ Տեր-Խսրայելի պայծառ անունից անբաժանելի:

ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՎԵԼՅՈՒ ՀԱՅՄԱՎՈՒՐՔԸ

Ի տարբերություն Տեր-Խսրայելի մասին տեղեկությունների սղության, Հայամամուլը ժողովածուների հաջորդ խմբագրի՝ Կիրակոս Արևելիցու մասին տվյալները հարուստ են ու բաղմաղան: Բայց այստեղ էլ

հարցը բարդանում է տարբեր գործիչների նույնանունության պատճառով, որը ոչ պակաս խանգարում է Հայսմավուրքի նոր հեղինակի կյանքի ու գործի հստակ պատկերացմանը:

Այսպես, Կիրակոս (Կյուրակոս) էր անունը Գրիգոր Վկայասերի աշակերտի ու գործակցի՝ Ճաշոց ժողովածուների վերախմբագրման աշխատանքներում, Կիրակոս է վերոհիշյալ Արևելցին, որ երկու հիշատակարան է թողել հենց Հայսմավուրք ժողովածուներում, Կիրակոս է ճիշտ նույն թվականներին ապրած Գանձակեցի պատմիչը, որ մատենագրության մեջ հայտնի է նաև Գևորգի մականունով: Սրանցից գրեթե մեկ դար հետո է դործել Կիրակոս Նրզնկացին՝ «Արևելք գերարժի» հայտնի շարականի հեղինակը, որը, սակայն, նույնացվել է Կիրակոս Արևելցու հետ և ավելի խճուղել հարցը³¹:

Նշված Կիրակոսներից պետք է բացառել Գրիգոր Վկայասերի գործակից Կյուրակոսին, որը ժամանակով որոշակիորեն տարբերվում է մյուսներից:

Բացահայտորեն մերժվում է նաև Կիրակոս Նրզնկացու մասնակցությունը Հայսմավուրք ժողովածուների խմբագրման աշխատանքներին, քանի որ, ինչպես պարզորոշ ցույց է տրված, Հայսմավուրքի խմբագիր Կիրակոսին և Կիրակոս Նրզնկացուն բաժանում է առավազն մեկ դար ժամանակահատված: Եթե Կիրակոս Արևելցու հիշատակարանները վերաբերում են 1253 և 1269 թվականներին, ապա Նրզնկացու մասին վերջին տվյալը XIV դարի կեսերից է. ձեռագրերը 1356 թվականին նրան արդեն մահացած են հիշում³²:

Մնում են, ուրեմն, երկու Կիրակոսներ՝ Արևելցին և Գանձակեցին, միևնույն անձն են սրանք, թե՞ տարբեր հեղինակներ: Հայագիտական վերջին ուսումնասիրություններում բերված հիշատակարանային և կենսագրական փաստերի համադրությամբ հարցը լուծվում է հօգուտ Արևելցի և Գանձակեցի Կիրակոսների նույնության: Քանի որ մեր խնդիրը հայսմավուրքային խմբագրություններին է վերաբերում, ուստի շարադրենք մեր դիտումները Կիրակոս Արևելցու Հայսմավուրքի այն տարբերակիչ գծերի մասին, որ առանձնացնում են նրան նախորդ խմբա-

³¹ Նշված Կիրակոսների շփոթության շուրջ տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Ոհանջանյանի, Երևան, 1961, էջ Թ, ԺԱ, ԻԸ, ինչպես նաև Մրապյան Ա. Ն., Բանասիրական ճշգրտումներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 137—145:

³² Տե՛ս Մրապյան Ա. Նույն տեղում էջ 144—145, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն..., Առաջաբան, էջ Թ. Ժ, ԺԱ, ԺԲ, ԻԾ—ԻՁ:

գրություններից: Մեզ համար պարզ դարձնելով բանասիրորեն ամենա-
խճողված ու բարդ խմբագրության հարցը՝ Տեր-Խորայելի Հայսմավուր-
քի հայացման ընթացքն ու առանձնահատկությունները, հաջորդ խմբ-
ագրություններին անդրադառնում ենք համառոտակի՝ տարբերակելով
գրանք էական հատկանիշներով միայն³²:

Մատենադարանի Ձեռագրաց ցուցակում իբրև Կիրակոս Արևելցու
Հայսմավուրք նշվում են սակավաթիվ ձեռագրեր՝ 7433, 7529, 7530,
9585, 3817, 4683 և 4684³³, իսկ երկուսն էլ՝ իբրև տարակուսելի: Մինչ-
դեռ ձեռագրերի քննությունը պարզում է, որ գրանք ավելի են. հենց
իբրև տերխորայելյան նշվածներից 7464, 4512, 1339 ձեռագրերը պատ-
կանում են կիրակոսյան խմբին, նշվածներից 7529-ը որոշակի Գրի-
գոր Անավարդեցու խմբագրությանն է պատկանում, որի անունն ընդ-
հանրապես դուրս է մնացել Հայսմավուրքների խմբագիրների ցանկից՝
թե՛ Մատենադարանի ցուցակներում և թե՛ Հ. Անասյանի Մատենա-
գիտության մեջ: Կիրակոս Արևելցուն պատկանող խմբագրության ձե-
ռագրերի ցանկից պետք է հանել նաև 3717 ձեռագիրը, քանի որ այն,
ճիշտ է, ընդամենը 331 էջից է բաղկացած, բայց մասն է հլաթեցու
Հայսմավուրքի: Որով՝ Կիրակոսի անվամբ պետք է մնան 7433, 7463,
9585, 7530, 4512, 1339 Հայսմավուրքները և 3658 ձեռագիրը, որ Հ.
Անասյանի Մատենագիտության մեջ «Անանուն» խմբագրություն անունն
է կրում, բայց ոչ այլ ինչ է, քան 4512 և 7463 կիրակոսյան Հայսմա-
վուրքների ուղղակի համառոտումը ոչ պատահականորեն Տոնացոյց
անվանված:

Կիրակոս Արևելցու նշված Հայսմավուրքների համեմատությունը
պարզ է դարձնում մի էական հատկանիշ, որ տարբերակում է այդ
խմբագրությունը նախորդներից. ի տարբերություն թե՛ Տեր-Խորայելի,
որ տարին սկսում էր հունվարի 1-ից (Բարսեղ Կեսարացու վարքով) և
թե՛ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանական ժողովածուի, որ
տարին սկսում էր սեպտեմբերով (Սիմեոն Սյունակյացի վարքով)՝ Կի-
րակոս Արևելցին իր Հայսմավուրքի համար ընտրում է հայկական ամ-
սականգր՝ Գրիգոր Վկայասերի օրինակով տոնաշարն սկսելով նախա-
սարգ մեկից, որ է օգոստոս 11 (Հովհաննես Մկրտչի տոնով), հասց-

³² Արդեն կա, ինչպես հայտնի է, Գրիգոր Անավարդեցու Հայսմավուրքի էական տար-
բերակիչ հատկանիշը բացահայտող արժեքավոր ուսումնասիրություն («Բազմավէպ», 1949,
№ 3—4, էջ 58—66, Գր. վրդ. Սարգիսյանի հոդվածը), սակայն այս դեպքում նույնիսկ
մանրամասները սպասում են իրենց հատուկ հետազոտողին:

³³ Ցուցակ Մատենադարանի, հ. Ա, էջ 1513, 1090:

նելով այն մինչև հաջորդ օգոստոս (աւելեացն) ամիսն ըստ Սարկա-
վագի): Սրանով Հայսմավուրք ժողովածուն առավել տեղայնանում է³⁴:

Այնուհետև. ի տարբերութուն Տեր-Իսրայելի, որը ոչ մի նոր ըն-
թերցված չէր հորինել իր ժողովածուի համար և հիշատակարանում
խոսում էր միայն տոներն օրերը ճշտելու և դասավորութունը փոխելու
մասին, Կիրակոս Արեւելցին շեշտում է իր ժողովածուն նոր տոներն ըն-
թերցվածներով լրացնելու հանգամանք: Այդ են վկայում նրա երկու
հիշատակարանները:

Առաջինը Հայսմավուրքի այն օրինակում, որ Կիրակոսն ավարտել
է 1253 թվականին և նշել, որ ինքն ավելացրել է 112 նոր նյութ: «Յա-
ւելի ի նախակարգեալ տօնս ճառս համառօտս ՃԺԲ ...հաւաքեալ յԱս-
տուածաշունչ գրոց ի պայծառութիւն եկեղեցւոյ...»³⁵, Երկրորդը՝ գրված
Սսում՝ 1269 թվականին, որտեղ խոսում է արդեն ավելացրած 170 նյու-
թերի մասին: «Յուսովն Աստուծոյ և սիրով սրբոց նորա, նուաստ ոգի
Կիրակոս վարդապետ Արեւելցի ի միասին հաւաքեցի զտօն Սրբոց Աս-
տուծոյ ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց: Գրեցի և պատմութիւնս
նոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրցն, և խառնեցի ընդ նա-
խակարգան... և ճառք, որ յաւելաւ մեք ընդ հինն խառնեալ հարիւր և
եօթիանասուն»³⁶: Ինչպես տեսնում ենք, Կիրակոս Արեւելցին շեշտում է
նոր «պատմութիւններ» հավելելու և ժողովածուն լրացնելու մասին,
որ վերաբերում է ինչպես միանգամայն նոր նյութերին, այնպես էլ հին
նյութերի կամ տոների նոր շարադրանքին՝ «յաւելաք մեք ընդ հինն
խառնեալ»:

Երրորդ՝ տոնակարգը նորանոր տոներով հարստացնելու հանգա-
մանքն իր հետ բերել է Կիրակոսի Հայսմավուրքի մի նոր հատկանիշ՝
Երվա մեջ նշվող տոներն առատութիւն: Եթե Տեր-Իսրայելն օրվա մեջ

Հետաքրքրական է, որ Հայսմավուրքներով զրադվող այնպիսի մասնագետ, ինչ-
պիսին հայր Մկրտիչ Ավգերյանն է, ծանոթ չէ Կիրակոս Արեւելցու խմբագրութեանը, նա
գրում է՝ «Յայսմաւուրք կարծեցեալ Կիրակոսի վարդապետի Արեւելցւոյ կամ Գետկացւոյ ի
մէ դարու, զոր չունիմք ի ձեռքն, այլ ի տեսողէն տուալ մեզ տեղեկութիւն»: Եվ ինչպես
սովորաբար, ուրիշի տեղեկութիւնները լինում են վարչիվերո և անստույգ, այդպես և
այս դեպքում՝ ըստ ուրիշի տված տեղեկութեան Կիրակոս Արեւելցու խմբագրութիւնը
սկսանի ի սեպտեմբեր ամսոյ հանգուն 2—3, բայց հարադրութեամբ և հայերէն ամսոյ»
(Ավգերյան. Վ. ԺԱ. էջ 29—29*):

Ձեռ. 7463 (1413 թ.) էջ 349բ, ձեռ. 7433 (1467 թ.), էջ 427բ:

Ալիշան Ղ., Բ. էջ 472, Ալիևյան Ն., Ցուցակ հայերէն ձեռագրաց նիկոսիայի ի
Կիպրոս, Վիեննա, 1961, էջ 12:

նշում էր մեկ կամ երկու տոն՝ իր ընթերցվածներով, ապա Կիրակոս Արևելցու Հայսմավուրբին բնորոշ է մի բանի, մինչև իսկ 6—7 տոների նշումը:

Չորրորդ՝ սրանից էլ բխում է Կիրակոսի ժողովածուների մեկ դյուրին դիտելի տարբերությունը՝ ընթերցվածների խիստ համառոտությունը, երբեմն տոնացույցի հասնող հակիրճությամբ:

Նշվածները Կիրակոս Արևելցու ժողովածուների հավաստի, բայց «արտաքին» տարբերակիչներն են, որ բխում են կամ հետևանք են հեղինակի աշխարհայացքային ամբողջության և պետք է դիտվեն առանձին խնդիրների լուծման միասնության մեջ: Ոչ մի գործ, մանավանդ այնպիսի մի ժողովածու, որ աղգային ավանդների պահպանմանն ու ամրապնդմանն է ծառայում, չի կարող պատահական փոփոխությունների ենթարկվել: Մենք այդ տեսանք Տեր-Իսրայելի, իսկ նրանից առաջ էր Գրիգոր Վկայասերի ժողովածուները քննելիս, որտեղ ամեն մի փոքր տեղաշարժ իր իմաստն ու նպատակն է ունեցել:

Փորձենք իմաստավորել նաև Կիրակոս Արևելցու Հայսմավուրբի այդ «արտաքին» փոփոխությունները փաստական տվյալներով ու գործից բխող տրամաբանական եզրահանգմամբ:

1. Որ Կիրակոս Արևելցին փոխում է գործող Հայսմավուրբի տոնակարգային հենքը՝ տալով նրան հայկական ամսակարգ, այդ մեկնաբանման կարիք չի զգում:

2. Առավել հետաքրքրականը Կիրակոսյան Հայսմավուրբի որոշ օրինակներում հանդիպող հետևյալ ուշագրավ փաստն է: Ամենուրեք նա հայկական և հռոմեական ամսանունների կողքին միշտ հավելում է նաև ասորաբրայական ամսանունը: Այսպես,

էջ 26բ— Նաւասարդ իթ և սեպտեմբեր լ և իլուլ իա

էջ 28բ— Նաւասարդ սեպտեմբեր յթ և իլուլ իբ

էջ 50բ— Հոռի իա և սեպտեմբեր լ և թշրին ժգ

էջ 69բ— Սահմի ժ և հոկտեմբերի ժթ և մեհրշուամ բ

էջ 131բ— Արաց ա և յունար ք և տբեթ իգ

էջ 180բ— Մհհհկի իա և փետրուար իէ և աղար ժգ

էջ 201ա— Արեգ ժգ և մարտ իդ և ճիսամ գ... և այլն³⁷:

Այսպիսին է նաև 4512 ձեռագիրը: Այդ սկզբունքի հետքերն ենք տեսնում նաև Կիրակոս Արևելցու հիշատակարանը պահպանող ամենա-

վաղ՝ 7433 ձևագրի հենց սկսվածքում՝ «նախատարդ ամսոյ ի մի են և հերաշեցոց իդ և հումեհյացոց աւգոստոս ժա»³⁸,

Այստեղ խնդիրը, ըստ մեզ, ասորաբերայական ամսանունների հավելումը չէ միայն, այլ ավելի արեւելյան ժողովածուների հետ հաշվի նստելու և նորաճուր տոների ընդգրկման փաստը, որ ակներևորեն պակաս էր ինչպես Տեր-Խորայելի, այդպես և արդեն դարեր գործող հունական Հայսմավուրքներում: Պարսից հին նահատակների տոներն, անշուշտ, ներառված էին հունական հնագույն Հայսմավուրքներում Մարութա նփրկերտցու «Վկայք Արեւելից» ժողովածուից³⁹: Բայց պատմական նոր իրադրությունների հետ կապված բազմաթիվ դեպքեր ու դեմքեր, որ տեղ գտան հայկական նոր Հայսմավուրքներում, ակներևորեն Կիրակոս Արեւելցու ջանքերի արդյունք են, այն պարզ պատճառով, որ Տեր-Խորայելը ոչ մի նոր ընթերցված շուներ ավելացրած իր Հայսմավուրքում:

Կիրակոսյան Հայսմավուրքի տոնացանկերն ու տոնի հիշատակի արժանացած անուններն իսկ վկայում են արեւելյան աշխարհի ներթափանցումը հայկական տոնակարգ, մի կողմից՝ մինչ այդ երբեմնի լքված կամ ամենեւին չլսված անուններ տեղ են գտնում բյուզանդական և հայկական տոների կողքին՝ Ակեփսիմա հայրապետ, Հովսեփ քահանա, Այրթալա սարկավագ, Մելի եպիսկոպոս, Գուրիաս, Սամոնաս և այլ անուններ, հիշատակի օրեր՝ Աբիբ, Աբդա Ումդղանաս, Մարութայի, Զվիթ երիցու, Գուժգալաթ պարսիկ ներքինու, Շմավոնի, Հակովկա պարսկի, Բարսիմա՝ եպիսկոպոսի Նդեսիա քաղաքի, և այլն, և այլն, որոնց մի մասն անշուշտ կարող էր ավելի վաղ ժամանակներից գալ, բայց ամբողջությամբ, սրանք անտարակուսելիորեն Կիրակոսից են գալիս: Հատկապես 4512 ձևագրում մի մեծ բաժին են կաղմում պարսիկ նահատակների տոները (էջ՝ 85, 94, 100, 128, 174, 298—321 և այլք):

Մյուս կողմից՝ Կիրակոս Արեւելցու «Արեւելքը» ոչ միայն այսօրվա հասկացությամբ արեւելք էր⁴⁰, այլ նաև Արեւելյան Հայաստան՝ հարուստ

³⁸ Ձև. 7433, էջ 1ա: Կիրակոսյան մյուս ձևագրերում այս արեւելյան ամսանունների բացակայությունը պետք է բացատրել թե՛ գրչական անհամարձակությամբ, թե՛ դործող Տեր-Խորայելի ժողովածուի նախընտրությամբ այս հարցում:

³⁹ Տէ՛ս Տեր-Պետրոսյան Լ., Արբանյակ հոտոտվանդի «Վկայք Արեւելիցը», Երևան, 1976, էջ 33—34:

⁴⁰ Կիրակոս Կանծակեցի. Պատմություն, Առաջարան, էջ ԺԲ:

պատմական մեծ տեղաշարժերով և տկանավոր դեմքերով ու նահատակներով. վանական վարդապետ, խոսրով Գանձակեցի, Հովհաննես Գառնեցի, Հովսեփ Նոր Վկա, «Կիրակոսք յԱյրարատ դաւառէ», և այլք, որոնք պապստանել էին ոչ միայն Կիրակոս Արեւելցու Հայսմավուրքում⁴¹, այլ նաև պատմութեան մեջ⁴²: Կիրակոսի Հայսմավուրքում ամեն քայլափոխի հանդիպում ենք նորանոր դեմքերի ու իրադրութիւնների.

— Յայսմ աւուր կատարեցան ի Պարսիկս Ներսես եպիսկոպոսն այլ շորս եպիսկոպոսունք.

— Տօն սրբոյն Սահակայ եպիսկոպոսին և ... վկայիցն...

— ...«Անօրեն իշխանն Իսմայելի Աբդլա, առաքեաց ոստիկան մի յերկիրն Հայոց յորոյ անունն էր Յուսուֆ, որդի Ապուսեճի...»

— Յայսմ աւուր բարեկալիք վկայք Քրիստոսի յԱյրարատ դաւառէ, որոց անունանքն Կիրակոսք էին և ածան ի Դվին քաղաք առաջի գլխաւորին Բուլայի»:

— Յայսմ աւուր ՄԾ մարտիրոսացն, որ կատարեցան ի Բուլաէ ամբարշտէ ի Հայք...

— Գիւտ նշխարաց Գրիգորի Աղուանից կաթողիկոսի և վարք Վարոսի և Թաթլոյ:

— Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսի...

— Վանական վարդապետի...

— Յայսմ աւուր յիշատակ սրբոց հայրապետացն Գրիգոր վկայասիրի, և Գրիգորի և Ներսէսի երգեցողի և այլն, և այլն:

Թե որտեղ է Կիրակոսն արել իր առաջին խմբագրութիւնը, չենք կարող ասել, բայց, ըստ կենսագրական տվյալների, հավանորեն նոր Գետիկում, որտեղ և ավելացրել է Արեւելքի և Արեւելյան Հայաստանի հետ կապված նորանոր անուններ իր ժողովածուում:

Ինչ վերաբերում է կիրակոսյան Հայսմավուրքի երկրորդ խմբագրութեանը, ապա, ըստ հեղինակի հիշատակարանի, այն արվել է հաստատապես Սսում, և ունի միևնույն առանձնահատկութիւնը, ինչ և առաջինը, այսինքն՝ ժողովածուի կիրառական շրջագծի ընդլայնում, բայց այս դեպքում անսպասելիորեն «Արեւմտյան» — լատինական առանձին տոների նշմամբ:

Այս տեսակետից Կիրակոս Արեւելցու առաջին խմբագրութեան, ուշագրավ պատկեր է տալիս 7433 ձեռագիրը, որի վրա լրացումներ ենք տեսնում լատինադասկան Հայսմավուրքից: Այսպես.

⁴¹ Ձեռ. 4512, էջ 280—321:

⁴² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 178, 218, 243—244, 245, 326, 348—350:

էջ 185ա— Ամիս յուն.

Քաղոց իդ և յուն. ա— Վարք և յիշատակ Բարսղի եպիսկոպոսի
Կեսարու, — տողատակին, այլ գրչությամբ լրացված է, — Ֆռ[անկաց] —
Տօն է ք օր թլպատ...

191բ— Դալոց ի է և յուն. դ Տօն է Զոսիմոսի կրօնաւորի ֆռ. մանկաց
Բեթղէն:

209բ— արաց ժը և յուն. իե— Տօն է սրբոյն Գրիգորի Ածաբանի ֆռ.
Պօղոսի դարձն

Այս հավելումներն արվել են մեծ մասամբ տողատակին. այս-
պես.

61ա— հոռի իբ և հոկտ. մինն. սրբոյն Անանիա Առաքելոյն. տողատակին՝
ֆռ. Ռէմէճիոսի եպի.

94ա— սահմի ի և հոկտ. իբ— վկ. սրբուհեացն Նունէ եւ Մանէ. տողա-
տակին՝ ֆռ. Սավինի մարտիրոսին

96բ— սահմի իբ և հոկտ. լա— վկ. էպիմաքոսի. տողատակին՝ ֆռ.
Վիճիլէ

110բ— արէ դ և նոյ. ժբ— Տօն է սրբոյն Մելի եպիսկոպոսին. տողա-
տակին՝ ֆռ. Մատթիի պապի

122բ— արէ ժա և նոյ. ժբ— Տօն է Ներսէսի հայրապետի. ֆռ. Պօնցի
պապի

և այսպես շարունակ:

Հատուկ նշված այս հավելագրութիւնները օգնում են բմրոնելու
եղածն ու համադրածը:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե դրանք զրչի պատահական
հավելումներ են որեւէ ձեռագրից, բայց դիտելով նշված տոների ապա-
գա ներթափանցումը Հայսմավուրքային տոնակարգ, գալիս ենք այն
եզրակացութեան, թե դրանք նույնպես Կիրակոսի քանքերի արդյունք են՝
հետագա ժողովածուներում Կիլիկյան միջավայրի ազդեցութեամբ ներա-
ռած «Ֆրանկաց» տոներ, որ տեղ էին գրավել Սիս-Կիլիկյան հատվածի
պահանջմունքներին ներդաշնակ: Առաջին ժողովածուի արեւելամետ ընդ-
գրկման կողքին Սսում բնակութիւն հաստատած Կիրակոս Արեւելցին
իր Հայսմավուրքը գործադրութեան մեջ դնելու համար անհրաժեշտորեն
պետք է հաշվի նստեր այնտեղի բնակչութեան զգալի մասի դավանան-
քի հետ և իր տոնակարգը լրացնէր նաև նրանց միջավայր ներթափան-
ցած տոների նշումով: Մեզ քաջ հայտնի են հայ հնատիպ գրքերի խմ-

բազրական տարբերակները շուկայի պահանջմունքներին հարմարեցնելու հասկանալի փոփոխությունների փաստեր: Ինչո՞ւ նման իրադրություն չենք կարող դիտել նաև ձեռագրական աշխարհում: Սա մի հարց է, որ կարելի է բացատրել և՛ ժողովածու կազմողի հեղինակային ըսկզբունքով ու կողմնորոշումներով՝ «ի միասին հալածելի», և մյուս կողմից էլ՝ ձեռագրական աշխարհի ուրույն կյանքով ու ավանդույթներով, նայած թե ի՞նչ պահանջ է ներկայացրել Սսի ձեռագրի ստացողը՝ ձեռագրի ծախքերը հոգացող պատվիրատուն: Չմոռանանք, որ այս երկրորդ ժողովածուն կազմվում էր Սսում, «Ի Թաղաւորութեան Հեթմոյ», որն, ինչպես հայտնի է, պաշտոնապես հույներին սահմանադրվելու և լատիններին հարելու ուղի էր բռնել: Իսկ Կիրակոսն անձամբ ծանոթ էր Հեթումին դեռևս 1255 թվականից, երբ Թաղավորն իջևանել էր Քուրդ իշխանի տանը և «բազում իրս զարմանալիս և անծանոթս պատմէր... զոր տեսեալ էր և լուեալ», — գրում է պատմագիրը⁴³:

Երկրորդ խմբագրության հնագույն՝ Նիկոսիայի ձեռագրի և առաջին խմբագրության հնագույն օրինակների (ձեռագրեր 7530, 7433) համեմատությունը տարակույս չի թողնում այն մասին, որ հեղինակը հայ տոնական ժողովածուի սկզբունքները էական փոփոխությունների չի ենթարկել, բացի, ինչպես ասացինք, ընդգրկման լայնացումը՝ նորանոր տոներէ նշումն ու նոր ընթերցվածների հորինումը:

Արդ. ի՞նչ տոներ է ավելացրել Կիրակոսը և ի՞նչ նոր ընթերցվածներով է հարստացված նրա Հայսմավուրբը⁴⁴:

Կիրակոս Արևելցու և Տեր-Իսրայելի Հայսմավուրբների ընդհանուր համեմատությունը ցույց է տալիս, որ՝

ա. Երբ Կիրակոսը տեսել է տոնի նշումը Տեր-Իսրայելի ժողովածուում և բավարարվել նրա ընթերցվածով, ապա նա թողել է այդ՝ համառոտելով հղածը:

բ. Երբ Տեր-Իսրայելի ժողովածուում, Կիրակոսի կարծիքով, պակաս

⁴³ Կիրակոս Գանձակեցի. Պատմություն, էջ 371:

⁴⁴ Ամբողջ խնդիրն այն է, որ մեզ չեն հասել հայսմավուրբային խմբագրությունների անաղարտ ինքնագրեր, այլ՝ սրանց միջնորդված ընդօրինակումները միայն, որի հետևանքով և յուրաքանչյուր ուշ արտագրված ժողովածու ներառել է այլ և այլ խմբագրության ավելանք:

Չկան Տեր-Իսրայելի խմբագրության բնորդ ժողովածուներ, որի համեմատությամբ դժվար է որոշակի խոսել նոր ժողովածուի բոլոր նորամուծությունների մասին: Բայց, չնայած դրան, հավելումներ կան, որ որոշակի են և կապված միայն Կիրակոս Արևելցու անվան հետ:

սել է անհրաժեշտ տոնի նշումը (հատկապես արեւելյան), նա ավելացրել է թե՛ տոնի նշումը, թե՛ համապատասխան ընթերցվածը:

գ. Ակնառու են դեպքերը, երբ տոնը նույնությամբ նշելով՝ Կիրակոսը փոխել է ընթերցվածը՝ նորը տեղադրելով հնի տեղ:

Խոսքն, անշուշտ, վերաբերում է հիմնականում հայկական տոներին. «Ֆրանկ» տոները մեծ մասամբ սոսկ նշվում են առանց ընթերցվածների⁴⁵:

Բայց նոր են շատ անգամ հին տոների առթիվ գրված ընթերցվածները: Սրանցից մի քանիսը կարելի է բերել դուգադրաբար.

Հին ընթերցված
Ձև. 6283

Նոր ընթերցված
Ձև. 7530

427ա—Բաղդ ժդ, դեկտ. իր

71ա—Փաղոց ժդ և դեկտ. իր

Վկայաբանութիւն Թաղէոսի առաքելոյն և քարոզութեան...

սկս. «Արգար թագաւոր Միջագետաց յՈւռհա ի ժամանակին յորում երեւցաւ Քրիստոս մարմնով ի Հրեաստան...»

Վկայութիւն Թաղէոսի առաքելոյն և որ ընդ նմա կատարեցին

սկս. «Առաքեալն Քրիստոսի Թաղէոս հրամանաւ հոգոյն սրբոյ եկն ի Միջագետացս Ասորոց առ թագաւորն Հայոց և ասորոց...»

78ա—մենեկի իա և փետրուարի ին

108բ—մենեկի իա և փետր. ին

Վարբ Եղիշէի վարդապետին...

սկս. «Երանելի սուրբ հայրս մեր Եղիշէ էր յաշակերտաց մեծին Մեսրոպայ...»

3իշատակ է Եղիշէի վարդապետին

Երանելին Եղիշէ էր զինուորեալ Վարդանայ հայոց զորավարի և էր զպրապետ և տեսող յեալ ամենայն անցիցն...

նաև ձև. 8179 253բ

129բ—անկի ա և ապրիլի ր

130բ—131ա անկի ա և ապրիլի ր

Վկայութիւն Սահակայ և Համադասպայ նախարարաց Արծրունեաց

սկս. «Ի բռնակալութեանն տաճկաց Հարունայ և ի կաթողիկոսութեան հայոց տեառն Եսայէա Բ մեծամեծ իշխանրս նախարարի տանն Արծրունեաց Համազասպ և Սահակ...»

Վկայութիւն սրբոցն Սահակայ և Համազասպայ

սկս. «Այս մեծատոհմ և փառաւոր իշխանքըս Համազասպ և Սահակ էին ի մեծ ազդէն Արծրունեաց: Համազասպ մարդպան էր հայոց...»

⁴⁵ Տե՛ս Ալիւնյան Ն.. Յուցակ հայերեն ձեռագրաց նիկոսիայի ի Կիպրոս, Վիեննա, 1961:

նաև ձևո. 8179

էջ 171ա—*բաղոց ի ժէ և դէկտ. ին*

Տօն է Դաւթի Մարգարէին
սկս. «Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն
Շուշանկանն Սուրբն Շուշանիկ դուստր էր
Վարդանայ զօրավարին հայոց: Եւ տուաւ
յամուսնութիւն բղճշխին վրաց Վազգենայ,
որ գնաց ի պարսիկս և ուրացաւ զՔրիստոս
և եկեալ շարշարեր զսուրբն Շուշա-
նիկ, զի և նա ուրացի զՔրիստոս...»

նաև ձևո. 2695

73ա—*աբեղի ժ և մարտի ժը*

Վարդ Կիրդի Երուսաղէմի հայրապետի և
վկայութիւն Արեւնդի և Վանական վարդա-
պետի.

սկս. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս
սուրբ վարդապետն վանական առաքինի
վարուր: Հոշակավոր և մեծ վարդապետն
էր յաշխարհէն Աղուանից ի Տաուշ գավա-
ռէ այր իմաստուն և բանաւոր, առաքինի
վարուր... և էր նա շափ հասակաւ, մեծ
մորուր... և հանգեաւ նա ի վաթն, կոշի
նորանաշատ...»

Սրանք ղիսուումներ են՝ արված փաստական նյութի վրա, և վկա-
յում են այն ահռելի աշխատանքը, որ կատարել է Կիրակոս Արեւելցին
իր ժողովածուները կազմելիս⁴⁶: Նրա Հայսմավուրքի տարբերակներն
ինքնին ապացույց են իր դործի նկատմամբ նրա ստեղծագործական

74բ—*բաղոց ժէ և դէկտ. ին*

Տօն է Դաւթի Մարգարէին

սկս. «Յայսմ աւուր սուրբն Շուշանիկ
դուստր Վարդանա հայոց զօրավարին
յառնէ իւրմէ Վազգենա վրաց Բղճշխէ
բաղում տանջանաց համբերաւ վասն
Քրիստոսի կատարեցաւ ի Քրիստոս»

նաև ձևո. 7463

235ա—*աբեղի ժ և մարտի ժը*

սկս. «Յայսմ աւուր Վանականի վարդա-
պետի

Ամենագովելի և երջանիկ հայրն մեր
սուրբ վարդապետն Վանական էր ի Տաուշ
դաւառէն:

Եւ ծնողին նուիրեցին ղնա Աստուծոյ, եւ
սրբութեամբ սնաւ ի վանս առ հարազատ
եղբօր իւրում, որոյ անուն էր Պաւղոս, առ
մեծ վարդապետն Մխիթար, զոր Գոշ
անուանենք, ի վանքն Գետիկ...»

⁴⁶ Սա ամեննին չի նշանակում, թէ Կիրակոսը մենակ է դործել: Կիրակոսն ինքն իր
հիշատակարանում նշում է իր դործընկերներին. «յաւելի ի նախակարգեալ տօնապատճառս
ճառս համառօտս ձժԹ (112), ի ձեռն Ստեփաննոսի և Վահրամայ վարդապետացն բա-
ղեալ... յԱստուածաշունչ գրոց»: Այս դեպքում կարեւոր չէ աղբյուրի նշումը, քանի որ
թերեւ Կիրակոսն ինքը կարող է հանձնարարած լինել աղբյուրները՝ ինչ դրբերից, ժողո-
վածուներից, պատմադիրներից օգտվել և այլն: Այստեղ կարեւոր դործընկերների մաս-
նակցութեան փաստն է: Գաղտնիք չէ, օրինակ, որ Հովհաննէս Գառնեցու հատկաժը Կի-
րակոս Գանձակեցին իր պատմութեան մեջ գետնդն է Վարդան Արեւելցու ստացած տեղե-
կութիւնների հիման վրա: (Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 349):
Ուրեմն, նրան նյութ էին մատակարարում ոչ միայն դործընկերները, այլ նաև բանիմաց
մտերիմները: Չենք կասկածում, որ Կիրակոս Գանձակեցու Պատմութեան մեջ և Հայսմա-

վերաբերմունքի. տարբեր շրջանի ժողովածուներում ներառած նյութների քանակի տարբերությունը՝ 112—170, սոսկ թվական-քանակական չէ, այլև որակական: Եթե առաջին ժողովածուում նրա հավելումների մեծ բաժինը արևելյան տոնախմբերի ներառումն ու մատուցումն էր, ապա հետագա ընդգրկման առավել մեծ քանակը (170) նոր պայմանների թելադրանքի արդյունքն էր, որը և հեղինակային սկզբունքն էր ազդարարում: Կիրակոս Արևելցուն հուզողը ոչ այնքան ընթերցվածների ներգործուն շարադրանքի հարցն էր, որքան տոնացույցի կիրառական նշանակությունն այն միջավայրում, որտեղ գործելու էր հայ Հայսմավուրբը: Սա նաև քաղաքական կողմնորոշման ու հարևան սուղերի հետ հարաբերությունների սրման ու լարման փոխարին, նրանց հաշվի առնելու մի քաղաքական-գիշտակալական գործակցման ծրագիր էր, որ նպատակ ուներ հայ ժողովրդի հարաբերական խաղաղ կյանքի ու դոյատևման պատմական ընթացքին:

Իբրև գրական ստեղծագործություն Կիրակոս Արևելցու Հայսմավուրբն, անշուշտ, ամենապակաս ղեղարվեստական արժեք ունեցողն է հենց այն պատճառով, որ նա գրեթե չէր դուրս գալիս տոնացույցային սահմաններից և հազվադեպ դեպքերում կարող էր դեղարվեստական ներգործություն ունենալ:

Բայց որքան էլ Կիրակոս Արևելցու ժողովածուն համառոտ էր իր ընթերցվածներով, այսինքն՝ գեղարվեստական տեսակետից ամենից քիչ հետաքրքրականը, դրա փոխարին նա լայն էր իր պատմաճանաչողական ընդգրկումով ու արժեքով, նեղմիտ սահմանափակությունից ձերբազատված, ինչպես և Քր Պատմությունն է: Սրա մեջ պետք է տեսնել Կիրակոս Արևելցու Հայսմավուրբի պատմական արժեքը:

Մեզ մնում է հայանցիկ անդրադառնալ հայսմավուրբային հետագա և վերջին խմբագրություններին, որոնք բարերախտաբար ուսումնասիրված են այլ հիտազոտողների կողմից, և մեզ շատ բան չի մնում

վուրբում Պահլավունիների տոհմի վերաբերյալ նյութերի աղբյուրը դարձյալ նույն Վարդան Արևելցին է (Ձև. 8775, էջ 301—307):

Բայց որքան էլ հարուստ ու բաղմալան լինին մատուցվող նյութերը, միևնույն է, ժողովածուն կազմողը, առնելը տեղադրողն ու ընթերցվածները ի մի բերող, խմբագրողն ինքն է եղել՝ Կիրակոս Արևելցին: Մենք նույնիսկ հակված ենք կարծելու, թե Հայսմավուրբի խմբագրության հետ կապված աշխատանքներն են պատճառ դարձել նրա աշխույժ պատմության անկաղմակերպ և թերի ավարտի, կամ ավելի ճիշտ՝ անավարտության:

Եթե նկատի առնենք, որ Կիրակոսը պատմությունը գրել է իր հասուն կյանքի գրեթե ամբողջ ընթացքում, իսկ Հայսմավուրբն էլ խմբագրել ոչ մեկ անգամ, այլ 16 տարիների

ասելու, քան սեփական դիտումների մատնանշումով հիմնական գծերով ներկայացնել նրանց եղբայրականները:

ԳՐԻԳՈՐ ԱՆԱՎԱՐՁԵՑՈՒ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԸ

Գրիգոր Անավարդեցու Հայսմավուրբը Տեր-Խորայելի անունով ճանաչված լինելու պատճառն այն է, որ Գրիգոր Անավարդեցին իր վերափոխիչ աշխատանքն արել է հենց տերիստրայելյան խմբագրության վրա: Ուրեմն, այստեղ խոսքը ոչ թե այս հեղինակներից մեկն ու մեկի ժըխտման մասին է, այլ նրանց կատարածի տարբերակման, նրանց խմբագրական տարբերակների գոյության մասին, որ ակներև է դառնում երկուսի գործի համադրությունից: Երբ ասում ենք, թե Գրիգոր Անավարդեցու Հայսմավուրբը լույս է տեսել Տեր-Խորայելի անվամբ, դա ամենեին չի նշանակում, թե Տեր-Խորայելն իր Հայսմավուրբը չի ունեցել: Մատենագիտական աղբյուրներում նրա անունով հիշատակված փաստերն ու ձեռագրական աղբյուրները, ինչպես ցույց տվինք տեղում, միանգամայն անվերապահելի են դարձնում Տեր-Խորայելի Հայսմավուրբի ոչ միայն գոյությունը, այլև նրա առանձնահատկությունները: Բայց Տեր-Խորայելի Հայսմավուրբի գոյությունն էլ իբ հերթին չի ժըխտում Գրիգոր Անավարդեցու սեփական խմբագրության փաստը: Սա էլ է հղել, և սրա օրինակներն էլ վկայում են լատինադավան կաթողիկոսի Հայսմավուրբի խմբագրության ոչ միայն գոյությունը, այլև բնորոշ առանձնահատկություններն ու տարբերությունը հայսմավուրբային մյուս խմբագրություններից:

Արդ, Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի Հայսմավուրբի բնորոշ տարբերությունը նախորդներից այն է, որ նա պահպանելով հանդերձ հայ Հայսմավուրբների, հատկապես Տեր-Խորայելի ժողովածուի հիմնական շատ գծեր, նրանցից տարբերվում է ամենաէական մի կողմով՝ ոչ կայական, այլ լատինադավան տոնակալությամբ, որն արտահայտվում է քրիստոնեական-տերունական տոների ամսաթվային տարբերություններով: Լատինադավան հայերի պարագլուխն էր Գրիգորիս Անավարդեցին, և հայտնի են այն բանակցություններն ու պայքարը, որ վարում էին մի կողմից հունական եկեղեցին մերժող և լատինական եկեղեցու դավանանք ընդունող լատինադավան հայերը ու մյուս կողմից՝ Արևել-

ընթացքում՝ 1253 և 1269 թվականների հեռավորությամբ և վերջինս ավարտել կյանքի 66-րդ տարում, ապա վերացական չի թվա մեր ենթագրությունը:

յան Հայաստանի Գրիգոր Լուսավորչական հոգևոր ու աշխարհիկ տե-
րերը⁴⁷։ Սկսած XI դարից, այդ պայքարն արդեն առկա էր դեռևս Կիլիկ-
յան մտավորականության մեջ, այն սրվեց հատկապես XIV դարում,
Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի օրով և դրա արտահայտություննե-
րից մեկն էլ լատինամետ կաթողիկոսի Հայսմավուրքի նոր խմբագրու-
թյունն էր⁴⁸։

Անավարզեցու Հայսմավուրքը կառուցված է ոչ ըստ լուսավորչա-
կան եկեղեցու դավանանքի՝ Քրիստոսի ծնունդը դնելով հունվարի 6-ին,
այլ ըստ լատինական եկեղեցու՝ դեկտեմբերի 25-ին։ Հունվարի 6-ին
նրանք նշում են առանձին սոսկ Մկրտության տոնը, մինչդեռ ըստ հայ
լուսավորչականի՝ ծնունդն ու մկրտությունը կատարվում են նույն օրը՝
հունվարի 6-ին։ Ծննդյան օրվա այս տարբերությունից էլ ծագում է
տեղիումնական տոների բոլոր ամսաթվային տարբերությունները, որ առ-
կա է Անավարզեցու ժողովածուում։

Այսպես, քառասնօրյա պահքը, ըստ Անավարզեցու Հայսմավուրքի,
հաշվվում է ոչ թե հունվարի 6-ից, այլ դեկտեմբերի 25-ից, իսկ ըստ
լուսավորչական եկեղեցու այն նշվում է փետրվարի 14-ին, մինչդեռ
ըստ Անավարզեցու՝ փետրվարի 2-ի օրը, և այլն։

Անավարզեցու Հայսմավուրքի համար բնութագրիչ այս լատինա-
դավան տոնակարգից բացի, նոյեմբերի 1-ի օրը առանձնապես և հա-
տուկ տոն է նշանակված՝ Սուրբ Աստուածածնի և բոլոր նահատակնե-
րի տոնը, որ մինչ այդ առանձնացված չէր նշվում մեր Հայսմավուրք-
ներում։ Հենց նոյեմբերի 1-ի օրն էլ տեղադրված է Անավարզեցու «Տօն
է ամենասուրբ Ածածնին և ամ սրբոց յայտնեաց և անյայտիցն ի ըս-
կըզբանէ և այսր ընտրելեացն աստուծոյ ի մարդկան ի Գրիգոր կաթողի-
կոսէ ասացեալ զրուստ» ներբողյան ճառը, որ շատ հստակորեն ներ-
կայացնում է իր պատկերացմամբ ժողովածուում ներառելիք բոլոր
նահատակների անունները, որով, անշուշտ, կարելի կլինի ճշտել Ա-
նավարզեցու Հայսմավուրքի ընդգրկումն ու տոնակարգը։

Գրիգոր Անավարզեցու Հայսմավուրքին անդրադարձել է հայ եկե-
ղեցու պատմության այնպիսի գիտակ, ինչպիսին Մաղաքիա Օրման-
յանն է. «Շարակնոցին հետ Հայսմավուրքին վրա ալ հատուկ աշխա-
տություն ունեցած է Անավարզեցին, նորանոր հիշատակներ ավելցնելով
սնոր մեջ, և անշուշտ անկե մնացած պիտի ըլլան Հայսմավուրքին մեջ

⁴⁷ Տե՛ս Սամուէլի քահանայի անցյալ հաւարմունքի դրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 155, 163, 164։

⁴⁸ Տե՛ս «Բազմավէպ», 1949, էջ 58։

անցած լատին սուրբերու հիշատակները, զոր օրինակ Ամբրոսիոս Մեղիսյանցի (Յաս. Բ. 275), Գրիգոր Հռոմայեցի (Յաս. Ա. 117), Դորոթեոս Տյուրացի (Յաս. Ա. 243), Յոթներորդ ժողով (Յաս. Բ. 165), Լուրենտիոս և Քսենատոս Հռոմայեցիք (Յաս. Բ. 42) և ուրիշներ»⁴⁹:

Բայց Մ. Օրմանյանի այս ճիշտ դիտողությանը միանում է մի եզրահանգում, որ որդեգրել էր նաև Գ. Սարգսյանը (տե՛ս «Բաղմավէպ», 1949, էջ 49), թե Անավարդեցին նպատակ ուներ փոփոխելու հայ եկեղեցու շարժական տոնակարգը և ամսօրերն ու կարգավորելու այն: «Հայսմավուրբը, — գրում է նա, — պետք էր հատուկ առարկա ըլլար Անավարդեցիի մտադրութեան, որովհետև կաշխատելու ջնջել տոներու մասին հայ եկեղեցւոյ յոթնեկական դրութիւնը և սրբոց տոները կատարել ամսաթվերի դրութեամբ և Հայսմավուրբի կարգով»⁵⁰:

Օրմանյանին հայտնի չէր, որ Անավարդեցին իր խմբագրական աշխատանքը կատարել է Տեր-Խարայելի ժողովածուի վրա, ուստի վերջինիս արածը վերագրել է Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսին: Մյուս կողմից, իրավացիորեն դիտելով լատին սրբերի մուտքը հայ տոնակարգ, նա չի անդրադարձել տերունական տոների դավանաբանական տարբերութիւններին, այլ նշել է շարժականը կայուն ամսաթվային համակարգի փոխելու հարցը. որ, ինչպէս ասվել է տեղում, Տեր-Խարայելի վաստակն է և ոչ թե Անավարդեցուն: Դավանաբանական տարբերութիւններն առաջին անգամ նշվել են հայր Գ. Սարգսյանի հետազոտութեան մեջ:

Գրիգոր Սարգսյանին է պատկանում նաև մի այլ տարբերակիչ դիտում՝ թե «Տեր-Խարայել, Կիրակոս և Խլաթեցին, միշտ նախ՝ հայկական ամիսը կը դնեն և հետո՝ հռոմեականը: Անավարդեցին՝ ազոր հակառակը»⁵¹:

Թե Անավարդեցու ժողովածուն ուրիշ ի՞նչ ներքին փոփոխութիւններ է կրել, կարող է ասել նրա Հայսմավուրբի հետագա մանրադնին քննութիւնը: Առաջմ մեղ հետաքրքրողն այն իրողութեան հավաստումն է, թե Անավարդեցու Հայսմավուրբը վերախմբագրված է Տեր-Խարայելի ժողովածուի հիմքի վրա՝ տերունական տոնակարգի լատինադասով և դասավորմամբ:

Խնդիրն այստեղ հասկանալիորեն այն չէ, թե տոների օրերը տարբեր են տարբեր ժողովածուներում, այլ այն, որ լատինադասով կողմնորոշումը, ըստ խմբագրի ծրագրային փոփոխութեան, պետք է ծառա-

⁴⁹ Օրմանյան Մ., հ. Բ, էջ 1752—1753:

⁵⁰ Նույն տեղում, էջ 1753:

⁵¹ «Բաղմավէպ», 1949, էջ 58:

յեր հայ և լատին եկեղեցիների մերձեցմանը, որ Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի քաղաքական կողմնորոշման ամինացայտուն արտահայտություններից մեկն է: Թերևս սա է պատճառը, որ Անավարդեցու Հայսմավուրքի ընթերցվածային տարբերությունները շատ մեծ չեն, նրանք այնպիսի որակ չեն կազմում, ինչպիսին դիտվում են Կիրակոս Արևելցու և հատկապես հաջորդ՝ Գրիգոր Մերենց հալթեցու ժողովածուներում:

Մաշտոցյան Մատենադարանում Գրիգոր Անավարդեցու խմբագրության ձեռագրերի առաջմ երկուսն ենք հայտնաբերել՝ 7529 և 4873, որոնցից առաջինը 1326 թվականի, գրեթե հեղինակին ժամանակակից ձեռագիր է, և 4873—ժէ դարի, որ ըստ Մատենադարանի Ձեռագրաց ցուցակի Տեր-Խսրայիկ խմբագրությանն է պատկանում²:

ԳՐԻԳՈՐ ՄԵՐԵՆՑ ԽԱԹԵՑՈՒ ՀԱՅՍՄԱՎՈՒՐԷՐ

Գրիգոր հալթեցու Հայսմավուրքը ճանաչելի է դառնում նույնիսկ արտաքինից՝ ծավալի և ընդգրկման մեծությամբ, ոչ պակաս, քան ձեռագրային 700 թերթ: Ծավալի մեծությունն առաջացել է ոչ միայն նյութերի հավելումից, այլ նաև ներառված ու հայտնի ընթերցումների նոր՝ ծավալուն շարադրանքից: Ինչպես ասվել է արդեն իր տեղում, Կիրակոս Արևելցու Հայսմավուրքի խիստ համառոտ խմբագրությունը, որը մատենագրության մեջ ոչ պատահականորեն անվանվել է նույնիսկ «Տօնացոյց Այսմաւորք ըստ Կիրակոսի վարդապետի շարագրութեան»³, պատճառ է դարձել Հայսմավուրքի մի նոր ընդարձակ խմբագրության: Այդ ընդարձակ Հայսմավուրքի հեղինակն է Գրիգոր Մերենց հալթեցին:

Անշուշտ, հալթեցու ժողովածուի ընդարձակածավալ լինելը չէ սոսկ նրա էական տարբերությունն ու լայն տարածման պատճառը: Բավական է ասել, որ սկսած XV դարի առաջին քառորդից, երբ ճանաչում ստացավ հալթեցու ժողովածուն, Հայսմավուրքային մյուս խմբագրությունների ընդօրինակումները նվազագույնի հասան, մինչդեռ հալթեցու ժողովածուի հարյուրավոր օրինակներ ողողեցին ողջ Հայաստանը և առ այսօր պահպանվում են ձեռագրական պահպանում: Միայն մեր՝ Մաշտոցյան Մատենադարանն ունի հալթեցու Հայսմավուրքի ավելի քան 200 օրինակ: Պատահական չէ նաև, որ հենց հալթեցու Հայսմավուրքը բոլոր խմբագրու-

² Տե՛ս Ցուցակ Մատենադարանի, հ. Ա, էջ 1306:

³ Տաշյան Ն., էջ 490:

թյուններից առաջինն է հրատարակության արժանացել դեռևս 1706 թվականին և այն էլ մի քանի անգամ⁵⁴:

Ինչպես նշում է Գրիգոր իլաթեցու Հայսմավուրբով հատուկ զբաղվող Ս. Մարաբյանը, «իլաթեցու Հայսմավուրբն ունի ավելի քան յոթհարյուր միավոր...»⁵⁵:

Ըստ ուսումնասիրողի իլաթեցին «վերաշարադրել է և հավելումներ կատարել հայ իրականության վերաբերյալ նախկինում շարադրած վարքերի ու վկայաբանությունների մեջ, լեզուն դարձրել ժամանակակիցներին ավելի հասկանալի»⁵⁶: Այստեղ Ս. Մարաբյանը հատկապես ծանոթագրում է, թե «վաղուց նկատված է, որ Ծերենցի Հայսմավուրբում, նախորդների համեմատությամբ, շատ են «ազգային վիպասանությունը» (Ա. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալեպի և Անթիլիասի..., Հալեպ, 1936, էջ 332)»⁵⁷:

Կանգ առնելով իլաթեցու Հայսմավուրբի պատմական արժեքի վրա, ուսումնասիրողը իրավացիորեն գրում է. «Մեկ հարյուրից անցնող այս կարգի գործերը և հին վարքերի, վկայաբանությունների ու հիշատակների վերախմբագրումներն ու հավելումները պատմական հարուստ նյութ են պարունակում:

Հայսմավուրբը լրացնելով իրական պատմություններով, իլաթեցին այն դարձնում էր մեր ժողովրդի պատմության ուշագրավ սկզբնաղբյուր: Ի՞նչ մինչև իլաթեցին Հայսմավուրբի մեջ վկայությունների կարող էին մուծել միայն նշանավոր վարդապետները: Հատուկ հանձնարարությամբ ու սահմանափակ ծավալով, ապա իլաթեցուց հետո այն կարող էր անել յուրաքանչյուր գրիչ, եթե նա ականատես կամ ականջալուր էր եղել որևէ նոր վկայության: Օրինակ, 1536 թ. Գաբրիել գրիչը Զեյթունում իր ընդօրինակած Հայսմավուրբի հիշատակարանում գրում է. «Գրեցաւ ի լաւ և յընտիր օրինակէ՝ որ ասի Մերենց՝ և այլ աւելի քան զնորայն, զի շատ նոր վկայք աստ զրեցան՝ և հարստացաւ գիրքս այս, քան զնորայն»⁵⁸:

⁵⁴ «Գիրք որ կոչի Այսմաւորք», Կ. Պոլիս, Գրիգոր Մարզվանեցու տպարան, 1706, 1708, 1730... Թվականներին տպագրված: Հասկանալիորեն իլաթեցուց հետո տպագրության է արժանացել Տեր-Իսրայելի հիմքի վրա վերաստեղծված Գրիգոր Անավարդեցու Հայսմավուրբը՝ Տեր-Իսրայելի անվամբ (Կ. Պոլիս, 1834):

⁵⁵ Տե՛ս Մարաբյան Ս. Գրիգոր իլաթեցու պատմագրական երկերը, «Պատմա-քաղաքական հանդես», 1977, № 2, էջ 139:

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Նույն տեղում, էջ 132—133:

Այնուհետև. «Ինչպես իրականությունից վերցրած դեպքերի շարա-
դրանքով, այնպես էլ ժամանակի հրատապ հարցերի պատասխանները
անցյալի մատենագիրների երկերից բաղկելով և Հայսմավուրբում մոծե-
լով, Գրիգոր իշխանիցին այդ ժողովածուի համապատասխան մասերը
դարձրել է հայ ժողովրդի պատմության հավաստի մի աղբյուր, որի ու-
սումնասիրությունը նոր փաստերով հարստացնում է հայ պատմագրու-
թյունը, նպաստում առանձին հարցերի պարզաբանմանը»⁵⁹:

Հեղինակը խնդրի ուսումնասիրության առանցք դարձնելով հատկա-
պես պատմական արժեքը, թեթևակի է անդրադարձել իշխանու Հայսմա-
վուրքի գրական-գեղարվեստական արժեքին:

Մինչդեռ Գրիգոր իշխանու Հայսմավուրքի լայն ժողովրդականու-
թյան պատճառը նրա ընթերցվածների բարձր գեղարվեստականությունն
է ու ժողովրդական բնույթը: Վիպապատում շարադրանքն ու բանահյու-
սական նոր, ընդարձակ պատումների ընդգրկումը, տեղավայրերի, տեղա-
նունների ժողովրդական մեկնությունը, կերպարների ոչ սոհմիկ ծագումն
ու անարտոնյալ վիճակի մեջ նրանց հերոսացումը, ժողովրդի կյանքի ու
բարքի, կենցաղի, հոգեբանության դրսևորումները, դուրս բերեցին այդ
ժողովածուն արարողական անձուկ սահմաններից և այն դարձրին ժողո-
վրդի հոգևոր կյանքի թև՝ արտահայտություն և թև՝ սնունդ:

Իշխանու Հայսմավուրքը նախորդ խմբագրություններից տարբեր-
վում է նախ՝ գեղարվեստական շարադրանքով և ապա մեկ այլ ուշագրավ
հատկանիշով. եթե նախորդ ժողովածուների ընթերցմունքների հերոս-
ներն են ժողովրդի կողմից սխբացված հեղինակությունները, ապա իշա-
նու հերոսները, սրանցից բացի, նաև ժողովրդի ծոցից դուրս եկած ան-
հայտ, «աննշան» մարդիկ են, ժողովրդական կերպարներ⁶⁰: Բավական է
հիշել միայն Հայսմավուրքներում տիրակալորեն բազմած մեծանուն փա-
ռապանծ գործիչների կողքին իշխանու ջանքերով տեղ ղբադեցրած Հիմար
Վանեցուն, Թամար Մոկացուն, Խառաբաստի ծնունդ Նղիսաբեթ Նահա-
տակին, Մելիքսեթ և Կարապետ վանեցիներին և այլ «նորոց վկայից սըր-
բոց, որք եղևն ի մերում ժամանակի»: Միջնադարյան ժողովածուի այս
«դեմոկրատացումը» XV դարում հայ միջնադարյան արձակի ուշագրավ
երևույթներից մեկն է:

⁵⁹ Նույն տեղում, էջ 135—136:

⁶⁰ См. Памятники армянской агнографии. перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, Ереван, 1976, стр. 144.

Իբրև գեղարվեստական ստեղծագործություն հլաթեցու ժողովածուն, անշուշտ, ամենահարուստն է հայսմավուրբային բոլոր խմբագրություններից մարդկային կերպարների, հոգեբանական դրսևորումների, դրամատիկ բախումների, լեզվաուճական ժողովրդաբանությունների առումով, բայց և ամենահեռացածը բուն ժողովածուի արարողական բնույթից: Այդ իսկ պատճառով Հայսմավուրբ ժողովածուների գաղափարագեղարվեստական հատկանիշները վերլուծելիս, մենք օգտվել և օրինակները քաղել ենք առավելապես հայսմավուրբային վաղ խմբագրություններից (Տեր-Իսրայել, Անավարդեցի, Կիրակոս Արևելցի), Գրիգոր հլաթեցունը համարելով դրանց զարգացման առաջել ուշ, բայց բնականոն արտահայտություն: Պատահական չէ այն ափսոսանքը, որ այդ առթիվ հայտնում է հայ սըրբախոսությունների գիտակ Մ. Ավգերյանը: Խոսք բացելով Հայսմավուրբ ժողովածուի կրած փոփոխությունների մասին ընդհանրապես, նա քրննադատական խոսք է ուղղում հետագա խմբագրիչների հասցեին, մեր իրականության մեջ էլ հայսմավուրբային շեղումներ տեսնելով Գրիգոր Մերեցի հլաթեցու Հայսմավուրբում⁶¹: Անդրադառնալով վաղ Հայսմավուրբների շարադրանքին իբրև «առաել հարթ ու հայկաբան, և ուրիշ-ուրիշ գեղեցիկ համառօտելալ ...վաշելուշ ոճով», նա քնարական զեղումով իր քննադատական վերաբերմունքն է ցույց տալիս հատկապես հլաթեցու ժողովածուի նկատմամբ. «Մինչ զի,—զրում է նա,—երանի թէ այս օրինակ լինէր հանդիսացեալ յազգին, փոխանակ օրինակի հլաթեցույն, յորոյ ի ձեռս չերևի անկեալ օրինակս Տէր Իսրայելի... զսորայ ընտիր օրինակ ունիմք ի ձեռին զմի որոյ զյիշատակարանն արժան է այսր արձանագրել»: Եվ բերում է Տեր-Իսրայելի հիշատակարանը⁶²:

հլաթեցու բանահյուսորեն հարուստ ժողովածուի նկատմամբ Ավգերյանի, ինչպես նաև Փեշումալճյանի այս բացասական վերաբերմունքը կարելի է բացատրել նրա ոչ վարքագրական զուսպ շարադրանքով, նրա վիպապատում բնույթով:

Այսպիսով, մեկ անուն կրող «Հայսմավուրբ» ժողովածուն հայ իրականության մեջ անցնում է պատմական զարգացման մի ուղագրավ ուղի, որ կարելի է ներկայացնել հետևյալ պատկերով.

⁶¹ Ավգերյան Մ., հ. Ա., էջ 274:

⁶² Տե՛ս սույն գրքի Հավելած, էջ 147—148:

1. Գրիգոր Վկայասերի Տոնամակ Հովսեփ Կոստանդնուպոլսեցի
Ճաշոցի մեջ հայկական տոների հունական Հայսմավուրֆի
ներմուծում քարգմանություն

2. Տեր-Իսրայելի Հայսմավուրք—հայկական տոների ներմուծում
հունարենից հայերենի քարգմանված Հայսմավուրֆի մեջ (սկս. հունվար
ամսով):

3. Կիրակոս Արևելցու Հայսմավուրք—ա) Արևելյան (ասորա-պարս-
կական, նաև ժամանակակից հայկական) տոների լրացում Տեր-Իսրայելի
Հայսմավուրֆում: բ) Կիրիկյան խմբագրություն. լատին տոների ղուգա-
նեռ նշումներ հայկական Հայսմավուրքում: (Սկս. նալասարդ ամսով):

4. Գրիգոր Անավարդեցու Հայսմավուրք—Տեր-Իսրայելի Հայսմավուր-
ֆի լատինադավան դասավորություն (Զատիկ—Մնունդ—դեկտ. 25, սրան
համապատասխան տեղաշարժեր տոնակարգում, նոր տոներ (Մարիամ
Աստվածածնի հատուկ տոն, բուխր նահատակների հատուկ տոն): (Սկս.
նալասարդ ամսով):

5. Գրիգոր Մերինց իլաթեցու Հայսմավուրք=ժողովածուի դեմոկրա-
տացում, բանահյուսական շերտերի ընդլայնում, վիպականացում, ոչ
Հայսմավուրքային նյութերի ընդգրկում, շարադրանքի ծավալում: (Սկս.
նալասարդ):

Այս բոլորը մեկ անուն ունեցող ժողովածուի տարատեսակ խմբագրու-
թյուններն են՝ յուրաքանչյուրը կապված իր խմբագրի ազգային-քաղաքա-
կան, դեղագիտական սկզբունքների հետ և բոլորը միասին, անկախ խմբա-
գրությունից, կազմում են հայ միջնադարյան արաբոդական գրականու-
թյան այն շերտը, որ նաև հայ գեղարվեստական արձակն է ներկայա-
ցնում:

Հայսմավուրքային խմբագրությունների այս էական, բայց ուրվա-
զծային տարբերակումներով չեն սպառվում Հայսմավուրքների մեջ նաև
այլ միջամուխությունների հնարավորությունները: Հայ մատենագրության
մեջ ակնարկներ կան նաև Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու
շանքերի մասին այդ քնազավառում, բայց դրանք թերևս մասնակի բարե-
փոխումներին են վերաբերում և հնուր են Հայսմավուրքի ամբողջական
խմբագրություն ներկայացնելուց⁶³:

⁶³ Այդ տարատեսակ ընդգրկնակումների, այսպիսի փոխներթափանցումների բազ-
մազանության մեջ իր լիզվառճական աստղծով ու գեղագիտական միասնությամբ առանձ-
նանում է կիրակոսյան խմբագրության առավել ընդարձակ շարադրանքով մի

Բայց որքան էլ տարատեսակ ու բազմազան են Հայսմավուրքի ժողովածուները, նրանք ունեն կիրառական ընդհանուր բնույթ՝ դրանք եկեղեցում ընթերցվելիք ժողովածուներ են, որոնք իրենց տարատեսակությամբ հանդերձ ամբողջական են և թեև չափերով տարբեր, բայց ունեն ընդհանուր պատմանանաչողական և գեղարվեստական արժեք, որին և անդրադառնում ենք ստորև:

Խումբ 1339, 4512 ձեռագրեր, որ հնդինական կուռ հայացքի կնիք է կրում և ներկայացնում մի դարմանալի ներդաշնակ հավաքածու հայ Հայսմավուրքալի գրականության մեջ:

ՀԱՅԱՄԱՎՈՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Հայ միջնադարյան արարողական ժողովածուների մեջ Հայսմա-վուրքները ուրույն տեղ ունեն իրենց պատմական ու գրական արժեքով: Ծիշտ է, ժողովածուի էությունը կազմում է եկեղեցական տոնակարգը, սակայն, ըստ էության, դա կյանքում կատարվող դեպքերի արձագանքն է եկեղեցական տոնակարգի մեջ և յուրատեսակ մի արտացոլում հասա-կական ու մարդկային հարաբերությունների: Ավելին, դա դրսևորումն է ոչ միայն պատմական որոշակի ժամանակաշրջանի երևույթների, այլ ողջ քրիստոնեական միջնադարի իրադրությունների: Հայսմավուրքում տեղ են գտել ինչպես վաղ քրիստոնեական կյանքի անդրադարձումները, այդպես էլ հայ ողջ միջնադարն իր ուրույն հարաբերություններով: Եվ, օրինաչա-փորեն, վաղ քրիստոնեական շրջանին վերաբերող նյութերը ընդհանուր պատմական արժեք ունեն, մինչդեռ հայ միջնադարն անդրադարձնող ընթերցմունքները որոշակի արտացոլումներն են հայ կյանքի: Այս առու-մով Հայսմավուրքները մի տեսակ հանրագիտարանային ժողովածուներ են, որոնք գաղափար են տվել միջնադարյան ունկնդրին (կամ ընթերցո-ղին) թե՛ համաշխարհային պատմության ու ակնառու դեմքերի մասին և թե՛, առավելապես, ճանաչելի դարձրել ազգային կյանքի այլևայլ կողմեր՝ նրա հոգում անմոռանալիորեն դրոշմելով տոնելի դեպքեր ու դեմքեր: Տե-րունական և համաքրիստոնեական տոների կողքին Հայսմավուրքները ներառել են հայ ժողովրդի ճակատագրի մեջ բախտորոշ այնպիսի իրա-դարձությունների հիշատակներ, ինչպիսիք էին քրիստոնեության մուտքը Հայաստան (Գրիգոր Լուսավորչին նվիրված տոներ), հայ գրի ու գրա-կանության սկզբնավորում (Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին, Թարգմանիչներին նվիրված տոներ), ազատագրական պայքարի պատմու-թյան էջեր (Վարդանանց և Ղևոնդյանց տոներ), արաբական տիրապե-տության շրջանից վահան Դողթնացու և Նախիջևանի նահատակների, սելջուկ-մոնղոլական շրջանից՝ Խոսրով Գանձակեցու և Հովսեփ Դվնեցու նահատակության պատմություններ, մեծ գործիչներին՝ Ստ. Սյունեցու, Գրիգոր Նարեկացու, Պահլավունյաց տոհմի և Գրիգոր Վկայասերի, Ներսես

Շնորհալու, Գեորգ Սկեռացու կենսագրություն-վարքեր և բաղմամբիւ մեծ ու փոքր հիշատակելի դրվագներ, որոնց շնորհիւ աղղային հիշողության մեջ հառնում և ամրապնդվում էին անցյալի էջեր ու կերպարներ, արթուն պահելով սերունդների հայրենասիրական ոգին:

Ժողովրդի պատմության ընթացքի հետ մեկտեղ Հայսմավուրը էին մտնում նորանոր իրադարձությունների արձագանքներ ու նորանոր օրվա հիշատակներ. և այսպես ամեն մի ժողովրդի տոնակարգում յուրովի:

Այս տիպի նյութեր ընդգրկել են նաև միջնադարի այլ ժողովածուներ, բայց Հայսմավուրը սրանցից տարբերվում է ընդգրկվող նյութի հարստությամբ՝ թե՛ քանակի առումով և թե՛, դրա հետ կապված, կերպարների բազմազանությամբ: Եթե, օրինակ, Ճառքնտիրներում ընդարձակ ճառերի պատճառով հնարավոր է եղել անդրադառնալ ոչ մեծաքանակ տոների, հիմնականում տերունական կամ առանձին տոների գեմքերի սրբախոսությունների, ապա Հայսմավուրքում ամենօրյա, մեկից ավելի նշվող տոներն ու համառոտ ընթերցումները հնարավորութուն էին ընձեռում բազմամբիւ ու բաղմատեսակ ընդգրկումների: Սրա հետևանքով Ճառքնտիրների ընդարձակ նյութերի կողքին Հայսմավուրքում մենք տեսնում ենք գերազանցորեն համառոտ պատմված հայսմավուրբային վարք ու վկայաբանություններ: Նույնը պետք է ասել նաև Տոնապատճառ ժողովածուների մասին, որոնք տոների առիթը կամ պատճառները բացահայտող ժողովածուներ էին, և, ըստ հեղինակների հայեցողության, ընդգրկում էին նախ-ընտրած տոների շուրջ տերունական կամ թե սրբախոսական արձակ պատումներ, շատ հաճախ հանրահայտ գործիչների ճառեր ու վարք-կենսագրականներ:

Այստեղ խոսք չի կարող լինել սրանցից որևէ մեկի առավելության կամ պակասի մասին, քանի որ յուրաքանչյուրը ստեղծվել է տվյալ ժողովածուի պահանջով և այդ առումով երկուսն էլ բնորոշ են իրենց ժողովածուներին. Հայսմավուրբային վարքը արարողության ժամանակ բարձրաձայն ընթերցվելու համար էր նախատեսված, մինչդեռ Ճառքնտիրը արարողությունից դուրս ընթերցանության նյութ էր տալիս, և նրա ծավալը սահմանափակված չէր ժամանակի առումով: Հայսմավուրքների նյութերը շատ անգամ քաղված կամ ընդօրինակված էին հենց Ճառքնտիր կամ Տոնապատճառ ժողովածուներից, այնպես որ նյութերի համընկնումը տարբեր հավաքածուների համար շատ օրինաչափ ու բնորոշ է: Հայսմավուրքը արարողական լինելով կաշկանդված էր ծավալային շրջանակներով, սակայն դրա փոխարեն ավելի բազմազան նյութերի ընդգրկման հնարավորություն և անհրաժեշտություն էր առաջադրում: Ուստի և դե-

զարվեստական տեսակետից, անշուշտ, շատ ավելի նյութ տալիս են Ճառքնտիր (Четыи Мннен) ժողովածուները, ինչպես նաև Տոնապատ-ձառները, որոնք տոների և սրբերի տոնի հիշատակի առթիվ գրված երկարապատում վիպումներ են՝ մանրամասն նկարագրություներով ու դրվագներով հագեցած: Ճառքնտիրներում և Տոնապատձառներում տեղ գրտած այս սյիշատակ տոնիս պատմությունները մեր միջնադարյան գեղարվեստական արձակի փայլուն դրսևորումներից են՝ արդեն դիտված հատուկ հետազոտությունների մեջ¹:

Հայամավորքները նույնպես ուշագրավ հուշարձաններն են իբրև միջնադարի գեղարվեստական արձակի ուրույն արտացոլումներ: Տոնի առթիվ ընթերցվելիք նյութը շարագրվել է ոչ միայն ճանաչողական-ուսուցողական նպատակով, այլ, որ մեղ առավել հետաքրքրողն է, մատուցվել է ունկնդրին դաստիարակելու, բնորոշիակման մղելու միտումով. «Սրբի կյանքը դիտվում է իբրև օրինակ, որն արժանի է բնորոշիակման»,— իրավացիորեն նշում է ռուս ակադեմիկոս գիտնական Սպերանսկին²: Իսկ այդ նշանակում է, որ պատմվող նյութը պետք է ունենար գեղարվեստական երկի ինչ-որ հատկանիշներ՝ հերոսին կերպավորելու և նրան ազդեցիկ դարձնելու համար:

Եթե հայ գեղարվեստական արձակի առաջին դրսևորումները տեսնենք հայ պատմագրական հուշարձաններում, ապա իբրև բնորոշ առանձնահատկություն պետք է նշենք պատմական անձնավորությունների ինչ-որ չափով վերացարկված կերպավորման համակարգը, որը զուրս է գալիս այսօրվա առումով զուտ գիտական պատմական երկի սահմաններից և մտնում է գեղարվեստական գրականության ոլորտները: Պատմական գործիչների կերպավորման այդ համակարգը մի կողմից ակունք է առնում ազգային բանահյուսական ավանդներից, մյուս կողմից՝ այն ունի գրավոր մշակութային նախահիմք, ինչպիսիք էին զլխավորապես անտիկ պատմագրությունը և բյիստոնեական գրական մշակույթը: Երկու գիծն էլ առկա է հայ պատմագրության մեջ, երկուսն էլ տարածված ժամանակի հոգևոր կյանքում:

Հայ հնագույն արձակի երկրորդ կարևորագույն տեսակը՝ սրբախոսու-

¹ Տե՛ս Աղալրեղյան Մ., Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, էջ 28—74, 77—91: Տե՛ր-Ղալրյան Քե., XI—XV դարերի հայ վարքագրությունը, Երևան, 1980, էջ 17—29, 105—122:

² Сперанский М. Н., История древней русской литературы Киевского периода, Москва, 1911, с. 168.

թյունը (վկայաբանություն, վարք) ունի համաքրիստոնեական ավանդույթ, որի մեջ դարձյալ շատ բան կա առնված բանահյուսությունից, բայց այն էապես տարբեր է քրիստոնեական իդեալների կերպավորման առումով:

Մրանց կողքին միջնադարյան դրականության մեջ առկա է մարդիդեալի կերպավորման մի երրորդ արգասիք, որ նախորդների հետ ընդհանրություններ ունենալու հետ մեկտեղ, էապես տարբեր է նրանցից. դա դրական կերպարի, պայմանականորեն տալած, հայսմավուրքային վերացարկված արդյունքն է, որ դարձյալ թեև ծայր է առնում հայ հեթանոսական-բանահյուսական, անտիկ ու հայ պատմագրության, նաև քրիստոնեական սրբախոսությունների վաղ ակունքներից, սակայն իր դրսևորմամբ մնում է յուրահատուկը հայ արարողական դրականության մեջ և եղակին՝ հայ գեղարվեստական արձակում:

Ո՞րն է հայսմավուրքային դրական հերոսի կերտման առանձնահատկությունը, և ինչո՞ւ է այն տարբեր կերպավորման մյուս սկզբունքներից:

Բայց մինչ այդ անդրադառնանք այդ ժողովածուների պատմաճանաչողական արժեքին:

ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՊՍՏՄԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Հայսմավուրք ժողովածուների ճանաչողական լայն բնույթը պայմանավորված է նրա նյութի ընդգրկման մեծ շառավիղով: Եթե տերունական տոներից բացի այնտեղ հատուկ հիշատակի օր էր սահմանվում համաքրիստոնեական կամ հղրային՝ ղանաղան կողմերում ճանաչված և կեղեցու գործիչների պատվին, ապա պարզ է ըստ ինքյան, որ Հայսմավուրքը տոնի ընթերցմունքում դադափար պետք է տար այդ գործիչների հայրենիքի, սրբի օրոք իշխող թագավորների, զորապետների, նրանց հավատալիքի, դավանանքի և այլ բնապատմական ու կենցաղային պայմանների մասին, որոնք ուղղակի նպատակ չհետապնդելով՝ կողմնակիորեն զարգացնում էին ընթերցողին կամ ունկնդրին և գիտելիքներ տալիս համաշխարհային պատմության առանձին կողմերի, ճանաչված դեմքերի և շատ այլ հարցերի մասին: Անհավատալիորեն շատ են տեղեկությունները աշխարհի ֆիզիկական քարտեզի վերաբերյալ. Հայաստանի պատմական աշխարհագրությունից դատ, այնտեղ տեղեկություններ կգտնենք աշխար-

հի վանազան մայր ցամաքների երկրների ու ժողովուրդների մասին: Դրանք իրական աշխարհում գոյություն ունեցող աշխարհամասեր, ազգեր ու ժողովուրդներ են, որոնք, որքան էլ հեռու և տարբեր, բայց իրական են, ինչպես իրենց կողքին ու մեջներն ապրող ասորին, հույներ, արաբը և այլն: Եվ որքան էլ Հայսմավուրքներում ամփոփվող նյութը նպատակ ունի ամրապնդելու սերը վերերկրայինի՝ Քրիստոսի և նրա գործի նըկատմամբ, այն ուղղակիորեն երկրի հետ էր կապում ունկնդրին՝ նպաստելով նրա աշխարհաճանաչողությանը և մտահորիզոնի լայնացմանը:

Առաջին հերթին աշխարհագրական ընդգրկման տեսակետից: Եթե հայ ճանաչված սրբի՝ Գրիգոր Նարեկացու կյանքը Հայսմավուրքը սկսում էր նրա գործունեության վայրից՝ «Սուրբ հայրս մեր աստվածաշնորհ քահանայա և կրօնաւորս Գրիգոր էր ի նաբեկայ վանից ի Հայս, ի գաւառն Վասպուրականի», ապա հասկանալիորեն այդ պետք է արվեր առավել անժանոթ գործիչների վերաբերյալ. և ահա՝ «Սուրբն Եփրեմ՝ սբանչլի արդիւնաբան և տիեզերալոյս վարդապետն ասորի էր յաղգէ, յԱմիթ քաղաքէ», «Յայսմ աւուր վարք երանելոյն Ունեսիմա... Սորա ծնողքն էին ի պաղատէ կեսարացոց ի գեղջէն Կառինէ...», «Յայս աւուր վկայութիւն սրբոյն Անաստասիա պարսկին... ի գաւառէն Ռալզիւա, ի գեղջէն Ռաշմունի»³, «Յայսմ աւուր սուրբ Ոկրատիոս քահանա և սրբուհին Թեոդոսիա կատարեցան սրով յԱնկուրիա քաղաքին»⁴: Այսպես և մեր այլ նահատակների մասին. «Վկայն Քրիստոսի Յովսէփ էր ի տաճիկ տոհմէ ի Դրլին քաղաքին հայոց, մի ի գեղիցն, որ նորաշէն անուանեն»⁵: «Բարձեալ տարան զնշխար սրբոյն ի վանքն, որ կոչի Հաւուց թառ, հանդէպ Գառնու...»⁶: Եվ բազմաթիվ այլ տեղեկություններ «Մարդակէր և պղծազոհ բարբարոսքն, որք բնակեալ էին յԱւաբիա միջև յԵփալտոս և յանապատս Յորդանանու...»⁷, «Երանելին Սաղոբ Լպիսկոպոս Սաղիքեայ և Քտեսիփոնի և տարան ի քաղաքն Բիթլալատ...»⁸, «Պատմութիւն սուրբ և փառաւորեալ վկայիցն քրիստոսի Ռոմանոսի և Դաւթի, որ ի յՌուզ՝ նահատակեցան

³ Զեռ. 7365, էջ 61բ:

⁴ Զեռ. 1339, էջ 151ա:

Նույն տեղում, էջ 19բ:

⁶ Նույն տեղում, էջ 142ա:

Զեռ. 7463, էջ 65ա, ձեռ. 7529, էջ 14բ:

⁸ Զեռ. 9585, էջ 252ա:

⁹ Զեռ. 7463, էջ 301:

¹⁰ Զեռ. 1339, էջ 134բ:

¹¹ Նույն տեղում, էջ 171բ:

յանօրէն կըբօրէն իւրեանց... և մինչդեռ էր ի խորանն իւր արտաքոյ քաղաքին Կիւլալոյ (Կիւն)...»¹², «Վկայութիւն սուրբ եպիսկոպոսին ընկելուց Թումասու»¹³, «Սուրբն Թէոդոտոս եպիսկոպոս էր Կիրենայ ի կղզոջն Կիւլրոսի»¹⁴, «Փառաւորեալ վկային Քրիստոսի Անթիպայ եպիսկոպոսին, խաղեցին պատուով ի նոյն քաղաքին Պերգամայ»¹⁵, «Յայսմ աւուր սուրբ վկայն Քրիստոսի Դանաքոտոս ընթերցող եկեղեցոյն ի քաղաքին Ադունի, որ է յարեմուտս մերձ ի Բուդարս...»¹⁶, «...սուրբ վկայն Աղեքսանդրոս էր ի քաղաքէն Պոնդիոզոնոյ՝ մերձ ի Հոռմ և յոյժ նեղէր և բռնադատէր զնա Տիրերիոս զոհել կռոցն... զնաց դատաւորն ի Քարտագէն քաղաքն... անտի տարան զսուրբն... ի Մարկիանուպոլիս... անտի տարան զնա ի Բիրակ, ի տեղին, որ կոչի Դրիզիպառայ»¹⁷, «Եւ ալիք ծովուն հանին զնա ի Սպանիա ի վիճակն իւր»¹⁸, «Երանելի Գրիգորիոս էր ի քաղաքէն Ալուականդացոց, որ է յարեմուտս ի Սիկիլիա կղզոջն...»¹⁹ և այլն, և այլն: Ինչպէս տեսնում ենք, դեռևս մի քանի ձեռագրից, միևնույն խմբագրությունից քաղված ընթերցմունքները տեղեկություններ ևն տալիս աշխարհամասերի, երկրների, քաղաքների և այլ տեղավայրերի մասին: Որքան էլ ժողովրդական ունկնդրի համար դրանք չկոնկրետացված հասկացություններ են, բայց իմացություններ ու գաղափար են տալիս ֆիզիկական աշխարհագրությունից: Քիչ գիտելիքներ ունեցողներն էլ միևնույն ընթերցմունքների շնորհիվ ընդլայնում էին իրենց իմացությունների շրջանակը, որով անվերապահ է դառնում այս ժողովածուների ճանաչողական արժեքը թեկուզ նշված մեկ բնագավառի գծով:

Բայց չէ՞ որ սրբի կյանքը պատմողները նրա գործունեության վայրից զատ լրացուցիչ շատ տեղեկություններ էին տալիս նաև պատմությունից. «Յայսմ աւուր Մմբատայ հայոց Թագաւորի: Առաջին Թագաւոր հայոց յազգէն Բագրատունեաց եղև Աշոտ... և իշխանն Իսմայելի Արղլա առաքեաց նմա թագ՝ ի ձեռն Յուսուփայ զօրաւարին իւրոյ ի լուեալ արքայն Յունաց Վասիլ՝ առաքեաց և նա թագ Աշոտոյ և պսակեալ նա յերկուց Թագաւորացն եղև ճոխ Թագաւոր և արար խաղաղութիւն և շինութիւն աշ-

¹² Նույն տեղում, էջ 230ր, ձև. 7433, էջ 403բ:

¹³ Նույն տեղում, էջ 232ա:

¹⁴ Նույն տեղում, էջ 174ա:

¹⁵ Նույն տեղում, էջ 211ա, ձև. 3658, էջ 172:

¹⁶ Նույն տեղում, էջ 147ա, ձև. 3658, էջ 130ա:

¹⁷ Նույն տեղում, էջ 173բ:

¹⁸ Նույն տեղում, էջ 174ա:

¹⁹ Ձև. 7463, էջ 108բ:

խարհին Հայոց»²⁰», կամ «Սբանչելի եպիսկոպոսն Մարութա էր յաւուրս բարեպաշտ արքային Թեոդոսի՝ որդւոյն Արկաղիոսի, և Յագկերտի պարսից արքային... և սուրբն խնդրեաց յարքայէն զի տացէ նմա հրաման յաշխարհէն պարսից ժողովել զնշխարս սրբոց առաքելոց և մարտիրոսաց... և շինեաց քաղաք յերկրին Մոփաց և անուանեաց քաղաք մաքտիւրոսաց, որ այժմ կոչի Մուփադղին»²¹։ Մեկ ուրիշ օրինակ. «Վկայութիւն Վկայիցն, որք ի պարսիկս կատարեցան։ Ամբարիշտ և անօրէն արքայն պարսից Սաբուրիոս, յորժամ զսիրելի թագադիրն իւր՝ զՆերսիսին Գուշթադատ էսպան, յոյժ տրտմեալ և բարկութեամբ լցեալ հրամայեաց զամենայն քրիստոնէիցն սրով սպանանել...»²², «Յորժամ Շապուհ հրապաշտ արքայն պարսից պատերազմեալ պաշտօնեաց զքաղաքն Վիգանդ...»²³, կամ «Երջանիկ և սուրբ հայրապետքս Դրիգոր և Ներսէս եղբարք էին հարազատք յազգէ սրբոյն Դրիգորի և ազգականք տէր Վահրամայ, որ Դրիգորէսն կոչեցաւ, զոր կոչէին Վկայաւէր, վասն պատուելոյ զվկայս և թարգմանելոյ քաղում ճառս ի հայ լեզու և ի գիր...», — և շարունակութեան մեջ, — «Իւ էհաս համբաւ իմաստութեան նորա յամենայն ազգս և Մանիլ կայսրն յունաց և փնսայ նորին Ալէքսն խնդրեցին ի նմանէ դաւանութիւն հաւատոյ»²⁴, «Յաւուրս Վաղեսի հերձուածող արքային էր Կիւրեղ և յառաջ արիանոս էր, յետոյ, եղև ուղղափառ»²⁵, «Սուրբ քահանայն Թէոդորոս էր ի Սեբաստիոյ հայոց... և սուրբ ի մանկութենէ կրօնաւորեալ անարատ վարուք և մատնեցին զնա անօրէն բռնաւորին թուրքաց Ալիբասանայ, որ էր յազգէն Դանըշմանեացն»²⁶ և այլն։

Դժվար չէ կուտել, որ այս քննարկումները ընդհանուր ճանաչողական արժեք ներկայացնելուց զատ, ինչ-որ դեպքերում պատմական աղբյուրի ուժ են ստանում։ Սրբախոսութեաններում²⁷ վարք-վկայաբանութիւններում պահանջոված տեղեկութիւնները ոչ միայն անձնավորութիւններին էին վերաբերում, այլև իրադրութիւններին, գործիչների կատարած գործերին, զրական-մշակութային ժառանգութեանն ու ավանդութիւններին ընդհանրապես²⁷, նույնիսկ հեթանոսութեան դեմ պայքարի

²⁰ Ձև. 1339, էջ 235ր, ձև. 7433, էջ 313ր, ձև. 2530, էջ 156ր։

²¹ Նույն տեղում, էջ 255ա, ձև. 3658, էջ 203ր։

²² Ձև. 2695, էջ 98ր, ձև. 3658, էջ 162ր։

²³ Ձև. 1339, էջ 264ա։

²⁴ Նույն տեղում, էջ 213ա։

²⁵ Ձև. 1339, էջ 195ա։

²⁶ Նույն տեղում, էջ 260ա։

²⁷ Վարքագրութիւնների պատմական արժեքի մասին տե՛ս Տեր-Խալվրյան ԳԵ., նշված աշխատութիւն։

հեռավոր հուշերն են արձագանքված հնագույն վարքերում. «Սուրբն Գրիգոր յորժամ կործանեաց զպատկերն Անահիտ կոռցն, խափանեաց զգարչելի տօն նորա և օրինադրեց յեկեղեցիս հայոց զայս տօնել սրբոյ կուսին Մաբիամու, զի մոռասցին զգործս պղծութեան և ուսցին զպարկեշտութեան վարս և փառաւորեսցի Տիրամայր», — պատմում է Աստվածածնի տոնի առթիվ նավասարդ 15-ի և օգոստոս 25-ի ընթերցմունքը²⁸։ Ուշագրավ տեղեկություններ ենք տեսնում այդ միեկույն շրջանի մասին 7433 Հայսմավուրքում. «Զորժամ լուսավորեաց սուրբն Գրիգոր զՀայս և զնաց ի քաղաքն Կեսարիա... Երբ ի դառնալն ի Հայս ընդ իւր ի նշխարաց սրբոյն Յովհանու Մկրտչին և շինեաց յանուն նորա յեկեղեցի և ի գաւառն Տարօնոյ ի տեղուջ մեհենից կոռցն, որ է մինչև ցայսօր բնակութիւն կրօնաւորաց։ Եւ զի սովորութիւն էր ամենայն յաշխարհին ի սկիզբն տարւոյն ի մինն նաւասարդի ամսոյն յանուն կոռցն յայնոցիկ զոհս և խնդրուածս խորախոթեամբ առնել, փոխեաց զայն երանելին և սահմանեաց տօն կատարել մեծի և յառաջընթաց Մկրտչին յեկեղեցի նորին, որ ի նոյն տեղոջն շինեցաւ...»²⁹։

Որքան էլ ավանդապատում է զրույցը, նրա մեջ պահպանված է հեթանոսությունից բրիստոնենության անցած Հայաստանի պատմական իրադրությունների հուշը։

Հիշենք Հայսմավուրքի տվյալներով Մաշտոցի վարքի աղճատված բնագրի ճշգրտումը և զրանից հանված պատմագիտական տվյալների նոր մեկնաբանության փաստը ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի կողմից.

«Եւ ետ հրաման թագաւորն այնմ կողման զօրականին՝ ժողովել մանկունս և տալ ի Մեսրոպ և զոռնիկ յաբճումնուստ, այլև քաղաք ասաց շինել ամբողջեան ի գաւառն Կարին՝ ըստ խնդրոյ Մեսրոպայ»³⁰։

Միջնագարում այդքան մատչելի չէր ձեռագիր գիրքը և շատ քչերին կարող էին ծանոթ լինել հայ պատմիչների գործերը։ Որքան էլ բաղձաթիվ ընթերցմունքներ քաղված լինեին պատմիչների գործերից, նրանք հրեմն վստահելի աղբյուր են հանդիսանում առավել հին ձեռագրական դիւարանից օգտված լինելու պատճառով։

Ընթերցմունքների մեջ պահպանված նման տեղեկությունները հրեմն ստանում են աղբյուրագիտական արժեք։ Այսպես, օրինակ, օրվա

²⁸ Ձեռ. 3658, էջ 14ր—15ա։

²⁹ Ձեռ. 7433, էջ 1ա։

³⁰ «Տեղեկագիրք», 1945, № 5, էջ 69—72, Փեշտմալնյան, հ. Ա, էջ 37։

տոնի նշման մեջ տրվում է նաև վարքագրի անունը. «Յիշատակ է նախնոյն Մեղբիսեդեկի ի գրոց սրբոյն Աքանասի»³¹, «Վկ. սրբոյն Մամասայ, զոր յիշատակէ սուրբն Գրիգոր Աստուածաբանն ի Նոր Կիրակէ ճառի»³², Կամ՝ «Յայսմ աւուր վարք երանելոյն Պեղիգեայ... Են և այլ սուրբ կանայք, որ անուանին Պեղիգեա, բայց սա յիշէ սուրբն Յոհան Ոսկէբերան և վասն սորա գրեաց ճառս գովասացութեան...»³³:

Գրիգոր Հռոմի Հայրապետի վարքագիրը վերջում նշում է նաև նրա գրական վաստակը. «Այս երանելոյս շնորհք գիտութեան տուա յԱստուծոյ և մեկնեաց զԱստուածաշունչ գիրս, զՀին և զՆոր կտակարանս, գրեաց և ի Յորա Ճառս և և այլ գիրս գրեաց հոռոմերէն, զոր անուանեն Ճառաբան գիրք սրբոյն Գրիգորի, զոր ի հունական լեզուն Դիաղողոս (Դիաղոգոս) կոչեն գրոյն»³⁴:

Առավել արժեքավորն, անշուշտ, մեր մատենագրության վերաբերյալ տվյալների հիշատակումն է.

«Եւ արար,— գրում է Նղիշն պատմիչի հիշատակի տոնին Հայսմավուրքի ընթերցվածը,— զմեկնութիւն արարածոց և Ճառս վասն շարչարանացն Քրիստոսի», որոնցից առաջինի հիշատակությունը մասնագիտական ուսումնասիրության առարկա դարձավ և մատենագիտորեն հաստատվեց³⁵:

Ուշագրավ տվյալներ է պարունակում Հայսմավուրքաին ընթերցվածը նաև Գրիգոր նարեկացու ժառանգության վերաբերյալ. «Սկիզբն արար,— գրում է վարքագիր ներսես Լամբրոնացին,— և խօսեցաւ զգիրս աղօթից ըստ ազգման խնդրոյ կրօնաւոր եղբարցս, բանս ինչ և արտաքոյ սորին ունիմք խօսս երանելոյս այսօսիկ Պատմութիւն կենսատու խաչին... ըստ այբուբենիցն տառից, զկնի որոյ գովեստ սուրբ Աստուածածնին և Ներբողեան առաքելոց դասուցն»³⁶ և այլն, և այլն:

Կարելի է պատկերացնել այս հաղորդման նշանակութիւնը նարեկացու Մատանի քննական բնագրի պատրաստման, թեկուզ և սոսկ գլուխների քանակի ճշգրտման գործում: Եվ բազմաթիւ այսպիսի տվյալներ, որոնք կարող են սպառիչ չլինել, բայց շատ բան պարզել բաղմաբանակ երկերի

³¹ Զեռ. 2695, էջ 79ա, ձեռ. 7463, էջ 235բ:

³² Զեռ. 7433, էջ 26ա:

³³ Զեռ. 1339, էջ 225ա:

³⁴ Զեռ. 7463, էջ 226ա: Տե՛ս մեր «Ներսես Լամբրոնացու Թարգմանած Գրիգոր Պապի պատմութիւնը» հոգովածը («Տեղեկագիր», 1958, № 12, էջ 95):

³⁵ Զեռ. 7433, էջ 40ա: Տե՛ս Խաչիկյան Լ., Կղիշի «Արարածոց մեկնութիւնը» դիտարկումն անտիպ աշխատութիւնը:

³⁶ Զեռ. 7365, էջ 61 բ, ձեռ. 1568, էջ 119ա, բ:

հղեինակների, թարգմանիչների, նրանց արած գործերի ու թողած հիշատակների մասին:

Բավականաչափ նյութ են տալիս Հայսմավուրբները նաև եկեղեցու պատմության, ազանդավորական գաղափարների ու պայքարի մասին. «Յայսմ աուր սուրբն Իսլատիոս եպիսկոպոսն Գանգրայ, յարիոնոսաց և ի նաւատիոս հերձուածողացն ի վիհ ընկեցեալ քարկոծեցաւ և աւանդեաց զհոգին իւր առ աստուած, վասն զի էր համախորհ առաջի ժողովոյն նիկիա»³⁷: Մեկ այլ վարքում՝ «Սա նզովեաց զպիղծն Արիոս հերձուածողն, զի ոչ ասէր զորդի ի բնութենէ հօր, ալլ աւաւած և կրտսեր և յետ ժամանակի եղեալ... Վասն այսպիսի պատճառանաց որոշեաց զնա սուրբ հայրապետն Պետրոս յեկեղեցոյ աստուծոյ»³⁸: Նրա տեսիլն անգամ զավանաբանական կնիք է կրում. «Տեսի յայսմ գիշերի զՔրիստոս և պատմուճան իւր պատառեալ յերկուս և ի լանջսն պնդեալ ունէր զպատուածն: Եւ ասեմ՝ Տէր, ո՞վ պատառեաց զպատմուճանդ, և էա ասէ՝ Արիոս»³⁹: Մեկ այլ վարքում հերոսները նահատակվում են, քանի որ համարձակորեն «խոստովանեցան զՔրիստոս ճշմարիտ Աստուած, հաւասար հօր և սուրբ հոգոյն»⁴⁰: Հայսմավուրբներում արտացոլվել է նաև եկեղեցիների պայքարը պատկերապաշտության խնդրում. 2695 ձեռագիրը «Սահմի ծգ և հոկտեմբեր իր» օրվա հիշատակում նշում է՝ «Ի քաղաքին Կոստանդինուպոլիս արքայն Կաւալինոս զերանելի ճգնաւոր կրօնաւորն Անդրէաս բռնադատէր՝ կոխել զտէրունական պատկերն և զնշխարս սրբոցն... և ձկնավաճառ ոմն էհատ փայտատու զաջոյ ոտն և աշնպէս աւանդեաց զհոգին»⁴¹: Միևնույն պայքարի արտահայտությունն է Գերմանոս Կոստանդնուպոլսի հայրապետի վարքում «Լեոն Իսուոլիոս արքայի» հետևյալ բնութագիրը. «Իսկ թագաւորն Լեոն սատանայական խորհրդով սկսաւ զտէրունական պատկերս և զնըշխարս սրբոց անգոսնել և բնկենուլ»⁴² և բազմաթիվ այլ տվյալներ հեթանոսական, վաղ քրիստոնեության և բուն քրիստոնեական կրոնների, ազանդների ու հերձուածողների մասին, որոնք եթե պատմական մեծ արժեք էլ չեն երկայացնեն առավել հիմնավոր հուշարձանների առկայության պայ-

³⁷ Ձեռ. 1339, էջ 92ա:

³⁸ Նույն տեղում, էջ 133ա:

³⁹ Նույն տեղում, էջ 133բ:

⁴⁰ Նույն տեղում, էջ 220բ:

⁴¹ Ձեռ. 2695, էջ 288բ:

⁴² Ձեռ. 1339, էջ 237 բ:

մաններում, գոնե միջնադարի մարդուն դադափար էին տալիս դրանց բոլորքն, տարբերություններն ու պայքարի մասին⁴³։

Հայսմավուրքները տեղեկություններ են տալիս նաև եկեղեցական տոնակարգում կատարվող փոփոխությունների մասին, երբ, ում միջոցով և ինչ նոր կարգ է մտել տոնակարգ. «Տօն է տեառն ընդ առաջին»,— փետրվարի 14-ի օրը նշում է Հայսմավուրքը և ապա ծանոթագրում. «Յետ ՇՄԳ ամաց ծննդեանն Քրիստոսի Յուստիանոս կայսր խաբեալ ի հրէէ միոջէ փոխեաց զայս տօն ի փետրուարի ժդ-իցն յբ նորին ամսոյ և խանգարեցին զամենայն ազգս։ Իսկ եկեղեցիք ուղղափառաց հաստատութեամբ պահեցին զօր ընկալան յառաքելոցն՝ տօնելով ի մեհեկի ը և փետրվարի ժդ ի փառ Քրիստոսի»⁴⁴։ Մեկ այլ դեպքում՝ Հռոմի Սեղբեստրոս հայրապետի մասին կարդում ենք. «Հրամայեաց, զի փոխեսցեն զՋատիկն ի չորեքստան լուսնին, որպէս զի յետ չորեքստան լուսնին՝ զկի-

ձևնց մի՝ Մատենադարանի 468 ձևագրի Հայսմավուրքի տոնակարգի ցանկով կարելի է դադափար կազմել ոչ միայն ժողովածուն կազմողի իմացությունների, այլև նրա մատուցած տեղեկությունների ճանաչողական արժեքի մասին։

Բերենք նշված ձևագրից մի րանի օրվա տոնի նշումներ.

Նաւաս. Ժր և յօգոստ. իր—Տօն է զլիսատման Յովհաննու
լատինն նոյնպէս Յովաննու զլիսատ

Նաւասար իր և սեկտ. է.—Նախատօնակ սբ ծննդեան ածածնին.

Յոյնք ի նոյն օր տօնեն սրբոյն Ստեփաննոսի Հռոմայ հայրապետի
նւ ըստ ասորու՝ Աբրահամու աւագակի և Թիոդոտայ...

85 ր Սեպտեմբերի ի է և հոռի ժր—Վկ. Կալիստրատոսի մեծի վկայի...

87 ա—Յայսմ աւուր մարտիրոսացաւ և սուրբ վկայն Մառինոս։

Ի տոյն՝ վկայութիւն Գալիանեայ կուսի.

Յոյնք՝ նահատա՝՝ Նպիֆարեոսի

Ըստ ֆռանկ Կողմայի և Դամիանոսի

լատինն սբ էբսուրերիի կալիսկոպոսի

113 ա—Մուտ է սահմի ամսոյն և ի հոկտ. ժ—

եւ ի Բրիտանիա սուրբ Եպիսկոպոսին Բաւրիին...

Յասուրիս՝ վկ. Յոհ-Դիմացոյ

էջ 101 ա Հոկտ. զ և հոռի իդ—Վկ. սբ Դրոնեսիոսի... Արիսպազացոյն.

Յայսմ աւուր յիշատակ է Կիրակոսի...

լատինն՝ սրբոյն Դիոնեսիոսի...

եւ ասորիք՝ սուրբ վկային Յավտոյի, որ է Ասեր...

Իսկ ի Հնդկիս տօնեն զՊանտալեոն վկայի... և այլն։

⁴⁴ Զեռ. 2695, էջ 37ա։

րակէն արասցեն Զատիկ»⁴⁵։ Եվ ամենևին պատահական չէ, որ Հայս-մավորքներից մեկում հանդիպում ենք այսպիսի ուշագրավ հիշատակագրության։ «Սուրբ հայրապետացն աղօթիւք և բարեխոսութեամբ փրկեա Քրիստոս Աստուած զեկեղեցիս Հայաստաննայցս և դամենայն հաւատացեալս ի հերձուածողական կարծեաց և մտածութեանց»⁴⁶։ Այս հիշատակագրութիւնն ինքնին շատ բան է ասում միջնադարում աղանդավորական շարժումների և նրա նկատմամբ հայ եկեղեցու վերաբերմունքի մասին։

Հայսմավորքներն իբրև հայ եկեղեցու տոնակարգի կարգավորիչներ այնպիսի պատմական հուշարձաններ են, որոնք արտաբուստ սոսկ արարողական թվալով, ըստ էութեան դադափարական-բաղաբական փաստաթղթեր են, որոնց մեջ ավելի, քան որևէ այլ տեսական աշխատանքում, որոշակիորեն սահմանագծվել են բուն հայ ժողովրդի և նրա տարբեր զանգվածների բաղաբական կողմնորոշումներն ու պատմական ճակատադրի հետ կապված դուտ աշխարհիկ միտվածքներ։

Բացի համաշխարհային պատմության, աշխարհագրության, պատմական դեմքերին, կրոնադավանարանական հարցերին վերաբերող առանձին տվյալներից, Հայսմավորք ժողովածուները ճանաչողական մեծ նյութ են տալիս նաև երկրների ներսում տեղի ունեցող դասային, սոցիալական հարաբերութիւնների ու պայքարի մասին. դրանք հաճախ հայանցիկ, վարքագրական հերոսի հետ անմիջականորեն կապ չունեցող տեղեկութիւններ են, բայց շատ բան են ասում ներպետական խժոժութիւնների, դասային հակամարտութիւնների, սոցիալական անհերգաշնակ կյանքի ու հարաբերութիւնների մասին. «Եւ ընդ աւուրս ընդ այնոսիկ,— պատմում է Հայսմավորքը,— ի բաղաբին Թեազդոնիկեցոց եղև խոռվութիւն ընդ իշխանս աբխունի և ընդ բաղաբացիսն և ընդղիմացան հրամանաց քագաւորին, զոր լուեալ մեծին Թեոդոսի բորբոքեցաւ ի սրտմտութիւն, հրամայեաց սուր շարժել ի վերայ հակառակաց ժողովրդեանն և զինուորքն հասարակաբար կոտորեցին զանմեղս և զմեղանշականս»⁴⁷։ Այստեղ կարեւոր չէ հեղինակի մեկնաբանութիւնն ու կողմնորոշումը, այլ դասային հակամարտության պատկերը և զինված բախումների արձանագրումը։ Նման փաստի ենք հանդիպում նաև քաղոց բ և դեկտեմբեր Ժ-ի՝ սուրբ Մինասի Տոնի հիշատակի

⁴⁵ Զեռ. 7529, էջ 105 ա։

⁴⁶ Զեռ. 1339, էջ 259 ա։

⁴⁷ Նույն տեղում, էջ 119 բ։

օրվա ընթերցմունքում. «Յաւուրս ամբարիշտ արքային Մաֆսիմիանոսի եղև խռովութիւն ինչ ի մեջ բաղաբին Աղեքսանդրացոց առ իշխանսն. և յուժալ թագաւորն առաքեաց այր մի իմաստուն... առ ի խաղաղացուցանել աղեքսանդրացոց իրն առ միմեանս...»⁴⁸: Նույնիսկ նահատակի աղոթքի և բարեմաղթությունների մեջ ներթափանցված է դասային նականարտությունների գաղափարը. «և մի՛ եկեսցէ ի վերա նոցայ սատանայական փորձութիւնք և մի՛ բռնութիւն և նեղութիւնք ի թշնամեաց կամ լիշխանաց»⁴⁹: Բազմաթիվ են սրբերի կյանքից զրվագներ, որոնք խոսում են տարբեր հասարակարգերում առկա նյութական, իրավական, բարոյական աններդաշնակ և անհավասար կյանքի մասին. Սաբինիոս նահատակին ներկայացնում են տեղի դատավորին. «և հարցանէր (դատաւորն) զանուն և զշնորհսն. և նա ասէ՝ քրիստոնեայ եմ և կոչիմ Սաբինիոս: Ասէ՝ դատաւորն. ծառայ ե՞ս, եթէ ազատ»⁵⁰: Դատավորի սոսկ հարցը ծառա կամ ազատ լինելու մասին ավելի խոստուն է, քան միևնույն հարցի մասին որևէ հիպոթետիկ եղրակացություն: Մեկ այլ դեպքում սոցիալական վիճակ է ներկայացված վարքագրական հերոսի պատասխանում. «Ասէ Որոգենէս՝ Կոչէ՛ զքեզ դատաւորն: Ասէ Կոնոնոս՝ Զի՞նչ կամի յինչն դատաւորն»: Կանոնոսի զարմանքը տրամաբանական է. ի՞նչ ընդհանրություն ունի պարտիզպանը դատավորի հետ. ի՞նչ կարող է նրանից ուզել դատավորը, երբ ինքն իր օրահացը հազիվ է վաստակում. թող նա իր նմաններին կանչի. «եթէ կամի կոչել՝ յիւր նմանեացն կոչեսցէ և ոչ զիս զտառապեալ հողագործս որ զիմ աւուրն կերակուրն մեծ ջանիւմ վաստակիմ»⁵¹: Հողագործի վաստակի մասին ակնարկ կա նաև Եսայերիոն նահատակի վարքում. «Եւ առաքեաց զնոսս առ Եսայերիոն այրն յազարակն, ուր զհողն վաստակէր»⁵²:

Հողագործ մարդու սոցիալական վիճակի արտահայտությունն ենք տեսնում նաև Ամենավագի հայկական վարքում. «... Երանելիս այս էր ի գաւառէն Դերջանու, ի գեղջէն Կառնբերդակ,—պատմում է վարքաբիրը,— այր աշխարհիկ և երկրագործ. զնղեցիկ դիմօք և վայելուչ հասակաւ... Սա ունեւր այլազգւոյ ումեմն սակաւ ինչ պարտս, և նա եկեալ նեղէր զսուրբն, և զգրաստն բռնութեամբ քաղէալ տանէր...»⁵³:

⁴⁸ Նույն տեղում, էջ 122 ա:

⁴⁹ Նույն տեղում, էջ 285 ա:

⁵⁰ Նույն տեղում, էջ 192 բ:

⁵¹ Նույն տեղում, էջ 183 բ:

⁵² Նույն տեղում, էջ 226 բ:

⁵³ Փնտմալեյան, հ. Ա. էջ 114:

Բանահյուսական շունչ ունի Հուլիանոս արքայի շուրջ պատմված հետևյալ դիպվածը, որը, սակայն, սոցիալական վիճակների ահավոր հակամարտություն է բացահայտում. Հուլիանոս «ուրացող» անվանված հեթանոս արքան իմացել է, որ Զատիկի պահքը մոտենում է, և վիրավորելու համար հավատացյալ քրիստոնյաների արժանապատվությունը, կարգադրում է այդ օրերին ճարպ և զոհերի արյուն խառնել ալյուրին և դրանցից թխված հաց և այլ ուտելիքներ միայն վաճառքի հանել: Կոստանդնուպոլսի պատրիարքին տեսիլ է գալիս սուրբ Թեոդորոսը և զգուշացնում եղածի մասին: Պատրիարքը շփոթված է. ի՞նչ անել: Թեոդորոսը տեսիլում հորդորում է ոչինչ չգնել վաճառատեղիներից, այլ բավարարվել իրենց տան ունեցածով. «Պատուիրեայ նոցայ որ ամենեին ոչ հաց և ոչ այլ կերակուր, և ոչ ըմպելի գնեսցին ի վաճառականացն, այլ կերիցեն ի տան իւրեանց կերակուր»: Պատրիարքի միամիտ պատասխանը դառնորեն սպառիչ է. «Ասէ պատրիարզն՝ որ մեծատունը են ունիցին ի տունս իւրեանց զի կրիցեն. աղքատ, որ միոյ ասուր կերակուր ոչ ունին ի տունս իւրեանց, զի՞նչ կերիցեն»⁵⁴: Ոչ միշտ է, որ դասային հարաբերություններն արտացոլվում են ալսքան ուղղակի ու պարզորոշ: Շատ դեպքերում դրանք կենցաղային մանրուքներով ներհյուսված դրվագներ են, որոնց խորքում են ընկած սոցիալական հարաբերությունները:

Ներսես կաթողիկոսի վարքում, օրինակ, ի թիվս նրա այլ բարենորոգությունների հիշատակվում է նաև մի շորորոգը. «զի վասն ազանութեան հայրենեաց ընդ ընտանիս ամուսնանային իշխանք»: Նրբ ընչաքաղցության և ժառանգությունը պահպանելու մղումով հարազատների հետ էին ամուսնանում իշխանները, Ներսեսն այդ արգելում է՝ «զոր խափանեաց սուրբն»⁵⁵:

Հայսմավուրբային զրույցներում պահպանված են նաև գյուղական կյանքն արտացոլող դիպվածներ. «Եւ այր մի, զորոյ ցուլն եղջերօֆն զմի ալն էհան: Եւ խիստ շուն մի գերծեալ ի շղթայիցն վագեաց ի վերայ թիկանց երանելոյ... Եւ ոմն մի Տիւրիանոս անուն խորտակեցայն զանցն, որ զրեռամբ սալսն տանէին»⁵⁶, կենցաղային դրվագներ՝ «Թղթարերքն հանդիպեցան մահճացն, որ բարձեալ էին դմեռեալն և տանէին ի թաղումն»⁵⁷: «Ասէ սուրբն Թեոդորոս բաշխեա նոցա կոլիբայ

⁵⁴ Ձև. 1339, էջ 171 ր, ձև. 8179, էջ 24ա:

⁵⁵ Փեշտմալեյան, հ. Ա, էջ 87:

⁵⁶ Ձև. 1339, էջ 159 ր:

⁵⁷ Նույն տեղում, էջ 182 ր:

և զայն կերիցեն. ասէ պատրիարզն՝ ոչ զիտեմ, թն զինչ է կոլիբայն: Ասէ սուրբն՝ ցորեան եփեա և տուր նոցա... զի մեք յնվխայտեայ՝ եփեալ ցորենուն կոլիբայ կոչեմք»⁵⁶:

Իրական կյանքի փաստեր, կենցաղային դրվագներ, անգամ աղգա-
գրական տվյալներ տեղ են գտել Հայսմավուրքներում: Նկարագրվում
են պատժի զանազան տեսակներ, որոնց ենթարկվել են հավատացյալ-
ները. «...և զնոսա կալան քաղաքացի կռապաշտքն,—պատմվում է
Վասիլիոս Եպիսկոպոսի վարքում,—կապեցին և ուժգին ձաղկեցին
հաստ մահակով՝ մինչև ավանդեցին զհոգիս իւրեանց առ աստուած»⁵⁷:
Կամ «հրացեալ շանթիւք այրեցին զթիկունս նոցայ... և խոշոր խորզով
սորոէին զխոցսն...»⁵⁸: Ուշագրավ է նույնիսկ պատժի ձևերի մեջ ժո-
ղովրդական անուն ստացած ազգագրական հատկանիշի պահպանումը.
«հրամայեցին և զՈւնան միայն կապեցին պարսկօրէն՝ զերկու ոտսն ի
մի և զերկու ձեռսն ի մի. և անցուցին ընդ ոտսն և ընդ ձեռսն փայտ
և պնդեալ ընկեցին որպէս կոճղ յերկիր...»⁵⁹ և այլ տվյալներ, որոնցով
լեցուն են հայսմավուրքային ընթերցմունքները:

Շատ հատկանշական է, որ ամենից ավելի Հայսմավուրքներն են
նյութեր պարունակել այնպիսի մի ուշագրավ հարցի շուրջ, ինչպիսին
հայ արհեստների ու արվեստների պատմութիւնն է. «Սա էր ձնեղեամբ
Բաղիւնցի, աշակերտեալ էր պարսկի ուրեմն, որ արունստիւ էր քսա-
կակաւ»,—պատմում է նոր վկա Ավագի վարքագիրը⁶⁰, իսկ կատակա-
բան Արզաղիոնի զրուցում՝ դատավորի և նահատակի հարց ու սյա-
տասխանի մեջ, անկախ Հայսմավուրքի զաղափարական նպատակա-
դրումից. այստեղ արտացոլում է գտել թատրոնի համար շատ ուշագրավ
դրամատիկական իրադրութիւնը⁶¹: Խլաթեցու Հայսմավուրք ներթա-
փանցած ժողովրդական հավատալիքների մեջ Շիդարարտավազդյան
առասպելում պարզորոշ հիշատակվում են զիմակն ու ներկայացումը՝
«որ կատարէին զիմօք և թեատրոնաւք», մի բան, որ զուգահեռաբար
տեղ են գտել նաև միջնադարյան մանրանկարներում⁶²:

Հայսմավուրքներն այս առումով հանդիսանում են միջնադարյան

⁵⁶ Նույն տեղում. էջ 171բ:

⁵⁷ Նույն տեղում. էջ 187բ:

⁵⁸ Նույն տեղում. էջ 205ա:

⁵⁹ Նույն տեղում. էջ 197բ:

⁶⁰ Փեշտավելյան. հ. Ա, էջ 93:

⁶¹ Նույն տեղում. էջ 170:

⁶² Զեռ. 4683, էջ յա, Մարգվանեցի, էջ ԵՃԺԴ (ապրիլ ժե):

արարողական ժողովածուներից ամենաաշխարհիկ ընդգրկումն ունեցող պատմագրական հուշարձանները, որոնց նշանակությունը չի սահմանափակվում տոնակարգի պահպանումով միայն:

Ամենօրյա տոնական ընթերցումները արարողական նպատակ հետապնդելու հետ մեկտեղ սերմանում էին գաղափարներ, միջնադարյան որոշակի աշխարհայացք, ունկնդրի մեջ ստեղծում և կերտում էին ժամանակի կատարյալ կերպարի գաղափարը, որը որքան էլ իդեալական կանգնած էր երկրային հողին, ուներ սովորական մարդկային նկարագրին բնորոշ հատկանիշներ: Այդ իդեալը, որքան էլ համաքրիստոնեական էր՝ տարբեր աշխարհամասերում, երկրներում ու գավառներում արտահայտություն գտած, նույնքան էլ ազդային էր իր պատմական գերով ու նշանակությունը: Հայսմալուրը ժողովածուները որքան լայն էին իրենց պատմական ընդգրկմամբ, նույնքան էլ զիպուկ և միասնական էին միջնադարյան իդեալը կերտելու և նրանով ներազդելու նպատակաւալացությունը: Եվ եթե ընդգրկման՝ պատմաճանաչողական առումով այդ ժողովածուները այսպես ասած «հանրագիտարանային» նշանակություն էին ստանում, ապա կերպարի կերտման ոլորտում նրանք մնացին եզակին՝ միջնադարյան գեղարվեստական արձակում:

ՀԱՅՍՄԱԿՈՒՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ԳՍՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՆՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՆՔՆՏՍԻՊՈՒԹՅՈՒՆԸ

Միանգամայն հասկանալի է, որ ժողովածուն իբրև քրիստոնեական եկեղեցու արարողական կարգը կանոնավորող միավոր պիտի ծառայեր քրիստոնեության գաղափարների տարածմանն ու ամրապնդմանը: Եվ այդպես էր իրոք բոլոր քրիստոնյա ժողովուրդների համապատասխան ժողովածուներում. տերունական տոների հիշատակումից հետո, և նույնիսկ առավել, դրվատանքի էին արժանանում տարբեր երկրներում հալածանքի ենթարկված այն քրիստոնյա գործիչները, որոնք իրենց երկրում, իրենց եկեղեցիների կողմից ճանաչվել էին իբրև սուրբ հայրեր և արժանացել հիշատակման տոնի:

Առանց վարանանքի պետք է ասել, որ հենց այդ նախատակությունների պատմություններն ու հիշատակի ընթերցումներն էին առավել ուշագործյալ կլանվում միջնադարի ունկնդրի կողմից, քան տերունական տոների կտակարանային անարյուն, անկիրք խրատաբանական մեկնություններն ու հարասությունները. մանավանդ Հայսմալուրը ժողովածուներում տերունական տոների ընթերցմունքները կրճատված էին նվազագույնի չափ և մնացել էին իբրև դարաշրջանի ղեկավարտիվ ուն-

ֆերեններ, որոնց առանձին բառն արդեն նշանակութիւն չէր ստանում ունկնդրի համար: Դրան հակառակ տարբեր գործիչների մասին պատումները շարժում էին հարատե փոփոխվող ունկնդրի հետաքրքրասիրութիւնը թե՛ տեղավայրի, կենցաղի ու սովորութիւնների տարատեսակութեամբ, թե՛, առավելապէս, բախումների սրութեամբ, ղրամատիկ իրադրութիւնների լարվածութեամբ, հերոսականութեամբ, զաղափարայնութեամբ:

Հայսմավուրբին համակոգմանիորեն ծանոթանալուց հետո պարզ է դառնում, որ այդ ինքնազոհութեան, զաղափարականութեան դրսևորումը ոչ թէ մասնակի՝ առանձին դիպվածների, առանձին հերոսական անհատների մարտական նկարագրից բխող գործունեութիւն է, այլ որոշակի աշխարհալաց¹. որ մի դեպքում արտահայտվում է հերոսի նպատակային մարտիրոսութեամբ, մեկ այլ դեպքում՝ նահատակների մասունքների պաշտամունքի ձևով, մի երրորդ դեպքում՝ ուղղակի խոսքով դրսևորած: Հայսմավուրբի զաղափարական բովանդակութիւնը հենց այդ նպատակային մարտիրոսութեանն է: Միայն սրա ընկալմամբ է հասկանալի դառնում, թէ ինչու պարսիկները հատուկ պահակախմբով հետևում էին զեպի մահ գնացող նահատակների ուղեկիցներին, զրկելու համար նրանց նահատակների մասունքները գողանալու հնարավորութիւնից²: Սրանով հասկանալի է դառնում Հայսմավուրբում հատուկ նշվող հիշատակի այն տոնը, որը նվիրված է հռչակավոր նիքիկերտ քաղաքի կառուցման պատմութեանը³:

Բանից պարզվում է, որ Քրիստոսի հավատքի համար նահատակվելը ոչ թէ առանձին դիպվածական հերոսութիւն է, եղել, այլ կայուն աշխարհայացքի արտահայտութիւն և որ շատերը ոչ միայն շեն խուսափել նահատակութեան դաժան դատաստանից, այլ դիտմամբ մղել են հակառակորդներին իրենց կտտանքների ենթարկելու և իբրև վկա մեռնելու. «էր ի ժամանակս Անտոնինոսի կռապաշտ արքային և Սաբինոսի դատաւորին ի քաղաքին Տրայանոսյօլիս, — պատմում է Գղիկերիայ կույսի մասին վարքագիրը. — գրեաց Գղիկերիայ ի ճակատն իւր զանունն Քրիստոսի»⁴: Իր ճակատին Քրիստոսի անունը դրելով նա ստիպմամբ իր վրա է ուղղում դարձնել հալածիչների ուշադրութիւնը և գրգռել իր դեմ⁵:

¹ Ղազարոյ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1904, էջ 88:

² Զեռ. 1339, էջ 255 ա:

³ Նույն տեղում, էջ 240 ա:

նահատակության մատնելու իրեն: Մեկ այլ դեպքում, երբ հեթանոս արքան սպառնում է մահվան դատապարտել բրիստոնյա քահանային, նա պատասխանում է՝ «Նրանի թէ պատահէր ինձ այն մահ որ վասն Քրիստոսի, զի կեանք է ինձ: Ասէ դատաւորն,— ես հասուցանեմ վաղվադակի գրեզ ցանկութեան քո»⁶⁸: Բացարձակ նույն հոգեբանությամբ է թելադրված Վահան Գողթնացու նման արարքը՝ «Ապա ինքն իսկ գրեաց ի թղթի զբրիստոնեութիւնն իւր և եցոյց յարքունիս»⁶⁹: Ավելին: Հավատքի համար նահատակվելը միսիթարանք և հոգեկան բավականություն է պատճառում հարազատներին. Փուսիկ կյուրապաղատի դուստրը՝ «խընդաց ընդ մարտիրոսութիւն հօրն իւրոյն»⁷⁰, Սեղբեստրոս Հոռմի հայրապետը ուրախությամբ է գնում Կոստանդիանոսի կանչին, կարծելով, թե «...ի մարտիրոսութիւն տանէին, ուրախութեամբ երթայր»⁷¹, իսկ բրիստոնյա մոր խոսքերով սնված պատանին կռապաշտ Եպարքոսի հարցին պատասխանում է միաստվածության հավատքով. «Զո՞ր աստուած պարտ և արժան է պաշտել,— հարցնում է Եպարքոսը,— և ասէ պատանին՝ Զերկնից աստուածն արժան է պաշտել. և սկսան հարկանել պատանին և ասեն՝ Ո՞վ ետ քեզ խրատ զայդ ասել. և նա ասէ՝ Մայրն իմ յամենայն ժամ ասէր՝ մի է աստուած և Քրիստոսն իւր»: Մորը ատյանն են կանչում և սկսում են պատանուն տանջել. «Յւ առժամայն հատին զգլուխ սուրբ մանկանն»: Շարունակության մեջ պատմվում է դրամատիկորեն ահռելին. «Ընթացեալ մայրն մեծաւ խնդութեամբ առ զմարմինն և զգլուխն և գնաց առ հաւատացեալսն, անտիս տայր՝ եթէ եղէ մայր մարտիրոսի»⁷²: Այս է միջնադարի հայացքը նահատակության մասին, այս է կազմում նաև հայսմավուրքային գրականության դադափարական բովանդակությունը: Սա մի գաղափար է, որ բրիստոնեական գրականության մեջ հասել է իր ծայրակետին: Բանն այնտեղ է հասնում, որ հերոսը զլանում է իր անունը տալ, դրա փոխարեն շեշտելով միայն, թե ինքը բրիստոնյա է. «էհարց դատաւորն եթէ՝ զի՞նչ է անուն քո և նա ասէ՝ Բրիստոնեայ եմ և զանունն ամենեկին ոչ յայտնեաց», նա նույնիսկ հեղնում է հեթանոս քննիչին. «Մեր ոչ եմք իբրև զկուտս ձեր, որ զանուանան փոփոխեն, այլ յանուանէ միայնոյ մեծի

⁶⁸ Նույն տեղում, լ. 260:

⁶⁹ Փեշտմալեյան. հ. Ա. էջ 138, 2ևո. 1339, լ. 204 ա:

⁷⁰ 2ևո. 1339, լ. 213 ա:

⁷¹ Նույն տեղում, 128 ա:

⁷² Նույն տեղում, էջ 102 ր:

աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի փրկչին անուանիմք իրիստո-
նեայք»⁷³:

Բայց արդյո՞ք այս է միայն Հայսմավուրքի գաղափարական բո-
վանդակությունը: Արդյո՞ք դարաշրջանի գաղափարախոսությունը այն-
պես էր շրջափակել Հայսմավուրքը, որ նա մնացել էր այդ շրջանակում
և կյանքն այնտեղ չէր ներթափանցել: Կամ արդյո՞ք միայն այս գաղա-
փարախոսությունը սպառնչ էր բավարարելու միջնադարի մարդու
հոգևոր պահանջմունքները:

Ահա այս դեպքում է, որ մենք գաղափարական բովանդակությունը
վերհանելու հետ մեկտեղ գործ ունենք երկի կամ ժողովածուի էության
և արդյունքի աններդաշնակության փաստի հետ: Այս այն դեպքն է,
եւրբ երկը կամ ժողովածուն շատ ավելի լայն ու ընդգրկում է, քան նրա ազ-
գակ հանդիսացող աշխարհայացքը: Իսկ դրա պատճառն այն է, որ ինչ-
պես առանձին դրսևական երկ, այդպես էլ մի ամբողջական ժողովածու
կարող է հորինված լինել ստեղծագործական այնպիսի ուղիով, որն իր
մեջ ունենա կյանքի ընկալման ու վերարտադրման այլ հատկանիշներ՝
գեղարվեստական շափանիշներ, որի շնորհիվ և նրա ընդգրկումն ավելի
լայն կլինի, քան սոսկ գաղափարական բովանդակությունը: Այս հատ-
կանիշի համար էլ մենք Հայսմավուրք ժողովածուն դիտում ենք իբրև
մեկ ամբողջական ստեղծագործություն և այն քննում ենք իբրև հայ
միջնադարյան արձակի ինքնատիպ արտահայտություններից մեկը:

ՄԱՐԻՈՒ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՍՄԱՎՈՒՐԵՆԵՐՈՒՄ

Դրական կերպարի հայսմավուրքային սկզբունքն ըմբռնելու համար
նախ և առաջ չպետք է մոռանալ, որ Հայսմավուրքն իբրև ժողովածու
սոսկ մեկ հեղինակի ձեռքի գործ չէ. տարբեր նյութեր տարբեր ժամանակ-
ներում են ժողովածու ներթափանցել, նրանք տարբեր խմբագրություն-
ներում այլևայլ ծավալ, լեզու և ոճ են ունեցել: Հայսմավուրքների ընդ-
գրկած նյութերը ժողովածուի արարողական պահանջով սեղմվել են՝
պահպանելով տվյալ անվան հետ կապված ամենաբնորոշ գիծը:

Ուրեմն, խնդիրն այստեղ բարդանում է նրանով, որ մենք գործ
ունենք ոչ թե կեդպարի հեղինակային կերտվածքի հետ, այլ ժողովածուի

⁷³ Նույն տեղում, էջ 212 ա:

զաղափարական բովանդակությունից բխող՝ ամբողջական ժողովածուից ստացված արդյունքի հետ, որն, անշուշտ, տարբեր է մեկ երկի մեջ կերտված կերպարից: Ուստի, երբ մենք խոսում ենք կերպարի կերտման հայամավուրբացին սկզբունքի մասին, ապա այդ ասում ենք պայմանականորեն և նկատի ունենք ոչ թե առանձին կերպարների հեղինակային հորինվածքները, այլ Հայամավուրբ ողջ ժողովածուից ստացված՝ վերացարկված միջնադարյան կատարելատիպը, որ ժողովածուի ամբողջութունից բխող արդասիր է: Մեր խոսքը վերաբերելու է այս վերացարկված դրական կերպարի հատկանիշներին ու առանձնահատկություններ, որ որակապես տարբեր լինելով՝ միաժամանակ շատ ընդհանրություններ ունի միջնադարյան արձակի մյուս տեսակների գործող անձանց հետ:

Ինչպես Հայամավուրբ ժողովածուն ամբողջության մեջ ունի լայնածավալ ընդգրկում, բայց մեկ զաղափարի է ծառայում, այդպես էլ մարդկային բնավորությունների բաղմազանություն մեջ այն ունի մի կատարելատիպ:

Հայամավուրբացին դրական հերոսին հատուկ է ոչ միայն բարևտոհմիկ ծնունդը, մանկուց աստվածային շնորհով օժտված լինելը, պատմական գործի նշանակությունը սրբացումը, քրիստոնեական բարեպաշտական բարոյականության հետ մեկտեղ ժողովրդական տենչանքների արտահայտիչ ու կրող լինելու պարտադիր հատկանիշը. «Եւ էր ինքն բարի, հեզ, քաղցր, ողորմած, որ և ըստ բարուցն ոլորմած անուանեցաւ» պատմում է Հայամավուրբը Հովհաննես Աղեքսանդրիայի հայրապետի վարքում⁷⁴, «Շինեաց ի քաղաքին տաճարս հիւանդանոցս, և բժիշկս կարգեաց և զամենայն հիւանդ աղբատ և անդ էր և անդ հանդոցանէր»⁷⁵, «Շինեաց և այլ տաճարս, և զխեղս և զծերս, որ ոչ կարէին վաստակել անդ հանգուցանէր մինչ ի մահ»⁷⁶: «Նույնպէս շինեաց և այլ տաճարս և զամենայն կին աղբատ ծընկդական անդ հանգըցանէր: Կարգեաց և մանկաբարձս սպասեակս և զութ օր յետ ծննդեանն հանգուցանէին և տալին ամենայն կնոջ զգրամս Գ և յուղարկէին: Եվ շինեաց արտարոյ քաղաքին շիրիմ օտաւ և աղբատ մեռելոց և կարգեաց քահանայս, որպէս զի պաշտմամբք և մոմեղինօք թաղեսցին, և քահանայն Գ օր վասն մեռելոյն պատարագ մատուցանէր»⁷⁷: Սրան շատ ներ-

⁷⁴ Նույն տեղում, էջ 92 ր:

⁷⁵ Նույն տեղում:

⁷⁶ Նույն տեղում, էջ 93 ա:

⁷⁷ Նույն տեղում, նաև ձև. 4512, էջ 93 ա, ր:

դաշնակ է ներսեւ Մեծը Հայսմավուրքային պատումում. «և զոր տեսաւ ի յոյնս բարեպաշտութիւն, ուր սնաւ ի մանկութեանն, ի Հայս նորոգէր... զի հիւանդանոցս և հիւրանոցս շինեաց ի ճանապարհս և յանբնակ տեղիս, և զհիւանդանոցս ի գեօղս և ի քաղաքս, և ետ գեօղս ի ծառայութիւն...»⁷⁸:

«Եւ զաղքատս և զտառապեալ աշնպէս սիրէր և ական ածէր ի վերայ նոցա, զի պիւր ինչ զհանդերձս և զկերակուր հասարակէր ընդ նոսաւ Եւ ննջելոց և տարակուսելոց օգնական և վերակացու և ջատագով ամենայն զրկելոց լինէր նա»⁷⁹,—Փալատոսի օրինակով գրում է նրա Հայսմավուրքային վարքագիրը:

Այդքան շեշտված աղատասիրութիւնն ինքնին վկայում է Հայսմավուրքի ներդաշնակումը ժողովրդական տենչանքներին: Եթե մի դեպքում դա դրսևորվում է հերոսի որոշակի գործունեությամբ, ապա մեկ այլ դեպքում այդ արտահայտութիւնն է դառնում զազափարական պայքարի ձևով. «...նա յանդիմանէր և զյափշտակողս և զազահս և զկողուպտիշս և զարծաթասէրս»⁸⁰: Այս միևնույն գծի ալիւսայլ դրսևորումներ կգտնենք տարբեր վարքերում, որոնք ի մի բերվելով կստեղծեն «Հայսմավուրքային կերպարի» մեկ անհրաժեշտ հատկութիւնը՝ աղքատասիրութիւնն իբրև դրական հերոսի հատկանիշ, որ վերացարկվում է Հայսմավուրքային ընթերցմունքներում:

Երբեմն կյանքից վարք է փոխանցվում պատմական անձնավորութեան կենսագրութեան մի ուշագրաւ հատկանիշ. «Եւ յիսուն ամ գիրս գրեաց տիւ և զիշեր անհանգիստ տքնութեամբ»,—գրում են ժամանակակիցները Գրիգոր Նլաթեցու մասին⁸¹: Հայսմավուրքային վարքում այդ փաստն իմաստավորվել է այսպես. հարգանքի ու հեղինակութեան արժանացած հերոսը ձեռագրեր է ընդօրինակում և պատվիրատուից ստացած վարձը տալիս է կարիքավորներին՝ օգնութեան. «Եվ անհանգիստ տքնութեամբ»,—գրում է վարքագիրը,—ի գիշերի և տուրնջեան ձեռք իւրովք վաստակէր ի զիրս գոչութեան և ի անանկս կարկառէր»⁸²: Միևնույնը Մխիթար Սասնեցու մասին. «Եւ զի ճարտար էր յարուեստ գրութեան»,— գրում է Հայսմավուրքը նրա հիշատակի օրվա ընթերց-

⁷⁸ Փեշտավեյան. հ. Ա, էջ 87:

⁷⁹ Փալատոս Բուզանդ. Պատմութիւն հայոց. Վենետիկ, 1832, էջ 69:

⁸⁰ Զեռ. 1339, էջ 95 ա, ձեռ. 4512, էջ 96 բ:

⁸¹ Թովմա Մեծֆեցի. Պատմութիւն Լանկ-Թաւուրայ, Փարիզ, 1860, էջ 42:

⁸² Զեռ. 5315, էջ 337, նաև «նոր վկայք», էջ 266:

մունքում,—գրեք գիրս գեղեցկաշարս և վաճառեալ զայն բաշխէր զգինսն ալմալաւ և կարօտելոց, և ինքն սակաւապետութեամբ շատանայր...»⁸³:

Սրանք իրական տվյալներ են, եղելություններ առանձին անհատների կենսագրության մեջ, բայց վարքագրություններ են ներթափանցել ժողովրդի հայացքով իբրև հերոսի ժողովրդասիրության և հումանիզմի արտահայտություն:

Հայամալուրբային դրական հերոսին հատուկ է ոչ միայն աղքատասիրությունը, այլ նաև այլասիրութունն ընդհանրապես, հերոսը բարեհոգի է, ողորմած. Անտոն անապատականը բանջարակեր է, բայց ցորեն է ցանում, հաց թխում իր մոտ հյուր եկողների համար՝ «վասն երթալոցն առ նա»⁸⁴: «Անարծաթ» բժիշկներ՝ Կոզմաս և Դամիանոս եղբայրներն ամեն տեսակ ցավեր են դարմանում՝ դրա դիմաց հատուցում չսպասելով ոչ մեկից. «...ամենեկին յումէքէ ինչ ոչ առնուին՝ ոչ ի մեծատանց և ոչ յաղքատաց»⁸⁵: Ավելին: Երբ Կոզմասն իմանում է, թե ինչ-որ հիվանդ կին ստիպմամբ 3 ձու է տվել Դամիանոսին, վերավորված սպառնալով է մահվանից հետո իրեն եղբորից հեռու թաղել՝ «ի մահուանն ի միասին ոչ թաղեսցին»:

Սրբախոսական հերոսներն աղատագրված են իրենց հասարակություններում զործող արատներից. այդ արատները, որքան էլ հեռու են իդեալականացված կերպարներից, առկա են այդ հասարակություններում և հետքեր են թողել վարք-վկայաբանություններում. «անարծաթ» եղբայրների միևնույն վարքում հրաշքով լեզու առած ուղտը մարդկային լեզվով արդարացնում է Դամիանոսին, ասելով, թե նա ձուն իբրև կաշառք չի վերցրել. «ոչ էառ իբրև կաշառս դայն ինչ»⁸⁶: Ու թեև վարքագիրն անթիրի է ներկայացնում Կոզմաս ու Դամիանոս եղբայրներին, բայց նա չի ժխտում, այլ բացահայտում է կաշառքի գոյությունը տրվյալ հասարակության մեջ: Եփրեմ Ասորին նույնպես անթիրի է իր մարդկային նկարագրով՝ «Կեսայր սբանչելի վարուք, սրբութեամբ, պահօք և ալօթիւք»⁸⁷, բայց դրանով էլ նա զերծ չէ շրջապատող մարդկանց խարդալանքներից. «և նախանձէին ընդ նա ժառանկաւորք եկեղեցւոյն»⁸⁸,

⁸³ Փեշտմալնյան, հ. Ա, էջ 148:

⁸⁴ Ձեռ. 7463, էջ 173 ր:

⁸⁵ Ձեռ. 1339, էջ 84 ա, ր:

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ Նույն տեղում, էջ 151 ա:

⁸⁸ Նույն տեղում:

նրան նախանձում են այն մարդիկ, ովքեր կոչված էին հասարակությանը կեղտորից ազատելու՝ եկեղեցու գործակալներն ու ներկայացուցիչները: Ուշագրավն այս դեպքում այն է, որ սրբախոսություններում չեն իդեալականացվում բոլոր մարդիկ, եկեղեցու և պաշտոնական բոլոր ներկայացուցիչները, այլ նրանց մեջ՝ բացառիկները միայն: Առաջին հայացքից այնպես է թվում, թե սրբախոսությունները դարաշրջանին իդեալականացնող ստեղծագործություններ են, մինչդեռ, երբ խորանում ենք նյութի մեջ, մեր առջև սփռվում է ամեն մի հասարակության մեջ գործող մարդկային փոխհարաբերությունների ու բնավորությունների մի անսքող պատկեր. միակողմանիորեն անթերի հերոսների կողքին առկա են բոլոր հասարակություններում գործող շարիքներն ու մարդկային արատները՝ նախանձը, փառամոլությունը, ընչաքաղցությունը, նենգությունը, քսությունը և այլն, և այլն:

Եվ եթե նա՝ միջնադարի դրական հերոսը, մարդկային բոլոր տեսակի առաքինությունների կրողն է ու մարմնավորողը, ապա բացասականները, որ հակառակորդներն են, ամեն վարքում կամ ընթերցմունքում նոր ձև ու դրսևորում են ստանում: Եվ որքան էլ Հայսմավուրքում դրական հերոսը վերացարկված է ու աբստրակտ իր միակողմանի դրականությունք, ապա նույնքան տարբեր են հակառակորդները կյանքից քաղած շարի դրսևորումներով, խարդավանքներով, մարդկային բացասական գծերի խտացումներով, նույնիսկ հեթաթալին, առասպելախառն հատկանիշներով: Ժողովածուից ստացված ընդհանուր տպավորությունն այն է, որ բարին ու դրականը, առափնին միակն է, կամ նման են միմյանց՝ ձգտումն են նմանվելու աստվածային պատկերի, իսկ չարը՝ բացասականը հազարավոր է ու բազմադիմի, ինչպես ինքը կյանքը կամ ըստ միջնադարի՝ չարիքը մարմնավորող սատանան:

Հենց մարդկային իրական հարաբերությունների այս վերհանումով իսկ Հայսմավուրք ժողովածուները ներկայացնում են հայ միջնադարյան գեղարվեստական արձակը: Եվ ստացվում է այսպես. այնտեղ գործում է մեկ դրական հերոս Վամ դրանյան առանձին հատկանիշներով միասնացած մեկ դրական կերպար, որի դիմաց կանգնած են մարդկային առաքների բանակներ, որոնք ավելի ռեալ են ու ըմբռնելի բոլոր հասարակարգերում ապրող մարդկանց համար: Եվ մեծ մասամբ այդ արատների կրողներն այն մարդիկ են, որոնք կոչված են տնօրինելու ուրիշների բախտը. դրանք կայսրներ են, արքաներ, շահեր, հայրապետներ, եպիսկոպոսներ, քսու պաշտոնակատարներ: Կյուրեղ Աղեքսանդրացու վարքում պատմվում է, որ Ակակիոս Պաղեսինու եպիսկոպոսը

արքայի հովանավորութեամբ՝ «բռնութեամբ զսուրբն Կիւրղոս իշոյց յաթոռոյն և հալածեաց ի քաղաքէն, և ի սահմանաց, և ի հայրապետական ժառանկութենէն և նստաւ զինքն յարստ պատրիարքութեան»⁸⁹։ Մեկ այլ դեպքում խարդավանքների դոհ է ներկայացվում Հովհան Ոսկերիւրանը. նա հանդիմանում է հափշտակողներին և ագահներին, կողոպտիչներին ու արծաթասերներին, մինչև անգամ կշտամբում է Արկադեոս արքայի կնոջը՝ Եվդոքսիային, որը մի այրի կնոջ աչգի էր բռնապալել⁹⁰։ Եվդոքսիան ոչ միայն հաշվի չի նստում Ոսկերիւրանի կշտամբանքի հետ, այլև «Յշնամի եղև արդարադատ քահանայապետին» և բանակցելով Թեոփիլոս Աղեքսանդրիայի հայրապետի հետ, խոստանում է Հովհանին աթոռից զցել և տեղը նստեցնել նրան. «զՅոհանն ընկեսցէ յաթոռոյ, նստուցանէ զնա փոխանակ նորա յաթոռն»⁹¹։

Սրանք պատմական ճշմարտություններ են, որոնք վիպական գույն ստացած թեմածում են Հայսմավուրքներում։ Մարդկային արատավոր գծերն ու հարաբերությունները ներթափանցել են անգամ այնպիսի սրբակենցաղ մարդկանց վարքերում, ինչպիսին առաջին անապատականներից Պողոս Թեբայեցին է։ Չնայած իր անթերի վարքագրական նկարագրին, նա շրջապատված է մարդկանցով, որոնց գործողություններում առկա է մարդուն բնորոշ ընչաքաղցրությունը. «մեռեալ էին նորա հայրն և մայրն. այլ քոյր մի էր նորա միայն առնակին և բնակէին ի միասին. և էին մեծատունք յոյժ»⁹²։ Եվ չնայած նյութական այս ապահովությանը, «փութայր քեռայրն մատնել բռնաւորաց զերանելին Պաւղոս զի իւր միայն լիցի ժառանգութիւն և ստացուածք նորա»⁹³։ Հաստ վարքագրի, թեև հերոսը կատարյալ է, բայց աններդաշնակ են կյանքն ու հասարակությունները։ Այսպես նաև հայկական պատումներում՝ մի կողմից սանձարձակ Դիոկղեսիանոս ու Տրդատ, արյունարբու Շապուհ, Հաղկերտ ու Բուդա, մյուս կողմում՝ սրբակենցաղ Հովսիսիմյան կույսեր, վարդանանք, Գր. Լուսավորիչ, Սահակ Պարթև, Վահան Գողթնացի և այլք։

Այստեղ անհրաժեշտորեն պետք է նշել, որ ի տարբերություն ընդհանուր հայսմավուրքային պատումների գերազանցապես բրիստոնեության ջատագովական բովանդակության, հայկական ընթերցմունքների

⁸⁹ Նույն տեղում, էջ 195 բ, ձև. 8179, էջ 26 բ։

⁹⁰ Ձև. 7463, էջ 95 ա։

⁹¹ Նույն տեղում։

⁹² Ձև. 1339, էջ 113 բ։

⁹³ Նույն տեղում։

բնորոշ գիծը օտարի լծի դեմ պայքարին ու նահատակվելն է, ընդհանուր քրիստոնեական գաղափարախոսության հետ մեկտեղ հանուն հայ-րենիքի մարտնչելն ու սեփական կյանքի նվիրաբերումը: Այս հատկանիշով հայ ընթերցումները ընդլայնել են հայսմավուրքային սոսկ արարողական սահմանները և հոր երանդ տվել գաղափարին անդամաճան մնացող, գաղափարական հեռուի կերտման սկզբունքներին:

Հասարակական երևույթների ու հարաբերությունների արտացոլումից զատ հայսմավուրքային ընթերցվածներում մենք ակառաքան ենք լինում նաև հոգեբանության առանձին արտահայտությունների: Որքան էլ հակիրճ ու սեղմ են հայսմավուրքային պատումները, միևնույն է, այնտեղ էլ առկայծում են ընդարձակ վարքերից եկող հոգեբանական երանգներ, մարդկային հոգուն բնորոշ հույզեր ու նրբերանգներ, որոնք գեղարվեստական շունչ են հաղորդում արարողական այդ ժողովածուներին: Եվ շնայած այն բանին, որ միջնադարի կատարյալ հերոսը Հայսմավուրքներում ներկայացվում էր իր համապարփակ սիրով առ աստված, նա անհրաժեշտաբար օժտվում էր նաև ընթերցողի հոգեկան աշխարհին հարազատ արկածումներով, մարդ արարածին բնորոշ հուզական աշխարհի այս կամ այն կողմով. մերթ նա մայր է՝ մայրական ինքնամոռաց սիրով, մերթ հավատարիմ ընկեր է, սիրող ամուսին, դեռահաս պատանի ու ծաղկափթիթ կույս, որոնց միացնում է նահատակի մահվան առիթով առաջացրած խոր կսկիծն ու ողբերգությունը. ահա, թեկուզ աստվածաշնչական Մեղքսեղեկի տոնի առթիվ պատմվող զրույցը. ծնողները՝ Մելքին և Սաղիմը՝ երկու զավակ ունեն, որոնցից մեկին հայրն է առավել սիրում, և մյուսին՝ Մեղքսեղեկին, մայրը, և ահա հայրը որոշում է զավակներից մեկին զոհ տալ աստվածներին. ռեմուտ թագաւորն Մեղքի առ թագուհին Սաղիմ՝ կինն իւր և ասէ. «Եկեսչիք և մատուցուք զոհս աստուածոցն զմի որդւոց մերոց»⁹⁴: Եվ որպեսզի բոլորովին անաշու լինի, նա առաջարկում է ընտրության վիճակ զցել հոր և մոր միջև: Եվ թեև մոր համար ծանր է նրանցից յուրաքանչյուրի կորուստը, բայց նա ընառգաբար ուրախանում է, որ վիճակը ամուսնուն շքեղավ՝ զգալով, որ նա զոհ կընտրեր մոր առավել սիրած զավակին: Եվ մայրն ընտրում է այն մեկին, որին իբր ինքը պակաս էր սիրում. բայց չէ որ նա մայր է. և նա ուղբում է նույնիսկ «չսիրած» զավակի կորուստը. «Վա՛յ ինձ, վա՛յ ինձ,— կոծում է մայրը,— զի ցաւոք ծնայ

⁹⁴ ՁԼԼ. 7463, էջ 236 ա:

և գիրկս իմ սնուցի, և ստեամբ իմով դիեցուցի, և եղև ընդունայն աշխատանքն իմ»⁹⁵:

Մեկ այլ ղեպքում հոգեկան ապրումը վերաբերում է սիրեցյալ ընկերոջը: Շապուհ արքային են ներկայացնում քրիստոնյա Բարբաշմենային, որին նա կտտանքների է ենթարկում, ասելով՝ «Ի Շմաւոն ոչ խնայեցի, որ իբրև զճողիս սիրէի, դու զի՛արդ իշխեցեր լինել հակառակ ինձ»⁹⁶: Նման ջերմության մեջ հնչում Գուշապթ նահատակի խոսքերը, երբ թագավորը հրամայում է գլխատել նրան. «Գիտես հաւաստեալ, որ ես զգեկովիս իմովի սնուցեալ եմ քեզ և միամտութեամբ ծառայել» ու խընդրում է նրան հրապարակով հայտնել, որ ինքը ոչ թե նենգության կամ թագավորին դավակու համար է գլխատվում, այլ իր հավատքի՝:

Մի երրորդ վարքում մեջտեղ է գալիս այնպիսի մի նուրբ զգացում, ինչպիսին ծնողաբաղձությունն է. 12-ամյա Հովհաննես կրոնավորը, որի մասին եղբայրակիցներն անդամ կատակում էին, թե «յանմարմին հրեշտակացն է», մահանում է ճգնության մեջ ծնողների կարոտից՝ «Ի ճգնութենէն և ի կարօտութենէն ծնողացն մաշեցաւ յոյժ»⁹⁷: Կան անգամ ամուսնական ջերմ հարաբերություններ դրսևորող զրվագներ՝, որոնք թվում է թե անհարիր պետք է լինեին այնպիսի ժողովածուներում, որոնց ուղն ու ծուծը միջնադարյան գաղափարախոսությունն է: Բայց այդ է հենց գեղարվեստական գրականության ամենամեծ ուժը, որ միշտ կյանքն ավելի ճիշտ ու համակողմանի է ցույց տալիս:

Ամենավերացական և հրաշալիքալից զրվագն իսկ հայսմավորքներում հիմնավորված է կենսական պատկերով ու ճշմարտացիությամբ: Այնտեղ կարելի է գտնել կենցաղային պատկերներ, կյանքի տարբեր կողմերի ինչ-որ չափով ընդհանրացված գեղարվեստական պատկերացումներ, իրականության արտացոլման տարրեր:

Քսենոփոնի և Մարիամի վարքում իմիջիպալոց բերվում է հերոսի ուսման մեկնելու փաստը. «Առաքեցին զնոսա ի Բիրիտոն քաղաքն յուսանել ի դպրութիւն գրոց»։ Կենսագրական այս դիպվածում ներհյուս-

⁹⁵ Նույն տեղում: Այստեղ ուղագրավ է մեկ հանդամանք. Հայսմավորք է ներթափանցել աստվածաշնչական (նոր կտակարան, «Առ երբայեցիսն», Ե, գլ. է) մեկ-երկու տողանոց շարադրանքի վիսյականացված պարականոն զրույցը:

⁹⁶ Ձեռ. 1339, էջ 263 ր:

⁹⁷ Նույն տեղում, էջ 205 ր:

⁹⁸ Նույն տեղում, էջ 135 ր:

⁹⁹ Նույն տեղում, էջ 17 ա, ր (Անատոլիա և Ադրիանոս ամուսինների մասին):

վել է գեղարվեստական շարժուն գործողություն. «Եւ մինչդեռ նաւէին եղև մրրիկ մեծ ի ծովուն և գիրկս արկեալ միմեանց լային ուժգին և ազաւէին գլխատուած: Հերձաւ նաւն, և ամենեքեան ընկղմեցան ի ծովն, րայց ոչ կորեան: Բոլոն հարեալ իւրաքանչիւր ոք ի տախտակս հալին... Յովնանէս ել ի Տաւփիտայ և Արկադէոս ի Տէտարինգրա...»¹⁰⁰: Սեղրեստրոսի շատ հայտնի վարքում, երբ պատմվում է Կոստանդիանոս թագավորի բորոտություն և մանուկների արյամբ լողանալու դրվագը՝ այնտեղ հանկարծ առկայծում է իրականությունից հանված. ուսուցիչական մի պատկեր, որ վարմանալի կենդանություն է տալիս սառն շարադրանքին. «...և ընթացան կանայք, մարք տղայոցն ի գիրկան ունելով զտղայսն մեծաւ հառաչանօք, հերարձակք և ստինք իւրեանց ի բերանս նոցա, անկան առաջի թագաւորին արտասուալից ողորովք...»¹⁰¹: Սա ոչ միայն կյանքից քաղված պատկեր է, այլ գեղջուկ ժողովրդի կենցաղին բնորոշ դրվագ, որ առասպելական դրույցին համոզականություն է հաղորդում:

Այնպիսի հնավանդ դրույց, ինչպիսին քառասուն մանկանց նահատակության պատմությունն է, ներկայացվում է ամենքին ըմբռնելի իրապատում հանգամանքներով. քառասուն մանուկներին տանում և լիճն են նետում ձմռան օրով «Լնկեցին զնոսս մերկ ի մեջ ջրոյն յաւուրս ձմեռանի»: Պատումն ըստ էության այստեղ ավարտվում է, բայց այն եզրափակվում է գեղարվեստական հիմնավորումով. «Պատահեցան մարմինք նոցա ի խիստ սառուցամանէն և հեղձք արին նոցա ի վերա ուտից իւրեանց»¹⁰², ինչպես և քառասուն մանուկներից մեկի՝ Մեղիտոնի սայլի ետեւից կիսակենդան որդուն ուսը գցած կնոջ նկարագիրը՝ «և մայր բարձեալ յուսն զորդին ընթանայր զկնի սայլոցն»¹⁰³:

Նման մի պատկերային գլուտ կա Կոստանդիանոս թագավորին ավազան մտցնելու և բորի վերքերից արագորեն մաքրվելու նկարագրություն մեջ. «Եւ երթեալ ի տեղին օրհնեաց Սեղրեստրոս զջուրն և մերկացուցեալ զթագաւորն իջոյց ի ջրսն... և եղև նարնատումն որպէս ի տապակէ և անկան կեղևանք յառնէն»¹⁰⁴: Սրբի վարքի մեջ ներթափանցած է կենցաղային պատկեր, որ ցայտուն է դարձնում պատմողի խոսքը:

¹⁰⁰ Ձեռ. 2695, էջ 17 ա:

¹⁰¹ Ձեռ. 1339, էջ 128 ա:

¹⁰² Ձեռ. 2695, էջ 64 բ:

¹⁰³ Նույն տեղում, էջ 65 բ:

¹⁰⁴ Ձեռ. 1339, էջ 128 բ:

Այս իրական-կենդանի մանրադրվագումների կողքին առկա են և պատկերավոր շափազանցություններ, որոնք սաստկացնում են պատմելիքի ներգործությունը: Սրանց հիմքում կա, անշուշտ, իրականության արտացոլման տարր, բայց այն զորեղացված է երևակայական թուիչքով ու միջադարի մտայնությամբ. այսպես, օրինակ՝ նահատակին տառապալից կտտանքների ենթարկելու փաստը պատմումում ներկայացվում է դահճների հոգնության շափանիշով. «Եւ այնչափ շարշարեցին (Սարգսին և Բաբոսին), մինչև դանիւնն նուաղեցան և անկան յերկիր»¹⁰⁵, կամ՝ «մերկացուցին զնա (Կոնդրատիոսին) և ձաղկեցին ուժգին արջաջլօք... և այնչափ գանահարին, զի թիկունքն և լանջքն քզաւ մի ուռուցեալ բարձրացան»¹⁰⁶, «ժողովեցին մանկունս ի դպրոցացն և երկաթի գրշօք ծակոտեցին զգագաթս նորա և օծին զմարմինն մեղու և ի խորշակի աւուր կախեցին ի բարձրաւանդակի: Եւ պիծակը և գոռոխը և մեղուկը և մթեղը կրծեցին զնա մինչև յոսկերսն»¹⁰⁷: Այստեղ իրական պատկերացումներից ավելի առկա է պատմողի ֆանտաստիկան, հակառակորդի նկատմամբ ատելություն սերմանելու անսանձ կիրքը: Սրան հակառակ՝ նահատակների հերոսականությունն ընդգծելու համար ուժեղ կամքով ու գաղափարայնությամբ են օժտված նաև նահատակների ընտանիքի անդամները, որոնք նահատակների կտրված գլուխները թափվող արյան հետ մեկտեղ «զոգս իւրեանց ընդունէին»¹⁰⁸ ինչպես թափվող պտուղները հավաքելիս:

Նշված օրինակները վերաբերում են հայսմավուրբային հերոսի և նրա միջավայրի հարաբերություններին: Հերոսից դուրս կյանքն ու մարդկային հարաբերությունները միջնադարյան արձակում* սրբախոսություններում, տրվում են թեև մանր ու մասնակի, բայց իրական գրսեւորումներով: Միջնադարյան իրական մարդը ինչ-որ շափով արտացոլում է գտել, ուրվագծվել հայսմավուրբներում, պատկերվել է նաև կյանքն իր այլևայլ կողմերով, բայց հերոսը՝ կատարելատիպը կերտվել է միջնադարի աշխարհայացքով: Նա, մյուսների համեմատ, միակողմանի է, ընդհանուր էտիկետով ստեղծված:

Սրանով հանդերձ Հայսմավուրբում հիշատակի արժանացած հերոսները նաև անհատականացված են: Բայց ինչպե՞ս:

¹⁰⁵ Ձեռ. 8179, էջ 114 ա:

¹⁰⁶ Ձեռ. 1339, էջ 225 ր—226 ա:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 199 ր:

¹⁰⁸ Ձեռ. 7361, էջ 139 ր:

Հատկապես հայկական սրբախոսություններում հերոսներն անհատականանում են նախ և առաջ իրենց գործի պատմական նշանակությամբ: Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի «Լուսավորիչն» է, քրիստոնեության ռազմիրան, Մեսրոպ Մաշտոցը՝ հայ գրի ու գրականության ստեղծողը, Վարդան Մամիկոնյանը՝ աղատագրական պայքարի հերոս, Նղիշեն՝ նրա մեծարողը, Նարեկացին՝ միջնադարի մեծ գաղափարախոսն է, Վահան Գողթնացին՝ անձնական բարեկեցությունը գաղափարին ու հայրենիքին նվիրաբերող անձնավորություն, Պահլավունիների տոհմը՝ իր պատմական գործունեությամբ և այլն, և այլն: Հայսմավուրբում հիշատակի օրվա արժանանալու տրամաբանական փոքրից զատ այստեղ գործում է մի շատ ուշագրավ հանգամանք՝ հաճախ միջնադարի մարդու հավատալիքն է, իր ծիսակատարություններով հանդերձ: Նշված հանգամանքներով պիտի բացատրել հայսմավուրբային հերոսների անհատականացման նոր ձևերն ու ուղիները, որոնք որքան էլ կապ չունեն մարդու և նրա ներաշխարհի ինքնատիպ դրսևորումների հետ, այդուհանդերձ դրանք մնում են միջնադարյան հերոսին գրական մյուս հերոսներից զատող անհատականացման ուշագրավ դրսևորումներ: Լկվելի որոշակի ասած՝ հայսմավուրբային հերոսն անհատականանում է ոչ միայն իրական գործունեությամբ, իր կյանքի պատմական նշանակությամբ, որով նա արժանացել է օրվա հիշատակի տոն ունենալու, այլև, որքան էլ անհավատալի թվա՝ իր ետմահու սքանչելագործ ուժով: Սքանչելագործ ուժ ունեն միջնադարի բոլոր սրբացած հերոսները՝ լինեն դրանք հայսմավուրբային, թե՛ նրանից դուրս՝ ճառերնորային կերպարներ: Ուշագրավն այս դեպքում այն է, որ Հայսմավուրբում սքանչելագործությունները բնույթով ու որակով տարբեր են, որով և լրացուցիչ անհատականացում և տարբերակում է մտցվում սրբախոսական հերոսների ընդհանուր նկարագրի մեջ. բացի այն, որ այդ հերոսները տարբեր՝ հիմնական գործունեությամբ են մնում ունկնդրի կամ ընթերցողի հիշողության մեջ, դրանք մարդկային կյանքի դժվարությունների ու տառապանքների տարբեր կողմերի ապաքինիչներն ու միջնորդներն են, ուստի և նրանք այդ կողմով էլ պրակտիկորեն տարբեր են հավատացյալ մարդու մտապատկերում. եթե, օրինակ, ըստ Հայսմավուրբի սուրբ Պարսամոն «այսահարների»՝ դիվահարների ցավերին էր օգնական դառնում¹⁰⁹, ապա Սուրիասանց նշխարներով «բժըշկութիւն լինի ամենայն ցաւոց, մանաւանդ բոժոտաց»¹¹⁰, իսկ կույս

¹⁰⁹ Զեռ. 7463, էջ 190 բ:

¹¹⁰ Զեռ. 8179, էջ 2 բ, 7463, էջ 17 բ, 78 բ—79 ա:

Վառվառեփն գիմողները «առժամայն բուժին յախտէն ծաղկի և տապաւ-
կի»¹¹¹: Սուրբ կույս Մատրոնյան բացի այն, որ «զամենայն ախտս և
զհիւանդութիւնս փարատէ...», այլ և «զմեր վիրաւորեալ հոգիս բժշկեա-
ցէ...»¹¹²: Բագարատ Տոռոմենա եպիսկոպոսն «է բարեխօս և օգնական ոչ
միայն Սիկիրիա կղզոյն, այլ և ամենեցուն, որոց կատարեն յիշատակս
նորա»¹¹³: Սուրբ Նիկողայոսը զրպարտութեան զոհերի և բանտարկյալ-
ների օգնականն է. նրան են գիմում տուժածները. «Ճեպեա՞ զրպար-
տելոց օգնականդ». այսպես էին գիմում նրան հանդիպողները. «Ո՞վ ի
բանտի և ի զրպարտութիւն չարեաց ըմբռնեալ,—գրում է վարքագի-
րը,— և զնիկօլայոսէ կարդացեալ դանուն և ոչ արտամութեանն արագա-
պես լուծումն ընկալաւ»¹¹⁴: Պատահական չէ, որ սուրբ Նիկողայոսի նըշ-
խարներին Վանա ծովի ափերին վերագրվում էին նաև ալեկոծություն-
ներից փրկելու ուժ, որ բացատրվում է վանքի ծովահայաց դիրքով¹¹⁵:

Հայսմավուրքային կերպարի նման անհատականացումը անշուշտ,
չի մերժում ընդհանրապես գեղարվեստական կերպարի կերտման
այլեւայլ հնարանքների ու յուրահատկությունների առկայությունը:
Որքան էլ միջնադարյան սրբախոսական, երբեմն իսկ պատմական գոր-
ծիչները ընդհանուր պահանջմունքներով են ստեղծված, միևնույն է, նը-
րանք պետք է անհատականացվեն գեղարվեստական գրականության
ընդհանուր սկզբունքներով. այստեղ խոսք չի կարող լինել մեր առումով
կատարյալ ու ամբողջական կերպարի մասին, բայց դրա առանձին փոր-
ձերին ու հնարանքների մասնակի օգտագործումներին մենք հանդիպում
ենք ոչ հազվադեպ:

Ինչպես հասկանալի է արդեն, հայսմավուրքային պատումների սահ-
մանափակ ծավալն իսկ անհնարին էր դարձնում ամբողջական ու խո-

¹¹¹ Ձեռ. 7463, էջ 127 բ:

¹¹² Ձեռ. 1339, էջ 199 ա:

¹¹³ Ձեռ. 7361, էջ 156 բ:

¹¹⁴ Ձեռ. 4683, էջ 237 բ—239 ա:

¹¹⁵ Զափազանք ընտրող է այն տխուր իրողությունը, որ միջնադարում մեծ տոկոս
են կազմել հոգեկան հիվանդությունները, և դրան համապատասխան շատ սրբերի սբանչե-
լագործությունների մեջ առաջին հերթին հիշատակվում են օղիվահարների», «այսահար-
ների», «խնայականների» բուժման հատկանիշները. սրբերի հրաշագործությունները կա-
րող են անսպառ նյութ տալ ուսումնասիրելու միջնադարում իշխող այլևայլ հիվանդություն-
ների՝ թուսի, բորի, մաշկային ախտերի, աչքացավի, տարածամ հիվանդությունների, բու-
սական ու կենդանական աշխարհի ցավերի մասին:

րությամբ կերպարներ կերտելը: Դա իրապես չէր էլ բխում միջնադարի մարդու հետաքրքրությունից. դարաշրջանի պաշտոնական հայացքն այլ էր կատարյալ մարդու մասին, բայց որքան էլ անթերի սխեմաներ ստեղծվեին, նրանք անարյուն լինելով՝ չէին հուզելու մարդ էակին ընդհանրապես: Ուստի, հայաստավուրբային հերոսներն էլ, բացի անհատականացման վերը նշված գծերից, պետք է օժտված լինեին մարդկային ինքնատիպ հատկանիշներով, արտաքին ու ներքին սեփական գույներով՝ առնվազն տարբերակման սահմանումներով: Սրանցից որոշներն իրոք կերպավորման լիցք ունեն իրենց մեջ, մինչդեռ շատերն էլ պատկերային վերացարկումից հեռու բառալին նկարագրական փորձեր են, բայց որքան էլ մասնակի ու փոքրագրվադ, դրանք մնում են հայ միջնադարյան արվեստի պատմության ուղադրավ էջեր, ինչպես հայ միջնադարյան մանրանկարչության առանձին նախշերը հայ գեղարվեստի պատմության մեջ:

Ահա կերպարի անհատականացման փորք, բայց դիպուկ բնութագրեր:

Միջնադարի սիրված հերոսներից են ճգնակյացները. վարքագիծները շատ են պատմում ճգնակյացների ծովակալության, ինքնազստման, սակավապետության, աշխարհամեծման մասին, և ահա իրական մարդու ճգնավորական կյանքի մի պատկեր, որ առանձնանում է մյուսների մեջ. «Յալսմ աւուր յիշատակ սրբոյն Ստեփաննոսի նոր վկային»¹¹⁶: Այլևայլ տվյալներից հետո Հայսմավուրբը պատմում է. «... Եւ անշափ ցած արար զխուցն իւր երանելին Ստեփաննոս և նեղ, որ դամենայն աւուրս ի ծունկս և ի կոր եկաց և ոչ կարէր շրջել զինքն յայս կոյս կամ յայն...»¹¹⁷: Սա արդեն ճգնավորի անհատականացված պատկերացում է: Մահվանից հետո այցի եկածները «զարմանային ի սբանշելիս... Թէ որպէս իբրև զստուէր և կցեալ ծունկքն ի կուրծսն և աչքն յարտասուացն լցեալ և մարմինն իբրև խռիւ շորացեալ»¹¹⁸: Ստեփաննոսի կերպարի մի տարբերակն է Դանիել Սյունակյացը. «Ծունկըս տկարացեալ ի կուրծսն կցէին և ուրն ի բարձսն և իբրև զկոճղ անգեալ զնէր»¹¹⁹: Սյան վրա երկարատե ճգնությունից կոճղի նման կծկված, ոտքի սրունքներն ազդրերին, կուրծքը ծնկներին կպած

¹¹⁶ Խոսքը վերաբերում է հնագույն ճգնակյացներից մեկին, որ զարմանալիորեն նոր վկա է կոչվում:

¹¹⁷ Զեռ. 9585. էջ 70 բ:

¹¹⁸ Նույն տեղում:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 87ա:

ժերունին ուրվագծվում է նաև արտաքին ինչ-որ առանձնահատկություններով. «էին հեր գլխոյն հրկոտասան հիւսեակս բաժանեալ երկուց կանկնոց երկանութիւն և մորուսն յերկուս մասունս յերեք կանկնէանս»¹²⁰: Ուրբան էլ հեքիաթային է Դանիէլ Սյունակյացի արտաքինը, բայց ինչ-որ չափով կոնկրետացված է իր 12 հյուսակներով ու մորուրով: Նկարագրական նույնպիսի բնույթ ունի և աստվածաշնչական Մելքիսեղեկի արտաքինը. «Եւ եղեն եղենդունք ձեռացն կէս թղոյ և հեր գլխոյն միջև ի ծունկսն»¹²¹: Այս պատկերացումները ֆանտաստիկ չեն, սրանք, անշուշտ, վերցված են էյաքից՝ բաղմաթիւ, ամեն բայլափոխի հանդիպող ճգնակյացների արտաքին նկարագրից. բայց Մելքիսեղեկի արտաքին նկարագրին կցվում է միմիայն նրան վերագրվող մի պոետական առղիր, որ անմոռանալի է դարձնում նրա կերպարը. «Եւ կերակուր էր նորա ծայր՝ ոստոց ծառոցն և փոխանակ ջրոյ լիգէր զցօլ դալար խոտոյ»¹²² — սա արդեն հեղինակային գլուտ է, որին կարող է նախանձել ամենամաքուր արվեստագետն իսկ:

Արտաքինի ուրվագծման բաղմաթիւ փորձերի ենք հանդիպում ճանաչված հայրերի, անգամ աստվածաշնչական կերպարների նկարագրերում. «Եւ գիտելի է, զի էր սուրբ կոյսն Մարիամ սպիտակայմարմին, երկայնամատունք և լի ամենայն շնորհօք ըստ նմանութեան իր միածնին, ըստ վկայութեան Սողոմոնին, որ ասէր՝ զեղեցիկդ ի կանայս...»¹²³, կամ՝ «էր սուրբն Մարկոս անձամբն միջակ, երկայնաքիթ, յունէղ, պակասամորու, աչկղ, ճաղատ, ցորենագույն, ալեխառն, բարետեսակ»¹²⁴ և այլն: Եթե ճգնակյացների համար իրոք բնորոշ էր երկայնամորուք լինելն ու սմբած արտաքինը, ապա ամլետարանիշի կամ աստվածամոր համար հեղինակները գտնում են արտաքին ուրվագծման տարբեր հատկանիշներ՝ դեմքի գույն, դիմագիծ, աչքեր, մատներ, իրական կյանքում մարդկանց տարբերակող ֆիզիկական գծեր: Այսպես և Բարսեղ Կեսարացու վարքում՝ մեկ ուրիշի կողմից ոչ ուղղակի, այլ կողմնակի ուրվագծում. «Եւ կոշկաց սուրբն Բասիլիոս մի ի կիսասարկաւագացն և ասէ՝ Երթիշիր յայս նիշ սին եկեղեցոյս և գտցես այր մի կաւճահասակ, բարց, ալևոր, ծաղերեւս և քոփս, կոշկա առ իս ի խորանս: Եւ երթեալ կիսասարկաւագին ի տեղին՝

¹²⁰ Նույն տեղում:

¹²¹ Ձեռ. 7463, էջ 237 ր:

¹²² Նույն տեղում:

¹²³ Ձեռ. 4683, էջ 11 ա:

¹²⁴ Ձեռ. 1339, էջ 251 ր:

եգիտ Եփրեմ և ասէ՝ կոչէ զքեզ տէր արքեպիսկոպոսն»¹²⁵։ Եփրեմ ասորու արաւորինը ուրվագծված է Բարսեղի հանձնարարականով։

Անհատականացման ուշագրավ նմուշների ենք հանդիպում նաև Վանական վարդապետի վարքում. «Զուարթամիտ էր իբրև զԲառնաբաս, ալրշափ հասակի, մեծ և լայն մօրուք, տես փառաւոր և ամենեկն շնորհալից» : Այստեղ շկա կենսամերժ անսպասականի անխնամ և մինչև ծրնկները հասնող մորուքը, այլ մշակված փառահեղ արտաքին։

Արտաքին առանձին տարրերի առանձնացումից առավել ներգործուն են խաչմալուրքային վարք-վկայարանություններում մարդկային սովորութիւնների ինքնատիպութեամբ արտահայտվող անհատականացման նմուշները։ Ինչպես արտաքին ուրվագծման դեպքում, սրանք էլ, անշուշտ, միջնադարւան կենցաղից բխող պատկերացումներ են, որոնք կոնկրետացվել են խաչ կամ լայն գործիչ կերպարում իբրև նրան միայն բնորոշ հատկանիշ։ Այսպես. Արսեն կրօնավորի ճգնաժողովական կյանքի շարադրութեան մեջ հանգիպում ենք գեղարվեստական կերպավորման այսպիսի մի նմուշի. շաբաթ լույս կիրակի երեկոյից, երբ արևը մայր է մտնում, Արսենը դեմքն արեւելք դարձրած, ձեռքերն ու աչքերը երկնքին հռոած ողջ գիշեր սաղմոսելով է անցկացնում՝ «և ոչ նստէր և ոչ զաշոն և զձեռսն իջուցանէր մինչև յառաւօտն»¹²⁶ և միայն առավոտյան է ավարտում իր գիշերային աղօթքը։ Վարքագիրը սա կարող էր պատմել սովորական շաբաղորութեամբ, մինչդեռ նա կերպարը բնութագրելու համար տալիս է այսպես. «շաբաթ օր ի տասներորդ ժամուն ցայգ կիրակէ քողոյր զշող առեգականն ի քիկունս իւր... և յորժամ ծագէր արեգակնն զճառագայթս իւր յերեսս նորա, յայնժամ իջուցանէր ապա զձեռս իւր և նստէր»¹²⁷։

Միջնագարի ամենահեղինակավոր ու սիրելի դեմքերից մեկի՝ Հովհան Ոսկերերանի վարքում, ի թիւս նրա լայնածավալ գործունեության, բերվում է այսպիսի մանրուք. «Ժա ինքն էր պահացող յոյժ և միայն գարեջուր չափով և սակաւիկ մի հաց ճաշակէր», Արսեն կրօնավորի նման «յոտն գոլով դամենայն գիշերն աղօթէր»։ Այսքանը սովորական պատմողականն է, որին հաջորդում է կերպարի անհատականացման գեղարվեստական հնարանքը. «և պարան կապեալ ի սենեկի իւրում. և յորժամ տքնէր և աշխատէր, անկանէր լանջօքն ի վերա պարանին և սակաւիկ մի

¹²⁵ Նույն տեղում։

¹²⁶ Նույն տեղում, էջ 197ա։

¹²⁷ Նույն տեղում, էջ 235 ա, Մարգվանեցի, էջ ԵԺԾԷ։

¹²⁸ Ձեռ. 4512, էջ 96 բ։

ենչէր»¹²⁹։ Սենյակում կապված պարանի վրա ակնթարթներով միայն նըն-
ջող սրբի պատկերը կերպավորումն անմոռանալի օրինակներից է։

Զարմանալի կենդանի ու դիպուկ է Խլաթեցու Հայսմավուրբում նահա-
տակված կույսերից մեկին անհատականացնող մանրուքը. Թամարի դիա-
կրն ամփոփելիս միայն շրջապատողները տեսնում են կույսի զգաստու-
թյունն ու ողջախոհությունը, «ուր զստորուռ շապկին կաբեալ էր հնարիւ,
որպէս զի մի երեսցին ոտք նորա ի քարշելն և ի քարկոծելն», արարք-
որ Եզակի ներկայացվելով, բացահայտում է նաև ժամանակաշրջանի բար-
քերն ու մտայնությունը¹³⁰։

Ներբողական գովերգական գծերի վերհանումից զատ հայսմավուր-
բային վարքերում հանդիպում ենք նաև կյանքի և մարդկային բնավո-
րությունների դավելնապական կողմերի վրձնումների։ Իբրև աշխարհամերժ-
ման ծայրագույն սկզբունքայնութուն է մատուցվում Մակար Անապատա-
կանի վարքում նրա անժպիտ դիմագիծը. «Սուրբ հայրս այս Մակար ոչ
ծիծաղեցաւ յամենայն ժամանակս կենաց իւրոց»¹³¹, և նրան իր սկզբունքից
հանել ջանացող դեկրը հնարներ ևն որոնում նրան ծիծաղեցնելու. «բերե-
ալ կառանս երկայնս կապեցին ի շնչին փետուրս կրծից ճնճղկի միոյ և
բուռն հարեալ ամենեքեան ղօրութեամբ մեծաւ զաղաղակ բարձեալ ասէին՝
Քարշեցէք, մանկտի, քարշեցէք. և ոչ կարացին շարժել ամենեկին. և զայն
տեսեալ սուրբն Մակար ժպտեցաւ և նոցա ծափս ծափի հարեալ՝ Ծիծաղե-
ցաւ,—ասին,—Մակար ծիծաղեցաւ. և նա ասէ՝ ոչ զայլ ինչ, այլ զանմտու-
թիւն ձեր և ղտկարութիւն...»¹³²։

Ինչպիսի նպատակադրումով ու գաղափարով է ստեղծված պատկերը
այս դեպքում, կարևոր չէ։ Կարևորն այն է, որ այս Մակարն այլևս չի շը-
փոթվում ու նույնանում բազմապիսի իր նմաններից որևէ մեկի հետ,
ինչպես ցողով սնվող Մեղրիսեգեկն ու պարանի վրա ննջող Հովհան Ոս-
կեհիրանը։

Մեկ ինքնատիպ հատկանշով կերպարն անհատականացնելու հնա-
րանքը Հայսմավուրբներում ուշագրավ է նրանով, որ այն եղտիկ փաստից
վեր է ածվում ընդհանրացման, մատուցվելով իբրև դարաշրջանի աշխար-
հայացք, մտայնություն ու վարքագիծ։

¹²⁹ Զեռ. 2339, էջ 95 ա, 36 ու. 4512, էջ 96 բ։

¹³⁰ Զեռ. 4876, էջ 382։

¹³¹ Զեռ. 1339, էջ 184 ա։

¹³² Նույն տեղում։

ԱԶԳԱՅԻՆ-ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՍՄԱՎՈՐՔԱՅԻՆ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ

Եթե քրիստոնեական համապատասխան հուշարձաններում գրեթե բացարձակապես իշխում էր հանուն Քրիստոսի նահատակության գաղափարը, առանց ազգային երանդի, ապա հայկական Հայսմավուրք ժողովածուներում օտար տիրողների ձեռքով նահատակությունը կրում էր քրիստոնեության սկզբունքից զատ կամ նրա հետ մեկտեղ՝ ազգային ինքնության պահպանման խիստ ընդգծված բնույթ, որն արմատապես տարբերում էր հայ հուշարձանը ընդհանուր քրիստոնեականից:

Հայսմավուրք ներթափանցած հայ սրբերը՝ եկեղեցու հայրերն ու նահատակները, ոչ թե քրիստոնեության համար միայն մարտնչող, զուտ հավատքի համար նահատակներ են, այլև թշնամուն, հակառակորդին հակադրվող ազգապաշտպան գործիչներ, հայալանդ տենչանքների ջատագովներ. նրանք սոսկ քրիստոնյա գործիչներ չեն, այլ և ընդգծված հայ մշակութային, ազգային դիմագիծ ունեցող կերպարներ, որոնք հայ ժողովածուի առանցքն են կազմում, որոշ խմբագրություններում օտար-համաքրիստոնեականը ֆոն դարձնելով իրենց հիմնական գաղափարի համար: Հայ Հայսմավուրքները ազգային նկարագիր ունեցող ժողովածուներ են և՛ ըստ բովանդակության, և՛ իբրև զրական հուշարձան: Ազգային երազանքներով են ողողված Հայսմավուրքների մինչև իսկ գրիչների հիշատակագրությունները, էլ չենք խոսում մեծարժեք հիշատակարանների մասին: Սա իր հետ բերում էր հայսմավուրքային կերպարների անհատականացման ուրույն հնարքներ, որոնք արգասիք էին հայ կյանքի: Այսպես, եթե ընդհանրապես սրբերի նշխարքներին վերագրվող հրաշապատումները տարբեր ժողովածուներում կրում են ընդհանուր բնույթ, ապա հայ ժողովածուներում դրանք օծոված են հայ բնաշխարհի, հայ ժողովրդական ավանդությունների ու բանահյուսական պատկերացումների հետ: Այստեղ խոսք կարող է լինել հայսմավուրքային պատումների ոչ միայն ժողովրդական ակունքների մասին, այլև Հայսմավուրքից ժողովուրդ ներգործության ու ներթափանցման մասին:

Բնորոշ է այն իրողությունը, որ բացի օտար ակունքներից եկող սոսիների հարմարեցումը հայ տոնացույցին, հայ հայսմավուրքներում տեղանացվում են շատ սրբերի հրաշագործություններ՝ կապվելով հայ բնաշխարհի կամ հայ իրականության հետ: Այստեղ, անշուշտ, շատ մեծ դեր է խաղում անունների ժողովրդական ստուգաբանությունը. Աստույանց վկա-

յաբանության մեջ, օրինակ, պարսիկների անակնկալ հարձակման ժամանակ վանքում ապաստանած հայերը միմյանց սթափեցնում են «ձի կալեք» կոչով, որից և ըստ վարքագրի՝ վանքի Ջիակալ անունը¹³³։ Մեկ այլ՝ Ոսկյանց վկայաբանության մեջ, ըստ վարքագրի, բացատրվում են հայ բնաշխարհի՝ Սուկալ և Ոսկի լեռների անունները, որ ծագում են այդ լեռներում մարտնչող շարժման զլխավորների անուններով՝ «Իսկ լերինքն կոչեցան յանուն զլխավորացն սուրբ Ոսկի և Սուկալ»¹³⁴։ Բազմաթիվ են այն դեպքերը, երբ Հայսմավուրքը պատմում է օտար սրբի կամ նահատակի մասին, բացց նյութն աշնակես է կենդանացնում կարծես թե իր աչքով է տեսել, և ամեն մեկի համար մատչելի է այդ ստուգելը, այսինքն՝ մեր միջավայրի ծնունդ է դառնում և նաև ունկնդրին կարող է օգտակար լինել։ Հույն Ակեփսիմա հայրապետի դիակի անհայտանալը պատմելուց հետո վարքագիրը շարունակում է. «...և ի տեղոջս բուսան ծառ մրտենի և է ծառքն մինչև ցայսօր և պտուղն և տերեն ամենայն ցաւոց զեղ է»¹³⁵։ Կամ՝ Բագոսի նահատակության փաստը վավերացնում է ավանդապատմով. «Եւ հատին զզլուխ նորա և պատառեալ տեղին, ուր հեղաւ արինն և եղև վիհ մեծ և է մինչև ցայսօր»¹³⁶։ Տեղային բանահյուսական ժողովրդական իմաստավորման կնիք է կրում իր վրա Աղձնիքում, Մամուշ գետի ակունքներում ապրող ձկների դառն լինելու ավանդությունը. սուրբ Եպիփանն, ըստ վարքագրի, երբ եկավ և բնակություն հաստատեց Մոփրում և «լցոյց զերկիրն Մոփաց վանականօք և զնոյնն առնէր և յԱղձնին, էր աղբիւր մի մերձ գետն Մամուշ, և ձուկն բազում ելանէր ընդ ակնաբերն. և երկու եղբարք հակառակեալը վասն ձկանն, սպան մինն զմիւսըն, և լուեալ Եպիփան՝ ասաց՝ Այսուհետև մի ոք կերիցէ այդի ձուկն։ Եւ դառնացաւ ձուկն և եղև իբրև զլեղի...»¹³⁷։ Նույնիսկ հայերից ու Հայաստանից շատ հեռու կատարվող դեպքերը Հայսմավուրքներում ներկայացվում են հայ ժողովրդի ճակատագրի դիտակետով ու նրա աշխարհայացքով. Պորփյուրոսի Գաղա եպիսկոպոսի տոնին պատմվում է նաև այլ 42 նահատակների մասին. «Տարան ի զլխատումն ի Սամառա. և մինն տաճկացաւ և քառասուն երկուցն հատին զզլուխսն զսրբոցն»¹³⁸։ Քառասուներկու նահատակների զրույցն անտպավորիչ կմնար, եթե չշարունակվեր հայերին շատ

¹³³ Սոփեր, 13, Վենետիկ, 1854, էջ 78։

¹³⁴ Զեռ. 9585, էջ 4 ր։

¹³⁵ Զեռ. 753, էջ 5 ր։

¹³⁶ Զեռ. 8179, էջ 145ա։

¹³⁷ Զեռ. 7463, էջ 192 ա։

¹³⁸ Զեռ. 4512, էջ 264 ր։

հասկանալի ժողովրդական իմաստությամբ. «Եւ ասէ Ամիր Իւմումն. եթէ որպէս զիւր հաւատն ոչ պահեաց, և ոչ զմերսն պահեսցէ»՝ մեկը որ իր հաւատն ուրանում է, նրան չի կարելի վստահել. «Եւ հրամայեաց,—շարունակում է վարքը,— և զնա գլխատեցին և կորեալ ի խաւարն արտաքին»¹³⁹։

Չարի պատժվելու և բարու հաղթանակի մասին ժողովրդական հայացքը առկա է հայսմաւորքային պատումներում. դա երբեմն ուղղակի է, ինչպես վերը նշված օրինակում, երբեմն էլ հրաշագործությունների մնուլի է կրում, բայց ոչ մի զեպքում մոռացութեան չի տրվում. ամենամեղմն այն է լինում, որ հակառակորդներն ամաշում են իրենց արարքներից՝ «Իսկ անօրինացն խիստ փռչմանեալ տրումեցան և յամօթ հարան»¹⁴⁰, պատմվում է Թամարի վկայաբանութեան մեջ։ Միևնույնը և խոսքովու նոր վկայի ընթերցվածում՝ «Եւ յամօթ լեալ սպանողքն, և արդար երեւալ վկայն Քրիստոսի»¹⁴¹։ Բարու հաղթանակի մի հեքիաթային վախճան է Կյուրեղ Երուսաղեմացու կյանքը. «Իսկ սուրբն Կիրեղ յետ այնչափ նեղութեանց և աշխատութեանց, և հալածանաց, և արքայանայ զարձեալ ընկալաւ զաթոռ իւր... և ի բարի և ի խորին ծերութիւն հասեալ հանգեալ յերկնից արքայութիւնն»¹⁴²։ Բայց արդարութեան մեղմ հաղթանակից ավելի լինում են զեպքեր, երբ շարք դաժանորեն է պատժվում. «Ջալսպիսի շարիքս գործեաց Յուլիանոս և ալ խոտագույն և բազում քան զայսոսիկ... և զնացեալ ի Պարսս ի պատերազմն շար կորէտեամբ սատակեցաւ»¹⁴³. մեկ այլ զեպքում՝ «Եւ կինն, որ զրպարտեաց՝ յայսահարեցաւ և ծնաւ ծընունդ աշխարհի. խառն ի մարդոյ և յանասնույ. և յամօթ լեալ սպանողքն, և արդար երեւալ վկայն Քրիստոսի»¹⁴⁴ կամ՝ «Եւ շարախօսն զՈսկէքերանին շարաշար մահուամբ սատակեաց աստուած. ոմանց նեխեցան բերանքն և որդնալից լիալ լեղուացն՝ կորեան, և ոմանք ի խելաց անկեալք և ալ ընդ աշխ խօսելով մեռան. ալք ի պէս-պէս անբժշկելի ախտս և լանքութեի ցաւս ընկղմեալ՝ սատակեցան շարաշար։ Իսկ Թէոփիլոս Աղեքսանդրու պատրիարքն բազում աւուրս յողեարի լեալ՝ հոգին ոչ ելանէր...»¹⁴⁵։

¹³⁹ Նույն տեղում։

¹⁴⁰ Ձև. 4876. էջ 282 ա։ Մարգվանցի, էջ ԵՃԻԹ։

¹⁴¹ Ձև. 1339. էջ 281 ր։

¹⁴² Նույն տեղում, էջ 196 ա։

¹⁴³ Նույն տեղում, էջ 200 ա։

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 281 ր։

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 150 ա։ Հիշենք Վասակի մահվան տեսարանը Եղիշի պատմու-

Բարու հաղթանակի և շարի պատժվելու ժողովրդական համոզմունքը հայամավուրբային պատումներում երբեմն առանցքային հարց է դառնում, ընթերցվածին տալով գրուցապատում, հեքիաթային բնույթ. ահա սրբուհի Մատրոնյա Թեսաղոնիկեցու նահատակության պատմությունը. Մատրոնյան հրեա Պոսիլյա տիկնոջ աղախինն է, երբ տիրուհին իմանում է, որ Մատրոնյան քրիստոնյա է, նրան հրեաների ձեռքն է հանձնում և դանակաբեղով նահատակում. նա ոչ միայն ֆիզիկական ցավերից է տառապում, այլև մարդկային վիրավորանքից՝ «ի ցաւադին վշտացն վիրավորեալ անձինն» և այսպէս «բարի խոստովանութեամբ աւանդեաց զհոգին առ Քրիստոս»: Արարողական գրքի գաղափարական խնդիրն ավարտված է: Սրբուհի Մատրոնյան իր հավատքի համար նահատակվեց: Բայց զրույցն ավարտված չէ. սրբուհին ունի որոշակի հակառակորդ՝ տիկին Պոսիլյան, որի ստոր արարքը հավատարիմ աղախնի նկատմամբ չպետք է որ անպատիժ մնա. և Հայամավուրբը շարունակում է՝ «Իսկ Պօսիլեայ տիկինն իւր յոյժ աղբատացաւ և մուրանայր, եմուտ ի հնձայն զի ժողովեացէ զճմեխալ խաղաղոյն զկուտն, անկու գերանն հնձանին ի վերա նորա և շար մահուամբ սատակեցաւ»¹⁴⁶:

Երկնեա կույսը քրոջ և մօր հետ համակիր է քրիստոնյաներին. հայրը «ցասմամբ մեծաւ» հալածում է սրանց, մինչև իսկ հրամայում է հեծյալներին ոտքի տակ տալ նրանց, և ի՞նչ է տեղի ունենում. «մի յերկարացն հեծելոցն վերացուցեալ զչևտի ոտս իւր էհար զհայրն ի լանջսն և անկեալ յերկիր, խորտակեցան ձեռքն և եղև կիսամահ...»¹⁴⁷:

Պատժվում են ոչ միայն հերոսների հակառակորդները, շար արարք թույլ տվողները, այլև, նաև իրենց հայացքների մեջ անհետևողական ու թույլ գտնվողները,

Ատոմյանց վկայաբանության մեջ, օրինակ, պատմվում է, որ հակառակորդ պարսիկը, տեսնելով նահատակներին հերոսականություներ, աղաղակում է թև՝ «Ես էլ եմ քրիստոնեա» և նահատակվում է, իսկ հայերից մի վախկոտ փախչում է ապաստանում է հովվի մոտ, նրա հագուստով ծաղկում, բայց ի վերջո ոչնչանում է արի շիրիներու պատճառով: Գաղափարն այն է, որ թույլերը մեռնում են ամեն ժամ. ուշադիր քննելու դեպ-

թյան մեջ և կհամոզվենք վերջինիս վկայաբանական ժանրի սահմաններում զրված լինելու վարկածի ճշմարտացիության մեջ:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 199ա:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 229 ա:

բում կտեսնենք, որ Եղիշեի Պատմության գաղափարական հիմքն է կրկրնված այստեղ. «Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարդոյ, յամենայն հոգմոյ շարժի, յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ»¹⁴⁸: Մի փոքրիկ մանրապատումում իսկ ամրապնդվում է ողջ ժողովածուի գաղափարական էությունը, որ հայ կյանքում բացի կրոնականից ստանում է նաև ազգային երանգ:

Սակայն անուղղակի արտահայտված ազգային բովանդակությունից դատ, Հայսմալուրքներում ոչ հաճախակի, բայց հանդիպում ենք նրան արձագանքող հայրենապաշտպան ու ազգապահպան ուղղակի արտահայտությունների Այսպես. Մարիամ աստվածամորը նվիրված ընթերցմունքից հետո ավելացված ենք տեսնում հետևյալ բառերը. «Վասն որո աղաչեմք զքեզ, մայր լուսոյ... բարեխօս լեր տօնողացս քո առ միածին որդիդ քո և Աստուած մեր՝ պահել հաստատուն զեկեղեցիս Հայաստանեայց և զհաւատացեալս փրկել ի ձեռաց անօրինաց»¹⁴⁹:

Միևնույն ձևապարտ Սուքիասանց նահատակության պատմությունն անելուց հետո վերջում կարդում ենք. «Իսկ նշխարք երանելեացն ծածկեալ կան ի նոյն տեղոջն անյայտ: Գրեալ է թէ յայտնեսցի ի զօրանալն հայոց ի վերջին ժամանակս մերձ ի կատարած աշխարհի»¹⁵⁰: Միևնույն վարքի հրատարակված օրինակում և այլ ձևադրերում այս հավելվածը չկա¹⁵¹:

Օտարածին վարքերի շարադրանքում հայ ժողովածուի խմբագիրները, ընթերցվածների վերաշարադրողները նյութը հայ ժողովրդին առավել մատչելի դարձնելու համար այն օժտում են թեւավոր խոսքերով, առածաւանդովածքներով, դարձվածքներով: Ասենք, Հռիփսիմյանց Ընթերցմունքում օրգանական է Տրդատի զայրալից խոսքերը Հռիփսիմեի մերժման առիթով՝ «զի ոչ ախորժեաց, ասէ, զալ պատուով, եկեսցէ անարդանօք»¹⁵². Թարգմանական վարքերում որոշ դիպուկ խոսքեր տեղայնացված են, աֆորիստիկ՝ «Ըզպատին ոչ ծանեաւ, զանպատուութին ծանի-

¹⁴⁸ Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957, էջ 14:

¹⁴⁹ ՁԼՈ. 1339, էջ 15 ր:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 19 ա, ձԼՈ. 8179, էջ 2 ր:

¹⁵¹ Մարգվանեցի, էջ 1Ը, Փեշտավնյան Բ., էջ 101:

¹⁵² ՁԼՈ. 4683, էջ 103 ր:

ցի»¹⁵³ կամ սուրբ Արսենիոսի վարքում՝ «ամենայն, որ քան ղշափն աւելի է, դիւական է»¹⁵⁴ կամ Կրիսկենդոսի վարքում՝ «չիս կատարեցաւ բանն, որ ասէ՝ ոսկի և արծաթ հրով փորձի»¹⁵⁵։

Պատահական չէ, որ հայսմավուրբային շատ ընթերցւածներ ունեն հեքիաթային սկիզբ, սկսում են պատմել ոչ թե որոշակի դիպվածից, այլ շատ հեռվից՝ մի տեսակ էքսպոզիցիա-նախադրություն կադմեոլով պատմելիքը. «Պրովբոսի Հոռմայ թագաւորին եղբայրն Դոմեստիանոս,—սկսում է վարքագիրը,—երկու որդիս ուներ. անուն միոյն Պրովբոս և անուն երկրորդին՝ Մետրոփանէս։ Եւ Դոմեստիանոս հաւատաց յաստուած և մկրտեցաւ և գնաց ի Բիւզանդիայ»¹⁵⁶։ Չնայած թեման ղավանաբանական ընթացք ունի, բայց սկսվածքը լարող՝ հեքիաթային է։ Նման սկսվածք ունի Նիկոլայոսի վարքը. «Այր մի մեծատուն և ազնւական ի Միւռիայ քաղաքին յոյժ աղքատացաւ և կնոջան և երեք դստերօքն մուրանայր և ոչ յագնային»։ Ունկնդրին անմիջապէս գրավում է սկսվածքի լարումը. ի՞նչ է լինում հետո։ Որոշ վարքերում այն ստանում է շատ պարզունակ կամ շինծու ընթացք, իսկ այս դեպքում՝ Նիկոլայոսի վարքում, այն զարդանում է սովորական հեքիաթին շատ ներդաշնակ։ Նիկոլայոս սուրբը երեք աղջկա ճակատագրական պահերին գաղտնի մոտենալով, դրամ է նետում պատուհանից և «զարթուցեալք առաւօտուն» գտին զգանձն և զարմացեալք յոյժ՝ փառս ետուն Աստուծոյ»¹⁵⁷ և այլն։ «Եւ յետ սակաւ աւուրց երանելին Նիկոլայոս նույն շափովն գանձ ծրարեալ ընկէց ընդ պատուհանն»¹⁵⁸։ Եթե այս պատումը տեղագրված չլիներ Հայսմավուրքում, ապա շատ հեշտորեն այն կդիտվեր իբրև միջնադարյան մի զրույց՝ բանահայտական նստվածքով։

Շատ անգամ հետաքրքրաշարժ զրույցներ են պատմվում ոչ անպայման տոնի առթիվ գրված բուն վարքում, այլ տվյալ օրվա հերոսի շուրջ նրա հրաշագործութուններում։ Այսպիսի շափազանց ուշագրավ զրույցի նմուշ է Գուրիասի, Սամոնասի և Աբիբայի տոնի առթիվ պատմվող ըսքանչկագործությունը, որ հենց այդպիս էլ վերնագրված է՝ «Սքանչկագործութիւնք որ եղեն ի ձեռն խոստովանողացն Գուրիասայ»¹⁵⁹ և պատմում է՝ թե երբ Հոռմից զորքեր առաքվեցին Նդեսիա քաղաքը պահպանելու, «էր

153 Ձեռ. 1339, էջ 235 բ։

154 Նույն տեղում։

155 Նույն տեղում, էջ 212 ա։

156 Նույն տեղում, էջ 257 բ։

157 Ձեռ. 4683, էջ 230 բ։

158 Նույն տեղում։

159 Ձեռ. 1339, էջ 97 ա։

աւելոյ կին մի այլրի ասորի, որոյ անուն էր Սոփիայ. և էր նորա զուստը մի կոյս յոյժ գեղեցիկ, որոյն անուն էր Եւփիմեայ: Շարունակությունը վիպական է. զորքի հետ մեկտեղ եղեսիա է գալիս Գոթթոն անունով մի զորական, որ «տեսնալ զաղջիկն ցանկացաւ նմա և խնդրէր առնուլ զնա ի կնութիւն և մայրն ոչ հաւանէր վասն օտար և հեռաբնակ առնն»: Գոթթոնը միջնորդներ է ուղարկում, աղջկա մայրը համոզվում է և «արարին հարսանիսն»: Եւ Գոթթոնը «ոսկով և դիպակով զարդարեաց զԵւփիմեայ, և էին ի միասին աւուրս բազում»¹⁰⁰: Իրերի դրությունը փոխվում է, հին զորականներին նորերը պետք է փոխարինեն և Գոթթոնը պատրաստություն է տեսնում զգի տարցէ զկինն յերկիր իւր»: Սուրբ Գուրջասն արդեն մոռացվել է, ունկնդրին պատում է անհամբերությունը շարունակությունն իմանալու, որ իրոք զրամատիկ է: Գոթթոնը աղջկա մորը վստահեցնելով, երդում տալով, «առ զաղջիկն և ելին ի ճանապարհ»: Ամեն ինչ ընթանում է բնական: Բա՛յց: Երբ մոտենում են արդեն իրենց քաղաքին, Գոթթոնն ասում է կնոջը. «Գիտացիր Եւփիմեայ, զի կին ունիմ և որդիս և պատրաստեայ զքեզ զի ասացես»¹⁰¹: Աղախին եմ, ապա թէ ոչ շարաշար մեղցիս ի կնոջէն իմմէ: Միաժամանակ երեք հարված. առաջին, որ խաբւած է, երկրորդ, որ պետք է իբրև աղախին ներկայանա և տանտիրուհու պատվից ընկնի, և երրորդ, որ նրա կյանքին վտանգ է սպառնում: Բայց սա դեռ ամենը չէ: Զրույցի լարումն ավելանում է՝ Եփեմիան հղի էր: Գոթթոնի ստոր կերպարը գծված է, բայց դեռ ավարտված չէ. նա հանում է կնոջ գեղեցիկ հանդերձանքը, հագցնում է նրան «շուխաւս հինս պատառոտունս և խոշոր կանեփիս, և գլխիւրաց և բոկոտն տարաւ ի տուն իւր և ասէ ցկին իւր՝ Բերի քեզ աղախին մի»:

Գոթթոնից պակաս չէ և նրա կինը, որ հեքիաթային շար կանանց նման անձնական վիրավորանքին հազուրդ է տալիս իրենից լավին ստորացնելով: Նա տեսնելով զգեղեցկութիւն երեսացն և անձինն Եւփիմեայ, որ գիտաց որ և յղի էր, նախանձեցաւ. յոյժ և զամենայն ծանր բան նմա հրամայէր, և յարժամ հարկանէր և շաբաթէր սովով և մերկութեամբ և խիստ ծառայութեամբ»:

Ահա հայամալուրբային մի սքանչելագործություն, որն իր մեջ հեքիաթային շատ բան ունի: Այստեղ կան կենդանի մարդիկ, մարդկային կրքեր ու բնավորութիւններ, կենսական դիպվածների արտացոլումներ, որ լուծում են ստանում սքանչելագործութեամբ միայն: Բայց մինչև

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 97 ա: Զրույցի հաջորդ քաղվածքները նույն տեղից:

սքանչելագործության պահճը նրանք զարմանալի իրապատում են՝ բանահյուսական հերթաթներին ու զրույցներին շատ ներդաշնակ:

Չափազանց հետաքրքրական է Մարութայի վարքում նրան խարդախորեն ճաշի հրավիրելու և հորը նետելու դրվագը, որ մեզ քաջ հայտնի է նևեզ Մսրա-Մեխիբի և Սասունցի Դավթի բանահյուսական ամենավաղ պատումներից: Միայն Մարութայի վարքի բնագրի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ճշտելու, թե վա՞րքն է բանահյուսորեն մտել էպոսի մեջ, թե՞, ընդհակառակը, ժողովրդական բանահյուսական պատումը վարք է ներթափանցել հետագա տարբերակներում: Գրիգոր Լուսավորչի մասին հայսմավուրբային պատումներից մեկում անսպասելի բանահյուսական զուգադրությամբ է ներկայացված դավաճան Անակից Գրիգոր Լուսավորչի նման զավակի ծնունդը. «Եւ մի ոմն յաղգլ առաջին թագաւորացն, Անակ անուն,—պատմում է զրույցը,—խոստացաւ նմա [Արտաշի-րին] գնալ սիրոյ պատճառաւ և սպանանել զխոսրով թագաւորն... պատահաց նմա օթևանս առնել ի դաշտին Արտազու, ի տեղին, ուր ամփոփեալ կայր սուրբ մարմինն Թադէոսի առաքելոյն: Եւ անդ ասի յղանալ մօրն զսուրբ Գրիգոր, որպէս քէ շունն ի վերա շեղչիմ գառն ծնաւ...»¹⁶¹:

Ուշագրավ է, որ այնպիսի մի լուրջ գրական տեսակ, ինչպիսին սրբի վարքը կամ վկայաբանությունն է, դերժ չի մնացել ժողովրդական մտածողության բնորոշ հատկանշից՝ երգիծանքից, ամենաողբերգական պահերին իսկ իրերի կամ խոսքի մեջ զավեշտականը, սրամիտը տեսնելու ու գնահատելու կարողությունից:

Հայսմավուրբային պատմություններից մեկում ծաղրվում է սղոռտախոս հակառակորդը. «Ընդէ՞ր տկարանաս, ով արքայ,—բացականչում է նահատակվող Ենգրափոսը,—Երկիր իբրև զառիւծ և եղեր նկուն որպես պալուէս, եկիր որպես զարծիւ շառաջմամբ և եղեր որպէս զղջիկս անգօր»¹⁶²:

Հավակնոտ հարձակումներից հետո երկշոտ նահանջը բնութագրում է հակառակորդին՝ ծիծաղելի վիճակի մեջ դնելով նրան, ինչպիսի դրվագների հանդիպում ենք փալստոսյան Վասակի սրամիտ պատասխաններում կամ Արշակ թագավորի հավատարմությունը փորձելու դիպվածում, միայն լին վերջինս պատճառաբանված է հայրենի հողի մասին խմաստուն ընդհանրացումով, մինչդեռ Ենգրափոսի խոսքը վերաբերում է հակառակորդի սոսկ մարդկային նկարագրին:

¹⁶¹ Նույն տեղում, էջ 255 ա, Մարգվանեցի, էջ ԺԾԷ:

¹⁶² ՁԼՈ. 7463, էջ 135 ր:

Հիպերիքիոսի նահատակության ողբերգական պատմության մեջ ներ-
հյուսված է գաղափարական մի գրվածք, որ թերևս ստեղծված է իրադրության
գրամատիզմի առավել շեշտակի դարձնելու համար. նահատակ Հիպերի-
քիոսը ի ծնե ճաղատ է եղել. «կունտ էր բնութհամբ,—գրում է վարքա-
գիրը,—Եդ զձեռն ի վերայ գլխոյն և ասէ՝ որպէս անհնարին է բուսանել
մազ ի գլուխ իմ, նոյնպէս անհնարին է մեղ լսել բանից քոց»: Անհավատ
թագավորը նրան կատանքների է ենթարկում և ապա մեխեր գլխին խփել
տալով ասում է. «Ահա բուսաւ մազ ի գլուխդ քո»¹⁶³: Այստեղ կոմիկակա-
նքն այնպես վարպետորեն է ձուլված քսոմոնելիին, որ անակնկալի է բե-
րում ընթերցողին իր ողբերգականությանմբ՝ ատելություն առաջ բերելով
դաժան տիրողի նկատմամբ:

Ոչ պակաս ողբերգական է ներկայացված իշխող հակաքրիստոնյա-
ների լկտի արարմունքը պաղափարի համար անձը զոհող քրիստոնյա նա-
հատակների նկատմամբ: Հայսմավուրքը պատմում է դեռևս Մաքսիմիա-
նոս «կռապաշտ» թագավորի օրերից ավանդված Արդաղիոն կատակասերի
զրույցը, որ որքան ողբերգական, բայց և նույնքան երգիծական է իր
ավարտով: Հակաքրիստոնյա ավագանին հավաքված իբրև գաղափար
ժող-
րանքով ներկայացնում է քրիստոնյաների նահատակության գրվագներ.
խմբից մեկին աթոռին են նստեցնում իբրև դատավոր, Արտաղիոնն ստանձ-
նում է քրիստոնյայի դեր և «այսպիսի առնելով խաղ առնէին զքրիստոնեայս:
Եւ ասէ դատաւորն կատակելով՝ զո՞վ պաշտես: Ասէ Արդաղիոն՝ Յիսուս
Քրիստոս զորդին Աստուծոյ: Եւ բազում ժամս ծիծաղելով վիճէին ընդ
միմեանս: Մերկացուցին դնայ և պրտով ծեծէին թեթև, կախեցին զփայտէ,
որպէս թէ երկաթի ճանկովք քերէին զմարմինն և ժողովուրդքն ծիծաղէին
խրախանօք...»¹⁶⁴: Բայց երբ Արդաղիոնը զգաստանում և զիտակցում է
կատարվածը, հոգեբանորեն վերակառուցվում է և դիմելով կտիացած
ավագանուն, բացականչում է. «Տեսէք թէ որպէս պատուեմ զաստուածսն
ձեր», «և խոնարհեցուցեալ զձեռս իւր յերկիր՝ սկսաւ հանել ի փորոյն
փուքս մեծածայնս և միոյ միոյ ասէր՝ Այս քեզ Ապողոն, այս քեզ Յեփես-
տոս... և որչափ հանէր, բաշխէր կռոցն»¹⁶⁵: Այստեղ տեղի է ունենում հա-
կառակը: Ընթերցողը կամ ունկնդիրը հրճվում է Արդաղիոնի թեև զոհ՝ հիկ
արարմունքով, բայց հոգեբանորեն բավարարված է լկտիների դեմ լկտի

¹⁶³ Զեո. 1339, էջ 79 ա, բ:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 214 բ: Մարգվանեցի, էջ 226:

¹⁶⁵ Նույն տեղում:

վերաբերմունքով: Եվ անկախ այն բանից, թե ղեպքը որ երկրում և ում օրոք է կատարվել, պատումը տեղային է, թե թարգմանական, այն հըն- չեղովյուն է ունեցել միջնագարում բոլոր եկեղեցիներում, որտեղ ըն- թևերցվել է և արձագանքվել այն ժողովուրդների հոգիներում, որոնք շփման եզրեր են ունեցել Հայսմավուրք ժողովածուների հետ: Կյանքի ընդգրկման առումով հայսմավուրքային սրբախոսությունները այնպիսի երեույթ- ներից են, որոնց ուրարները չեն սահմանափակվում ազգային շըր- ջանակներում: Իրենց հիմնական պատմական արժեքից ղատ դրանք ուշա- գրավ աղբյուրներ են արվեստների, բժշկագիտության, բանասիրության, աղբյուրագիտության, գրականագիտության, բանահյուսության և այլ բը- նագավառների հետադոման համար:

Առավել հետաքըրականը Հայսմավուրքներում ընթերցմունքային տարբերակներն են: Այս տարբերակները ստեղծված են կամ մեկը մյուսի ազդեցությամբ՝ թերևս գրական ճանապարհով, բայց մեծ տոկոս են կաղ- մում նաև բանահյուսական ճանապարհ անցած խմբագրությունները. տարբերակ ասվածը փաստորեն տարբեր հերոսներին վերագրված միևնույն կամ նմանատիպ արարքներ են. օտար ակունքներից սերած առանձին դիպվածներ ու գրվագներ՝ տեղայնացված ու վերագրված հայ գործիչնե- րին, բանահյուսական երանգ ունեցող երկխոսություններ, հրաշապա- տումներ, որոնք ոչ միայն այլ վարքերից են փոխանցված, այլև բանահյու- սական այլազան պատումներից՝ առասպելներից, գրույցներից, էպոսից, այնպես որ սա էլ կազմում է հայսմավուրքային ընթերցվածների մյուս ուշագրավ կողմը, որ հատկապես ֆոլկլորագետներին կհետաքըրի:

Հունականից հայ Հայսմավուրք անցած Բիքտորոսի մասին ընթերց- վածում, օրինակ, իբրև միջադեպ պատմվում է Ստեփանյա ալրի կնոջ նահատակության պատմությունը, որ ոչ մի պատմական հիմք չունի, այլ ամբողջությամբ քաղված է նոր կտակարանի պարականոն գրույցից, Հի- սուսի մանկության շարություններից¹⁶⁶. Սըբուհի Ստեփանյան տեսնելով Բիքտորոսի հերոսական նահատակությունը, դատավորին է խոստովանում նաև իր քրիստոնյա լինելն ու նրա օրինակով կոտախների ենթարկվում: Ուշագրավը հենց նրա կրած պատիժն է. դատավորը երկու քաջ տղամարդ- կանց հրամայում է «խոնարհեցուցանել երկու արմալնիս մեծամեծ՝ զմին ձևորն և զոտն ի միւս ծառն և թողին յանկարծակի դարմալենիսն և հերձաւ երանելի կինն յերկուս և հանգեաւ ի Քրիստոս»¹⁶⁷. այդ նույնությամբ կըր-

¹⁶⁶ ՏՆ՝ս Անկանոն գիրք նոր Կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 106—107:

¹⁶⁷ ՁԼԵ. 1339, էջ 92 ա:

կընվա՛ն ենք տեսնում նաև հայկական էպոսում առյուծաձև Մհերի զրվագում:

Բացարձակորեն նույն դիպվածը տարբեր ժողովածուներում վերագրվում է տարբեր հերոսների՝ Գրիգոր Սքանչելագործին և Հակոբ Մծբնա հայրապետին. 7436 ձեռագրում, օրինակ, Հակոբ Մծբնացու հրաշագործությունների շարքում պատմվում է երկու համախոհների մասին, որոնք խաբեությունք փորձում են դրամ կորզել հեղինակավոր հայրապետից: «Երկու աղքատք տեսեալ զնա կամեցան խաբել... և ընկերն եկեալ աղաչէր զնա առնուլ ինչ ի նմանէ ի պատանս մեռելոյ»¹⁶⁸: Սրտախոսությամբ դրամն ստանալուց հետո, երբ ընկերը վերադառնում է, մյուս ընկերոջը մեռած է գտնում. նրա ստախոսությունը դաժանորեն պատժվում է: Միևնույն դիպվածը կարգում ենք նաև 9585 ձեռագրում Գրիգոր Սքանչելագործի վարքում. «Երկու այլք ոմանք ի հրէից կամեցան այսպն առնել և խաբել զՍքանչելագործն. եղև մինն սուտ մեռել և միւսն խնդրեաց ի սրբոց հանդերձս պատանացն...»¹⁶⁹. դեպքի շարունակությունը նույնն է: Մեկ այլ ձեռագրում՝ բիշ ընդարձակ և քիչ տարբեր է. «Եւ նա (Գրիգոր Սքանչելագործը) եհան զհանդերձն իւր և ընկեց ի վերա նորա և յորժամ հեռացաւ սուրբն Գրիգորիոս, ասէ կենդանի հրեայն ընդ սուտ մեռեալն՝ Արի, տես թե ո՞րպէս խաբեցի զայլևոր քրիստոնեայն և առի զհանդերձն. և սուտ մեռեալն եղև ճշմարիտ մեռեալ և բարձեալ կենդանի հրեայն զմեռեալն տարաւ թաղեաց»¹⁷⁰: Աղքատ Ալեքսիանոսի վարքին շատ ներդաշնակ լուծում ունի Ոնեսիմոսի՝ հարազատ տանը կից ծալտյալ ապրելու և հեռանալու զրվագը՝ «ննդրեաց քարտէս և գրեաց ի նմա թէ՛ ես եմ որդին ձեր Ոնեսիմոս և եդ ի պատուհան տան և զաղտ գնաց...»¹⁷¹, վերջինում հաջորդում է առավել իրապատում հետևանքը. «և ծնօղքն իւր խնդրեցին ի բազում տեղիս և ոչ կարացին գտանել զնա և յողբալոցն կուրացան աչք նոցա»¹⁷²:

Հայտնի են Հակոբ Մծբնա հայրապետի, փառատոսյան Հովհան Լալիսկուպոսի շուրջ պատմվող զրվագները, հնձրերների հետ սրամիտ խոսակցությունները, որ կենսական շունչ են տալիս շատ դեպքում միօրինակ պատումներին: Դրանց տարբերակներից է Աբերկիոս Լալիսկուպոսի ըն-

168 Ձեռ. 7463, էջ 142 բ:

169 Ձեռ. 9585, էջ 55 բ:

170 Ձեռ. 1339, էջ 99 բ:

171 Ձեռ. 7463, էջ 19 ա, 1339, էջ 19 բ:

172 նույն տեղում:

թերցվածը. Աբերկիրոսը թեև քաղաքաբնակ է՝ Հերապոլսից, բայց առիթ է ունենում շփվելու հունձ ու կալ անողների հետ: «Եւ յորժամ մերձ եղև,— պատմում է վարքագիրը,— էին ատուրք հնձոց և զկալս հոսէին. և փոշին երթայր յերևս արդարոյն և զաշն ընդյր: Ասէ ցնոսա՝ Սակաւիկ մի դադարեցէք, զի անցից: Եւ նոքա ոչ դադարեցան: Եւ առժամայն դադարեաց հոգմն և նստան յուտել. և Երանելին ծարաւեալ խնդրեաց ջուր ի նոցանէ: Եւ նոքա յուլացեալ յազահութենէ որկորըստեան յառնել և տալ ջուր, այլ ասացին՝ վասն միոյ ալևորի ոչ կարեմք յառնել յուտելոյս»¹⁷³: Բացի աներկյուղած վերաբերմունքից, որ ցույց են տալիս գեղջուկները հոգևոր գործիչներին, պատմում ատկա է մյուս սրբախոսություններին հատուկ առնչությունը բանահյուսական տեսակներին: Աբերկիրոսի զայրույթը որկրամուկների դէմ դրսևորվում է առ աստուած ուղղված խնդրանքով, «ազաչեաց զաստուած տալ նոցա զանյազութիւն և մինչև ցալսօր,— համաստում է վարքագիրը,— գեղջացիքն այնորիկ ունին զանյազութիւն...»¹⁷⁴: Մեկ այլ գեպքում Սպլուտիդոնն է գնում «առ հնձօղսն». սրանք նկատում են նրա գլխին իջնող ցուրը. «և լցան միայն գլուխ երանելոյն ցօղով...: Եւ պշուցեալ հայէին ի նա հնձօղքն և էհարց ցնոսա եթէ՞ ընդէ՞ր հայիք ի գլուխ իմ: Եւ նոքա ասէն՝ Տեսանեմք զհեր գլխոյ բում երբեմն սպիտակ և երբեմն թուի և երբեմն խարտեաշ...»¹⁷⁵: Այս գեպքում Սպլուտիդոնի պատասխանը սոսկ սրբախոսական է և ոչ մի կենսական իմաստություն չի պարունակում. «Ճշմարտութեամբ ասեմ,— պատասխանում է սուրբը,— զի զկնի իմոյ վախճանի մեծապէս փառաւորեսցէ աստուած զչիշատակ իմ յերկրի և ամենայն հոգիք... կատարեսցեն զոցնս իմ պատուով»¹⁷⁶: Մինչդեռ նման զիպվածի մենք հանդիպում ենք հայկական սրբախոսություններում, որտեղ մորուրի և մագերի սև ու սպիտակի հարաբերությանը վարքագրական հերոսը պատասխանում է իմաստաբար: Հարցնողների երգիծական վերաբերմունքին հակադրված է յուրովի «ստրամաբանությունը»— թև գլխի մագերն սվելի շուտ են ճերմակել, բան մորուրինը, որովհետև նրանք ավելի շուտ են բուսել, բան մորուրը:

Գիտական անաչառությամբ պիտի ասել, որ հայսմամուրբային հայկական պատումները գերազանցորեն իրապատում են թե՛ պատմական փաստերի, թե՛ բնավորությունների կենսական լինելու առումով: Անշուշտ,

¹⁷³ Ձեռ. 1339, էջ 75 ա:

¹⁷⁴ Նույն տեղում:

¹⁷⁵ Ձեռ. 7463, էջ 139 ա:

¹⁷⁶ Նույն տեղում:

ներանց մեջ անխուսափելիորեն սուկա են նաև ընդհանուր սրբախոսական գրականության վերացական հրաշապատում տարրերը, բայց իրենց հիմնական կորիզով ու գործունեությամբ հայ վարքերն ու վկայաբանությունները ծանրակշռորեն պատմական ու իրական են. դրանք Հայսմավուրբներում հատուկ որակ են կազմում: Որ վարքը կամ վկայաբանությունն էլ վերցնելու փնենք, դրանք ունակ հող ունեցող ստեղծագործություններ են, ժողովրդի կյանքի ու պատմության հետ սերտորեն շաղախված փաստեր ու կերպարներ, որոնք զգալիորեն տարբերվում են շատ ընդհանուր, մանավանդ տերունական տոների ու կտակարանային կերպարների շուրջ շինծո: պատումներից: Վերջիններս իրական հող ունեցող սրբախոսությունների օրինակով հետագայում «ոհալիստական» գունավորում են ստացել. ներգործուն ուժ ունենալու նպատակադրությամբ, ներարկվել բանահյուսական տարրերով, սակայն առաջին իսկ հայացքից սրահապես տարբեր են սրբախոսական նյութերից:

Հայկական պատումներին ևս օտար չեն միջնադարյան մտածողության բնորոշ միստիֆիկացիան, տեսիլային ու հրաշապատում տարրերը, երկնային զորությամբ ամենադրամատիկ բախումների լուծումները, սակայն սրանք առավելապես վերաբերում են հերոսի երամհու, մասունքային ուժի զորությամբ:

Վարքագրական նման տարրեր կարելի է դիտել ընդհանուր և հայկական պատումներում: Այսպես, Գղիկերիա կուլսի հիշատակում պատմվում է, թե ինչպես նրան կտտանքների ենթարկելուց հետո բանտ են նետում և նա երկար օրեր անավաղ ապրում է փակի տակ. «հրեշտակ տեսառն կերակրէր»¹⁷⁷, — բացատրում է վարքագիրը. զարմացած է նույնիսկ դատավորը. «և երթեալ դատաւորին ի բանդն ետես սկաւառակ կաթամբ և հաց, և ջուր և զարմացաւ, զի դուռն փակեալ և կնքեալ էր»¹⁷⁸: նման դիպված կա նաև ասորի Աբդայի և Աբդիշոյի վարքում. սրանք նույնպես բանտ են նետված, բայց սրանց կերակրում է ոչ թե աստծո հրեշտակը, այլ «կին մի այրի, որոյ տունն մերձ էր ի բանդն տայր ընդ պատուհան բանդին, տայր հաց և ջուր... հրամանաւ տեսառն»¹⁷⁹:

Նույնը հանդիպում ենք և մեր՝ Գրիգոր Լուսավորչի վարքում, միայն թե վարքագրական շաբլոնից այն վեր է ածվել անհատականացման ընդգծված հատկանշի, որ 13 երկար տարիներ խոր Վիրապում անսվաղ փակ-

¹⁷⁷ Ձեռ. 1339, էջ 240 բ:

¹⁷⁸ Նույն տեղում:

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 242 ք:

ված մնալու գրավագույն, կապվում է միմիայն Գրիգոր Լուսավորչի՝ հայ քրիստոնեական եկեղեցու հիմնադրի անվան հետ: Դժվար է, օրինակ, պնդել, թե Գրիգոր Նարեկացու հայսմավուրքային վարքը կամ նրան վերագրվող հրաշագործությունները, անպայմանորեն ժողովրդական զրույցներից Հայսմավուրք մտած պատումների են. թարգմանական վարքերի գոյությունը, ընդհակառակը, կարող է վկայել, որ Նարեկացուն վերագրվել են հատկանիշներ, որոնք այլ սրբախոսությունների ներգործությամբ են ստեղծվել, բայց մեր պայմաններում տեղայնացվել ու անհատականացման միջոց են հանդիսացել կերպարի համար: Այս տեսակետից ուշագրավ մի գրվագի ենք հանդիպում սուրբ Բենիգիկոտոսի տոնի հիշատակի ընթերցվածում. այստեղ նույնպես հերոսը ենթարկվում է շար ուժերի մեքենայություններին. «միայնակաց» Բենեգիկոտոսի տիրոջ թեւադրանքով կերակուր է հասցնում երեցներից մեկը. «Եւ զնաց երէցն առ սուրբն և ասէ՝ Հայր, զատիկ է, ճաշակեա ի կերակրոցո զոր առաքեաց քեզ Տէր: Եւ սուրբն ոչ զիտէր, թէ զատիկ է, և առեալ կերակուր գոհացաւ զտեսնէն»¹⁸⁰: Այստեղ ուշադրության արժանին այն է, որ Բենեգիկոտոսը երկարօրյա պահքերի մեջ չի էլ զգացել, որ արդեն զատիկ է և կարող է ուտել: Նարեկացին էլ իր սրբակենցաղ կյանքում կիրակի ու լի օրն է մոռացել. բայց նմանությունը միայն այս չէ. օգտվելով Բենեգիկոտոսի երկնային վերացական նկարագրից, նրա հակառակորդները՝ «անսուրբ կրօնաւորքն» «մատուցին նմա մահադեղ», Նարեկացուն էլ վարկաբեկելու համար սպանված աղավիններ են մատուցում, և երկու դեպքում էլ շար ուժերը պարտվում են սրբությունների առաջ. Բենեգիկոտոսին թույն մատակարարողների աչքի առջև թույնով լեցուն ամանն է կոտրվում «խաշիւ կնքեալ խորտակեցաւ ամանն», իսկ Նարեկացին էլ իր հրաշագործ ուժով աղավիններին է կենդանացնում:

Հազարամյա գրական ավանդույթ ունեցող ժողովրդի գրավոր այս մշակույթում գրեթե անհնար է դառնում գրանց ակունքների, արմատների, պատվաստումների բացահայտումը, քանի որ գրանց անմիջական ակունքներն էլ իրենց հետ բերում են ավելի վաղ գրականությունների ու բանահյուսական պատումների առավել վաղ շերտեր ու ընդհանրություններ¹⁸¹: Նրանց սկզբնավորման ազդակն այս դեպքում պակաս նշանակություն է ստանում, քան նրա գործող կյանքը, մանավանդ որ նման

¹⁸⁰ Ձեռ. 2695, Լջ 75 ա:

¹⁸¹ Sб'а А. Н. Веселовский, Избранные статьи (1828—1938), Л.—Д.—«Худ. литература», 1939.

կենսական-ամենօրյա ժողովածուների վրա իրենց կնիքն են դրել հնուց ավանդված մշակութային, հեղինակային, ապա նաև թարգմանական ու հետագա խմբագրական շերտեր, որոնց տարալուծումը միշտ չէ, որ անվերապա հելի արդյունքների է տալիս: Ուստի և այս ժողովածուներին անդրադառնալիս պետք է ելնել նրանց գործող կյանքից՝ թե իբրև հայ գրականություն մեջ խմորված ու միջնադարի մարդու ճաշակը խմորող ժողովածուներ, որքանով են նրանք տեղայնացված ու ազգային երանգ ստացած, ինչպես են կապվում տվյալ ժողովրդի պատմական կյանքի ու ճակատագրի, ազգային բանահյուսական ու գրական ավանդների հետ, թարգմանական կամ փոխառնված լինելու հետ մեկտեղ դրանք ի՞նչ դեր են խաղացել տվյալ ժողովրդի գաղափարաէթիկական ու գեղագիտական հայացքների ձևավորման մեջ:

Կարևորն այս դեպքում տվյալ ժողովրդի պաշտոնական գաղափարախոսության, ժողովրդական հայացքի ու տենչանքների, տվյալ ժողովրդի բանահյուսական ակունքների, գրավոր մշակույթի ավանդների առկայության փաստի վերահսկումն է, որն իրավունք է տալիս Հայսմավուրքները դիտել իբրև հայ միջնադարյան ժողովածուներ և որոշել նրանց դերը հայ գեղարվեստական արձակում: Անշուշտ, շատ ընդհանուր տեղիներ, նույնիսկ նույնություններ կան տարբեր ազգերի մեջ գործող այս ժողովածուներում, բայց որքան էլ նրանք ընդհանուր ակունքից են բխում, լստ էության նրանք դարձել են միմյանցից տարբեր բովանդակություն և պատմական արժեք ունեցող հուշարձաններ, որոնց մեջ մեզ համար ամենակարևորը բնականորեն հայ ժողովածուներն են իրենց ազգային ուրույն նկարագրով՝:

ՄԻՋՆԱԿԱՐԸ՝ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔ

Այս ամենի հետևանքն է, անշուշտ, այն իրողությունը, որ Հայսմավուրք ժողովածուներին են դիմել համաշխարհային գրականության շատ մեծեր իրենց գրական կոթողներն առեղծելիս՝ սյուժեներ, կերպարներ, հանգույցներ րադելով արարողական այդ «անշուք» ժողովածուներից: Երբեմն այդ «մշակումները» ուղղակիորեն են կապվում հայսմավուրքային պատումների հետ, երբեմն՝ ոչ ուղղակի, բայց երկու դեպքում էլ շատ ուշագրավ են իբրև միջնադարյան գրականության ավանդների արձագանքներ հետագա դարաշրջաններում:

^{*)} Հայսմավուրքային զուտ հայկական շերտը սպասում է իր ուսումնասիրողին:

Բարսեղ Կեսարացուն վերագրված սքանչելագործություններից մեկում, օրինակ, հանգիպում ենք հողին սատանային վաճառելու ուշագրավ դրվագին, որ, ինչպես հայտնի է, ֆաուստյան կոնֆլիկտի առանցքն է կազմում:

Ոմն իշխան դստերն ուզում է վանք տալ կրօնավորության, բայց նրա քրիստոնյա ծառաներից մեկը սիրահարված է աղջկան. կանխելու համար իշխանի մտադրությունը, նա գնում է կախարդի մոտ և հսկայական գանձ խոստանալով խնդրում հնար իշխանի աղջկան կնության առնելու: Կախարդը համաձայնում է, պայմանով, որ ծառան ստորագրություն տա Քրիստոսից հրաժարվելու մասին. «Եւ կախարդն առ ի ծառայէն ձեռնագիր ուրացութեան զՔրիստոս...»¹⁸²: Աղջիկն ամուսնանում է, բայց ժամանակ անց նկատում է, որ ամուսինը եկեղեցի չի գնում, չի աղոթում և քրիստոնեական ավանդներին չի հետևում: Կնոջ հարցմունքին ամուսինը պատասխանում է խոստովանությամբ: Կինը ողբերգություն է ապրում և օգնության դիմում Բարսեղ Կեսարացուն: Վերջինս զրույցի է հրավիրում երիտասարդին, հարցնելով, թե նա կկամենա՞ վերադառնալ յուր հավատին. Երիտասարդը պատասխանում է՝ «Ոչ կարեմ քանզի ձեռնագիր տուեալ եմ սատանայի...»¹⁸³: Սատանային հողին ծախելու այս միջնադարյան ընդհանուր դրույքը Գյոթեի «Ֆաուստի» ուշագրավ աղբյուրներից է, որ պահպանվել է նաև հայկական Հայսմավուրքներում¹⁸⁴:

Միջնադարյան գրական ավանդների, հայսմավուրքային պատումների օգտագործման մի ուշագրավ նմուշ պիտի համարել ֆրանսիական կլասիցիստներից Կոռնելլի «Պոդիքտոս» դրաման, որի հիմքում ընկած է նույնանուն հերոսի նահատակության պատմությունը. բայց մեծանուն դրամատուրգը Երկրորդական տեղ է տալիս վկայաբանական փաստին, առաջին պլան մղելով հայսմավուրքային պատումի լրացուցիչ կողմը՝ նեկրոսոն ընկերոջ հետ նրա մտերմությունն ու մարդկային ջերմ նկարագիրը: Հայկական Հայսմավուրքում պահպանվել է հավանորեն հունական աղբյուրից անցած Պոդիքտոսի վկայաբանությունը, որի մեջ շեշտված է Պոդիքտոսի ընկերոջ տենչանքը՝ նահատակվելու. «Եւ ակն ունէր թէ որպէս քրիստոնեայ կալցեն զինքն և վասն Քրիստոսի մեռանիցէ»: Չնայած այս երազանքին, իրր նահատակության պահը գալիս է «...յոյժ

¹⁸² Ձեռ. 1339, էջ 125 բ, ձև. 1522, էջ 376 բ, «Յաղագս երիտասարդին մոլորելոյ և ուրացողի զՔրիստոս»:

¹⁸³ Նույն տեղում: Ձեռ. 1522, էջ 377 ա:

¹⁸⁴ ՏԵՄ Սրապյան Ա., Հայ միջնադարյան դրույցներ, Երևան, 1969, էջ 215—220:

տրտմէր ոչ վասն մարտիրոսութեան, այլ վասն բաժանելոյն ի Պօղիհոտ-
մէս¹⁸⁵։

Եթէ հայսմավուրբային Պողիքտոսը Կոռնելլի համար գրամայի նյութ է դարձել, ապա պոռնիկ Տալիսան ու Ճգնակյաց Պափնուտիոսը վարքագրական հրաշալի կերտվածքներ են Անատոլ Ֆրանսի համանուն նովելում։ Տալիսի կերպարն ուղղակիորեն առնված է հայսմավուրբային ընթերցվածից («Յաղագս Տայասայ պոռնիկին»), մինչդեռ էպիղոգիկ Պափնուտիոսը ներկայանում է իբրեւ միջնագարջան Ճգնավորական հոգեբանության և արարք-գործունեության մի զարմանալի ընդհանրացում։

Քիչ տարբեր է ժանրային առումով Լև Տոլստոյի «Հայր Սերգին» աննման պատմվածքը, որի արմատները, ուղղակի աղբյուրի առումով, չես կարող չափնաբերել ոչ միայն Հայսմավուրբներում, այլ թերևս և միջնագարջան գրականության մեջ։ Չնայած դրան, չնայած ուղղակի նախատիպի բացակայությանը, Տոլստոյի հայր Սերգին ունակաստորեն կերտված վարքագրական մի սքանչելի կերպար է, ռուս առաքինի մարդու հոգեկան տվյալտանքների, հոգու և մարմնի անվերջանալի պայքարի մասին։ Դա մի ամբողջ դարաշրջանի մտայնության ու հոգեբանության ընդհանրացումն է, գեղարվեստորեն ընդհանրացված կերպարը, որի մեջ ի վերջո կյանքն է հաղթանակում։ Բաղմամբիվ օրինակներ կարելի է բերել նաև այլ հեղինակներից։ Մանրասույզ ուսումնասիրությունը շատ նոր փաստեր կարող է բերել այս ուղղությամբ, բայց բերվածն էլ քիչ չէ համոզվելու համար, որ միջնագարջան գրականությունը՝ հատկապես հայսմավուրբային պատումները բավարարել են ոչ միայն անցյալի մարդու հոգեկան պահանջմունքները, նույնպես նրա նկարագրի ձևավորմանն ու բարոյակրթմանը, այլև շատ գեղարվարում ազդակ հանդիսացել հետագա գրողների դասական ստեղծագործությունների համար՝ մասնակից լինելով գրականության զարգացման պրոցեսին¹⁸⁶։

Հայ միջնագարջան Հայսմավուրբ ժողովածուները գերաճել են իրենց վրա զրված արարողական նպատակներից, ընդլայնել են իրենց ներգոր-

¹⁸⁵ Ձեռ. 1339, էջ 132 ր։

¹⁸⁶ Միջնագարջան ակունքներից ազդակ առած մյուս դասական ստեղծագործությունը Ալիգիերի Դանթեի «Աստվածային կատակերգություն» անկրկնելի երկն է, որը թեև ուղղակի կապ չունի բուն հայսմավուրբային պատումների հետ, բայց կամրջվում է նրանում մեծ տեղ գտած տեսիլային գրականության ժանրին։ Համաշխարհային գրականագիտության մեջ դիտված է, անշուշտ, Դանթեի կապը միջնագարի հետ, բայց ստեղծագործության որոշակի ազդակի կամ նախօրինակի մասին խոսք չի ասվել այն դեպքում, երբ հայկական ձեռագրերում պահպանված են այդ աղբյուրների հնագույն տարբերակները, որ նախահիմք են հանդիսացել Դանթեի համար։

ծուլյան սահմանները և իբրև միջնադարի գեղարվեստական արձակի ստեղծագործություններ ներառվել հայ գրականության ընթացքի վրա:

Նրանք արթուն են պահել հայ ժողովրդի աղատաբարձ ոգին, կոփել կամքը՝ դիմագրավելու դարերի տևող բռնապետություններին, մարտնչելու ու մաքառելու հայրենական ավանդների պահպանման համար:

Նվնդվել միջնադարի ասկետական ոգուց, բայց հենվելով ժողովրդական իմաստության վրա, նրանք մերժել են հոգևոր հարուստ կյանքից հեռու ընշաբաղցությունը, ազահությունը, փառամոլությունը, շահագործումը՝ դրան հակադրելով ժուժկալությունը, սակավապետությունը, ուրիշի համար անձը ի սպաս դնելու պատրաստակամությունը, համեստ ու առաքինի մարդկանց նկարագրեր՝ բարոյական շարժանիշ սահմանելով սերունդների համար: Հայսմավուրբային այդ «սրբերը» ոչ այլ որ են, քան ժողովրդի իղձերին ներդաշնակ, նրա իղևալներով կերտված հերոսներ, որոնք ապրել են ժողովրդի հետ մեկտեղ, ինչպես նրա խսկ կերտած բանահյուսական կերպարները, հերիաթների դրական հերոսները, առասպելների ու էպոսի անմոռաց դեմքերը:

Հայսմավուրբները ոչ միայն հարստացրել են ունկնդիրների գիտելիքները, ներազդել նրա ճանաչողական աշխարհի վրա, ոչ միայն բարոյակրթական զորեղ ուժ են հանդիսացել միջնադարյան մարդու հոգեկան աշխարհի ձևավորման ընթացքին, այլև իբրև գեղարվեստական արձակի ուրույն գրքերումներ, հող հանդիսացել դրական նորանոր տեսակների ու ստեղծագործությունների համար: Նրանք ներառել են իրենց մեջ արձակի փոքր պատումի զանազան տեսակներ, ինչպիսիք են՝ զրույցը, նովելը, ակնարկը, պատմական վիպակն ու նույնիսկ հոգեբանական էտյուդը: Սրանք միջնադարում գրքերով են գիրկընդխառն, պարարտ հող հանդիսանալով հետագայի դրական տեսակների առավել տարբերակված ժանրերի, ինչպես և հայ գրական ժանրերի պատմության ուսումնասիրության համար:

Այս է յիշատակարան տառնից տէրունականաց եւ սրբոց Աստուծոյ, ցուցմամբ աւուրց Հոռոմի ամսոց ըստ իւրաքանչիւր սրբոց հանդիպմամբ շարշարանաց կատարման, եւ կամ ըստ խաղաղական ելից հանգստեան մարտիրոսաց եւ հայրապետաց սրբոց, որք հաճոյեցան Աստուծոյ, նեղ եւ անձուկ ճանապարհուն Քրիստոսի: Զոր էս Գրիգորիս ծառայ Աստուծոյ եւ դիտալէտ Հայաստան ազգիս, համարձակեալ վասն սիրոյ վկայից Քրիստոսի, լաւելի ի նախակարգեալ տառնոց Հոռոմի ամսոց, ընտրեալ ի Տաւնամակաց յոբոնց զսակաւս, որ ի բազմաց անփոյթ էր լեալ, եւ մեր աշխատեալ զաշխարհի համատաւառհաւաք Տաւնամակս գրեցաւ՝ ի պայծառութիւն եկեղեցւոյ, զոր ցանկ ընթերցցի ի նմա ի ժամու սոսկալի պատարագին, դի մի՛ որ աւելորդ վարկցի՝ զորոց զվարս քաղաքավարական պատմութեանց, զոր ոչ գոյր առ մեզ նալ գրուլ, մեր աշխատութեամբ թարգմանեալ ի լուսնականէն ի մերս գիր եւ բառ: Վասն որոյ աղաչեմ սրբութեմ վկայութս զամենեւեան առ հասարակ մի՛ անփոյթ առնել զմեր աղէտանջ երկս աշխատութեան, այլ ընդարինակել գաղափարաւ եւ գրելով պահել յամենայն սուրբ եկեղեցիս, եւ անխափան առանց յերկուանալոյ կատարել զկանոն ընթերցուածիս ի տառնս յիշատակի սրբոցն, եւ որ ոք գրէ զգիրս զայս, աղաչեմ գրել ի դուխս գրոցն եւ (զԳրիգորիս համանուն իմ) զդոյզն բան յիշատակի մերոյ, եւ տղաթիւք յիշել ի Քրիստոս զտարող զրոցս, եւ զԳրիգորիս համանուն իմ եւ համազգի, որ եւ գրիչ եւ յարինիչ զրոցս, յիշեսցիք ի Քրիստոս. եւ որք յիշէրդ յիշեալ լիջիք արհնութեամբ ի տէր: Յիշեա տէր եւ ողորմեա:

Ես Կիրակոս տրուպ գիտնական եւ տնարժան ծառայ Աստուծոյ, ծանուցանեմ ձեզ վասն սուրբ կտակիս՝ Տաւնամակի եկեղեցւոյ սրբոյ եւ աստուածայնոյ յիշատակի: Որպէս գիտէրդ ի սկզբանէ հաւատոց մերոց, մեր ուղղադաւան ազգիս արամեան, որդիացեալք աշակերտութեամբ սրբոյն Գրիգորի աստուածաման լուսաւորչին մերոյ, համարէն ամենայն սրբութեմ, որ եղեն յազգս մեր հաճույ Աստուծոյ, զայս գրոյ եկեղեցւոյ անփոյթ

արարին վասն ժամանակին, և մեծ և աստուածային տաւնքն խաչի կամ
 ևստուածածնի, վկայիցն և սուրբ Հայրապետացն, Հարցն և ճգնաւորացն և
 կուսանացն վկայիցն, անփառաւոր և անկատար և անյարմար լինէր ա-
 ռանց այս գրոց: Եւստ Հոգին սուրբ ազգեաց սուրբ Հայրապետին Գրիգորիսի
 աստուածասիրի և վկայասիրի, և նոր սկսեալ յարինեաց զսա՛ ըստ
 ամենայն տաւնից արժանապէս ի դէպ սաղմոսիւմ և ընթերցուածով
 աստուածախաւիւր: Բայց ոչ ի գլուխ աւարտեաց զամենայն՝ զոր պարտ
 և արժան էր տաւնելոյ. ապա ինձ, որ միշտ ընդ նմա էի, և յամենայն իրս
 աստուածայինս կցորդ և յորդորիշ, և փոյթ յաշխատութիւն Հոգւորաց, և
 ևստուծոյ սիրելեաց, Հոգ եղ ի վախճանելն իւրում մի՛ անփոյթ առնել
 զսմանէ, այլ յանկել ընթերցուածով ըստ արժանիւն, զոր և արարի: Զի
 հարկ եղեալ է մեզ յԱստուծոյ տաւնել զսոսա. և է այսպէս. Բառասուն և
 վեց տաւն սուրբ Հայրապետն կարգեաց, և երեսուն եւս տրուալս յաւելի,
 որ լինին երեսնասուն և վեց, զորս բոլոր տարւոյն բաւական համարեցաք
 ընթերցուածովքն և մարտիրողաւմն. տասնաւուսին լինի. և է որ երեքտա-
 սան. և տաւնքն կարճ տարին յաւելուն. զորք զերկուսն ի մի տաւնեցէք-
 Գ. և Դ. և այսպէս զբնան ի գլուխ տարէք, զի ըստ հաւատոց մերոց և տաւնի
 սբոցն պարտ է որ կատարին. իսկ զի սկզբնից սբոց և աստուածասի-
 րաց զրեցի, զի մի՛ հայիցիք ի ծոյլ և յորովայնամոլ կրանաւորսն, և ընդ
 նոսին կորնչիցիք ի կենացն Աստուծոյ, այլ սբոց նմանել մեծ փափագ-
 մամբ տաւնեսչիք, մեր զընթերցումմն առատապէս որիշ որիշ եղաւ ըստ
 ամսոյն, զի մի՛ աղբատ եղիցի կարգք եկեղեցւոյ. հարկ և հրաման ունիք
 յԱստուծոյ, զսակաւ յիշատակարանս խրատու ի գիրսն՝ զոր նորոգիցէք՝
 յարինակել, որպէս և զՀոգւոր տեսուն յիշատակ ի նոր գիր. և ի վերայ
 ամենայնի զմեզ զերեքեանս ի նոյն, զսուրբ կարողիկոսն, և զհամանուն
 կարեւոր իւր Գրիգորիս, և զիս զկիւրակոս յիշեսչիք առաջի Քրիստոսի ի
 սուրբ խորհրդին, և ի խորոց սրտէ խաղաղութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ.
 և նոյն ինքն Յիսուս Քրիստոս ամենեցուն ողորմեսցի և արժանի արասցէ
 արքայութեան երկնից, որում փառք յաւիտեանս:

Սարգիսյան, Հ. Բ, էջ 1209—1210, Հովսեփյան,
 Հ. Ա, էջ 269—270, տե՛ս նաև Մ. Մազիստրոս, Ճաշոցր:

ՀՈՎՍԵՓ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

...Իցենն եւ այլ հոռոմ տօնացոյցք, յորում շէն այս սուրբքս զրեալ,
 այլ այլ սբոց պատմութիւնք են եւ եթէ որչափ սուրբք իցին ընդ ամենայն
 երկիր, առաւել բան զհաղարս հաղարաց եւ բիւրս բիւրոց եւ ոչ որ գիտէ

զթիւան եւ զհամարնն, բայց միայն ընդող (sic) հոգոց նոցա Քրիստոս, որ հրաւիրեաց եւ ընդրեաց յորովանէ եւ գրեաց զանունս նոցա յերկինս ի գիրս կենաց եւ կարգեաց ի դասս հրեշտակաց ի տեղի ստորանկելոցն:

Ես անարժանս եւ տգէտս եւ մեղատոր քարգմանիչս Յովսէփ, ծնեալ եւ սնեալ եւ ծերացեալ յաստուածապահ քաղաքիս Կոնստանդնուպօլիս եւ զհայրենի լեզու եւ զգիր ի տեղիս ուսեալ, ի միոյ հոռոմ Տանացոյցէ թարգմանեցի զՃառս կարճագոյնի* ի թորգոմական բարբառ ի Ն. եւ Խ. թուականութեան Հայոց. եւ էր յԱղամայ ՉՌՇ անցեալ ամաց. եւ յուղարկեցի ի Հայոց եկեղեցիս, որ ընթեռնուն եւ գրեն լիւրաքանչիւր սրբոցն զճգնութիւնս եւ յիշեն յանուանէ զմեղատոր հոգիս եւ վարձս ի վարձատուէն առցէն. ամեն: Եւ վասն զի ծանր եւ անծանաթ իցեն անուանք սրբոցն, այսպէս գրեցի, յորում գրեալ է թէ վկայարանութիւն սրբնոյն. զիտասջիր որ մարտիրոս այր էր եւ յորում գրեալ է վկայութիւն սրբոհուն, գիտասջիր որ մարտիրոս կին է եւ յորում գրեալ է վարք երանելւոյն, ոչ է մարտիրոս, այլ առաքինի եւ աստուածահաճոյ վարիք ճղեալ վասն անուանն, որ ի Քրիստոս:

Տաշլան, հ. Բ, կազմեց Համազասպ Ռսկյան, էջ 693:

Ալիկյան Ն., Հովսէփի Կոստանդնուպոլսեցի, «Հանդէս ամսօրեայ», 1957, № 1—2, էջ 3, 10:

ՏԵՐ-ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ Ա.

...Կարգեալ եղև բովանդակ տօնք սոցա աշխատութեամբ տէր Իսրայէլի, ի խնդրոյ Զաւալ-Դաւլային տեառն խաչենոյ, հրամանաւ Վանական վարդապետի եւ հարադատին Գրիգորոյ տէր Իսրայելի զի նոքա հրամայեցին նմա, հայելով ի համբերութիւն եւ ի հնարիմաց գիտութիւն նորա, զի ջանս եղեալ զայցէ զօր նահատակութեան սրբոցն, որ գրեալ կայ ի լիակատար պատմութիւն նոցա, համառօտելով նմա զսքանչելի կատարումն սոցա: Եդ ընդ այլ կարգի եւ զԱյսմաւուրս, զոր միաշունչ եղեալ՝ անսղալ զտարին կատարեն: Բայց ոմանք յանգէտս եղեալ հակառակին այսպիսի գեղեցիկ եւ սքանչելի ընթերցմանց, որ յամենայն օր զլսելիս մեր զարհուրեցողանեն եւ դողումն ցաւագին տան անձանց մերոց, եւ ճանաչել ի-

* Բնագրում՝ զճառ առաւտի, որ ուղղել է Ալիկյանը:

մանամբ, թէ այնպիսեացն է արքայութիւնն աստուծոյ, և զայս զմտաւ ածեալ՝ խորհիմբ, թէ մեզ զի՞նչ լինիցի՝ ծուլիցս և հեզգացելոցս:

...(Գրեցաւ) ի թվ. ԴԶԶ. (1427), ի յանապատս Տրապիզոնու, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս և սուրբ Յովհաննէսիս... ձեռամբ Ղազարի Ղրիմեցոյ...:

Ավգւրյան, հ. ԺԱ, էջ 27, Խաչիկյան, հ. Ա, էջ 369—370.

...Աշխարհասէր մարդկան՝ ընչից ցանկացեալ՝ բազում ջանիւ յայլմէ յայլ գաւառ անցանհն, որպէս զի զշահն աճեցուցանել կարասցեն, ոմանք լայնատարած ծովուն ծփանաց զանձինս տուեալ, փրփրադիւ խորոցն անդընդապտուտ ալեացն արաւաշնութիւնն կարծիւր զմեծանալոյն շահն առաջի աչաց ունելով համբերեն ամենայն վշտաց, իսկ այլք ստորիջիւր յատակս ծովուն առ ի խնդիր լուսաիլձ մարգարտաց, լաւ համարելով զմահ անձանց բան զվատիցն անուն ժառանգել, որ և յոլով անգամ ի շահելն զանշահութիւն կենաց շահին: Բայց մեք յիշատակեսցուր զանուանս այնոցիկ, որ գրեալ է ի դպրութիւն կենաց, որք ծանեան հոգով և իմացան զստութիւն կենցաղոյս, և թողեալ կամաւ զվայելչութիւն և զմեծութիւն և զփառս՝ ակն ունելով առ յոյսն ամենեցուն Քրիստոս, ելեալ բնակեցան ի յայրս և ի ծերպս վիմաց, անդ բազում ճգնութեամբ անցուցանէին զամենայն ժամանակս կենաց իւրեանց՝ ի ցուրտ և ի տաւթ, և ամենայն փորձանաց սատանայի ժուժկալեալք լինէին: Նաև մարտիրոսք յաւարութեամբ դիմէին ի սուր և ի հուր, և ի յայլ ամենայն զարհուրելի տանջանս և ի սոսկալի մատնէին զանձինս կամաւ՝ վարդազոյն աւրեամբ ներկեալ զմահ ճաշակէին վասն հրանաւէտ կենացն և անթառամ պսակացն արժանի լինէին, որ կա պատմութիւն սոցա ի լիակատար ճառս սոցա, զոր յետոյ կարգեալ եղև բովանդակ տաւնք սոցա աշխատութեամբ տէր Իսրայէլի, ի խնդրոյ Զաւա(1)–Գաւալիմ՝ տեառն Խաչենոյ, հրամանաւ //Վանական վարդապետի և հարազատին Գրիգորոյ՝ տէր Իսրայէլի: Զի նորա հրամայեցին նմա հայելով ի համբերութիւն և ի հնարիմաց գիտութիւն նորա, զի ջանս եղեալ գոցէ զաւր նահատակութեան սրբոցն, որ գրեալ կա ի լիակատար պատմութիւն նոցա, համառատելով նմա զսքանչելի կատարումն սոցա եդ ընդ այլ կարգի և զԱլսամուրս, զոր միաշունչ եղեալ անսխալ զտարին կատարին: Բայց ոմանք յանգէտս եղեալ հակառակին այսպիսի զեղեցիկ և սքանչելի ընթերցմանց, որ յամենայն ար զլսելիս մեր զարհուրեցուցանին, և զողումն ցաւադին տան անձանց մերոց և ճանաչել իմանամբ, թէ այնպիսեացն է արքայութիւնն աստուծոյ:

ևս զայս մտաւ ամենալ խորհիմք, թէ մեզ զի՞նչ լինիցի՝ ծուլիցս և հեղ-
 ատեցելոցս: Այլ միայն յայս տպաւինեալ՝ յամար սրտիւ տառնելով զյիշա-
 տան սրբոցն և բարեխաւս առնել առ աստուած, զի հաշտեացի ի մեզ և
 բարձքէ զպատուհաս մեղաց մերոց. տաւնք ըստ Հայոց և ըստ Հռոմոց
 ամսոց. յիշատակ և վարք և վկայութիւնք ամենայն սրբոց, զոր կատարէ
 եկեղեցի ի փառս Քրիստոսի: Բայց գիտել պարտ է, թէ այն, որ ասէ յի-
 շատակ՝ միայն յիշատակ է սրբոց, զոր պատմութիւնն չիշէ վասն պի-
 տոյից, իսկ այն, որ ասէ վաբ՝ զայն յայտ առնէ, թէ առաքինութեամբ և
 հաճուական վարութեւն ճշնեալ սուրբքն հանգեան ի Քրիստոս, իսկ որ ասէ
 վկայութեամբիւն՝ յայտ է թէ արեամբ նահատակեալ սուրբքն վկայու-
 թեամբ կատարեցան ի Քրիստոս: Եւ դուք եղբարք, անխարդախ ընկալա-
 ռուք սիրով և ընթերցեալ ուրախասցիք ընդ պսակիլ մարտիրոսացն, որք
 բարեխաւս են առ տէր վասն մեր, զի ընդ նոսին ընկալցուք զպսակն ան-
 թառամ ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է արհնեալ: Վասն որոյ փա-
 փազող եղեալ այս մեծազարդ սաղարթափթիթ ծաղկաւէտ բազմաբեղուն
 բուրաստանիս պատուելի և հոգեւէր բարեպաշտն պարոն Ստեփաննոսն և
 եւս զրել յիւր հալալ վաստակոցն յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամե-
 նայն մերձաւորացն: Արդ, աղաչեմք զձեզ, ով որդիք նոր Սիոնի և ման-
 գունք սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով,
 յիշեցիք սրտի մտաւք ի մաքրափալ յաղաթս ձեր զպարոն Ստեփաննոսն,
 և զհամեստ կողակիցն իւր զՈւստիանէն, և զծնաւզն իւր զպարոն Յովա-
 նէսն. և զԳուհար-Մելիքն, և զիւր պապն զպարոն Ամիրշան, և զմամն իւր
 զՄարթա-Խաթունն, և զմարքորն իւր զՄարի-Մելիքն, և զպարոն Գալուս-
 տըն, և զպարոն Ստեփաննոսն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զկեն-
 դանիսն, զհանգուցեալսն, և թողութիւն մեղաց խնդրել յամենագութ արար-
 չին. զի վասն այս յուսոյս ետուն գրել...: Արդ, եղև կատարումն սուրբ
 գրոցս ի թվ. ՊԶԶ. (1437), ի յանապատոս Տրապիզոնու, ընդ հովանեաւ
 սուրբ Փրկչիս և սուրբ Յովանիսիս, ձեռամբ անարժան և մեղաւք մեռեալ
 ողոյ՝ Յակոբ Տրապիզոնցի անւամբ կրանաւորի:

Արդ, երես անկեալ աղաչեմ զսուրբ ընթերցողսդ յիշել ի բարի մասին
 և լի սրտիւ զաստուած-ողորմին ասել անարժան զծողիս Յակոբ արեղիս
 Տրապիզոնցի, և ծնաղաց իմոց՝ Պետրոս Թանանուշին և զԳայլիանէն՝
 գիտեցեալն առ Քրիստոս, և զհարազատ եղբայրքն՝ զԹուման և զՄար-
 գարէն, և այլ ամենայն մերձաւորաց իմոց, և մեղաց թողութիւն հայցե-
 ցէր...:

Ձեռ. 6283, էջ 436 ր—438 ր, Խաչիկյան, հ. Ա, էջ
 480—482:

...Արդ, այս Տաճնացոյց կարգեալ բովանդակ տարւոյ աշխատութեամբ տէր Խաւայէլի խաչենեցոյ եպիսկոպոսի, հրամանաւ Վանական լ'արդապետի, ի խնդրոյ Ջալալ-Դօլին՝ տեառն խաչենոյ և տէր Գրիգորի եպիսկոպոսի, որք աղաչեցին զաէր Խաւայէլ եպիսկոպոսն, հայեցեալ ի կորովութիւն մտաց նորա և ի ժուժկալութիւն բարոցն։ Եւ նա յանձին կալաւ և ջանս եղ զտանել զար նահատակութեան սրբոցն, որ գրեալ կայ ի լիակատար պատմութիւնն, համառօտելով նմա զսքանչելի կատարումն սրբոցն, և եղ ընդ այլ կարգեալ յոյսմ աւուրսն, զոր կարգ ամսոցն հայիւ և հռոմիւ միաշունչ եղեալ անսղալ զտարին կատարեն։

Բայց ոմանք յանգէտս եղեալ /հակառակին այսպիսի գեղեցիկ և սքանչելի ընթեցողածոց, որ աւրբատարէ զլսելիս մեր զարհուրեցուցանէ և զողորմն ցաւագին տայ անձանց մերոց։

Եւ արդ, եթէ այնպիսեանցն է արքայութիւնն երկնից, ապա մեզ զի՞նչ ինի՞՜ ծուլիցս և հեղգացելոցս։ Այլ միայն յայս աղաւինեալ յառաջ ընթանալ յաւժար սրտիւ, և առնել զլիշատակ սրբոցն և բարեխօս ունել առաստուած, զի յաշտեսցի ընդ մեզ, և բարձցէ յաշխարհէ զպատուհաս մեղաց մերոց, և արժանի արասցէ սրբոցն փառաց հասանել ի Քրիստոս Տիստս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս ամէն։

Ի թվաբերութեանս Հայոց ի ՋԻ (1471) թուականին գրեցաւ գիրքս սոսկացուցիչ ի ձորս Շհապունեաց, ի զիւղս որ կոչի Կուլի, ընդ հովանեաւ սուրբ Հաղարարիւրացս, և սուրբ կաթողիկէիցս՝ սուրբ Աստուածածնի և սուրբ Ստեփաննոսի, և գեղամիջի սուրբ Գրիգորիս, և սուրբ Նշանիս, և այլ միահամուռ Վարդանանց սուրբ նահատակացս, ի հայրապետութեան տեառն Ռատակիսի, և յաշխարհակալութեանն Հասան-բակին, որ յաղթեաց Ջհանշալին և եկեալ ի դաշտն խօհայ և փախըստական արար զՀասան-Ալի, և երթեալ ի Ղարապաղն և անդ իս զՊարսկաց բռնաւորն զզուլտան։

Խաչիկյան, հ. Բ, էջ 318—319։ Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի ամենափրկիչ վանքի, կազմէջ Սմբատ Տեր-Ավետիսյան, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 318—319։

Տէր աստուած Յիստս Քրիստոս, որ արարէր սքանչելիս ի ձեռն սրբոց րոց՝ նոյն մարդասէր կամարգ ողորմեա ստացաւի սուրբ գրոցս՝ աստուածասէր և բարեպաշտ խաչին խաչատրուն, և հարազատին իւրոյ Աւե-

տիս արեւդային՝ սուրբ և մաքուր կրանաւորին, և ամենայն ազգականացն՝ կենդանեաց և մեռելոց, և ձեզ լսողացդ և կարդացողացդ առ հասարակ ողորմի Քրիստոսս։ Եւ ինձ՝ անարժան զրչիս Յովանէս քահանայի, և ուսուցչին իմոյ՝ աշխարհալուոյս վարդապետին Թումայի, և ծնաւդացն իմոց Մանկասարի և Փաշա-Մէլէքի, և սպասաւորիս Շուքրսն-Խաթունի, և ամենայն աշխատողացս, ամէն, եղիցի։

...Արդ, այս Տանաքոյց կարգեալ բաւանդակ տարոյ աշխատութեամբ կարգեալ տէր Իսրայէլի խաչննցւոյ եպիսկոպոսի, ի խնդրոյ Զալալ-Իօլի՝ տեսա՞ն խաչննցւոյ և տէր Գրիգորի եպիսկոպոսի։ Որք աղաչեցին զտէր Իսրայէլ եպիսկոպոսն, հայեցեալ ի կորովութիւն մտաց նորա և ի ժուժկալութիւն բարուցն. հւ նա յանձին կալաւ և ջան եղ գտանել զօր նահատակութեան սրբոց, որ զրեալ կայ ի լիակատար պատմութիւնն, համառատելով նմա զսքանչելի կատարումն սրբոցն և եղ ընդ այլ կարգեալ յայսմ աւուրսն զոր կարգ ամսոցն հայիւ և հոռոմիւ միաշունչ եղեալ անսղալ զտարին կատարեն։ Բայց ոմանք յանգէտս եղեալ հակառակն այսպիսի դեղեցիկ ընթերցուածոց, որ աւր ըստ արեւ վսեկիս մեր զարհուրեցուցանէ և դողումն ցաւադին տա անձանց մերոց։

Եւ արդ, եթէ այնպիսեացն է արքայութիւն երկնից, ապա զի՞նչ լիցի ծովից և հեղգացելոց, այլ միայն յայս ապաւինեալ յառաջ ընթանալ յաւժար սրտիւ և աւանել զյիշատակ սրբոցն և բարեխաւս առնել առ աստուած, զի հաշտեցի ընդ մեզ, և բարձցէ յաշխարհէ զպատուհաս մեղաց մերոց, և արժանի արասցէ սրբոցն փառաց հառանել ի Քրիստոս Յիսուսի ի տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։

Արդ, ի յայսմ դառնացեալ ժամանակիս եղև ցանկացող աստուածային սուրբ կտակիս, որ ունի հաւաքեալ յինքան զտաւն սուրբ Աստուածածինին, (և սուրբ) կարապետին և մրտչին Յովաննու, և զսուրբ Ստեփանոսի նախավկային, առաքելոց և զմարդարէիցն, զհայրապետացն և յեպիսկոպոսացն, զճգնաւորացն և զկուսանաց՝ միայնդամայն զամենայն վկայիցն արեամբ ներկեալ մարտիրոսաց։

Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային և պայծառ լուսով լըցեալ հեղահոգի և բարեմիտ խոջա խաշատուրն, և ետ գրել զսայ յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողաց՝ հօրն Առաքելին և մօրն՝ Մըրուսթին, և կեն(ա)լիցին Սալթան-Խաթունին և հարադատ եղբօրն տէր Աւետիսին, ամէն։

Ա

Յիշատակ է Կիրակոս վարդապետին:

Յուսովն, որ առ Աստուած է վասն սիրոյ վկայիցս Քրիստոսի և քարոզողաց բանին կենաց առաջնորդացն և լուսաւորչաց եկեղեցոյ, և խաչակրօն միանձանց ճգնաւորաց Քրիստոսի համարձակեալ հս նուաստ ծառա Քրիստոսի Կիրակոս վարդապետ, ի թուականիս հայոց ՉԲ (1253) աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ տօնս նաոս համառօտս ՃԺԲ (=112) ի ձեռն Ստեփաննոսի և Վահրամա վարդապետացն, հաւաքեալ յաստուածաշունչ զրոց ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցոյ և մեզ տօնողացս ի բարեխօսութիւն: Եւ աղաչեմ զամենեանս սիրովն Քրիստոսի ոչ բառնալ զայս յիշատակ բանի, այլ դրեալ յամենայն գիրս, որ գրին ի սմանէ, զի և ձերն զրեցցի յիշատակի զպրութեան կենաց. և որք բառնան՝ բարձցի նոցայն ի զպրութենէն կենաց: Օրհնեալ է ամենասուրբ երրորդութիւն հայր և որդի և հոգին սուրբ յաւիտեանս ամեն:

Չեռ. 7433 (1467 թ.), էջ 428: Սրապյան Ա., Բանասիրական ճշգրտումներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 139—140:

Ա՛

Յիշատակ Կիրակոս վարդապետի

Յուսով որ առ Աստուած և վասն սիրոյ վկայից Քրիստոսի և քարոզողաց բանին կենաց, առաջնորդաց և լուսաւորչաց եկեղեցոյ և խաչակրօն միանձանց, ճգնաւորաց Քրիստոսի համարձակեալ հս նուաստ ծառայից Քրիստոսի Կիրակոս վարդապետ ի թվականութեանս հայոց ՉԲ (=1253) աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ Տօնապատեալս ճառս համառօտ ՃԺԲ (Ալիշան՝ հարիւր և երկուտասան) աշխատեալ յաստուածաշունչ զրոց ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցոյ և մեզ տօնողացս ի բարեխօսութիւն (տօնողացս): Եւ աղաչեմ զամենեանս սիրովն Քրիստոսի ոչ բառնալ զյիշատակ բանիս, այլ գրել յամենայն գիրս, որք գրին ի սմանէ, զի և ձերն զրեցցի յիշատակի գիրն կենաց. և որք բառնան բարձցի և ի

նոցայն ի կենաց դպրութենէ. այլ և գրողի և ստացողի օրինակի գրոցս վարդապետքն Ստեփաննոս և Վահրամ նոքայ գրեսցին ի դպրութիւն կենաց, ամէն:

ՁԵՆ. 7463 (1413 թ.), էջ 349 բ:

ՏԵ՛ս նաև Ալիշան. Հայապատում, հ. Ա, էջ 107:

Յ

գ) «Յուսովն Աստուծոյ և սիրով սրբոց նորա, նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արեւելցի, ի միասին հաւաքեցի զտօնս Սրբոցս Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց: Գրեցի և պատմութիւնս ճոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւորցն և խառնեցի ընդ նախակարգսն եւ աղաչեմ զտօնողսդ և զգրողսդ՝ գրել և դայս յիշատակ բանի, զի և դուք գրեսցիք ի գիրն կենաց. և որ բառնայ զմերս՝ ջնջեսցի և ինքն ի դպրութենէ կենաց: Եւ եղև իրակութիւնս այս ի քովս ՁԺԸ (= 1269), յաշխարհիս Կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ և յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորին Լևոնի, ԿԶ (66) ամի կենաց պանդխտութեան մերոյ, յորում աւարտն եղև ի փառս Աստուծոյ, յաւիտեանս. ամէն:

Եւ ճառք, որ յաւելաք մեք ընդ հինն խառնեալ՝ հարիւր եւ եօթանասուն. անուամբն և շնորհօքն Աստուծոյ. ամէն»:

Ալիշան, Հայապատում, հ. Բ, էջ 472:

«ԶԿիրակոս վարդապետ Արեւելցի ի վանաց Գետկցի (Ալիշան Գետիկցի) զյարմարիչ և զլուսաւորիչ յայսմ կտակիս, և ստացող սորա...»

Ավգերյան, ԺԱ, էջ 22,

Ալիշան, հ. Ա, էջ 127,

Սրայպան, Նույն տեղում, էջ 140:

ԳՐԻԳՈՐ ԾԵՆԵՆՑ ԽԼԱԹԵՑՈՒ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

918ա. Փառք...

920ա. /Ա/րդ, զայս լեւալ հաւատարիմ եւ իմաստուն եւ հոգեւոր աստուածասէր եւ աղքատասէր խաւջայ Սինաքարիմն եւ կողակիցն իւր Զարմանազանն, որպէս նման էր Հռիփսիմեանցն եւ զորդին իւր պարոն

Արիստակէսն եւ իմաստուն եւ հեղահոգի եւ փափագէր այսմ լուսազարդ տառիս եւ վարդափթիթ եւ անուշահոտ բուրաստանիս, զոր պայծառ ջահ-քըն եւ անաղօտ լապտերքն եկեղեցոյ Տէր Գրիգորն Վկայասէրն եւ Տէր Ներսէս շատաշնորհն եւ Կիրակոս անուն ոմն բանիրուն վարդապետ, հոգ տարան եւ յամենայն ազգաց ժողովեցին զպատմութիւն նահատակութեան սրբոց, զառաքելոց եւ մարգարէից, զհայրապետաց եւ զվարդապետաց, եւ զթագօրաց եւ զաւրավարաց, զճգնաւորաց եւ զկուսանաց եւ զամենայն սրբոց եւ ստուգապէս որոնեալ քննեցին, թէ յորում ժամանակի եւ յորում ամսեանն եւ կամ քանի ամսոյն է դիպել նահատակութիւնն նոցին. նաեւ զտէրունական տօնից պատահմունսն ի քանիս ամսոցն եւ զԱստուածածնին եւ զԷսաշին եւ զԵկեղեցւոյ եւ զամենայն ի մի տոսի հաւաքեցին եւ գրեցին Հայի եւ Հռոմայեցի ամսով, իսկ ի վերջին ժամանակիս, որ էր թվական Հայոցս Պ եւ Ս (1401), վարդապետ ոմն շնորհալի Գրիգոր անուն, ի մայրաքաղաքին Խլարսայ, Մերենց կոչեցեալ, յոյժ կորովամիտ, հանճարեղ եւ բանիրուն եւ անհամեմատ քարտուղար, որ է գրագիր, ոչ ինչ նուաղ դուլով առաջին սուրբ վարդապետացս, զորս յիշեցաք յանուանէ: Եւ զամենայն, զոր ինչ առնոյր ի գիր գրելոցն՝ աղքատաց եւ կարաւտելոց բաշխէր: Սա գրեալ եւ ընթերցեալ բազում անգամ զառաջին կարգեալ ի սրբոց գիրքս եւ զի էր կառնառաւտ քանք նոցա: Եւ ինք իւրով իմաստութեամբ ի գիրք այս բազում շահաւէտ եւ աւքտակար բանս ի Հարանց վարուց եւ ի պատմագրոց եւ տէրունական տառնից եւ զխաւորաց սրբոց յոյ, մարտիրոսական մահուամբ եւ յաշխարհէս՝ նահատակեալ սրով յառաջին սուրբ վարդապետացն ասացեալ, եղ ի գիրս եւ հարստացոյց զընա: Այլ եւ զանձս բազումս ասաց յինքննէ ի վերայ անուան իւրոյ եւ տաղ եւ մեղեդիս եւ եթող գրով յիշատակ իւր, ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյս եւ ի զուարճութիւն մանկանց Սիովնի եւ զկնի սահմանեալ ժամանակի իւրոյ, մարտիրոսական մահուամբ եւ յաշխարհէս՝ նահատակեալ սրով յանիծեալ ազգէն ընթերցանից, ի վանքն Յիպնայ, ի ԸԾ եւ ի ՀԴ (1425) թուականիս Հայոց: Եւ անդ է թաղեալ սուրբ նշխարք ոսկերաց նորա ի վանք Յիպնայ, որոյ յիշատակն արհնութեամբ սորայ Տէրն ամենայնի ձեզ եւ մեզ ողորմեսցի, ամէն:

Արդ, այսպիսում լուսաւարտ տառիս ցանկացաւ եղեւ մեծ փափագմամբ աստուածասէր խաւջայ Սինաքարիմ եւ մեք տեսաք զփափագ եւ զսէր նորա զոր ունէր առ հոգեւորն, ի միտ առեալ զբանն Եսայեայ, որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանեակ Երուսաղէմ: Վասն այն յուսոյն եւ բոլոր հաւատով եւ գրեւ զսուրբ գիրքս յիշատակ բարի

հոգոյն իւրոյ եւ ծնաւդացն հարն Տէր Արիստակիսին եւ մարն Միրա-
դուխտին եւ արեան մերձաւորացն, ամէն:

Արդ, որ ճաշակէք յամէնառատ սեղանոյն եւ վայելէք յաստուածային
բուրաստանէս եւ հանդիպիք տեսութեան սուրբ գրոցս կարդալով կամ
սուրինակելով, յիշեսցիք ի մաքրափայլ յաղաթս ձեր առաջի ա-
նարին ղենմանն ի ժամ ոսկալի սուրբ պատարագին եւ լի բե-
րանոգ Աստուած ողորմի ասացէք եւ բոլոր հաւատով մեղաց թողութիւն
հայցեցէք աստուծասէր եւ հաւատաբեր խաւջայ Սինաքարիմ եւ կենակցուն
Զարմանազանին եւ որդոյն պարոն Արիստակիսին եւ հանգուցեալ կենակ-
ցուն Նազլուխանին եւ դստերն Մարթին, Մարգարտին, Մարիանին, Մի-
րանդուխտին, եւ զմիւս կողակիցն Մարիանին:

Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի ամենա-
փրկիչ վանքի, կաղմեց Սմբատ Տեր-Ավետիսյան, հ. Ա,
Վիեննա, 1970, էջ 366—367, նաև 369:

ՀԱՃԱՆՍԱԿԻ ՎԿԱՅԱԿՈՉՎՈՂ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


- Ալիշան—Հայապատում, Պատմիչք և պատմությունք հայոց, հ. Ա և հ. Բ
յօրինեալ և հաւաքեալ ի հ. Ղևոնդեայ Վ. Մ. Ալիշան յաթոռակալ
վարդապետէ Մխիթարեան ուխտին, Վենետիկ, 1901:
- Անառյան—Հայոց Անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, հ. Բ,
1944, հ. Գ. 1946, հ. Դ. 1948:
- Անասյան—Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, հ. Բ,
1976:
- Ավգերյան—Լիակատար վարք ու վկայաբանությունք սրբոց ի Մկրտիչ
վարդապետէ Աւգերեան, հ. Ա—Ժ, Վենետիկ, 1911—1913, հ. ԺԱ,
Լրումն լիակատար վարուց և վկայաբանութեանց սրբոց, Վենետիկ,
1914:
- Գրգիւր Մազիստրոսի քլքերը—բնագիրն յառաջաբանով և ծանոթագրու-
թիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանյանց, Աղեք-
սանդրապօլ, 1910:
- Խաչիկյան—Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, Երե-
վան, 1955, հ. Բ, 1958, հ. Գ, 1967:
- Հովսեփյան—Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա,
Անթիլիաս, 1951:
- Մ. Մազիստրոս—Ճառերտիրք, Ճաշոցք, Մատենադարանի ձեռագրաց
անտիպ ցուցակների հավաքածո № 133, Մեսրոպ Մազիստրոսի ֆոնդ:
Մարգվանեցի — Գիրք որ կոչի Այսմաւուրք, Կ. Պուլիս ի Թուրին հայոց ՌՃՀԹ
(1730) ի տպարանի Գրիգոր դպրի Մարսւանեցոյ:
- Պողարյան—Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմեց Նո-
րայր եպ. Պողարեան, հ. Ա, Երուսաղեմ, 1966, հ. Բ, 1976, հ. Գ, 1968,
բ. Դ, 1969, հ. Ե, 1971:
- Սարգիսյան—Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխի-
թարեան ի Վենետիկ, հորինեց Բարսեղ Վ. Սարգիսեան, հ. Ա, 1914,
հ. Բ, 1924, հ. Գ, 1966:

Տաշյան—Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա, հ. Ա, Կաղմեց Յակոբոս Վ. Տաշեան, Վիեննա, 1895, հ. Բ, կաղմեց Համազասպ Ոսկեան, 1963:

Ցուցակ Մատենադարանի—Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կաղմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունցյան, Փ. Անթարյան, հ. Ա, Երևան, 1965, հ. Բ, 1970:

Փեշտմալեյան—Յայտմաւորք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յասմաւորաց Տեր-Իսրայելի, Կոստանդնուպօլիս (յօրթագիւղ), 1834: Առաջաբանը՝ Գրիգոր դպիր Փեշտմալեյանի:

Սումանյան—Ազգապատում, հ. Ա, Պեյրութ, 1959, հ. Բ, 1960:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հեղինակի կողմից	5
---------------------------	---

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

Հայ ղեղավորեստական արձակը արարողական գրականության շերտերում . . .	7
Մինչլիկայասերյան ժողովածուներ	12
Գրիգոր Վկայասերն ու հայ արարողական ժողովածուները	29
Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի ընտանեկան պանդխներն ու գործունեությունը	32
պայմանավորող պատմաբանական հանգամանքները	37
Ճաշոցից ղեկի Հայսմավուրք ուղին	37

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Հայսմավուրբային խմբագրություններ	53
Տեր-Խրայեյի Հայսմավուրբը	54
Կիրակոս Արեւելցու Հայսմավուրբը	67
Գրիգոր Անավարդեցու Հայսմավուրբը	79
Գրիգոր Մերենց խլաթեցու Հայսմավուրբը	82

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Հայսմավուրբ ժողովածուների պատմագրական արժեքը	88
Հայսմավուրբ ժողովածուների պատմաճանաչողական արժեքը	91
Հայսմավուրբ ժողովածուների գաղափարական բովանդակությունն ու ղեղավորեստական ինքնատիպությունը	103
Մարդու կերպավորումը Հայսմավուրբներում	106
Ազգային-բանահյուսականը հայկական հայսմավուրբային պատումներում	122
Միջնադարը՝ ակունք դասականների	136

Հ Ա Վ Ն Լ Վ Ա Մ

Հիշատակարաններ	
Գրիգորիս Բ Վկայասերի «Տօնամակի» հիշատակարանը	140
Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանության հիշատակարանը	141
Տեր-Խրայեյի Հայսմավուրբի հիշատակարանները	142
Կիրակոս Արեւելցու հիշատակարանները	147
Գրիգոր Մերենց խլաթեցու Հայսմավուրբի հիշատակարանը	148
Հաճախակի վկայակոչվող աշխատությունների պայմանական համառոտագրություններ	151

ՄԱՅԻՍ ԹԱԴԵՎՈՍԻ ԱՎԴԱԼԹԵՅԱՆ

«Յասմատուրֆ» ժողովածուները և նրանց
պատմագրական արժեքը

Հրատարակչական խմբագիր Ա. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՆՅԱՆ
Նկարիչ Լ. Գ. ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Է. Ա. ՍՈՆԵԿՅԱՆ

ИБ № 565

Հանձնված է շարվածքի 21.12. 1981 թ.: Ստորագրված է տպագրության 19.05.1982 թ.:
ՎՅ 06163: Չափը 60×84¹/₁₆ թուղթ N° 1: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպա-
գրություն: Պայմ. 8,95 մամուլ, տպագր. 9,63 մամուլ: Հրատ.—հաշվարկ. 8,8 մամուլ:

Տպաքանակ 1500: Պատվեր № 991: Հրատ. № 5628: Գինը 1 ռ. 40 կ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ:

Издательство АН Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян, 24-г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին:

Типография Издательства АН АрмССР, 278310, г. Эчмиадзин

ԳԼԽ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0195867

1. 40 4.

A $\frac{11}{68444}$